ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՍ II

(Վերլուծական մաս)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԷԹՆՈ-ՍՈՑԻՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Երևան
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ
2012

ՀՏԴ 329.78 (479.25)

ԳՄԴ 66.75 (2h)

Մ 283

Մ 283 Մանուկյան Ս. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց/ Ս. Մանուկյան; Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն; Երիտասարդական պրոբլեմների ուսումնասիրման ասոցիացիա.- Եր.: Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, 2012: Մաս II: Վերլուծական մաս.- 208 էջ:

«Հայաստանի երիտասարդությունը և հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի զարգացումը» վերտառությամբ հետազոտությունը՝ «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցը» (Մաս II. վերլուծական մաս), իրականացվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական ծրագրերի առցանց դրամաշնորհային համակարգով իրականացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Երիտասարդական պրոբլեմների ուսումնասիրման ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Աշխատանքի հիմքում ընկած են 2011 թվականին մշակված «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցը» (Մաս I. հետազոտական մաս) և ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի կողմից իրականացված ու նախարարության կողմից հրատարակված «Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները» հետազոտությունը:

Աշխատանքը նախատեսված է երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդության խնդիրներով զբաղվող փորձագետների, ինչպես նաև երիտասարդության լայն շրջանակի համար:

ՀՏԴ 329.78 (479.25)

ԳՄԴ 66.75 (2h)

ISBN 978-99941-2-856-3

© Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, 2012

© «Երիտասարդական պրոբլեմների ուսումնասիրման ասոցիացիա » ՀԿ, 2012

© Մանուկյան Սամվել, 2012

ՆԱԽԱԲԱՆ 6

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԷԹՆՈ-ՍՈՑԻՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ 8

Հետազոտության նպատակը և հիմնական հարցերը 9

Հետազոտության արդյունքների մեկնաբանության մակրո-սոցիոլոգիական հայեցակարգի ընտրության անհրաժեշտությունը 10

Հետազոտության արդյունքների մեկնաբանության մակրոսոցիոլոգիական հայեցակարգի ընտրությունը 12

Աշխատանքի բովանդակությունը և կառուցվածքը 28

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՔ, ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ 32

Զբաղվածության և գործազրկության դինամիկան Հայաստանում 33

Հայաստանի երիտասարդության զբաղվածության և գործազրկության ընդհանուր պատկերը 35

Աշխատանք գտնելու դժվարությունները, աշխատանքի տեղավորվելու համար անհրաժեշտ գործոնները և աշխատանք գտնելու ձևերը 45

Գրավիչ ձեռնարկություններ և աշխատատեղերի գրավչության գործոններ 48

Ըստ երիտասարդության պատկերացումների՝ աշխատանքի գրավչության գործոնների իրավիճակը Հայաստանում 52

Բիզնես միջավայր. երիտասարդության՝ բիզնեսով զբաղվելու հակվածությունը և բիզնես միջավայրի գնահատականները 57

ՄԻԳՐԱՑԻԱ 70

Միգրացիան և դրա սոցիալ-տնտեսական ազդեցությունը Հայաստանի վրա 71

Ժամանակավոր միգրացիա. արտասահմանում լինելու փորձը, երկրները, նպատակները 77

Հայաստանից ընդմիշտ հեռանալու դիրքորոշումը 81

Ընդմիշտ արտագաղթի դիրքորոշումը ձևավորող գործոնները 85

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՔ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ 94

Վերարտադրողական վարքի միտումները 1990-2010թթ. ընթացքում 97

Երիտասարդների ամուսնական վիճակը և բնակարանային պայմանները 105

Ամուսնության օպտիմալ տարիքը երիտասարդների դիրքորոշումներում 108

Ինչո՞ւ են հայ երիտասարդները հետաձգում ամուսնությունը 111

Երեխաներ ունենալու պահանջմունքը 113

Վերարտադրողական վարքի վրա ազդող գործոնները 116

Ընտանեկան արժեքները ենթամշակութային խմբերում և դրանց դինամիկան 121

ՄՇԱԿՈՒՅԹ 128

Ենթամշակութային պատկանելություն 129

Բազային արժեքներ 133

Երիտասարդության շրջանում արդյոք գոյություն ունի՞ մշակութային և աշխարհաքաղաքական ճեղքվածք 141

Ազգային ինքնություն և միասնականություն 145

Առողջ ապրելակերպ. ֆիզիկական և հոգեկան առողջություն 153

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 160

Պետական կառավարման որակի միտումներն ըստ միջազգային ինդեքսների 162

Քաղաքական մշակույթ 167

Հայաստանյան քաղաքական գործընթացների ընդհանուր ընկալումը 174

Հայաստանյան սոցիալ-տնտեսական ոլորտների զարգացումների ընկալումները 178

Վստահությունը քաղաքական և սոցիալական ինստիտուտների նկատմամբ 184

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 188

Տնտեսական ոլորտ 189

Ընտանիք և վերարտադրողական վարք 192

Ինֆորմացիոն-մշակութային ոլորտ 195

Պետություն և հասարակություն 202

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 208

ՆԱԽԱԲԱՆ

Հարգելի՛ ընթերցող,

Ձեր ուշադրությանն է ներկայացվում «Հայաստանի երիտասարդությունը և հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի զարգացումը» վերտառությամբ հետազոտությունը՝ «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցը» (Մաս II. վերլուծական մաս), որն իրականացվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական ծրագրերի առցանց դրամաշնորհային համակարգով իրականացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Երիտասարդական պրոբլեմների ուսումնասիրման ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից:

Երիտասարդության՝ որպես հասարակության սոցիալապես առավել ակտիվ և մեծ ներուժ ունեցող խմբի խնդիրներն առավել խորությամբ ուսումնասիրելու, ոլորտում առկա հիմնախնդիրները ճշգրտելու, ախտորոշելու, կանխատեսելու և դրանց լուծմանն ուղղված համակարգային որոշումներ կայացնելու, առավել իրատեսական և փաստարկված, հետևաբար նաև առավել արդյունավետ երիտասարդական պետական քաղաքականություն մշակելու և իրականացնելու նպատակով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը 2011 թվականից ձեռնամուխ է եղել Հայաստանի երիտասարդության վերաբերյալ համապարփակ ուսումնասիրությունների իրականացմանը:

2011 թվականին մշակվել է «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցը» (Մաս I. հետազոտական մաս), որն անդրադարձել է երիտասարդների համար կենսական նշանակություն ունեցող մի շարք ոլորտների՝ ազգային ինքնություն, կրթություն, կրոն, ընտանիք, զբաղվածություն, քաղաքական մասնակցություն, մշակույթ և այլն՝ ներկայացնելով հասարակական, տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի տարբեր ասպարեզներում Հայաստանի երիտասարդության աշխարհայացքային համալիրների ուսումնասիրությունը և վեր հանելով դրանց միջև առկա կապերը:

Միաժամանակ ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակի միջև 2011 թվականին կնքված համագործակցության հուշագրի հիման վրա ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության

ու ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվել և նախարարության կողմից հրատարակվել է «Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները» հետազոտությունը:

Երկու հետազոտություններում ներկայացված էին Հայաստանի երիտասարդության մտածելակերպը, վարքը, ձգտումներն ու ակնկալիքները նկարագրող լայնածավալ տվյալներ, որոնք, բնականաբար, ընդհանրացման և միասնական ընկալման ու մեկնաբանության անհրաժեշտություն առաջացրին: Եվ Ձեր ուշադրությանը ներկայացվող աշխատանքն այդ վերլուծության հեղինակային ընդհանրացման արդյունքն է: Ընդ որում՝ աշխատանքի որոշ դրույթներ կարող են չհամապատասխանել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պաշտոնական դիրքորոշմանը:

Հետազոտության առանցքը հայաստանյան զարգացումներում առկա և ռազմավարական հեռանկարում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնական սպառնալիքներ հանդիսացող երկու միտումների՝ էթնո-սոցիո-մշակութային համակարգի ծավալի կրճատման և որակական փոխակերպման խորապատկերում երիտասարդության հիմնախնդիրների վերլուծությունն է: Վերլուծության արդյունքների հիման վրա նշվում են նաև առանցքային ռազմավարական ուղղություններ, որոնք և որոնց տրամաբանությունից բխող ածանցյալ ռազմավարությունները կնպաստեն հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի դրական զարգացմանը:

Արսեն Քարամյան
ՀՀ սպորտի և երիտասարդության
հարցերի նախարարի տեղակա

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԷԹՆՈ-ՍՈՑԻՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ



Հետազոտության նպատակը և հիմնական հարցերը

Հայաստանում արդեն ավարտվել է հետխորհրդային անցումային փուլը: Հայաստանի Հանրապետությունն աշխարհի՝ պետականություն ունեցող ազգերի հանրության լիիրավ անդամ է: Հայաստանն ունի ժողովրդավարական Սահմանադրություն, որի հիման վրա կազմավորվել է լիարժեք օրենսդրական մարմին, հանրապետությունում ձևավորվել և գործում են ժողովրդավարական քաղաքական համակարգն ու շուկայական տնտեսությունը, առկա են դրանց համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կառույցները, կազմավորվել են ազգային տնտեսական և քաղաքական վերնախավերը:

Հայաստանն արդեն 2001թ. փաստորեն հաղթահարել էր անցումային ժամանակաշրջանի տնտեսական կոլապսը և դրանից հետո՝ գրեթե մեկ տասնամյակ, շարունակաբար արձանագրել էր դինամիկ տնտեսական աճ: Այնուամենայնիվ, 2008թ. գլոբալ տնտեսական ճգնաժամն բացասական ուժեղ ազդեցություն գործեց Հայաստանի տնտեսության վրա: Չնայած վերջին չորս տարիներին տնտեսական այդ բացասական ազդեցություններն ինչ-որ չափով հաղթահարվել են, սակայն հայաստանյան զարգացումներում առկա են երկու միտումներ, որոնք ռազմավարական հեռանկարում հանդիսանում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնական սպառնալիքները:

Այդ միտումներն են հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի **ծավալի կրճատումը** և **որակական փոխակերպումը**: Դրանցից առաջինը նախ և առաջ արտահայտվում է բացասական ժողովրդագրությամբ, որը բնական վերարտադրության նվազման և արտագաղթի հետևանք է: Այդ երևույթներն էլ բացասաբար են անդրադառնում էթնո-սոցիո-մշակութային համակարգի համակարգային բնութագրերի վրա: Հայտնի է, որ ինչքան փոքր է հասարակության անդամների քանակը, այնքան, մյուս հավասար պայմանների դեպքում, ավելի պարզունակ են հասարակական և տնտեսական հարաբերությունները: Իսկ որքան ավելի պարզունակ են այդ հարաբերությունները, այնքան ցածր են համակարգի կայունությունը, ադապտիվությունը և զարգացման հնարավորությունները:

Երկրորդ միտումը՝ հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի որակական փոխակերպումը, բազմանշանակ է: Ներկայիս շարունակական ինֆորմացիոն հեղափոխության պայմաններում, երբ Հայաստանն ամբողջապես ընդգրկվում է գլոբալ տնտեսական և մշակութային տարածքի մեջ, մի կողմից գործնականում անսահմանափակ հնարավորություններ են ստեղծվում **յուրաքանչյուր անձի** համար, ով կարող է օգտվել դրա ընձեռած առավելություններից: Այսինքն՝ անձը կարող է ընտրել այն, ինչ ցանկալի և անհրաժեշտ է համարում իր համար՝ որպես գործունեության և ինքնաարտահայտման տարածք ունենալով ամբողջ աշխարհը: Մյուս կողմից, եթե գերակայություն է համարվում ազգային էթնո-սոցիո-մշակութային համակարգը, ապա գլոբալ աշխարհում դրա համապարփակ ընդգրկվածությունն առաջացնում է համակարգի կապերի և կառուցվածքի խարխլում՝ ապագայում անորոշ ելքով: Հնարավոր զարգացումների սցենարներ կարող են լինել և՛ ազգային էթնո-սոցիո-համակարգերի իսպառ վերացումը, և՛ դրանց որակական փոխակերպումն ու նոր արժեհամակարգերի հիման վրա վերակազմավորումը, և՛ տարբեր միջանկյալ վիճակներ:

Ահա թե ինչու 2011թ. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի մշակման աշխատանքների շարքում սոցիոլոգիական հետազոտություն նախաձեռնեց Հայաստանի 18-ից 30 տարեկան երիտասարդ-

ների շրջանում: Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի տարբեր ոլորտներում Հայաստանի երիտասարդության աշխարհայացքային համալիրները և վեր են հանվել դրանց միջև առկա կապերը[1]: Նույն թվականին Միավորված ազգերի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ), ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունից անկախ, համանման հետազոտություն նախաձեռնեց[2]:

Երկու հետազոտություններում ներկայացված էին Հայաստանի երիտասարդության մտածելակերպն ու ձգտումները նկարագրող լայնածավալ տվյալներ: Ըստ այդմ՝ դրանց ընդհանրացման և միասնական ընկալման ու մեկնաբանության անհրաժեշտություն առաջացավ: Ներկայացվող աշխատանքն այդ ընդհանրացման արդյունքն է: Աշխատանքի իրականացման համար ՄԱԶԾ-ն բարյացակամորեն տրամադրեց իր գործունեության արդյունք հանդիսացող զեկույցն ու դրա մշակման համար կիրառված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների տվյալների շտեմարանը, ինչը տվյալների երկրորդային վերլուծություններ իրականացնելու հնարավորություն ընձեռեց: Երկու հետազոտություններում առկա էին և՛ համանման, և՛ տարբեր հարցեր: Համանման հարցերից բխող պատասխանները, երբ մշակված էին մեթոդաբանական միևնույն սկզբունքով, տվել են նույնական արդյունքներ, ինչը հավելյալ վստահություն է հաղորդում հետազոտական տվյալների որակի նկատմամբ:

Հետազոտության արդյունքների մեկնաբանության մակրոսոցիոլոգիական հայեցակարգի ընտրության անհրաժեշտությունը

Արդի գլոբալացված աշխարհում կոնկրետ երկրների հասարակությունների ուսումնասիրություններում աստիճանաբար ավելի ու ավելի պայմանական են դառնում «ներքին» ու «արտաքին» գործոններ հասկացությունները: Դրա հետևանքով հասարակագիտական ուսումնասիրություններում մեթոդաբանական լուրջ դժվարություններ են առաջանում հետազոտվող օբյեկտի (համակարգի)՝ արտաքին միջավայրից հստակ սահմանազատման հարցերում: «**Արտաքին միջավայր**» հասկացության բովանդակությունը «խարխլվել է» և կորցրել իր դասական իմաստը, որի համաձայն՝ այն ուսումնասիրվող օբյեկտի վատ ստրուկտուրացված «շրջապատն» է:

Ավելի հզոր են գլոբալ աշխարհից բխող, քան ներհայաստանյան գործոնները: Ընդ որում՝ գլոբալ աշխարհում ոչ միայն Հայաստանի տեղը, դերը և զարգացման հետագիծը, այլև ներհայաստանյան իրողություններն ու զարգացումներն անհամեմատ ավելի ուժեղ են պայմանավորված արտաքին գործոններով: Ավելին՝ Հայաստանի հասարակության վրա գլոբալ ազդեցությունները ոչ միայն միջնորդավորվում են ազգային-պետական և ազգային-մշակութային համակարգերով, այլև **ունակ են ուղղակի ազդեցություն գործել** ներազգային հասարակական ցանկացած խմբի, տվյալ դեպքում՝ նաև երիտասարդության վրա՝ դրանով

1 Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց /Կազմ. Ա. Պապյան, Դ. Հայրապետյան, Ա. Պետրոսյան, Ս. Մանուկյան – Եր.: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Մաս I, - հետազոտական մաս, 2011թ. – 104 էջ: Հետազոտությունը 2011թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացրել է «Այ Փի էս ՍԻ» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտը:

2 Հետազոտությունը, որը կոչվում է «ՀՀ երիտասարդների ձգտումների հետազոտության հաշվետվություն» (Երևան, 2012, ձեռագիր), իրականացրել են «Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիա» ՀԿ-ն և «R-ինսայթս» հետազոտական ընկերությունը:

իսկ ոչ միայն «արտաքինից», այլև «ներսից» փոխակերպելով հայաստանյան ազգային և պետական զարգացումները: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն այսօր հանգեցրել է այնպիսի իրավիճակի, որ գլոբալ տեղեկատվական դաշտն արդեն դարձել է ազգերի ու պետությունների վրա «ներքին» ազդեցության տոտալ և ունիվերսալ գործիք: Գլոբալ տեղեկատվական միջավայրում են «ընկղմված» բոլոր պետությունները, ազգերը, հասարակությունները, որոնց թվում՝ նաև Հայաստանի հասարակությունն ու մեր **ուսումնասիրության օբյեկտը՝ Հայաստանի երիտասարդությունը**:

Ակնհայտ է նաև, որ հայաստանյան երիտասարդության ոլորտում առկա հիմնախնդիրների մեծ մասը հենց համահայաստանյան խնդիրների արտապատկերումն է: Անշուշտ, կան նաև զուտ երիտասարդական հիմնախնդիրներ, սակայն, միևնույնն է, դրանք ծագել ու զարգանում են համահայաստանյան և գլոբալ համատեքստերում:

Ըստ այդմ՝ անհրաժեշտ է, որ ցանկացած սոցիոլոգիական ուսումնասիրություն ունենա իր մեկնաբանության մակրոտեսական շրջանակը, այսինքն՝ այնպիսի տեսություն, որը **հավակնում է բացատրելու, թե ինչ է գլոբալ հասարակությունը, որոնք են դրա սկզբունքային և էական հատկանիշները, զարգացման շարժիչ ուժերը, կենսագործունեության նպատակը և առանձնահատկությունները**: Ընդ որում՝ **անհրաժեշտ է, որ այդ տեսությունն առանց սկզբունքային և լուրջ հակասությունների բացատրի արդի աշխարհի բուն բովանդակությունն ու դինամիկան**: Արդի սոցիոլոգիական ուսումնասիրությունն առանց այդպիսի մակրոտեսական կոնտեքստի կորցնում է իր գիտագործնական նշանակությունը: Ահա թե ինչու ներկայացվող աշխատանքում Հայաստանի երիտասարդության հիմնախնդիրների դիտարկմանը, վերլուծությանը և մեկնաբանությանը նախորդում է համապատասխան մակրոհարացույցի կամ տեսության ընտրության հիմնավորումը:

Մյուս կողմից գլոբալ տեսական շրջանակի ու գործընթացների և կոնկրետ սոցիոլոգիական հետազոտության տվյալների միջև անհրաժեշտ է ունենալ գոնե մեկ միջանկյալ շրջանակ, այլ կերպ ասած՝ «փոխանցող մեխանիզմ», որը թույլ կտա ավելի ընկալելի դարձնել վարընթաց և վերընթաց մեկնաբանությունները, այսինքն՝ գլոբալ կամ մակրոտեսական մակարդակից մինչև կոնկրետ «ժամանակային կետում» Հայաստանի հասարակության կոնկրետ շերտի վերաբերյալ տվյալները և հակառակը՝ այդ տվյալներից մինչև մակրոտեսական մակարդակ: Որպես այդպիսի մեխանիզմ է ընտրված ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) տվյալների՝ Հայաստանի հասարակությանը բնութագրող ժամանակային այն շարքերը, որոնք ադեկվատ են ներկայացվող ուսումնասիրության տեսակետից: Բացի դրանից՝ օգտագործվել են նաև Համաշխարհային բանկի ինստիտուտի (ՀԲԻ) պետական կառավարման որակի ինդեքսների՝ Հայաստանի Հանրապետությանը վերաբերող ժամանակային շարքերը[3]:

Աշխատանքում հատուկ ուշադրություն է դարձվել վերլուծության մակրոտեսական շրջանակի ընտրության հիմնավորմանը, որի ընթերցումը հույժ կարևոր է վերլուծությունից բխեցվող մեկնաբանությունների և եզրակացությունների ադեկվատ ընկալման համար (նույնիսկ այն դեպքում, երբ դրանք կլինեն խնդրահարույց և վիճելի):

Գիտավերլուծական դիսկուրսը պետք է ընթանա նախ և առաջ հայեցակարգային մակարդակում:

3 Այդ ինդեքսները ՀՀ Կառավարության կողմից սահմանված են ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության առաջընթացը նկարագրող ինդիկատորների շարքում:

Հետազոտության արդյունքների մեկնաբանության մակրոսոցիոլոգիական հայեցակարգի ընտրությունը

Հայաստանի երիտասարդության հետազոտության արդյունքների մեկնաբանության մակրոհարացույցի ընտրության հիմնավորման համար անհրաժեշտ է համառոտ անդրադառնալ արդի գլոբալ գործընթացները բացատրելուն հավակնող երկու հիմնական և միմյանց հետ մրցակցող հասարակագիտական[4] ուղղություններին՝ ***արդիականացման տեսություններին*** և ***կախյալության տեսություններին***:

Տեսական այդ ուղղություններն առաջացել են XX դարի առաջին կեսին, երբ Ռուսաստանի խորհրդայնացմամբ պահպանողական, լիբերալ և սոցիալիստական գաղափարախոսությունների տեսական պայքարն արդեն կապիտալիստական և սոցիալիստական հասարակարգերի միջև վերածվեց քաղաքական ու տնտեսական իրական պայքարի և մրցակցության: Այդ ուղղությունները վերջնականապես ձևավորվել են II աշխարհամարտից հետո, երբ լիովին կազմավորվեցին կապիտալիստական և սոցիալիստական ճամբարները, որոնք տոտալ, այդ թվում՝ նաև գաղափարական պայքար էին մղում երրորդ աշխարհի տարածքներում[5]:

Այդ պայքարն արտացոլվում էր հասարակագիտական կոնկրետ ուսումնասիրություններում, դրանց նպատակներում, մեթոդաբանություններում և արդյունքների կիրառություններում: Երրորդ աշխարհի երկրների զարգացման ուղին և ընթացքը սահմանելու խնդիրը հրատապ էր երկու բլոկների առաջնորդ երկրների (ԱՄՆ և ԽՍՀՄ) համար: Արևմտյան զարգացած ժողովրդավարություններն առաջնորդող ԱՄՆ-ում այդ տեսությունների և հետազոտությունների մակրոսոցիոլոգիական հարացույցը Պարսոնսի կառուցվածքային-գործառութային տեսությունն էր, իսկ սոցիալիստական ճամբարինը՝ մարքսիստական տեսությունները: Առաջինի շրջանակում զարգացվող տեսությունների ընդհանուր անվանումն էր ***արդիականացման*** (հետագայում՝ ***ժողովրդավարական անցման)*** տեսություններ, իսկ երկրորդներինը՝ ***կախյալության*** տեսություններ:

Եթե արդիականացման տեսությունները հիմնավորում էին, որ ապագաղութացված երկրների զարգացումն ընթանալու է հիմնականում զարգացած կապիտալիզմի երկրների անցած ուղու (որոշակի առանձնահատկություններով) կրկնությամբ, ապա կախյալության տեսություններն ապացուցում էին, որ այդ ուղին սկզբունքորեն անհամապատասխան է թույլ զարգացած երկրների հիմնախնդիրների լուծմանը, և այդ երկրների վիճակը բացատրում էին գլոբալ կապիտալիզմի կառուցվածքային առանձնահատկություններով, որոնցից էլ բխեցնում էին այդ երկրների հասարակություններում առկա իրավիճակը, դրանցում ընթացող ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական և հասարակական զարգացումները:

Ժողովրդավարական անցման տեսությունները ժողովրդավարական անցումը պայմանավորում են հետևյալ երեք ոլորտներում իրականացվող հիմնարար փոփոխություններով՝ *ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացում*, *տնտեսական համակարգում ազատ*

4 Աշխատանքում «հասարակագիտություն» տերմինը ներառում է քաղաքագիտության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի և դրանցից ածանցված գիտությունների համախմբությունը: Սոցիոլոգիական մակրոտեսությունները, անկախ այն բանից, բացահայտորեն հայտարարում են հասարակական գիտությունների ինտեգրման նպատակ, թե՝ ոչ, դրան են հավակնում:

5 Այնուամենայնիվ, այդ ուղղությունների ակունքները կարելի է գտնել XVIII-XIX դարերի եվրոպական հասարակագիտական մտքում:

շուկայական հարաբերությունների գերակայության ապահովում[6] *և հասարակության շրջանում ժողովրդավարական քաղաքական մշակույթի ձևավորում:* Այս խնդիրները փոխկապակցված են և մեկը մյուսով պայմանավորված, իսկ փոխկապակցվածությունների գերակայությունների խնդիրը տեսականորեն լուծված չէ, այլ կախված է այն տեսակետից, որից տեսականորեն կամ գործնականորեն դիտարկվում է ժողովրդավարությունների կայացումը:

Ժողովրդավարության անցման տեսություններն իրենց զարգացման փուլերում կենտրոնացած են եղել տվյալ ժամանակաշրջանի հանգուցային խնդիրների շուրջ: Դեռևս XX դարի սկզբին սոցիոլոգները նկատել են, որ ավանդական հասարակություններում տեղի են ունենում այնպիսի գործընթացներ (ինդուստրացում, ազգային շուկաների ձևավորում, եվրոպական մշակույթի ընկալում), որոնց արդյունքում այդ հասարակությունները ձեռք էին բերում եվրոպական կամ արևմտյան երկրների հատկանիշներ[7]: Այդ գործընթացներն արագացան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Միաժամանակ ինտենսիվացան նաև դրանց ուսումնասիրությունները, որոնց շրջանակում այդ գործընթացների միասնությունը կոչվեց ***արդիականացում (մոդեռնիզացում)***, իսկ դրանք ուսումնասիրող տեսությունները՝ արդիականացման տեսություններ[8]: ***Տեսությունների հիմնական դրույթն այն է, որ թույլ զարգացած անկախ երկրներում արդիականացումը պետք է ընթանա այն նույն փուլերի կրկնությամբ, որոնք անցել են արդեն կայացած ժողովրդավարությունները***[9]*:*

Տեսության նոր տարբերակներում (XX դարի երկրորդ կես) որպես արդիականացման մեխանիզմներ էին դիտարկվում եվրոպական առաջավոր երկրների նվաճումների ներթափանցումը ***(դիֆուզիա)*** թույլ զարգացած երկրներ և դրանց մշակութային յուրացումը ***(ակուլտուրացիա)*** այդ երկրների հասարակությունների կողմից[10]: Որպես արդիականացման հիմնական գործոն հաճախ դիտվում էր հասարակության ***ինդուստրացումը***, իսկ ավելի լայն առումով՝ տնտեսական զարգացումը:

Արդիականացման առավել հայտնի տեսություններից է Ու. Ու. Ռոստոուի տնտեսական զարգացման փուլերի տեսությունը, որի համաձայն՝ բոլոր հասարակությունները հաջորդաբար անցնում են զարգացման հինգ փուլեր. 1. ագրարային փուլ, 2. տնտեսական զարգացման պայմանների ստեղծման փուլ, 3. անցումային փուլ, 4. վերելքի ու հասունացման փուլ, 5. զանգվածային սպառման բարձր մակարդակի փուլ[11]: Ըստ Ռոստոուի՝ ***հասարակությունների արդիականացումը սկսվում է որպես արտաքին ազդակների արձագանք****:*

---

6 Այդ տեսություններում գործնականում չի հանդիպում «կապիտալիզմ» տերմինը:

7 Робинсон Дж. Х., Испытание для цивилизации: Очерк развития и всемирной диффузии наших сегодняшних институтов и идей. // М., 1926.

8 Tipps D. C., Modernization Theory and Comparative Study of Societies: A Critical Perspective. // CSSH, Vol. 15., No 2, 1973.

9 Coleman J. S., Modernization: Political Aspects. International Encyclopedia of the Social Sciences. Ed. D. L. Sills. L., N. Y., Vol. 10, 1968.

10 Лернер Д., «Уход традиционного общества: Модернизация Среднего Востока». // М., 1958.

11 Ростоу В. В., Стадии экономического роста. Некоммунистический манифест. // Нью-Йорк, 1961, ст. 52. (Ըստ Ռոստոուի՝ վերելքի փուլն առաջինը սկսվել է Մեծ Բրիտանիայում և տևել է 1783-1802թթ.: Ֆրանսիայում նույնը տեղի է ունեցել 1830-1860թթ., Բելգիայում՝ 1833-1860թթ., ԱՄՆ-ում՝ 1843-1860թթ., Գերմանիայում՝ 1850-1873թթ., Շվեդիայում՝ 1868-1890թթ., Ճապոնիայում՝ 1878-1900թթ., Ռուսաստանում՝ 1890-1914թթ., Կանադայում՝ 1896-1914թթ., Արգենտինայում՝ սկսած 1935 թվականից, Թուրքիայում՝ 1937-ից, Հնդկաստանում և Չինաստանում՝ 1952-ից: 1960-ին 5-րդ փուլում էր ԱՄՆ-ն, այդ փուլն էին թևակոխում Արևմտյան Եվրոպայի երկրները և Ճապոնիան, հասունության փուլում էին գտնվում ԽՍՀՄ-ը, Արգենտինան և Մեքսիկան, վերելքի փուլում՝ Արևելյան Եվրոպան, Հնդկաստանը, Չինաստանը, Բրազիլիան և Վենեսուելան, անցումային փուլում՝ Միջին Արևելքը, Աֆրիկան և Լատինական Ամերիկան):

Հետագա տեսություններում արդիականացումը դուրս է եկել զուտ տնտեսագիտական ոլորտից և սկսել է մեկնաբանվել ավելի լայն իմաստով՝ որպես կապիտալիստական սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացում: Մասնավորապես ըստ էյզենշտադտի՝ «Արդիականացումը փոփոխությունների գործընթաց է, որը տանում է դեպի սոցիալական, տնտեսական և քաղաքական այնպիսի տիպի համակարգերի, որոնք XVII-XIX դարերում ձևավորվել են Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում ու տարածվել այլ երկրներում և մայրցամաքներում»[12]: Դրանով իսկ **հասարակությունների արդիականացումը զուտ տնտեսական ուսումնասիրությունների ոլորտից անցնում է նաև սոցիոլոգիական և քաղաքագիտական հետազոտությունների ոլորտներ**:

Եթե Ռոստոուն արդիականացումը դիտում էր որպես ագրարային հասարակության զարգացման արդյունք, ապա էյզենշտադտը ցույց է տվել, որ **արդիականացումը կարող է սկիզբ առնել միմյանցից որակապես տարբերվող տիպերի հասարակություններում**. մասնավորապես՝ զարգացած քաղաքային կենտրոններով բացարձակ միապետություններում և ֆեոդալական երկրներում (Արևմտյան Եվրոպա), ավտորիտար և թույլ ուրբանիզացված հասարակություններում (Արևելյան Եվրոպա), օլիգարխիկ-նվաճողական հասարակություններում (Լատինական Ամերիկա), կենտրոնացված ֆեոդալական հասարակություններում (Ճապոնիա), կայսերական համակարգում (Չինաստան): Մյուս կողմից էյզենշտադտը համարում էր, որ **Արևմտյան Եվրոպայում, ի տարբերություն այլ տարածքների, արդիականացման սկիզբը պայմանավորված էր ոչ թե արտաքին, այլ ներքին սոցիալ-տնտեսական գործոններով**:

Արդիականացման տեսության շրջանակում Գ. Ալմոնդը և Ս. Վերբան մշակեցին քաղաքացիական մշակույթի տեսությունը, որտեղ ժողովրդավարացման խնդիրը դիտարկվել է ոչ թե տնտեսական գործոնների, այլ հասարակության շրջանում առկա քաղաքական հայացքների, դիրքորոշումների և վարքագծային մոդելների խորապատկերում: Դրանով իսկ արդիականացման տեսությունների շրջանակում ձևավորվեց սոցիոլոգիական ուսումնասիրությունների լայն ոլորտ: Այդ տեսության հիմնական հասկացություններից մեկը՝ ***քաղաքական մշակույթը***, հետագայում վերածվել է տեսությունների խմբի անվանման, իսկ ***քաղաքացիական մշակույթի տեսությունը*** դարձել է կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների դասական հարացույց, որը կիրառվում է մինչ օրս[13]: Արդիականացման տեսության հետ է կապված նաև ***կոնվերգենցիայի տեսությունը*** (Կ. Կերր, Ս. Հանթինգտոն, Դ. Գոլդրոպ), որի համաձայն՝ իրարից էականորեն տարբերվող նախաարդիական հասարակությունների արդիականացումն ի վերջո հանգեցնում է միատեսակ բնութագրեր ունեցող համասեռ հասարակությունների[14]: Հարկ է նշել, որ կոնվերգենցիայի տեսությունը կիրառվում էր նախ և առաջ զարգացած կապիտալիստական և սոցիալիստական երկրների համադրության համար:

Ըստ արդիականացման տեսությունների՝ թերզարգացած երկրները կարճ ժամանակահատվածում իրենց զարգացման մակարդակով կմոտենան առավել զարգացած երկրներին, կվերացնեն աղքատությունը, կապահովեն ժողովրդավարության հաղթա-

12 Almond G., Verba S., The Civic Culture: Political Atitudes and Democracy in Five Nations. Princetone, N. J.: Princetone University Press, 1963.

13 Almond G., Verba S., The Civic Culture: Political Atitudes and Democracy in Five Nations. Princetone, N. J.: Princetone University Press, 1963.

14 Huntington S. P., The Change to Change: Modernization, Development and Politics. // Comparative Modernization. Ed. by C. E. Black. New York, 1976, P. 31.

նակը և մարդու իրավունքների պաշտպանությունը: Հետագա տասնամյակներում, սակայն, պարզվեց, որ թույլ զարգացած երկրներում աղքատությունը չի վերանում, ժողովրդավարական գործընթացները հաճախ ձախողվում են, իսկ տնտեսություններն ավելի ու ավելի են հետ մնում զարգացած երկրների տնտեսություններից[15]:

Արդիականացման տեսությունների շարքում առանձնակի հետազոտության առարկա դարձան ***ժողովրդավարական անցման գործընթացները*** և դրանց սոցիոլոգիական ուսումնասիրությունները: Օ' Դոննելը՝ նշելով, որ տնտեսական զարգացումը ոչ միշտ է հանգեցնում ժողովրդավարացմանը, առաջ քաշեց ***բյուրոկրատական ավտորիտարիզմի տեսությունը***՝ հիմնավորելով այն դրույթը, որ տնտեսության միջին զարգացման աստիճան ունեցող երկրներում առավել հավանական են ավտորիտար ռեժիմները:

Ժողովրդավարական անցման տեսությունների շարքում առանձնահատուկ տեղ գրավեց և դեռևս կիրառվում է Դ. Ա. Ռոստոուի ***դինամիկ մոդելը***, որը ներառում է ժողովրդավարության ծագման ու կայացման պատմական զարգացման գործոնները: Այդ գործոնների համատեքստում նա առաջ քաշեց ***ժողովրդավարության անցման փուլային*** դրույթը[16]: Այդ տեսության համաձայն՝ ժողովրդավարական անցումը տեղի է ունենում 4 փուլերով: Առաջին փուլում ստեղծվում են ժողովրդավարական անցման պայմանները, որոնց շարքում ամենակարևորն ազգային միասնականության ձևավորումն է, որը կարող է տեղի ունենալ տարբեր հիմքերի վրա: Հաճախ այն ձևակերպվում է որպես տնտեսական հետամնացության հաղթահարման նպատակ: Երկրորդ փուլը բնորոշվում է երկարատև քաղաքական պայքարով և հասարակության նորացմամբ շահագրգռված նոր վերնախավերի առաջացմամբ: Երրորդ փուլը որոշումների կայացման փուլն է, երբ նոր և հին վերնախավերի պայքարի արդյունքում ի հայտ են գալիս հասարակության նորացման կոնկրետ ձևերը, և կազմավորվում են նոր ինստիտուտները: Եվ, վերջապես, չորրորդ փուլի ընթացքում հասարակության շրջանում ձևավորվում են ժողովրդավարական նորմերն ու վարքագիծը:

Արդիականացման տեսությունների շրջանակում Լիպսեթն ուրվագծել է կայուն ժողովրդավարությունների և ՀՆԱ-ի բարձր ցուցանիշների միջև կապը[17], Բերգերն էլ ցույց է տվել, որ ժողովրդավարական համակարգերի կայունության համար անհրաժեշտ են սոցիալ-տնտեսական անհավասարության հարաբերական ցածր մակարդակ և շուկայական տնտեսության առկայություն[18], իսկ Ա. Լիպհարտը, Դ. Ռոստոուն և Ա. Պշևորսկին ժողովրդավարական անցման ընթացքում մատնանշել են առաջնորդության ներուժի և բնութագրերի կարևորությունը[19]:

Արդիականացման և ժողովրդավարական անցման ոլորտում լայնորեն կիրառվել են սոցիոլոգիայի դասականների տեսությունները և մոտեցումները: Սկսած Մ. Վեբերից՝ բազմաթիվ սոցիոլոգներ ցույց են տվել, որ կապիտալիստական համակարգի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության սոցիո-մշակութային առանձնահատկություններով: Չնայած Վեբերը ենթադրում էր, որ արդյունավետ կապիտալիզմը հնարավոր

15 Мюрдал Г. К., Драма Азии: Исследование о бедности наций. // Современные проблемы «третьего мира». // М., 1972.

16 Rustow D. A., Transitions to Democracy: Toward a Dynamic Model. // Comparative Politics, April, 1970, No 3, pp. 341-342.

17 Lipset S. M., Political Man., N. Y., 1960.

18 Berger P. L., Capitalist Revolution, N. Y., 1986., pp. 33-47.

19 Цитрин П. С., Западная демократия: основы стабильности. Научно-аналитический обзор. // М.: ИНИОН, 1990.

է միայն բողոքական հասարակություններում[20], սակայն հետագա ուսումնասիրություններն ու փորձը վկայել են, որ դա պարտադիր պայման չէ: Ավելի շուտ կարևոր են հասարակության այն բնութագրերը, որոնք այդ հասարակությանը մոտեցնում են բողոքականությանը, մասնավորապես՝ ակտիվիզմը, հակվածությունը ռացիոնալ նորարարություններին և ինքնակարգապահությունը[21]:

Չնայած արդիականացման տեսություններում էմպիրիկ նյութի հիման վրա կազմվել էին ժողովրդավարացման գործընթացի հետ կապված տարբեր գործոնների կորելյացիաները, սակայն ***ժամանակի ընթացքում հայտնաբերվում էին ցանկացած օրինաչափությունը հերքող օրինակներ***, որոնք հուշում էին, որ յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը ենթատեքստային է: Արդեն դժվար էր ժողովրդավարացման գործընթացները բացատրել այնպիսի գործոններով, ինչպիսիք են, օրինակ, բարձր կամ ցածր ՀՆԱ-ն, տնտեսական անհավասարությունը (Չինիի գործակիցը), շուկայական տնտեսության առկայությունը, ֆեոդալական մնացուկների ուժը, բուրժուազիայի և միջին դասի դիրքերը հասարակության կառուցվածքում, գրագիտության կամ կրթական ընդհանուր մակարդակը, քաղաքական մշակույթն ու կրոնական ավանդույթները, քաղաքացիական հասարակության և սոցիալական պլյուրալիզմի զարգացման մակարդակը, քաղաքացիական բռնությունների և քաղաքական ծայրահեղականության մակարդակները, վերնախավերի հակվածությունը ժողովրդավարական արժեքներին և, վերջապես, արտաքին ազդեցությունների առանձնահատկությունները[22]:

Այդ արդյունքները ստիպեցին մշակել նոր տեսություններ: Ժողովրդավարական անցման նոր տեսություններից է ***կառուցվածքային տեսությունը***, որն արդիականացման տեսության, այսպես ասած, հարմարեցումն է արդի պայմաններին: Այդ տեսության շրջանակում Հանթինգտոնը մշակել է ժողովրդավարական անցումների ուսումնասիրության՝ վեց դրույթ պարունակող հարացույց: Այդ դրույթներն են.

1. Ոչ մի առանձնացված գործոն չի կարող լիովին բացատրել ժողովրդավարության զարգացումը ցանկացած երկրում:

2. Ոչ մի առանձնացված գործոն անհրաժեշտ պայման չէ ժողովրդավարության զարգացման համար:

3. Ցանկացած երկրում ժողովրդավարության զարգացումը մի քանի գործոնների համատեղ ազդեցության արդյունք է:

4. Գործոնների խմբի ազդեցության արդյունքում առաջացած ժողովրդավարությունները տարբերվում են միմյանցից:

5. Ժողովրդավարացման ալիքների հիմքում ընկած են գործոնային տարբեր խմբեր:

6. Որոշակի երկրների խմբում ժողովրդավարական անցմանը նպաստած գործոնախումբը տարբերվում է այդ երկրներում քաղաքական ռեժիմների փոփոխությունները պայմանավորող գործոնախմբերից[23]:

---

20 Вебер М., Избранные произведения: Пер. с нем. // Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова, Предисл. П. П. Гайденко. // М.: Прогресс, 1990, 808 ст..

21 Berger P. L., Capitalist Revolution, N. Y., 1986., pp. 33-47.

22 Хантингтон С., Третья волна. Демократизация в конце XX века. // М.: РОССПЭН, 2003, 367 ст..

23 Хантингтон С., Третья волна. Демократизация в конце XX века. // М.: РОССПЭН, 2003, 367 ст., ст. 48-49.

ժողովրդավարական անցման պայմանների, գործոնների ու ձևերի բազմազանությունը և դրանց ուսումնասիրությունների արդյունքում կուտակված հսկայական էմպիրիկ նյութերի ընդհանրացման դժվարությունները հանգեցրին ժողովրդավարացման գործընթացների վերաբերյալ սկզբունքորեն տարբերվող նոր մոտեցումներին: Դրանց շարքում է մասնավորապես **ժողովրդավարացման ընթացքային (պրոցեսուալ) բացատրության տեսությունը**, որը **կասկածի տակ է առնում ժողովրդավարացման գործընթացների վրա որևէ նախադրյալի օրինաչափ ազդեցությունը** և կարևորում է յուրաքանչյուր կոնկրետ երկրի պատմական եզակի փորձն ու պատահական գործոնների ազդեցությունները: Համաձայն այդ տեսության՝ ժողովրդավարացման գործընթացների վրա իրական և էական ազդեցություն են գործում կոնկրետ ստեղծված իրավիճակն ու փոփոխությունների համատեքստը: Օրինակ՝ տեսության ուղղություններից մեկում ընդգծվում է, որ ժողովրդավարացման ընթացքն ու արդյունքները հիմնականում պայմանավորված են իշխանական և ընդդիմադիր քաղաքական վերնախավերի դերով, նրանց կայացրած որոշումներով և կիրառած ռազմավարություններով[24]:

1990-ականների վերջում ժողովրդավարական տեսությունների շարքում, վերջապես, հայտնվեցին նաև այնպիսիք, որոնք ժողովրդավարական անցման գործընթացում ուսումնասիրում են արտաքին միջավայրի ազդեցությունները: Որպես այդպիսիք են դիտվում. ա) **հասարակությունների «վարակումը» ժողովրդավարացման գործընթացով**[25], ինչի հետևանքով առաջանում են ժողովրդավարացման «ալիքներ», բ) **միջազգային կազմակերպությունների և ժողովրդավարացող երկրների կառավարությունների «համաձայնեցված ազդեցությունը»** ժողովրդավարացվող հասարակությունների վրա, գ) **ժողովրդավարացման ենթակա երկրների վրա քաղաքական և տնտեսական ճնշումների քաղաքականությունը,** դ) **ժողովրդավարության ներդրման համար տվյալ երկրի նկատմամբ բռնության կիրառումը կամ բռնազավթումը**[26]:

Ընդհանրացնենք. ըստ էության, արդեն 1990-ականների սկզբից արդիականացման տեսության կողմնակիցները բացահայտորեն ընդունեցին **արդիականացման տեսության հայեցակարգային սնանկությունը**: Ըստ Հանթինգտոնի՝ ժողովրդավարացման յուրաքանչյուր դեպք եզակի է, հետևաբար ընդհանրացնող տեսություն գոյություն չունի: Տեսությունը չունի ո՛չ բացատրական և ո՛չ էլ կանխատեսման ներուժ: Տեսության հետագա զարգացումները բացահայտեցին **արդիականացման տեսությունների բարոյական այլասերումը**, այն է՝ հանուն ժողովրդավարացման թույլատրելի են և՛ քաղաքական, և՛ տնտեսական ճնշումները, և՛ հասարակություններում հինգերորդ շարասյուների կազմավորումն ու սատարումը, և՛ վերջապես ռազմական ինտերվենցիան (ինչպես նախկին Հարավսլավիայում, Աֆղանստանում, Իրաքում, Լիբիայում և Սիրիայում): «Արդարացված են» խաղաղ բնակչության շրջանում հարյուր հազարավոր զոհերը, երկրների տնտեսության հիմնահատակ կործանումը, տասնյակ միլիոնավոր մարդկանց աղքատացումը և տեղահանումը:

Վերջին 25 տարիների հայաստանյան զարգացումներին ծանոթ ընթերցողի համար ակնհայտ է, որ արդիականացման տեսություններում արծարծված տնտեսական, քաղաքական և հասարակական բոլոր գաղափարներն այս կամ այն կերպով ներդրվել և կիրառվել են Հայաստա-

24 Karl T. L., Dilemmas of democratization in Latin America. // Comparative Politics, 1990, Vol. 23.

25 Przeworski A., ed. Sustainable Democracy (forthcoming). P. 77.

26 Nugent M. L., ed. From Leninism to Freedom. The Challenges of Democratization. Boulder, 1992, P. 267-268.

նում (հիմնականում արտաքին քաղաքական և գաղափարական ազդեցությունների միջոցով): Եվ չնայած Հայաստանում տեղի են ունեցել արդիականացման տեսություններից բխող և խորհուրդ տրվող քաղաքական, տնտեսական ու կառուցվածքային բոլոր փոփոխությունները, այնուամենայնիվ հայաստանյան հիմնախնդիրները խոշոր հաշվով չեն լուծվել:

Կախյալության տեսությունները հակադրվում էին արդիականացման տեսություններին: Դրանք նույնպես առաջացել են որպես կոնկրետ երկրների իրավիճակները վերլուծող տնտեսագիտական տեսություններ, սակայն աստիճանաբար ընդլայնելով իրենց ուսումնասիրության տիրույթը և համախմբելով ստացված արդյունքները՝ միավորվեցին լիարժեք սոցիոլոգիական մակրոտեսության մեջ:

Պատմականորեն կախյալության տեսությունները սկիզբ են առնում իմպերիալիզմի տեսություններից, որոնք զարգացվել են Մարքսի («Կապիտալ», 1867թ.), Հոբսոնի («Իմպերիալիզմի հետազոտություն», հրատարակվել է 1902թ.)[27], Լենինի («Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա», հրատարակվել է 1916թ.)[28], Գիլֆերդինգի («Ֆինանսական կապիտալ», հրատարակվել է 1910թ.), Բուխարինի («Համաշխարհային տնտեսությունը և իմպերիալիզմը», հրատարակվել է 1915թ.), Ռ. Լյուքսեմբուրգի («Կապիտալի կուտակումը» և «Քաղտնտեսության ներածություն», հրատարակվել են 1913թ.), Ֆ. Շտերնբերգի («Իմպերիալիզմը և ճգնաժամերը», հրատարակվել է 1930թ.) և այլ գիտնականների կողմից: Մասնավորապես ըստ Հոբսոնի՝ արևմտյան զարգացած երկրները քաղաքակրթական առաքելության դիմակի ներքո կողոպտում են գաղութային և թույլ զարգացած երկրները: Ըստ Լենինի՝ իմպերիալիզմը կախյալ երկրների հարյուր միլիոնավոր բնակչության շահագործումն է մի քանի առավել հարուստ երկրների կողմից[29]: Լյուքսեմբուրգի դիտարկմամբ էլ՝ տարբեր աշխարհամասերում գտնվող երկրները և ռասաները մեկը մյուսի հետևից կախվածության մեջ են ընկնում կապիտալից, իսկ միլիոնավոր մարդիկ վերածվում են պրոլետարիատի[30]:

Բուն կախյալության տեսությունները կարելի է դասակարգել ըստ այն տարածքների, որոնք պատմական տարբեր ժամանակահատվածներում ընդգրկվել են արդիականացման գործընթացներում: Մասնավորապես **Լատինական Ամերիկայի երկրներն** անկախացել են սկսած XIX դարի սկզբից, և այդ երկրներում միաժամանակ կազմավորվել են ներկայացուցչական ժողովրդավարության և շուկայական տնտեսության ինստիտուտները: Սակայն, ***ավելի քան 150 տարիների ընթացքում այդ երկրներն իրենց զարգացման մակարդակով այդպես էլ չեն հասել արևմտյան զարգացած երկրներին:*** Կախյալության տեսությունների լատինամերիկյան տարբերակներն ուղղված էին այդ երևույթի բացատրությանը: Կախյալության տեսությունների երկրորդ ուղղությունն առաջացել է **Ասիայի ու Աֆրիկայի պետություններում**, որտեղ արդիականացումն ու ժողովրդավարական անցումը սկսվել են 1950-60-ական թվականներին, սակայն այդ երկրների մեծ մասն այդ ոլորտում նույնպես նշանակալի հաջողությունների չի հասել:

Կախյալության տեսությունների լատինամերիկյան տարբերակների հիմնադիրներից է արգեն-

27 Hobson John., Imperialism: a study. University of Michigan Press, 1965.

28 Լենին Վ. Ի., Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա: Երկեր, հ. 22, Երևան, 1972:

29 Ленин В. И., Замечания по поводу статьи о максимализме. // Полн. собр. соч., Т. 30. ст. 386.

30 Люксембург Р., Введение в политическую экономию. // М., 1960, 320 ст..

տինացի Ռ. Պրեբիշը[31]: Նրա վաղ տեսության (1950թ.) հիմնական դրույթն այն էր, որ **կապիտալիստական համաշխարհային տնտեսությունը միասնական է**: Մի քանի բարձր զարգացած ինդուստրիալ երկրները կազմում են դրա «***կենտրոնը***», իսկ մնացած, հիմնականում ագրարային երկրները՝ «ծայրամասը» (***«պերիֆերիան»***): Ծայրամասային երկրները տնտեսական կախվածության մեջ են կենտրոնի երկրներից, ինչը ծայրամասային երկրների զարգացման հիմնական խոչընդոտն է, որով և պայմանավորված է նրանց հետամնացությունը: Այսինքն՝ **հետամնացության հիմնական պատճառն այն է, որ կենտրոնն արտահանում է ծայրամասային երկրների եկամուտների նշանակալի մասը**: Հետագայում այդ տեսությունը վերաճեց «**ծայրամասային կապիտալիզմի**» տեսության, որի առանցքային դրույթն էլ այն է, որ ծայրամասային երկրները նույնպես կապիտալիստական են, **սակայն այդ երկրներում կապիտալիզմն ունի որակապես այլ բնույթ, ինչի հետևանքով այն գործում և զարգանում է այլ օրենքներով, քան կենտրոնում**. «**Ծայրամասի յուրահատկությունն արտահայտվում է ամենուր՝ և՛ տեխնիկայի, և՛ սպառման ոլորտներում, և՛ արտադրության կառուցվածքում, և՛ զարգացման ու ժողովրդավարացման մակարդակում, և՛ հողօգտագործման ու հավելյալ արդյունքի ձևավորման համակարգում, և՛ ժողովրդագրական աճի գործընթացում**»: Պրեբիշը՝ նշելով, որ «Համակարգն իրենից անջրպետում է հասարակության լայն շերտերին, որոնք դատապարտվում են իրենց գոյությունը հասարակության հատակում պահպանելուն», հանգում է այն հետևությանը, որ կապիտալիզմի նեոդասական (արդիականացման) տեսությունները չեն կարող ընդունելի չափով բացատրել ծայրամասային կապիտալիզմի օրինաչափությունները: Պրեբիշն իր հայեցակարգում նախանշում է նաև ծայրամասային կապիտալիստական հասարակությունների սոցիոլոգիական ուսումնասիրությունների համատեքստը՝ համարելով, որ այդ երկրների հասարակությունների բնույթը և զարգացումը պայմանավորված են ծայրամասային կապիտալիզմի յուրահատկություններով:

Բրազիլիայում կախյալության տեսության ներկայացուցիչ Ս. Ֆուրտադուն ցույց է տվել, որ կապիտալիզմը, ներթափանցելով ոչ կապիտալիստական տարածքներ, այդտեղ կազմավորում է ***«հիբրիդային տնտեսություն»***, որում համակցված են ***կապիտալիստական միջուկը և հետամնաց կառուցվածքները***: Բրազիլական դպրոցի մյուս ներկայացուցիչը՝ Տ. Դոս Սանթոսը, ոչ միայն փաստել է, որ ծայրամասային երկրների կախյալությունն արտահայտվում է կապիտալիստական կենտրոնի հետ արտաքին առևտրում, այլև ***սահմանել է կախյալ երկրների զարգացման վերին շեմն ու զարգացման հնարավորությունները***[32]: Դրանց հիման վրա բրազիլացի Ռ. Մ. Մարինին առաջ քաշեց ծայրամասային երկրների հասարակությունների «գերշահագործման» դրույթը, ըստ որի՝ նրանք շահագործվում են ոչ միայն սեփական երկրների կապիտալիստական կենտրոնի, այլև կապիտալիստական աշխարհի կենտրոնի կողմից:

Բրազիլացի Ֆ. Կարդոզոն և չիլիացի Ե. Ֆալետոն, հակադրվելով արդիականացման տեսությանը, զարգացնում են այն թեզը, որ ***թերզարգացած երկրները չեն կարող կրկնել զարգացած կապիտալիստական երկրների զարգացման ընթացքը***, քանի որ նրանց համար տարբեր են ինչպես պատմական պահը, այնպես էլ հասարակական ու զարգացման պայմանները: Լատինամերիկյան երկրների թերզարգացումն առաջացել է նախ Արևմուտքի առևտրային, այնուհետև արդյունաբերական կապիտալի էքսպանսիայի և այդ երկրները համաշ-

31 Пребиш Р., Периферийный капитализм: есть ли ему альтернатива? // М., 1992. ст. 200.

32 Dos Santos T., The Crisis of Development Theory and the Problem of Dependence Latin America. // Underdevelopment and Development. The Third World Today. Ed. by H. Bernstein. Harmondsworth, 1976, P. 59.

խարհային շուկայում ընդգրկելու արդյունքում: Այլ կերպ ասած՝ այդ ***երկրների թերզարգացածությունը կենտրոնի և ծայրամասի միջև հարաբերությունների արդյունք է***[33]:

Կախյալության տեսությունը զարգացվում էր նաև Արևմտյան Եվրոպայում: Շվեդ Գ. Մյուրդալը 1950-ականներին համարում էր, որ ամբողջ աշխարհը, բացառությամբ սոցիալիստական տարածքի, տնտեսական ամբողջություն է կազմում և, բացի դրանից, ***«միջազգային մասշտաբի դասակարգային հասարակություն է»:*** Երկրների միջև տարբերությունները համանման են առանձին երկրում առկա դասակարգերի միջև տարբերություններին: Մարդկության մեծագույն մասը կազմում է ազգերի ստորին դասակարգը, իսկ շատ ավելի քիչ քանակով ազգերը՝ միջին շերտերը: Ընդ որում՝ 1950-ականներին ***«պրոլետարիատ» անվանումն ավելի համապատասխան էր ստորին շերտ կազմավորող ազգերին, քան զարգացած երկրների որևէ հասարակական շերտի***[34]:

Նույն ժամանակաշրջանում ամերիկացի Պ. Բարանն ապացուցում էր, որ ժամանակակից կապիտալիստական համակարգում, որը կազմված է երկու սեկտորներից՝ զարգացած երկրներից և թույլ զարգացած երկրներից, թույլ զարգացած երկրների իրավիճակը կապիտալիստական տնտեսության անխուսափելի հետևանքն է: Զարգացած երկրները, շահագործելով թերզարգացած երկրներին, սահմանափակում են նրանց զարգացումը[35]:

Արդեն 1980-ականներին անգլիացի Վ. Ջորջը ***զարգացած և թերզարգացած երկրների միջև հարաբերությունների բնույթը համարում էր թույլ զարգացած երկրներում աղքատությունը խորացնող գործոն***[36]: Այդ միտումները շարունակվում են նաև արդի գլոբալացման պայմաններում. հարուստ և աղքատ երկրների միջև համաշխարհային եկամտի բաշխման անհավասարությունն աճում է[37]:

1960-ական թվականներին սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներն արդիական դարձան Ասիայի և Աֆրիկայի անկախացած երկրներում: Այս դեպքում սոցիոլոգների ու տնտեսագետների ուշադրության կենտրոնում էին ոչ այնքան թույլ զարգացած երկրների կախյալության հիմնավորումն ու դրա գործոնների ուսումնասիրությունները (քանի որ դրանք արդեն մանրամասն ուսումնասիրված էին լատինամերիկյան գիտնականների կողմից), որքան այդ ***կախյալությունից ձերբազատվելու ուղիների փնտրտուքը***: Այդ հարցով զբաղվել են Ռ. Կոտհարին (Հնդկաստան), Ա. Ռահմանը (Բանգլադեշ), Սոջատմոկոն (Ինդոնեզիա), Պ. Վիգնառաջան (Շրի Լանկա), Ի. Աբդուլան (Եգիպտոս), Ս. Ամինը (Սենեգալ): Արդյունքում առաջացել են ասիա-աֆրիկյան երկրների ***«այլընտրանքային զարգացման»***, ինչպես նաև ***«սեփական ուժերին ապավինելու»*** տեսությունները:

Աշխարհի համակարգային վերլուծությունը (мир-системный анализ) միմյանցից անկախ զարգացվել է նախ ***Ֆ. Բրոդելի***[38], ապա ***Ի. Վալերստայնի***[39] կողմից: ***Տեսությունը դարձավ այն***

33 Cardoso F. H. and Faletto E., Dependency and Development in Latin America. Berkeley etc., 1978, P. 1727.

34 Мюрдаль Г. К., Мировая экономика. Проблемы и перспективы. // М., 1958, ст. 479.

35 Баран П., К экономической теории общественного развития. // М., 1960, ст. 368.

36 George V. Wealth, Poverty and Starvation: An International Perspective. // New York, 1988, P. 184.

37 Rodrik D., The New Global Economy and Developing Countries. Making Oppenness Work. Policy Essey, N 24, Washington, Overseas Development Council, 1999.

38 Бродель Ф., Материальная цивилизация, экономика и капитализм XV-XVIII вв., Т. 3, Время мира. // М., 1992, ст. 14.

39 Валлерстайн И., Анализ мировых систем и ситуация в современном мире. Рождение и будущая кончина

մակրոսոցիոլոգիական շրջանակը, որը միասնական տեսության մեջ ընդգրկեց կախյալության տարբեր տեսությունների բոլոր փաստարկները: Աշխարհամակարգային վերլուծության հայեցակարգին մոտ էին կանգնած և հետագայում դրան հարեցին Ա. Ֆրանկը[40] և Ս. Ամինը: ***Տեսությունն ունի երկու առանձնահատկություն. առաջինը՝ այստեղ միահյուսված են սոցիոլոգիական ու պատմական մոտեցումները, որոնք չեն դիտարկվում միմյանցից անկախ: Երկրորդը՝ տեսությունը նշում է, որ արդի աշխարհը միասնական համակարգ է, և հետևաբար նրա առանձին մասերի (պետությունների, հասարակությունների, ազգային տնտեսությունների) ուսումնասիրությունը մեթոդաբանական տեսակետից միշտ թերի է և չի կարող ադեկվատ նկարագրել իրականության բուն էությունը:***

Աշխարհամակարգային վերլուծության հայեցակարգում[41] սոցիալական համակարգի հիմնարար բնութագիրն է համարվում նրանում առկա աշխատանքի բաժանումը: Տեսությունում վերլուծության միավորը ոչ թե առանձին պետության հասարակությունն է, այլ ***ինքնաբավ տնտեսական տարածքը***[42]*:* Աշխատանքի բաժանման առկայության հետևանքով սոցիալական համակարգի տարբեր սեկտորների կամ աշխարհագրական տարածաշրջանների պահանջմունքների անարգել և անընդհատ բավարարումը կախված է այդ սեկտորների և տարածքների միջև տնտեսական փոխանակումից: Տեսությունը սոցիալական համակարգում տնտեսական փոխանակման իրականացման համար պարտադիր պայման չի համարում ոչ միայն միասնական քաղաքական համակարգի, այլև միասնական մշակութային համակարգի առկայությունը: Ըստ Վալերստայնի՝ ինքնաբավ սոցիալական համակարգերը լինում են երկու տեսակ. ***մինի-համակարգեր,*** որոնք պարունակում են աշխատանքի լիակատար բաժանում և միասնական մշակույթ (այս երևույթները, սակայն, գոյություն են ունեցել միայն շատ պարզունակ ագրարային կամ որսորդական-հավաքչական հասարակություններում), և ***աշխարհ-համակարգեր***, որոնք ունեն միասնական աշխատանքի բաժանման համակարգ, սակայն՝ մեկից ավելի մշակութային համակարգեր: Պատմականորեն գոյություն են ունեցել երկու տիպի աշխարհ-համակարգեր. այնպիսիք, որոնք ունեն ընդհանուր քաղաքական համակարգ կամ, այլ կերպ ասած, ***աշխարհ-կայսրություններ***, և միասնական քաղաքական համակարգ չունեցող ***աշխարհ-համակարգեր՝ աշխարհ-տնտեսություններ*** (мир-экономика)[43]: Աշխարհ-կայսրություններում, օրինակ՝ Հռոմեական, Օսմանյան, Ռուսական կայսրություններում, տնտեսվարման ձևը գերազանցապես վերաբաշխողական էր. տնտեսվարման արդյունքները պետության կողմից հավաքվում էին հարկերի տեսքով և վերաբաշխվում հասարակական տարբեր շերտերի միջև: Աշխարհ-տնտեսություններում տնտեսվարման ձևը շուկայական է, որտեղ ***գերակա նպատակ է հավելյալ արժեքի մաքսիմիզացումը:*** Մինչև XVI դարն աշխարհ-տնտեսությունները եղել են անկայուն կառուցվածքներ. դրանք կա՛մ արագորեն կազ-

---

капиталистической миросистемы: концептуальная основа сравнительного анализа. // СПб.: Издательство «Университетская книга», 2001, 416 ст..

40 Frank A. G., Sociology of Development and Underdevelopment of Sociology. // A. G. Frank. Latin America: Underdevelopment and Revolution. New York, 1969, P. 41.

41 Հայեցակարգը նկարագրված է ըստ՝ Валлерстайн И., Анализ мировых систем и ситуация в современном мире. Рождение и будущая кончина капиталистической миросистемы: концептуальная основа сравнительного анализа. // СПб.: Издательство «Университетская книга», 2001, 416 ст..

42 Այս տեսակետից տեսության մեթոդաբանությունը մոտ է քաղաքակրթական մոտեցումներին:

43 Валлерстайн И., Анализ мировых систем и ситуация в современном мире. Рождение и будущая кончина капиталистической миросистемы: концептуальная основа сравнительного анализа. // СПб.: Издательство «Университетская книга», 2001, ст. 23-24.

մալուծվում էին, կա՛մ էլ, նվաճվելով մեկը մյուսի կողմից, վերածվում էին աշխարհ-կայսրությունների: Սակայն, XIV դարում Եվրոպայում ձևավորված երկու աշխարհ-տնտեսությունները (մեկը՝ Միջերկրական ծովի ափին՝ **Վենետիկ** կենտրոնով, երկրորդը՝ Հյուսիսարևմտյան Եվրոպայում՝ **Ֆլանդրիայում** և **Գանգայում**) XVI դարում միավորվեցին մեկ աշխարհ-տնտեսությունում: Այդ աշխարհ-տնտեսությունն աստիճանաբար ներառեց տարբեր աշխարհագրական տարածաշրջաններ և XIX դարում ընդգրկեց ողջ աշխարհը՝ վերածվելով մինչ այսօր գոյություն ունեցող **միակ աշխարհ-տնտեսության**, որն էլ հանդիսանում է **արդի կապիտալիստական աշխարհ-տնտեսությունը**:

Շուկայական տնտեսավարման ձևի պահպանման համար կապիտալիստական աշխարհ-համակարգը ստեղծել է համապատասխան ***քաղաքական վերնաշենք***: Միջազգային հարաբերություններում դա ***ինքնիշխան ազգային պետությունների ցանցն է***, որը սահմանվում է միջպետական համակարգի անդամությամբ: Այդ քաղաքական համակարգը ձևավորվել է կապիտալիստական աշխարհ-տնտեսության ձևավորմանը զուգընթաց: Միջպետական համակարգի գործունեության սկզբունքը եղել և մնում է ***ուժերի հավասարակշռությունը***, որը թույլ չի տալիս, որ որևէ պետություն աշխարհ-տնտեսությունն աշխարհ-կայսրության փոխակերպելու ունակ լինի: ***Ներպետական հարաբերություններում քաղաքական վերնաշենքն օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարաբաժանման վրա հիմնված քաղաքական իշխանությունն է***, որի կարևորագույն սկզբունքը ժամանակավորապես և մրցակցությամբ ընտրված ներկայացուցչական կառավարումն է: ***Մի համակարգ, որը թույլ չի տալիս, որ քաղաքական իշխանությունն իր գերակայությունը հաստատի տնտեսավարման նկատմամբ***:

Համաձայն այդ տեսության՝ աշխարհ-համակարգերն ունենում են եռաստիճան կառուցվածք և կազմված են, պայմանականորեն ասած, ***կենտրոնից***, ***միջնամասից*** և ***ծայրամասից***: Աշխարհ-համակարգում ***ավելի բարձր դիրք գրավող օբյեկտն ավելի ցածր դիրքում գտնվող օբյեկտի հետ հարաբերություններում ունի առավելություն, ինչը նա օգտագործում է, որպեսզի առավելագույն չափով ապահովի իր շահերի առաջխաղացումը:***

Բրոդելը նկարագրել է աշխարհ-համակարգի կարևորագույն առանձնահատկություններից մեկը: Ցանկացած ժամանակահատվածում աշխարհի ամենաառաջավոր գիտությունը և տեխնոլոգիաները գտնվում են աշխարհ-համակարգի կենտրոնում և հանդիսանում են կենտրոնի արդյունաբերական ու տնտեսական գերիշխանության կարևորագույն գործոնները: Երբ տնտեսության որևէ սեկտորում ստեղծվում է ավելի արդյունավետ տեխնոլոգիա, ապա կենտրոնն առաջինն է այն յուրացնում, իսկ իր՝ արդեն (հարաբերականորեն) բարոյապես մաշված տեխնոլոգիաները փոխանցում է միջնամասին: Վերջինս էլ այդ՝ արդեն ոչ ամենաառաջավոր, սակայն բավականաչափ արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմամբ տնտեսության արդյունավետության գործընթացում որակական գերիշխանություն է պահպանում ծայրամասային տնտեսությունների նկատմամբ: Երբ միջնամասը կենտրոնից ստանում է նրա համար արդեն հնացած տեխնոլոգիաները, ինքն էլ ծայրամաս է տեղափոխում արդեն իր համար բարոյապես մաշված տեխնոլոգիաները: Այս մեխանիզմն աշխարհ-համակարգի կառուցվածքի կայունության պահպանման գլխավոր մեխանիզմներից է[44], որը բացատրում է ինչպես ***«տեխնոլոգիաների արտահանման»*** արգելքների, այնպես էլ ***«ուղեղների արտահոսքի»*** բովան-

44 Бродель Ф., Динамика капитализма. // Смоленск, 1993.

դակությունը. երևույթներ, որոնք բնորոշ են կապիտալիստական աշխարհ-համակարգին, այն է՝ ***«լավագույնը՝ կենտրոնին, խարամը՝ ծայրամասին»***:

Ժամանակակից և բարոյապես մաշված տեխնոլոգիաներին վերաբերող նկարագրված մեխանիզմն իր ուղղակի արտապատկերումն ունի տնտեսության կոնկրետ սեկտորներում և ճյուղերում, որոնք կազմավորում են ***գլոբալ տնտեսության նիշաները***: Որքան բարձր է տնտեսության սեկտորի նիշան, այնքան բարձր են դրա աշխատանքի արտադրողականությունը և, հետևաբար, շահույթի նորման ու ծավալը: Ամենաբարձր նիշայում է գտնվում ֆինանսական սեկտորը՝ բանկերը և ապահովագրական ընկերությունները, որոնք կիրառում են կառավարման և ինֆորմացիոն ամենաառաջավոր տեխնոլոգիաները: Այս նիշայի բոլոր խոշոր ընկերությունները գտնվում են աշխարհ-համակարգի կենտրոնում: Հաջորդ նիշայում են տիեզերական, ռազմական, բիո-, նանո-, նոր նյութերի, ավիաշինական և նավաշինական տեխնոլոգիաները: Այս սեկտորների ամենախոշոր և առաջավոր ձեռնարկություններն ու կազմակերպությունները գտնվում են կենտրոնի երկրներում: Դրանց հետևում են ավտոմոբիլաշինական, սարքաշինական, էլեկտրոնային սարքաշինության ձեռնարկությունները, որոնք կիրառում են արդեն նշված ոլորտների (հարաբերականորեն) բարոյապես մաշված տեխնոլոգիաները: Սրանք կազմում են աշխարհ-համակարգի ավելի ցածր տնտեսական նիշան և մեծամասամբ գտնվում են միջնամասային երկրներում: Հաջորդ՝ ավելի ցածր նիշայում են քիմիական, նավթաքիմիական, մետաղամշակման սեկտորները, որոնք կիրառում են առավել հնացած տեխնոլոգիաներ: Այս սեկտորներն առավելապես տեղաբաշխված են ծայրամասային երկրներում: Հաջորդ՝ էլ ավելի ցածր նիշան են կազմում **հանքարդյունաբերությունը**, **անտառային տնտեսությունը, գյուղմթերքների արտադրությունն ու վերամշակումը**: Ծայրամասի առավել հետամնաց երկրներում տեղաբաշխված այս սեկտորներում կիրառվում են էլ ավելի ցածր տեխնոլոգիաներ[45]: Ընդ որում՝ որքան ավելի ցածր է տնտեսական նիշան, այնքան ավելի «կեղտոտ» է այդտեղ կիրառվող տեխնոլոգիան:

Այսպիսով՝ Բրոդելի կողմից նկարագրված կապիտալիզմի դինամիկան վեր է հանում համաշխարհային տնտեսության կառուցվածքը, տեղաբաշխումն ու զարգացումը պայմանավորող մեխանիզմը, որը բացատրում է նաև Պրեբիշի, Կարդոզոյի, Դոս Սանթոսի, Ֆալետոյի և այլոց մատնանշած այն օրինաչափությունները, թե ինչո՞ւ են անհաջողության մատնվում արդիականացման տեսությունների կոնկրետ կիրառությունները:

Աշխարհ-համակարգում ունեցած իրենց դիրքից անկախ՝ ***համանման եռաստիճան կառուցվածք ունեն նաև երկրների հասարակությունները***: Տվյալ հասարակության կենտրոնի հասարակական շերտն են կազմում կապիտալիստական շրջանակները, նախ և առաջ՝ ***խոշոր (ֆինանսա-արդյունաբերական) կապիտալը***: Հասարակության միջնամասն են կազմում հասարակության ***միջին շերտերը***, որտեղ մասնավորապես կարևոր դիրք են գրավում սոցիալական բարձր ինտեգրվածությամբ կառավարման ապարատի վերին օղակները: Ծայրամասում էլ գտնվում են ***սոցիալապես վատ ինտեգրված հասարակության լայն շերտերը***՝ վարձու աշխատողները, փոքր հողատերերը, ինքնազբաղվածները: Անշուշտ, նկարագրված կառուցվածքային դիրքերի միջև սահմաններն աղոտ են, իսկ յուրաքանչյուր կառուցվածքային դիրքում առկա են և՛ ավելի բարձր, և՛ ավելի ցածր բազմաթիվ իրական դիրքեր: Որքան ավելի ծավալուն է համակարգը, այնքան, մյուս հավասար պայմանների դեպքում, այդտեղ ավելի շատ

45 Իրականում նիշաները շատ ավելին են, քան նկարագրված հինգը: Կարևորն այն է, որ ինչքան ավելի ցածր է տնտեսական նիշան, այնքան ավելի հեռու է այն գտնվում կենտրոնից:

են հիերարխիկ մակարդակներն ու նիշաները, սոցիալական տարածությունում միմյանցից ավելի հեռու են գտնվում բարձր և ցածր նիշաները, որով և ապահովվում է սոցիալական, տնտեսական և քաղաքական համակարգերի գոյությունը: Որքան ավելի փոքրածավալ է համակարգը, այնքան ավելի քիչ են հիերարխիկ նիշաները:

Աշխարհ-համակարգում միջնամասը թափարգելի (բուֆերի) դեր է կատարում կենտրոնի և ծայրամասի հարաբերություններում: Նրա հիմնական համակարգային գործառույթը կենտրոնի և ծայրամասի միջև հակասությունների մեղմացումն է ու մարումը, ինչն էլ ապահովում է աշխարհ-համակարգի կայունությունը: Յուրաքանչյուր երկրում կարելի է տեսնել աշխարհ-համակարգի՝ վերը նշված առանձնահատկությունների անալոգները:

Կապիտալիստական աշխարհ-համակարգի զարգացումը փուլային գործընթաց է: Նախնական փուլում նրա կենտրոնի պետություններն ունեցել են մոտավորապես հավասար ուժեր, ինչն անկայուն հավասարակշռության իրավիճակ էր: Երբ հավասարակշռությունը խախտվել է (որը տեղի է ունեցել և՛ օբյեկտիվ, և՛ պատահական գործոնների ազդեցությամբ), այսինքն՝ պետություններից մեկը մի փոքր ավելի է հզորացել և փորձել է իր առավելությունն օգտագործել առավել հզորանալու համար (սկսել է գործել անհավասար փոխանակման օրենքը[46]): Ժամանակի ընթացքում այդ առավելությունը հասել է իր գագաթնակետին, և «հավասարների շարքում առաջինը» ստացել է գերիշխող ***(հեգեմոն)*** կարգավիճակ: Գերիշխողի կարգավիճակը շատ կարճ է տևել. այն խարխլվել է և անկում ապրել: Ստեղծվել է նոր իրավիճակ, որի բովանդակությունը նոր գերիշխանության առաջացումն էր: Արդի կապիտալիզմի կենսափուլում պատմականորեն դիտվել են գերիշխանության երեք դեպքեր: XVII դարի կեսերին (1620-1672) առաջինը գերիշխողի կարգավիճակ են ձեռք բերել Հոլանդական միացյալ պրովինցիաները: Հոլանդական գերիշխանության խարխլումից հետո առաջնայնությունն աստիճանաբար անցել է Բրիտանական կայսրությանը, որը գերիշխել է XIX դարի կեսերին (1815-1873): XX դարի կեսերին (1945-1967) դրան հաջորդել է ԱՄՆ-ի գերիշխող կարգավիճակը[47]:

Տեսության համաձայն՝ միջպետական համակարգում պետությունն այլ պետությունների նկատմամբ գերիշխող կարգավիճակ ունի այն դեպքում, եթե նա կարողանում է տնտեսական, քաղաքական, դիվանագիտական և մշակութային ոլորտներում նշանակալի չափով իր կամքը թելադրել այդ երկրներին: Պետությունը գերիշխող կարգավիճակի է հասնում այն ժամանակ, երբ իր տարածքում գտնվող և ագրարային-արդյունաբերական, առևտրային և ֆինանսական ոլորտներում գործող ձեռնարկությունները միաժամանակ առավելության են հասնում այլ երկրների նմանօրինակ ձեռնարկությունների նկատմամբ: Գերիշխող երկրի ձեռնարկությունների առավելություններն այնքան մեծ են, որ նրանք կենտրոնի մյուս երկրների ձեռնարկություններին հաղթում են ոչ միայն համաշխարհային շուկայում առկա տնտեսական մրցակցությունում, ***այլև այդ իսկ երկրների ներքին շուկաներում***: Գերիշխող կարգավիճակ ունեցող պետությունն այնքան հզոր է, որ նույնիսկ նրա դաշնակից ուժեղ պետությունները նրա հետ հարաբերություններում գտնվում են, այսպես ասած, «հաճախորդի» (կլիենտի)

46 Դրա մասնավոր դեպքերից են տնտեսության օլիգոպոլացման և մոնոպոլացման ձգտումն ու գործընթացները, որոնք կապիտալիզմին ներհատուկ բնութագրերի շարքում են և բխում են հավելյալ արդյունքի մաքսիմիզացման հիմնական նպատակից: Սրանից էլ անմիջականորեն բխում է ցանկացած երկրում «շուկայական տնտեսություն» տեսական հասկացության բովանդակային անհամապատասխանությունը իրական տնտեսությանը:

47 Տարեթվերը, բնականաբար, ունեն որոշակի պայմանականություն:

կարգավիճակում, իսկ հակառակորդները միշտ գիտակցում են իրենց թուլությունը և գտնվում են պաշտպանողական դիրքերում:

Պատմահամեմատական վերլուծությամբ Վալերստայնը վեր է հանել գերիշխող կարգավիճակի ձեռքբերման օրինաչափությունները: Դրանք են.

1. Գերիշխող կարգավիճակը ձեռք է բերվում ագրարային-արդյունաբերական, առևտրային և ֆինանսական ոլորտներում հաջորդաբար առավելության հասնելու միջոցով:

2. ***Գերիշխող երկիրը միշտ գլոբալ ազատականության ջատագով է:*** Նա պաշտպանում է ապրանքների, աշխատուժի և կապիտալի ազատ տեղաշարժը, ազատական պառլամենտական ինստիտուտները, հակված չէ ուժային մեթոդներով քաղաքական փոփոխություններին, ձգտում է սահմանափակել բյուրոկրատիայի լիազորությունները, պաշտպանում է քաղաքական ազատությունները և միաժամանակ իր դռներն է բացում այլ երկրների քաղաքական վտարանդիների առջև: Սակայն, սեփական շահերով պայմանավորված՝ նա երբեմն որդեգրում է նաև հովանավորչական տնտեսական քաղաքականություն: Գերիշխողը միջամտում է այլ պետությունների ներքին գործերին և չի խորշում նաև բռնությունների կիրառումից: Գերիշխող երկրում, այլ երկրների համեմատ, ամենաբարձրն է աշխատավորների բարեկեցության մակարդակը, որը, սակայն, պայմանավորված է աշխատավորների ազգային պատկանելությամբ:

3. ***Գերիշխող երկիրն ամենահզոր ծովային (իսկ ներկայում՝ նաև օդային) տերություն է:*** Պատմականորեն դիտարկված գերիշխանությունները հաստատվել են 30-ամյա պատերազմների արդյունքում: Առաջին գերակայությունը հաստատվել է 1618-1648 թվականների պատերազմի արդյունքում, երբ Հոլանդիայի շահերը գերակայեցին Իսպանական Հաբսբուրգների շահերին, երկրորդը՝ 1792-1815 թվականների նապոլեոնյան պատերազմների արդյունքում, երբ Անգլիայի շահերը գերակայեցին Ֆրանսիայի շահերին, և երրորդը՝ 1914-1945 թվականների պատմական իրադարձությունների արդյունքում, երբ ԱՄՆ-ի շահերը գերակայեցին Գերմանիայի շահերին[48]:

4. ***Յուրաքանչյուր պատերազմից հետո տեղի է ունենում միջպետական հարաբերությունների վերակառուցում:*** Նշված երեք դեպքերում այդպիսի վերակառուցումներ են եղել համապատասխանաբար Վեստֆալյան խաղաղության (1640թ.), Սրբազան դաշինքի (1815թ.), Բրետոնվուդսյան (1944թ.) և ՄԱԿ-ի հիմնադրման (1945թ.) համաձայնություններով: Գերիշխող երկրի կարգավիճակի խարխլման հետևանքով առաջանում են գերիշխանության երկու նոր հավակնորդներ: Հոլանդիայի գերիշխանությունից հետո այդպիսիք էին Անգլիան և Ֆրանսիան, Անգլիայի գերիշխանությունից հետո՝ ԱՄՆ-ն և Գերմանիան, և դեռևս պարզ չէ, թե որ երկրներն են դրա հավակնորդները ներկայում, երբ խարխլվում է ԱՄՆ-ի գերիշխանությունը: Ընդ որում՝ նոր գերիշխողը նախկին գերիշխողին աստիճանաբար վերածում էր «կրտսեր գործընկերոջ». Անգլիան՝ Հոլանդիային, ԱՄՆ-ն՝ Անգլիային: Այժմ էլ դեռևս պարզ չէ, թե ով է լինելու հաջորդ հեգեմոնը:

5. ***Գերիշխողի կարգավիճակը կորսվում է, երբ նա ագրարային-արդյունաբերական, առևտրային և ֆինանսական ոլորտներում հաջորդաբար զիջում է իր առավելությունները:***

48 Վալերստայնը I և II համաշխարհային պատերազմները դիտում է որպես մեկ՝ 30-ամյա պատերազմ, ինչը բովանդակային տեսակետից չի հակասում պատմագիտական մոտեցմանը, որտեղ II համաշխարհային պատերազմը համարվում է I համաշխարհային պատերազմի ուղղակի և անմիջական հետևանքը:

Գերիշխանության խարխլման պատճառը հենց գերիշխողի կարգավիճակն է[49]: Չնայած գերիշխող երկիրն իր կարգավիճակին համապատասխան ստանում է տնտեսական առավելություններ, սակայն մյուս կողմից ստիպված է լինում «վճարել» աշխարհը կառավարելու իր արտոնության համար: Իր բնակչության իրական բարեկեցությունն (աշխատավարձերը) էապես բարձրացնելու հնարավորությունը հենց այն պատճառն է, որի հետևանքով աստիճանաբար նվազում է գերիշխող երկրի արտադրանքի մրցունակությունը: Խթանելով համաշխարհային տնտեսության ազատականացումը՝ նա միաժամանակ նպաստում է նոր տեխնոլոգիաների տարածմանը, ինչի արդյունքում մրցակից երկրների համար (որոնք ծանրաբեռնված չեն գերիշխողի պարտականություններով) ստեղծվում են իրենց մրցունակությունը բարձրացնելու լավ հնարավորություններ:

***

Անշուշտ, սոցիալիստական բլոկի և մասնավորապես ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացում իրենց դերն են խաղացել բազմաթիվ ներքին գործոններ, այնուամենայնիվ ***աշխարհի համակարգային վերլուծությունը, հաշվի առնելով դրանց առկայությունը և ազդեցությունը, ի տարբերություն արդիականացման տեսությունների, տալիս է արդի գլոբալ պրոցեսների հիմնական նպատակի, շարժիչ ուժերի և մեխանիզմների բովանդակային լուծումը***:

Աշխարհ-համակարգի վերակառուցումը սկսվեց 1984 թվականին, երբ ԱՄՆ-ի և Սաուդյան Արաբիայի փոխհամաձայնեցված գործողությունների արդյունքում տեղի ունեցավ նավթի համաշխարհային գների կտրուկ անկում, որն ամենայն խստությամբ սրեց ԽՍՀՄ-ի տնտեսական խնդիրները և դրանից բխող ներքին հակասությունների ամբողջ համախմբությունը: 1986 թվականին ԽՍՀՄ-ը ստիպված էր ձեռնամուխ լինել համակարգային փոփոխություններին, որոնք, սակայն, անհաջողության մատնվեցին, և ԽՍՀՄ-ը կազմալուծվեց[50]:

***

Հետխորհրդային տարածքի արդի զարգացումներն աշխարհամակարգային վերլուծության հայեցակարգում: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո՝ առաջին տասնամյակում, Ռուսաստանն արագորեն հայտնվեց աշխարհ-տնտեսության ծայրամասում և կանգնած էր փլուզման իրական վտանգի առջև: Սակայն, երկրորդ տասնամյակում (2000-2010թթ.) իր ռազմական հզորության պահպանման (նախ և առաջ միջուկային ռազմավարական զենքի) և կենտրոնացված կառավարման վերականգնման արդյունքում, ճնշելով ազգային-անջատողական շարժումները, վերակառուցելով և ուժեղացնելով պետական վերահսկողությունը էներգառեսուրսների և հանքահումքային արդյունահանման ձեռնարկությունների նկատմամբ, դրանք համախմբելով և հզորացնելով մինչև համաշխարհային նշանակության մակարդակի, Ռուսաստանը վերականգնեց իր միջնամասային գերտերության կարգավիճակը: Միաժամանակ Ռուսաստանը նախ և առաջ ավիացիոն-հրթիռաշինական, ռազմաարդյունաբերական, նանոտեխնոլոգիաների և ավտոմոբիլաշինական ոլորտներում իր արդյունաբերությունն արդիականացնելու հերթական

49 Այստեղ նույնպես Թոյնբիի տեսության հետ նկատվում է անալոգիա, այն է՝ քաղաքակրթությունը սկսում է անկում ապրել իր հզորության գագաթնակետին: Կենսապարբերության համանման պատկեր է նկարագրվում նաև Ն. Գումիլյովի էթնոգենեզի տեսությունում (Гумилев Л. Н., Этногенез и биосфера земли. // Ленинград, 1990):

50 Հարկ է նշել, որ գոյություն ունեն գլոբալ տնտեսության հետազոտություններ, որոնք ԽՍՀՄ-ի՝ տնտեսական պատճառներով փլուզումը համարում են ընդամենը գլոբալ զարգացումների հնարավոր տարբերակներից մեկը, այլ ոչ թե անխուսափելի անհրաժեշտություն (М. Хазин, Распад СССР и мировое разделение труда. http://worldcrisis.ru/crisis/188291):

պատմական ջանքն է գործադրում: Արդիականացնում է նաև միջուկային ռազմավարական սպառազինությունը, հզորացնում օվկիանոսային ռազմական նավատորմը: Համաշխարհային տնտեսության արդի գլոբալ ճգնաժամի պայմաններում, որն արտահայտվում է պարբերական և ուժգնացող ֆինանսական ճգնաժամերով, հարաբերականորեն աճում է **արտադրության իրական սեկտորի** և մասնավորապես դրա գործունեության հիմքը կազմող տրանսպորտային, նավթագազատրանսպորտային, էներգահաղորդման և ինֆորմացիոն ենթակառուցվածքների նշանակությունը: Դրանից էլ բխում են Ռուսաստանի գեոտնտեսական ռազմավարությունները, այն է՝ ռուսաստանյան խոշոր ընկերությունների գերիշխանության ներքո վերամիավորել հետխորհրդային տարածքի կոմունիկացիաները (էներգատարներ, էներգացանցեր, երկաթուղային ցանցեր): Այդ ռազմավարություններն ուղեկցվում են ռուսական ռազմակայանների հիմնադրմամբ:

Աշխարհ-համակարգում ընդգրկված լինելով որպես «բոլոր չափանիշներին բավարարող» սուբյեկտ՝ ***Ռուսաստանն իր գերիշխանությունը վերահաստատում է նախ և առաջ կապիտալիստական (շուկայական) մեթոդներով՝ քաղաքական և ռազմական ու ռազմավարական ճնշումներով բարձրացնելով այդ մեթոդների արդյունավետությունը և օգտագործելով հետխորհրդային երկրների ազգային վերնախավերի շահերի իրավիճակային և ռազմավարական գործոնների փոխդիրքավորվածությունը*** (կոնյուկտուրան):

***

Այսպիսով՝ արդիականացման և կախյալության տեսությունների պատմական զարգացման համառոտ դիտարկումից բխում է, որ աշխարհամակարգային վերլուծությունը՝ կախյալության տեսությունների ժամանակակից տարբերակը, ունակ է համապարփակ և անհակասական կերպով բացատրելու ժամանակակից աշխարհը, դրա կենսագործունեության ներքին դրդապատճառները և հնարավոր զարգացումների տրամաբանությունը: Ահա թե ինչու այն ընտրվել է որպես հետազոտության արդյունքների մեկնաբանության մակրոտեսական շրջանակ:

***

Հայաստանը և հայաստանյան գործընթացներն աշխարհամակարգային վերլուծության համատեքստում: Հայաստանյան վերջին 25-ամյակի զարգացումները հեշտությամբ մեկնաբանվում են աշխարհի համակարգային վերլուծության հայեցակարգով: Խնդիրը, սակայն, այն է, որ հայ ազգային աշխարհընկալումներում, արժեհամակարգում և պատկերացումներում այդ զարգացումներն ունեն իրենց ուրույն դիրքավորվածությունը, հետևաբար նաև իրենց յուրահատուկ բովանդակությունն ու այնպիսի մեկնաբանություններ, որոնք կարող են էապես տարբերվել և նույնիսկ հակադրվել աշխարհամակարգային վերլուծության հայեցակարգից բխող մեկնաբանություններին՝ կոգնիտիվ դիսոնանս առաջացնելով ազգային և պետական հարցերը զուտ ազգային շրջանակում դիտարկող վերլուծաբանների շրջանում:

Սպիտակի երկրաշարժը, Արցախյան պատերազմը և շրջափակումը բազմակի ծանրացրին իրավիճակը: Ընդ որում՝ աշխարհամակարգային վերլուծության տեսակետից Արցախյան պատերազմը, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակումը, ինչպես նաև հայ-վրացական և վրաց-ռուսական սահմանների պարբերական արգելափակումներն աշխարհ-համակարգի վերակառուցման լոկալ և տարածաշրջանային բաղկացուցիչ մասերն են:

Հայաստանի համար որպես նոր տնտեսական նիշաներ սահմանվեցին գյուղատնտեսությունը և գյուղմթերքների մշակումը, տուրիզմը և հանքարդյունաբերությունը, որոնք համապատասխանում են ծայրամասային երկրներին[51]: Այդ տնտեսական նիշաները չէին կարող ամբողջությամբ օգտագործել Հայաստանի աշխատուժի ռեսուրսները, ինչի հետևանքով հետխորհրդային բոլոր տարիներին Հայաստանում առկա են եղել **արտագաղթ** և **աշխատանքային միգրացիա**, որոնք ուժգնացել կամ թուլացել են գլոբալ տնտեսության վերելքի կամ ճգնաժամի և հետո միայն ներքաղաքական գործոնների ազդեցության ներքո:

Աշխարհամակարգային վերլուծության տեսակետից տրամաբանական հիմնավորում է ստանում նաև Հայաստանի ենթակառուցվածքային և արդյունաբերական կարևորագույն ձեռնարկությունների սեփականաշնորհումն օտարերկրյա ընկերություններին, իսկ վերջիններիս աշխարհագրությունը բացահայտում է գլոբալ մրցակցության կառուցվածքը, բնույթը և միտումները:

Աշխատանքի բովանդակությունը և կառուցվածքը

Աշխարհամակարգային վերլուծության շրջանակում գլոբալ և հայաստանյան զարգացումների համառոտ դիտարկումից անմիջականորեն բխում են այն հիմնական հարցերը, որոնք հարկ է ուսումնասիրել Հայաստանի երիտասարդության վերաբերյալ կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների հիման վրա: Այդ հարցերն են.

- **արդյո՞ք շարունակվելու են հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի քանակական և որակական ապաճման միտումները, և կա՞ն արդյոք հիմքեր ենթադրելու, որ դրանք կարող են շրջվել առկա («սպոնտան») գործընթացների շրջանակում,**
- **ինչպե՞ս է հնարավոր շրջել կամ նվազեցնել բացասական միտումները:**

Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի և երիտասարդության հիմնախնդիրներն աշխարհամակարգային վերլուծության շրջանակում ունեն իրենց հստակ և միաժամանակ խորը բացատրությունը: Տեսությունը տալիս է նաև այդ խնդիրների լուծման հիմնարար պայմանը.

- **Հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի, այդ թվում՝ նաև երիտասարդական խնդիրների լուծման հիմնարար պայմանը Հայաստանի՝ աշխարհամակարգում ունեցած դիրքի բարձրացումն է:**

Այստեղից էլ ածանցվում է խնդիրների լուծման հիմնական գործոնը, այն է՝

- **առավել բարձր տնտեսական նիշաներում գտնվող արդյունաբերական ճյուղերի զարգացումը Հայաստանում:**

Այնուամենայնիվ, այս աշխատանքում դիտարկվում են երիտասարդների՝ կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների միջոցով ստացված դիրքորոշումներն ու գնահատական-

51 Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացումը ՀՀ Կառավարությունն ինքնուրույն է հայտարարել որպես գերակայություն: Միջազգային խորհրդատուների արձագանքն այդ դիրքորոշմանը եղել է հետևյալը. «Եթե ցանկանում եք զարգացնել ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, զարգացրե՛ք, սակայն՝ առանց մեզանից աջակցություն ակնկալելու»: Դիրքորոշումն արտահայտվել է դեռևս 2002թ.՝ մասնավորապես ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մշակման ընթացքում:

ները: Ըստ այդմ՝ ակնհայտ է, որ հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի հիմնախնդիրների լուծման նշված հիմնական գործոնը դուրս է մնում վերլուծության շրջանակից:

Սակայն, այս դեպքում արդեն **նույնականացված հիմնական գործոնը կարելի է կիրառել որպես վերլուծության մեթոդաբանական ուղենիշ**, այն է՝ ի՞նչ նպատակներ պետք է հետապնդի վերլուծությունը: Եվ տվյալ պարագայում ակնհայտ է վերլուծության նպատակը.

- **գտնել ոչ բուն տնտեսական ոլորտների կառավարման այն ռազմավարական ուղղությունները, որոնք կնպաստեն Հայաստանի՝ աշխարհ-համակարգում ունեցած դիրքի բարձրացմանը՝ որպես գերակա նպատակի իրականացում:**

Վերոշարադրյալից բխում է վերլուծության կառուցվածքը: Աշխատանքում նախ ներկայացված են այն հարցերը, որոնք առկա են Հայաստանի երիտասարդության շրջանում.

1. զբաղվածության հարցերը, որոնց թվում՝
   1.1. զբաղվածության և գործազրկության դինամիկան Հայաստանում,
   1.2. երիտասարդների տնտեսական վարքը, այդ թվում՝
      1.2.1. վարձու աշխատանքի հետ կապված խնդիրները և
      1.2.2. բիզնեսի հետ կապված խնդիրները:

Այնուհետև դիտարկվել է զբաղվածության խնդիրների հետ անմիջականորեն շաղկապված և այդ խնդիրներից ուղղակիորեն բխող ոլորտը.

2. միգրացիոն խնդիրները, որոնց թվում՝
   2.1. սեզոնային աշխատանքային միգրացիան և
   2.2. (մշտական) արտագաղթը,[52] որը ներկայումս Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ծավալի կրճատման անմիջական պատճառն է, և
   2.3. ո՞ր գործոններն են ազդում մշտական արտագաղթի դիրքորոշումների դինամիկայի վրա:

Աշխատանքի հաջորդ փուլում դիտարկված է հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի չափերի վրա ազդող երկրորդ կարևոր ոլորտը, այն է՝

3. երիտասարդների վերարտադրողական վարքը, որով և՛ ներկայում (ուղղակիորեն), և՛ հեռանկարում պայմանավորված է Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ծավալի դինամիկան, այդ թվում՝
   3.1. դիրքորոշումներն ամուսնության վերաբերյալ և
   3.2. երեխաներ ունենալու պահանջմունքը:

Այնուամենայնիվ, ցանկացած հումանիտար հետազոտության նպատակը մարդն է և հասարակությունը: Տնտեսական խնդիրներն իմաստավորված են մարդու և հասարակության սոցիալ-հոգեբանական **գիտակցված** դրական ինքնազգացողության ապահովման և մարդկային բարձրագույն նպատակների ու ձգտումների իրականացման շրջանակում: Եթե առկա իրավիճակում այդ ձգտումների և նպատակների իրականացման առումով տնտեսական պայմանները

52 Աշխատանքում «արտագաղթ» հասկացությունը գործածվում է Հայաստանից ընդմիշտ հեռանալու և այլ երկրում մշտական բնակություն հաստատելու իմաստով:

համարվում են հանգուցային, այդուհանդերձ հասարակության մշակույթը՝ ժողովրդական (ավանդական) և բարձր (դասական), ճգնաժամային և ֆորս-մաժորային պայմաններում ունակ է վերածվելու տնտեսական անլուծելի թվացող խնդիրների լուծման հզոր ռեսուրսի: Կոնկրետ սոցիոլոգիական հետազոտություններն էթնիկ համակարգերի սոցիո-մշակութային ռեսուրսն ուսումնասիրելու, գնահատելու և գործարկման ուղիները նույնականացնելու լավագույն գործիքներից են: Ճգնաժամային պայմաններում սոցիո-մշակութային ռեսուրսը կարելի է դիտարկել որպես այնպիսի **պոտենցիալ էներգիա**, որը հնարավոր է վերածել տնտեսական զարգացման **(կինետիկ) էներգիայի**: Ահա թե ինչու վերլուծության հաջորդ բաժինը նվիրված է.

4. հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի սոցիո-մշակութային ռեսուրսի ուսումնասիրությանը, այդ թվում՝
   - 4.1. էթնո-սոցիո-մշակութային համակարգի ենթամշակութային կառուցվածքը և դրա ազդեցությունը,
   - 4.2. երիտասարդության աշխարհայացքը կազմող բազային դիրքորոշումները, որոնց թվում՝
     - 4.2.1. բազային դիրքորոշումները հասարակության և պետության վերաբերյալ,
     - 4.2.2. սոցիալական կապիտալ,
     - 4.2.3. ընտանեկան արժեքներ և ընտանիքի ամրության ռեսուրս,
     - 4.2.4. քաղաքական մշակույթ,
   - 4.3. ազգային ինքնության կառուցվածքն ու դրա ազդեցությունը էթնո-սոցիո-մշակութային համակարգի փոփոխության դինամիկայի վրա,
   - 4.4. երիտասարդության ինֆորմացիոն ռեսուրսները, ունակությունները, վարքը և դրա շաղկապվածությունը ենթամշակութային տիպերի հետ:

Եվ, վերջապես, հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի դինամիկայի վրա առավելագույն ազդեցություն կարող է գործել հայկական պետությունը՝ հայ հասարակության ինքնակազմակերպման բարձրագույն ձևը: Դիտարկված են պետության գործունեության ազդեցությունը և ազդեցության ռեսուրսը հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի վիճակի վրա: Պարզ է, որ գնահատումն իրականացվել է անուղղակիորեն՝ ուսումնասիրելով.

5. հայկական պետության գործունեության վերաբերյալ Հայաստանի երիտասարդության դիրքորոշումներն ու գնահատականները, որոնց թվում՝
   - 5.1. երիտասարդության դիրքորոշումները պետական քաղաքականությունների վերաբերյալ,
   - 5.2. պետության և պետական քաղաքականությունների վերաբերյալ երիտասարդության դիրքորոշումների ազդեցությունը միգրացիոն դիրքորոշումների վրա:

Աշխատանքի վերջում, հիմնվելով վերլուծության արդյունքների վրա, տրված են մի քանի **առանցքային** ռազմավարական ուղղություններ, որոնք և որոնց տրամաբանությունից բխող ածանցյալ ռազմավարությունները կնպաստեն հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի դրական զարգացմանը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՔ, ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ



Զբաղվածության և գործազրկության դինամիկան Հայաստանում

1990-ականների առաջին կեսին գործազրկությունն առավելապես թաքնված բնույթ ուներ, քանի որ պաշտոնապես աշխատողները մնում էին չգործող ձեռնարկությունների աշխատացուցակներում:

2001 թ-ին, երբ Հայաստանում Աշխատանքի միջազգային կազմակերպության **ընդլայնված** մեթոդաբանությամբ առաջին անգամ գնահատվեց գործազրկության մակարդակը, այն կազմում էր 38% (Գծապատկեր 1.)[53]:

1. ՀՆԱ աճի տեմպը, գործազրկության մակարդակը և ՀՀ ժամանողների ու մեկնողների գումարային սալդոն, 2000-2011թթ. (ՀՆԱ աճը նախորդ տարվա համեմատ՝ ՀՀ ԱՎԾ և www.ereport.ru)



53 Աշխատանքի միջազգային կազմակերպության **ստանդարտ** սահմանմամբ գործազուրկ է համարվում աշխատանքային տարիքի (15-75 տարեկան) այն անձը, ով հետազոտության պահին մեկ շաբաթ չի ունեցել վճարովի աշխատանք, վերջին մեկ ամսվա ընթացքում **ակտիվորեն** աշխատանք է փնտրել, իսկ դրա առաջարկի դեպքում պատրաստ է եղել 2 շաբաթվա ընթացքում անցնել աշխատանքի: Սկսած 2008 թ-ից Հայաստանում այս սահմանմամբ է հաշվարկվել գործազրկության մակարդակը:
Աշխատանքի միջազգային կազմակերպության **ընդլայնված** սահմանման դեպքում, որը Հայաստանում կիրառվել է 2001-2007թթ. ընթացքում, անձին որպես գործազուրկ նույնականացման համար չի կիրառվել նրա կողմից **«ակտիվորեն»** աշխատանք փնտրելու չափանիշը, որի հետևանքով այդ դեպքում գործազրկության մակարդակը նշանակալի չափով ավելի բարձր է ստացվում:
2008 թ-ին գործազրկության ԱՄԿ **«ընդլայնված»** մեթոդաբանությամբ հաշվարկված մակարդակը կազմել է 28.6%, իսկ **«ստանդարտ»** սահմանմամբ հաշվարկելու դեպքում՝ 16.4%:
Գործազրկության մակարդակը [տվյալ շերտում] հաշվարկվում է որպես [տվյալ շերտում] գործազուրկների քանակի հարաբերություն՝ [տվյալ շերտում] տնտեսապես ակտիվ անձանց քանակին:

2000-ականներին Հայաստանում առկա էր բարձր տեմպերով տնտեսական աճ, իսկ գործազրկության մակարդակը նվազում էր: Դա պայմանավորված էր Հայաստանի տնտեսության՝ աշխարհ-համակարգի նոր նիշայում առկա վերակառուցման ընթացքով, որի շրջանակում բացվում էին նոր աշխատատեղեր: Տնտեսական աճի տարիներին միաժամանակ նվազում էր Հայաստանից ընդմիշտ մեկնող անձանց քանակը, իսկ 2004-2006թթ. ընթացքում նույնիսկ դրական սալդո է գրանցվել (Գծապատկեր 1., ըստ ՀՀ միգրացիայի վարչության տվյալների՝ տրված է Հայաստանից մեկնողների և ժամանողների վիճակագրությունը): Այնուամենայնիվ, տնտեսական բարձր տեմպերով աճի տասնամյակը Հայաստանում չհանգեցրեց գործազրկության մակարդակի որակական նվազմանը, քանի որ տնտեսության նոր ճյուղերն ունակ չէին ներգրավելու աշխատատար արտադրությունների վերացման հետևանքով առաջացած «ավելորդ» աշխատուժը:

2008 թ-ի գլոբալ ճգնաժամը շատ մեծ ազդեցություն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա. 2009թ. ՀՆԱ-ն, 2008թ. համեմատ, 14.1% անկում ունեցավ: Եվ չնայած 2010-2011թթ. Հայաստանում **անվանական** ՀՆԱ-ն նորից սկսեց աճել, սակայն բացասական միտումներ առաջացան և՛ գործազրկության մակարդակի, և՛ հատկապես Հայաստանից մեկնողների ու Հայաստան ժամանողների տարեկան հաշվեկշռում:

Եթե գործազրկությանն անդրադառնանք բացարձակ արժեքով, ապա ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2010 թ-ին Հայաստանում կար 278,200 գործազուրկ, որոնցից 117,200-ը 15-29 տարեկան երիտասարդներ էին (Աղյուսակ 1.): Ակնհայտ է, որ տնտեսության ներկա կառուցվածքի պարագայում այդպիսի քանակով աշխատատեղերի ստեղծումն անիրատեսական է Հայաստանում, այսինքն.

- **Գործազրկության հիմնախնդիրը Հայաստանում և մասնավորապես երիտասարդության շրջանում անհնար է լուծել՝ առանց տնտեսության մեջ կառուցվածքային որակական փոփոխություններ կատարելու:**

Հայաստանի տնտեսության կառուցվածքային նոր փոփոխության հարցն այս աշխատանքի ուղղակի խնդիրներից դուրս է, սակայն դրան համառոտ անդրադարձ կկատարվի «Եզրակացություններ» բաժնում:

1. Գործազուրկների բացարձակ թվաքանակը, 2010թ., հազար մարդ, ԱՎԾ

	Ընդամենը	Տղամարդ	Կին	Քաղաք	Գյուղ
Աշխատանքային ռեսուրսներ	**2389.7**	**1075.7**	**1314**	**1554.5**	**835.1**
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	926.3	298.4	627.9	684.9	241.5
Զբաղվածներ	1185.2	644.8	540.4	627.7	557.5
Գործազուրկներ, որոնց թվում՝	**278.2**	**132.5**	**145.7**	**242**	**36.2**
15-19	17.0	7.3	9.7	13.4	3.6
20-24	59.5	28.4	31.1	44.7	14.8
25-29	41.1	22.3	18.8	33.3	7.8
Ընդամենը՝ 15-29	**117.6**	**58.0**	**59.6**	**91.4**	**26.2**
15-29, % ընդամենի նկատմամբ	**42%**	**44%**	**41%**	**38%**	**72%**

Զբաղվածության ու գործազրկության վերաբերյալ աշխարհամակարգային վերլուծության և արդի տնտեսագիտության (էկոնոմիքս) հայեցակարգային դրույթները փոխադարձաբար արտապատկերելու համար հիշենք, թե գործազրկության ինչ տեսակներ է առանձնացնում տնտեսագիտությունը: Այն տարբերակում է.

1. **Ֆրիկցիոն գործազրկություն**, որը պայմանավորված է աշխատանք փնտրելու ժամանակահատվածով: Այն առկա է ցանկացած տնտեսությունում, քանի որ մարդիկ տարբեր պատճառներով հակված են իրենց աշխատատեղը փոխելուն:
2. **Կառուցվածքային գործազրկություն**, որը պայմանավորված է տնտեսության կառուցվածքային փոփոխություններով, որոնք փոխակերպում են աշխատուժի պահանջարկը:
3. **Սեզոնային գործազրկություն**, որը պայմանավորված է տնտեսության տարբեր ճյուղերում աշխատուժի պահանջարկի սեզոնային փոփոխություններով:
4. **Պարբերական** (ցիկլիկ) **գործազրկություն**, որը պայմանավորված է տնտեսության և ապրանքների ու ծառայությունների պահանջարկի պարբերական անկումներով:
5. **Ինստիտուցիոնալ գործազրկություն,** որն առաջանում է աշխատուժի և գործատուների շրջանում տեղեկատվության պակասի հետևանքով, ինչպես նաև այն դեպքերում, երբ պոտենցիալ աշխատողը գերադասում է ցածր վարձատրվող աշխատանքի փոխարեն ստանալ գործազուրկի կարգավիճակ և նպաստ:

Ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկության մակարդակների գումարն անվանում են «**բնական**» կամ «**հաստատուն**» **գործազրկություն**: Հետևաբար աշխարհամակարգային վերլուծության տեսակետից Հայաստանում ապաինդուստրացման հետևանքով առաջացած գործազրկությունը տնտեսագիտությունը սահմանում է որպես **կառուցվածքային գործազրկություն** և, ինչը կարևոր է, այն նույնականացնում է որպես **բնական գործազրկության** բաղադրիչ:

Բնական գործազրկության մակարդակը տարբեր երկրներում և տարբեր ժամանակաշրջաններում ունի մեծ տարբերություններ:

Հետաձգելով Հայաստանում կառուցվածքային գործազրկության հաղթահարման հարցը՝ այժմ կարելի է անդրադառնալ երիտասարդության շրջանում իրականացված սոցիոլոգիական կոնկրետ հետազոտությունների տվյալներին և փորձել հասկանալ, թե ի՞նչ այլ հնարավորություններ են առկա Հայաստանի երիտասարդության շրջանում գործազրկության այլ տեսակների կրճատման առումով:

Հայաստանի երիտասարդության զբաղվածության և գործազրկության ընդհանուր պատկերը

Աղյուսակ 2.-ում տրված է Հայաստանի երիտասարդության բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակների և ըստ երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական խմբերի, իսկ Գծապատկեր 2.-ում՝ երիտասարդության շրջանում զբաղվածության մակարդակն ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի:

Հետագա աղյուսակներում ու գծապատկերներում, որոնցում ներկայացվում են Հայաստանի

երիտասարդության բնութագրերն ըստ IPSC կազմակերպության հետազոտության, առանձնացված են երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական հետևյալ ինը բնութագրերը.

1. **Սեռ**,
2. **Տարիքային խումբ՝** 18-19 տարեկաններ, 20-24 տարեկաններ և 25-30 տարեկաններ,
3. **Կրթություն՝** միջնակարգ և ավելի ցածր, միջին մասնագիտական, թերի բարձրագույն, բարձրագույն և մագիստրոսական ու ավելի բարձր,
4. **Բարեկեցություն**, որը մոտարկված է երիտասարդի ընտանիքի ամսական եկամտով. մինչև 100.000 դրամ, 101.000-200.000 դրամ, 201.000-360.000 դրամ և 361.000-ից բարձր,
5. **Բնակավայրի տիպ՝** Երևան, այլ քաղաքներ, գյուղեր,
6. **Ուսանողական կարգավիճակ՝** ուսանող և «ոչ ուսանող»,[54]
7. **Ամուսնական կարգավիճակ՝** ամուսնացած և չամուսնացած,[55]
8. **Ենթամշակութային պատկանելություն.** կառուցվել է ենթամշակութային պատկանելության ինդեքս, որի «1-1.5» արժեքների միջակայքը համապատասխանում է «ավանդական» ենթամշակութային տիպին, իսկ «3.5-4» միջակայքը՝ «դասական» ենթամշակութային տիպին: Մնացած միջակայքերը ցույց են տալիս այդ միջակայքերում գտնվող ինդեքսի արժեքներով երիտասարդական շերտի «հեռավորությունը» «ավանդական» և «դասական» շերտերից:
9. **Հայաստանից ընդմիշտ արտագաղթելու հակվածություն՝ «**հակված է արտագաղթին» և «հակված չէ արտագաղթին»[56]:

Կարևոր է նշել, որ բնութագրերից առաջին հինգի և ենթամշակութային պատկանելության կատեգորիաներն արտապատկերում են կարգային սանդղակներ, որոնցում ակնհայտ է, թե տվյալ բնութագրերի կատեգորիաներից որն է, այլ հավասար պայմանների դեպքում, ավելի գերադասելի կամ «ավելի բարձր»:

Աշխարհամակարգային վերլուծությունում բնութագրերի կատեգորիաները սահմանում են համակարգային դիրքեր կամ կարգավիճակներ: Տեսությունը նախանշում է, որ **աշխարհամակարգի կառուցվածքում համեմատաբար ավելի բարձր կարգավիճակային դիրքերում գտնվող անձանց և հասարակական խմբերի համար կենսագործունեության պայմանները, մյուս հավասար պայմանների դեպքում, ավելի բարենպաստ են**:

---

54 IPSC հետազոտության նպատակների շարքում նաև երիտասարդության շրջանում ուսանողների՝ որպես հասարակության ապագա վերնախավերը պարունակող շերտի առանձնահատկությունների ուսումնասիրությունն էր: Ահա թե ինչու հետազոտությունում իրականացվել էր ուսանողների հավելյալ ընտրանք՝ այդ շերտի բնութագրերի՝ վիճակագրորեն ավելի հավաստի գնահատման նպատակով: Համապատասխանաբար իրականացվել է հետազոտության ընտրանքի համակշռում:

55 Չամուսնացածների կատեգորիայում ընդգրկվել են և՛ երբեք չամուսնացածները, և՛ ամուսնալուծվածները, և՛ այրիներ: Բնութագրի իմաստն էր փորձել գնահատել ամուսնացած լինելու հանգամանքի ազդեցությունը երիտասարդների տարբեր բնութագրերի վրա:

56 Սահմանված է հետևյալ հարցի միջոցով. «Հնարավորության դեպքում ընդմիշտ կմեկնե՞ք արտասահման»: «Միանշանակ՝ այ՛ո» և «Հավանաբար՝ այ՛ո» պատասխաններ տվածները սահմանվել են որպես «Հակված է արտագաղթին», իսկ «Միանշանակ՝ ո՛չ» և «Հավանաբար՝ ո՛չ» պատասխաններ տվածները՝ «Հակված չէ արտագաղթին»: Այս ինդիկատորը լայնորեն կիրառվել է հետազոտությունում, քանի որ այն մի կողմից «բացատրող փոփոխական է», որը երբեմն կարելի է կիրառել երիտասարդական որևէ բնութագիր նկարագրելու համար, իսկ մյուս կողմից այն հիմնական «կառավարվող փոփոխական է», որը, ըստ հետազոտությունում նախանշված արժեքի, ցանկալի է նվազեցնել:

Այդ օրինաչափությունն արտացոլված է Աղյուսակ 2.-ի և Գծապատկեր 2.-ի տվյալներում, որոնք ներկայացնում են երիտասարդների զբաղվածության կարգավիճակների և գործազրկության մակարդակների բաշխումներն ըստ սոցիալ-ժողովրդագրական ու կարգավիճակային խմբերի բաշխումներում: Մասնավորապես զբաղվածների հարաբերական քանակն ավելի մեծ է տղամարդկանց, ավելի բարձր տարիքի երիտասարդների, համեմատաբար բարձր կրթությամբ անձանց, ավելի բարեկեցիկ ընտանիքների և համեմատաբար ավելի բարձր ենթամշակութային խմբերում: Բաշխումների «սպասելի» կերպարները (ընդհանուր տեսքերը կամ պատկերները) ցույց են տալիս, որ Հայաստանի հասարակությունը «ներդաշնակ» կերպով համապատասխանում է աշխարհ-համակարգի տրամաբանությանը:

Անալիտիկ տեսակետից կարևոր է ընկալել այդ տրամաբանությունից շեղումները և կարգային տարբեր աստիճաններում գտնվող խմբերի միջև դիտարկվող բնութագրի արժեքների շատ մեծ տարբերությունները: Առաջինն ազդարարում է տվյալ համակարգում առկա «եզակիությունների» առկայության, իսկ երկրորդը, երբ տարբեր խմբերի միջև շատ մեծ է անհավասարությունը, ազդարարում է հասարակությունում առկա հնարավոր բարձր լարվածությունների գոյության մասին: Արդի աշխարհում «անհավասարությունը» համարվում է կարևորագույն գլոբալ խնդիրներից մեկը, որից ածանցվում են նաև այլ գլոբալ խնդիրներ: Օրինակ՝ հարուստ և աղքատ երկրների միջև անհավասարությունը և դրա աճը գլոբալ միգրացիայի առաջացման առավել հզոր գործոնների շարքում են: Ըստ այդմ՝ անհավասարության կրճատումը միաժամանակ համարվում է և՛ որպես գլոբալ խնդիրների լուծման նպատակ, և՛ նախապայման: Այսպիսով՝ նորից հանգում ենք մի իրավիճակի, երբ հայաստանյան հիմնախնդիրները հանդիսանում են գլոբալ հիմնախնդիրների տեղային արտապատկերումներ:

Փորձենք բացատրել Հայաստանի երիտասարդության զբաղվածության բնութագրերում առկա եզակիությունները: Մասնավորապես՝ ինչո՞ւ է միջնակարգ մասնագիտական և թերի բարձրագույն կրթությամբ խմբերում զբաղվածների հարաբերական քանակն ավելի փոքր, քան միջնակարգ կրթությամբ անձանց շրջանում: Առաջինը բացատրվում է այն իրողությամբ, որ միջնակարգ մասնագիտական կրթությամբ անձինք ձգտում են նախ և առաջ աշխատել իրենց մասնագիտությամբ, քանի որ այդ դեպքում կարող են ավելի բարձր աշխատավարձ ակնկալել: Հայաստանի տնտեսության բնույթը, սակայն, այնպիսին է, որ ավելի պահանջված են մասնագիտություն չպահանջող աշխատատեղերը, ինչի հետևանքով միջնակարգ մասնագիտական կրթությամբ անձանց համար աշխատանք գտնելն ավելի դժվար է:

Թերի բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում էլ զբաղվածության ամենացածր մակարդակը բացատրվում է այն իրողությամբ, որ այդ կատեգորիայի անձինք մեծամասամբ ուսանողներ են (դա ակնհայտ է «Թերի բարձրագույն» և «Ուսանող» տողերի համեմատությունից): Սակայն, այս դեպքում այլ հարց է ծագում. ինչո՞ւ է ուսանողների մեծ մասը **զբաղված** (33%) կամ **գործազուրկ** (23%)՝ փոխանակ զբաղվելու իրենց ուղղակի պարտականությամբ՝ ուսմամբ (տնտեսապես ոչ ակտիվ ուսանողների քանակը 44% է): Արդյո՞ք սա անուղղակիորեն չի վկայում այն մասին, որ ուսանողների մեծ մասն ունի տնտեսական դժվարություններ, ինչի հետևանքով նրանց մեկ երրորդի համար առկա է ուսման որակը նվազեցնող հզոր գործոն՝ աշխատանքային զբաղվածությունը:

Շատ բարձր է երիտասարդ տղամարդկանց և կանանց զբաղվածության տարբերությունը: ՀՀ ԱՎԾ տվյալների համաձայն՝ 2010թ. Հայաստանում զբաղվածության մակարդակը (հաշ-

վարկված աշխատանքային ռեսուրսների նկատմամբ) կազմել է 49.6%, ընդ որում՝ տղամարդկանց շրջանում՝ 59.9%, կանանց շրջանում՝ 41.1%: IPSC հետազոտությամբ՝ 18-30 տարեկան երիտասարդների շրջանում զբաղվածների հարաբերական քանակը (որը տվյալ դեպքում համարժեք է ՀՀ ԱՎԾ ցուցանիշին) կազմել է նույնը՝ 49%, ընդ որում՝ տղամարդկանց համար՝ 67%, իսկ կանանց համար՝ 31%, այսինքն՝ աշխատում է երիտասարդ տղամարդկանց երկու երրորդը, իսկ կանանց՝ մեկ երրորդը:

Ինչպե՞ս ընկալել այսպիսի մեծ տարբերությունը՝ որպես դրակա՞ն, թե՞ որպես բացասական երևույթ:

Հարցին պատասխանելու համար անդրադառնանք նաև գործազրկության մակարդակի տվյալներին (Գծապատկեր 2.), որոնցից բխում է, որ կանանց շրջանում գործազրկության մակարդակը (40%) կրկնակի գերազանցում է տղամարդկանց ցուցանիշի արժեքին (20%):

Զբաղվածության և գործազրկության մակարդակների միասնական ընկալումը հուշում է, որ այստեղ առկա են երկու տարբեր հարթություններում գտնվող գործոններ: Առաջինը՝ երիտասարդ կանանց համար կրկնակի դժվար է աշխատանք գտնելը, ինչը հայաստանյան աշխատաշուկայի և հասարակության գենդերային բնութագրերի միասնական ազդեցության արտահայտությունն է: Սակայն, մյուս կողմից, կանանց շրջանում տնտեսապես ոչ ակտիվ անձինք կազմում են նրանց կեսը (49%) և եռակի գերազանցում են տղամարդկանց ցուցանիշի արժեքին:

Կանանց տնտեսական ցածր ակտիվությունը նշանակում է, որ նրանց շրջանում դեռևս գերակայում է ընտանիքով զբաղվելու դիրքորոշումը: Այլ հարց է, որ այդ դիրքորոշումն անհրաժեշտ է ընտանիքին սատարելու, հատկապես **երիտասարդ ընտանիքին** օժանդակելու առումով:

18-19 տարեկանների խմբում արձանագրված գործազրկության բարձր մակարդակը (42%) վկայում է այն մասին, որ Հայաստանում առկա են առաջին անգամ աշխատաշուկա մտնելու հետ կապված լուրջ խնդիրներ: Առաջին անգամ աշխատաշուկա մտնելու դժվարությունները, ըստ տնտեսագիտական տեսության, հանդիսանում են **ֆրիկցիոն գործազրկության** բաղադրիչներ, և համարվում է, որ դրանք կարելի է հաղթահարել ինստիտուցիոնալ մեթոդներով: Սակայն, ըստ աշխարհամակարգային տեսության՝ դա երիտասարդների՝ հասարակությունում կառուցվածքային ավելի ցածր դիրք ունենալու հետևանք է, այսինքն՝ այլ հավասար պայմանների դեպքում՝ նրանք չունեն բարձր կրթամակարդակ և աշխատանքային փորձ:

Գծապատկեր 2.-ում հատկանշական է գործազրկության մակարդակի պատկերների նմանությունը ըստ **կրթամակարդակի** և ըստ **ենթամշակութային** պատկանելության բնութագրերի: Գործազրկության մակարդակը համեմատաբար ավելի փոքր է ամենացածր և ամենաբարձր կրթամակարդակային և մշակութային շերտերում, ինչը նախ ցույց է տալիս այդ բնութագրերի դրական շաղկապվածությունը, իսկ մյուս կողմից վեր է հանում Հայաստանի աշխատաշուկայի (և տնտեսության) առանձնահատկությունները: Այստեղ պահանջված են կա՛մ մասնագիտական կրթություն ընդհանրապես չունեցող, կա՛մ ամենաբարձր կրթամակարդակով անձինք:

Նշենք նաև, որ գործազրկության մակարդակն ավելի բարձր է արտագաղթին հակված անձանց շրջանում: Ըստ այդմ՝ վստահաբար կարելի է ենթադրել, որ գործազրկությունը նպաստում է արտագաղթի վերաբերյալ դիրքորոշումների ձևավորմանը:

Գյուղերում գործազրկության նշանակալի ցածր մակարդակը պայմանավորված է նրանով, որ

գյուղաբնակները, այլ հավասար պայմանների դեպքում, գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորություն ունեն:

Զբաղված երիտասարդների՝ ըստ աշխատանքային կարգավիճակների բաշխումները (Աղյուսակ 3.) վեր են հանում Հայաստանի աշխատաշուկայի երկու կարևոր խնդիր.

- Յուրաքանչյուր չորրորդ աշխատող երիտասարդն աշխատում է բանավոր համաձայնությամբ, այսինքն՝ աշխատում է ստվերային ոլորտում, չունի աշխատանքի՝ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության ոչ մի երաշխիք, աշխատելով հանդերձ՝ չի գրանցվում թոշակային համակարգում, հետևաբար նրա ապագա սոցիալական ապահովությունը կորուստներ է կրում:
- Գյուղերում գյուղատնտեսությամբ զբաղված է երիտասարդների միայն 42%-ը: Նույնքան երիտասարդներ վարձու աշխատողներ են, իսկ ոչ գյուղատնտեսական ոլորտներում զբաղվածների հետ նրանք կազմում են 51.5%:

Երկրորդ խնդիրը Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի բացասական միտումները ռազմավարական հեռանկարում ուժեղացնելու մեծ ներուժ է պարունակում: Կախված սեզոնից՝ գյուղատնտեսության ոլորտում են զբաղվածների 63-72%-ը, իսկ երիտասարդների՝ միայն 42%-ը: Այսինքն՝

- **երիտասարդների մեծ մասը չի ցանկանում գյուղատնտեսությամբ զբաղվել: Հետևաբար Հայաստանում անորոշ երկար ժամանակ ձգվելու է երիտասարդության արտահոսքը գյուղերից: Եվ քանի որ Երևանն ու մարզային քաղաքներն ունակ չեն ընդունելու այդ երիտասարդ աշխատուժը, ըստ այդմ՝ շարունակվելու է նաև գյուղերից սեզոնային աշխատանքի մեկնելու գործընթացը՝ միգրացիան:**

2. Զբաղված, գործազուրկ և տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդների քանակը, IPSC

Սոցիալ-ժողովրդագրական բնութագրեր	Զբաղված	Գործազուրկ	Տնտեսապես ոչ ակտիվ
Ընդամենը	49%	19%	32%
Իգական	31%	20%	49%
Արական	67%	17%	16%
18-19	27%	20%	53%
20-24	47%	23%	30%
25-30	60%	14%	27%
Միջնակարգ	51%	13%	36%
Միջին մասնագիտական	42%	24%	35%
Թերի բարձրագույն	34%	21%	46%
Բարձրագույն	54%	26%	20%
Մագիստրոս	78%	14%	9%
Մինչև 100.000	45%	21%	34%
101.000-200.000	50%	17%	33%
201.000-360.000	53%	18%	29%
361.000 և ավելի	59%	12%	28%
Երևան	45%	23%	32%
Քաղաք	48%	21%	31%
Գյուղ	53%	13%	34%
Ոչ ուսանող	52%	18%	30%
Ուսանող	33%	23%	44%
Չամուսնացած	50%	24%	25%
Ամուսնացած	47%	10%	43%
1-1.5	57%	14%	29%
1.51-2.0	46%	18%	36%
2.01-3.0	46%	20%	34%
3.01-3.49	50%	20%	31%
3.5-4	63%	18%	19%
Հակված չէ արտագաղթին	49%	15%	36%
Հակված է արտագաղթին	47%	26%	27%

2. Գործազրկության մակարդակը երիտասարդության շրջանում, IPSC



3. Զբաղվածների բաշխումն ըստ տնտեսության հատվածների, IPSC

Ո՞րն է համապատասխանում Ձեր ներկայիս աշխատանքային կարգավիճակին	Երևան	Քաղաք	Գյուղ	Ընդ.
Վարձու աշխատող՝ կարճատև պայմանագրով (մինչև մեկ տարի)	15.5%	8.9%	6.6%	**10.1%**
Վարձու աշխատող՝ երկարատև պայմանագրով (մեկ տարի և ավելի)	42.9%	40.1%	18.4%	**32.7%**
Վարձու աշխատող՝ բանավոր համաձայնությամբ	22.4%	31.1%	17.6%	**23.3%**
Գործատու	3.2%	3.1%	1.3%	**2.5%**
Ինքնազբաղված (գյուղատնտեսությունում)	0.7%	0.6%	42.0%	**16.4%**
Ինքնազբաղված (այլ գործունեությամբ)	13.7%	14.0%	8.9%	**12.0%**
Ընտանիքի՝ առանց վարձատրության աշխատող անդամ	1.4%	0.0%	5.0%	**2.3%**
Արտադրական կամ սպառողական կոոպերատիվի անդամ	0.2%	2.0%	0.2%	**0.8%**
Ընդամենը	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**

4. Զբաղված երիտասարդների կրթության համապատասխանությունը նրանց աշխատանքին, UNDP

Ձեր ներկայիս աշխատանքը համապատասխանում է արդյո՞ք Ձեր մասնագիտությանը	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ մասնագիտական	Թերի բարձրագույն	Բարձրագույն և ավելի	Ընդամենը
Այո՛	4.0%	7.5%	27.7%	13.0%	37.9%	22.7%
Ավելի շուտ՝ այո՛	8.0%	1.2%	6.4%	21.7%	18.5%	12.1%
Ընդամենը՝ Այո	**12.0%**	**8.8%**	**34.0%**	**34.8%**	**56.5%**	**34.8%**
Ավելի շուտ՝ ո՛չ	0.0%	0.0%	8.5%	6.5%	10.5%	6.2%
Ո՛չ	8.0%	10.0%	57.4%	52.2%	32.3%	31.4%
Ընդամենը՝ Ոչ	**8.0%**	**10.0%**	**66.0%**	**58.7%**	**42.7%**	**37.6%**
Մասնագիտություն չունեմ	80.0%	81.2%	0.0%	6.5%	0.0%	27.3%
ԴՊ	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.8%	0.3%
Ընդամենը	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**

Երիտասարդության զբաղվածության դիտարկումը, ըստ նրանց աշխատանքի ու ստացած կրթության (Աղյուսակ 4.), վեր է հանում հետևյալ կարևոր խնդիրը.

- Հայաստանի աշխատաշուկայի և մասնագիտական կրթական համակարգի միջև առկա է շատ մեծ անհամապատասխանություն:

Մասնավորապես իրենց մասնագիտությամբ չեն աշխատում բարձրագույն կրթությամբ երիտասարդների 42.7%-ը և միջին մասնագիտական կրթությամբ երիտասարդների 66.0%-ը:

Այս իրավիճակը կարելի է բացատրել և՛ **կառուցվածքային**, և՛ **ինստիտուցիոնալ** գործազրկության միասնական ազդեցությամբ: Առկա տվյալները թույլ չեն տալիս միմյանցից սահմանազատել այդ պատճառների ազդեցությունները: Սակայն, կարելի է ենթադրել, որ տվյալ դեպքում ինստիտուցիոնալ գործազրկությունը նշանակում է, որ երիտասարդները հավանաբար բավարար չափով տեղեկացված չեն իրենց մասնագիտությամբ աշխատատեղերի մասին, կամ գոյություն ունեն այդ անհամապատասխանության նաև այլ պատճառներ:

Հետազոտական տվյալները հաստատում են այդ ենթադրությունը: Նախ հարկ է նշել, որ երիտասարդների միայն 45%-ն է հետևում թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններին, միայն 16%-ն է դիմում աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալություններ, և միայն 5%-ն է դիմում Զբաղվածության պետական գործակալություն, (Աղյուսակ 11.): Հատկանշական է աշխատանքային ցուցահանդեսների ծայրահեղ ցածր ժողովրդականությունը. դրանց մասնակցել է աշխատանք փնտրող երիտասարդների ընդամենը 1%-ը:

Պատկերն ամբողջականացնելու համար դիտենք Զբաղվածության պետական գործակալության աշխատանքի վերաբերյալ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալները (Աղյուսակ 5. և Աղյուսակ 6.):

Տվյալներից բխում է, որ Զբաղվածության պետական գործակալությունը 2002-2008թթ. ընթացքում կարողացել է աշխատանքի տեղավորել մոտավորապես նույն բացարձակ քանակով աշխատանք փնտրողների: Սակայն, այդ նույն ժամանակահատվածում 63.827 անձով (154.071-ից մինչև 90.244) կամ 42%-ով կրճատվել է գործակալություն դիմած աշխատանք փնտրողների քանակը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ 2009 և հատկապես 2010թ. ընթացքում գործակալության կողմից աշխատանքի տեղավորված անձանց քանակն աճել է 2684-ով: Այդուհանդերձ, գործակալությունը կարողանում է աշխատանքի տեղավորել միայն յուրաքանչյուր տասներորդ դիմողին: Զարմանալի չէ, որ երիտասարդները չեն դիմում այդ գործակալությանը, և որպես հետևանք՝ երիտասարդության շրջանում գրանցված (պաշտոնական) գործազրկության մակարդակը կազմում է ընդամենը 1.3%, և դա այն դեպքում, երբ երիտասարդության գործազրկությունն իրականում 28% է, իսկ Զբաղվածության պետական գործակալությունում գրանցված գործազուրկների կազմում երիտասարդները կազմում են 19.1% (Աղյուսակ 6.):

Նշենք, որ գործազրկության միջին տևողությունը 23.1 ամիս է:

5. Զբաղվածության պետական գործակալության աշխատանքային ցուցանիշները, ՀՀ ԱԿԾ

Տարի	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Զբաղվածության պետական գործակալություն դիմած անձանց քանակը	154071	148379	142664	120940	102172	89367	90244	99308	92230
Տեղավորվել են աշխատանքի	8473	7889	7893	8296	8268	8322	8657	9394	11341
Աշխատանքի տեղավորվածների տոկոսը	5.5%	5.3%	5.5%	6.9%	8.1%	9.3%	9.6%	9.5%	12.2%
Պաշտոնապես գրանցված գործազուրկների քանակը	127300	118646	108622	88991	84571	75050	74698	84493	78804
Գործատուների՝ տարեվերջին պաշտոնապես ներկայացրած աշխատուժի պահանջարկը	896	738	622	1129	1167	816	668	738	944
Մեկ թափուր տեղի ծանրաբեռնվածությունը	169	210	231	102	78	95	115	117	85
Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը	10.8%	10.1%	9.6%	8.2%	7.5%	7.0%	6.3%	7.0%	7.0%
Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը՝ 16-30 տարեկաններ	-	-	-	-	1.3%	1.3%	1.1%	1.3%	1.3%
Գործազրկության մակարդակն ըստ ԱՄԿ մեթոդաբանության	35.3%	31.2%	31.6%	31.2%	27.8%	28.7%	16.4%	18.7%	19.0%

6. Պաշտոնապես գրանցված գործազուրկներն ըստ տարիքի, ՀՀ ԱԿԾ

Տարիք	Տոկոս
16-18	0.6%
19-24	6.5%
25-30	12.0%
31-54	63.9%
55 և բարձր	17.0%

Այսպիսով՝

- **Որպես երիտասարդության շրջանում ֆրիկցիոն և ինստիտուցիոնալ գործազրկության մակարդակների նվազեցման ուղիներ պետք է դիտել աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկությունների մատչելիությունը և ընկալելիությունը:**
- **Անհրաժեշտ է ուղիներ գտնել՝ երիտասարդության շրջանում Զբաղվածության պետական գործակալության աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար[57]:**

Աշխատանք գտնելու դժվարությունները, աշխատանքի տեղավորվելու համար անհրաժեշտ գործոնները և աշխատանք գտնելու ձևերը

Որո՞նք են Հայաստանում աշխատանք գտնելու դժվարությունները, որո՞նք են աշխատանք գտնելու համար անհրաժեշտ գործոնները, արդյո՞ք Հայաստանում լավ մասնագետը կարող է գտնել իր տեղը, և երիտասարդներն ինչպե՞ս են աշխատանք փնտրում:

Հայաստանում երիտասարդների համար աշխատանք գտնելու ամենամեծ խոչընդոտներն են. «Չկան բավարար քանակությամբ աշխատատեղեր» (62%) և «Գործատուներն աշխատանքի են ընդունում հիմնականում իրենց ծանոթներին» (53%) (Աղյուսակ 10.): Առաջին խոչընդոտը բնորոշ է աշխարհ-համակարգի նիշայում վարընթաց ունեցած և շատ ցածր նիշայում հաստատված երկրին: Երիտասարդների կարծիքի հիմնավորվածության մասին են վկայում Զբաղվածության պետական գործակալության տվյալները, որոնց համաձայն՝ 2010թ. աշխատանքային մեկ թափուր տեղի ծանրաբեռնվածությունը եղել է 85 հոգի (Աղյուսակ 5.): Հատկանշական է, որ այս խոչընդոտը հարաբերականորեն ավելի շատ են նշել համակարգի կառուցվածքային ավելի ցածր դիրքերում գտնվող հասարակական շերտերի ներկայացուցիչները՝ ավելի երիտասարդները, ավելի ցածր կրթամակարդակ ունեցող անձինք, գյուղաբնակները (Աղյուսակ 10.):

Երկրորդ խոչընդոտը բնորոշ է ավանդական հասարակություններին, որտեղ արյունակցական և բարեկամական կապերը շատ ուժեղ են և պարտավորեցնող: Հարկ է նշել, որ այդ խոչընդոտն ավելի շուտ ծագում է ոչ թե գործատուների դիրքորոշումներից, ովքեր իրենց բիզնեսի արդյունավետության համար, այլ հավասար պայմանների դեպքում, կգերադասեին աշխատանքի ընդունել առավել բարձրակարգ մասնագետին, այլ հենց իրենցից՝ աշխատանք փնտրողներից: Դրա մասին է վկայում այն փաստը, որ նույն երիտասարդները, ովքեր նշել են, որ «Գործատուներն աշխատանքի են ընդունում հիմնականում իրենց ծանոթներին», միաժամանակ որպես աշխատանք գտնելու առավել արդյունավետ մեթոդ նշել են, որ «Դիմում են իրենց ծանոթներին» (68%) (Աղյուսակ 11.):

Այն դեպքում, երբ գործատուները ճնշված չեն լինում ավանդական վարքի պահանջներով և առաջնորդվում են իրենց բիզնեսի շահերով, գործազրկության բարձր մակարդակ ունե-

57 Այդ ցուցահանդեսների արդյունավետությունը մասնավորապես արժե գնահատել հետևյալ ինդիկատորով. «Ցուցահանդեսի արդյունքում աշխատանքի տեղավորված մեկ անձի հաշվով ծախսված գումարը»:

ցող երկրում առաջադրում են «ոչ իրատեսական պահանջներ» (Աղյուսակ 10.)՝ ձգտելով ցածր որակավորում պահանջող աշխատատեղում աշխատանքի ընդունել ավելի բարձր որակավորմամբ մասնագետի: Աշխատանքի ընդունվելու առումով այդ խոչընդոտը նշել է երիտասարդների 25%-ը: Այս դեպքում տնտեսական համակարգի **կառուցվածքային ավելի բարձր դիրքում** գտնվող գործատուն օգտվում է կառուցվածքային իր առավելությունից: Մյուս կողմից տնտեսագիտությունն այդպիսի իրավիճակը մեկնաբանում է որպես շուկայական առաջարկի և պահանջարկի օրենքի արտահայտություն, երբ աշխատուժի պահանջարկի նկատմամբ առաջարկի գերազանցումը (թափուր աշխատատեղի բեռնվածքը՝ 85) գործատուներին թույլ է տալիս օգտվել շուկայի իրավիճակից բխող իրենց առավելությունից: Հատկանշական է, որ այս խոչընդոտը հարաբերականորեն ավելի հաճախ են նշել Երևանում, որտեղ գործազրկության մակարդակն ամենաբարձրն է:

Եվ չնայած աշխատատեղերի պակասին և ծանոթների ու բարեկամների միջոցով աշխատանքի ընդունվելու դիրքորոշումներին՝ լավ մասնագետներն արդյո՞ք Հայաստանում կարող են գտնել իրենց տեղը (Գծապատկեր 3.):

Այն կարծիքի հետ, որ «Հայաստանում լավ մասնագետները միշտ էլ կարողանում են աշխատանքի անցնել իրենց մասնագիտությամբ», համաձայն է երիտասարդների կեսից մի փոքր ավելին՝ 52%-ը (Գծապատկեր 3.):

3. «Հայաստանում լավ մասնագետները միշտ էլ կարողանում են աշխատանքի անցնել իրենց մասնագիտությամբ», «Համաձայն եմ», «Ավելի շուտ համաձայն եմ», UNDP



Գրավիչ ձեռնարկություններ և աշխատատեղերի գրավչության գործոններ

Հայաստանի երիտասարդության համար ո՞ր ձեռնարկություններն են գերադասելի: Ուսումնասիրվել է այն հարցը, թե երիտասարդների գերակայությունների համար արդյո՞ք նշանակություն ունի ձեռնարկության կառուցվածքային նիշան: Գծապատկեր 4.-ում տրված է հարցված երիտասարդների քանակը, ովքեր նշել են, որ կցանկանային աշխատել որոշակի տիպի աշխատավայրում, այն է՝ միջազգային կազմակերպություններում, պետական կառավարման մարմիններում, պետական (բյուջետային) այլ կազմակերպություններում, պետական գործարաններում, հայկական խոշոր բիզնեսի կազմակերպություններում, հայկական փոքր բիզնեսի կազմակերպություններում և հասարակական կազմակերպություններում:

4. Տարբեր տիպի ձեռնարկությունների և կազմակերոությունների գրավչությունը վարձու աշխատանքի դեպքում, IPSC



Հատկանշական է, որ ձեռնարկությունների տիպերը դասավորվել են Բրոդելի և Վալերստայնի տեսություններով կանխատեսված գերակայություններին համապատասխան, այսինքն՝ **իրենց կառուցվածքային դիրքի նվազման հաջորդականությամբ**: Առավել գերադասելի են միջազգային կազմակերպություններն ու հայկական խոշոր բիզնեսի ձեռնարկությունները՝ էմպիրիկ կերպով կազմավորելով առավել բարձր նիշան: Դրանց հետևում են պետական կազմակերպությունները՝ կազմավորելով երկրորդ՝ ավելի ցածր նիշան, և միաժամանակ վերահաստատելով, որ արդի աշխարհ-համակարգում խոշոր բիզնեսը գերակայում է պետությանը[58]: Հատկանշական է, որ **իր գրավչությամբ ամենավերջին տեղում է փոքր բիզնեսը** (հարցման ընթացքում փոքր բիզնեսին վերաբերող տարբերակում հատուկ նշվել է ***«ուրիշին***

58 Այն փաստը, որ արտասահմանյան խոշոր ընկերությունների ներկայացուցչությունները գտնվում են [պայմանականորեն] երկրորդ նիշայում, բացատրվում է նրանով, որ դրանք, որպես կանոն, ավելի փոքր են, քան հայկական խոշոր բիզնեսի կազմակերպությունները: Բացի դրանից՝ Հայաստանում իրենց գործունեության ժամանակի առումով ավելի անկայուն են և աշխատողների նկատմամբ իրենց ունեցած պահանջների հետևանքով՝ հաճախ ավելի անմատչելի:

պատկանող» արտահայտությունը): Այս աշխատատեղերը, գտնվելով ամենացածր և հետևաբար ամենախոցելի նիշայում, առավել անկայուն են, այստեղ աշխատավարձերն ամենացածրն են, և աշխատողները չունեն սոցիալական պաշտպանվածություն (հաճախ աշխատում են բանավոր համաձայնությամբ՝ առանց պայմանագրերի): Հարկ է հիշել, որ այս բնութագրերը նկարագրում են աշխարհ-համակարգի տնտեսական ամենացածր նիշան. այն, ինչը Բրոդելն անվանել է **«շուկայական տնտեսություն»**, որտեղ կան բազմաթիվ փոքր արտադրողներ և բազմաթիվ գնորդներ:

Աշխատավայրերի շարքում դիտարկվել են նաև պետական գործարանները (որոնք ներկայումս չկան)՝ երիտասարդների՝ դրանց նկատմամբ ունեցած դիրքորոշումները բացահայտելու նպատակով: Տվյալները ցույց են տալիս, որ **ինչպես պետական կառավարման մարմինները** և այլ հաստատությունները, այնպես էլ **պետական գործարանները կունենան նույնպիսի գրավչություն:**

Աղյուսակ 7.-ում տրված է դիտարկված ձեռնարկությունների գրավչությունը երիտասարդության տարբեր կարգավիճակային և սոցիալ-ժողովրդագրական խմբերի համար:

Բարձրագույն կրթությամբ և մագիստրատուրա ավարտած երիտասարդների համար պետական կառավարման մարմիններն ակնհայտորեն ամենագրավիչն են այն պատճառով, որ դրանց աշխատատեղերը նախատեսված են միայն բարձրագույն և ավելի բարձր կրթությամբ անձանց համար:

Պետական գործարանները համեմատաբար ավելի գրավիչ են միջնակարգ և միջին մասնագիտական կրթությամբ անձանց համար: Հարկ է նշել, որ գործարաններում աշխատակազմի գերակշիռ մասը կազմում են միջնակարգ և միջին մասնագիտական կրթությամբ անձինք:

Արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղերում աշխատելուն համեմատաբար ավելի հակված են ուսանողները, բարձրագույն և մագիստրոսական կրթություն ստացած, դասական ենթամշակութային տիպին պատկանող, երևանաբնակ և բարձր վճարվող անձինք:

Միջազգային կազմակերպություններն առավել գրավիչ են ամենաերիտասարդների, երևանաբնակների, ուսանողների, բարձրագույն և մագիստրոսական կրթություն ունեցող, դասական ենթամշակութային տիպին պատկանող, ինչպես նաև բարձր բարեկեցությամբ ընտանիքների և արտագաղթին հակված անձանց համար:

Հայկական խոշոր բիզնեսում աշխատելուն համեմատաբար ավելի հակված են ամենաերիտասարդները, միջնակարգ կրթություն ունեցողները, ենթամշակութային միջին շերտին պատկանող և արտագաղթի հակում չունեցող երիտասարդները:

7. Վարձու աշխատանքի դեղքում տարբեր տիպի ձեռնարկությունների և կազմակերոությունների գրավչությունը սոցիալ-ժողովրդագրական խմբերում, IPSC

	ՊԿՄ	ՊԳ	ՊՀ	ԱԸ	ՄԿ	ՀԽԲ	ՀՓԲ	ՀԿ
Ընդամենը	26%	24%	26%	26%	31%	30%	8%	13%
Իգական	26%	22%	31%	27%	32%	28%	6%	15%
Արական	26%	26%	22%	25%	31%	32%	9%	10%
18-19	20%	16%	24%	29%	43%	36%	5%	12%
20-24	29%	27%	25%	24%	29%	28%	8%	13%
25-30	26%	24%	28%	28%	29%	29%	9%	12%
Միջնակարգ	17%	34%	24%	21%	23%	36%	12%	14%
Միջին մասնագիտական	23%	28%	33%	24%	22%	33%	7%	18%
Թերի բարձրագույն	32%	15%	23%	32%	47%	26%	5%	8%
Բարձրագույն	40%	12%	28%	32%	42%	20%	4%	11%
Մագիստրոս	40%	5%	26%	39%	47%	26%	3%	6%
Մինչև 100.000	21%	35%	26%	20%	24%	30%	9%	16%
101.000-200.000	29%	22%	27%	30%	28%	32%	8%	12%
201.000-360.000	29%	13%	25%	30%	46%	30%	6%	9%
361.000 և ավելի	33%	13%	26%	33%	39%	24%	7%	15%
Երևան	34%	14%	25%	34%	41%	24%	5%	10%
Քաղաք	23%	22%	25%	29%	31%	35%	8%	12%
Գյուղ	21%	34%	28%	17%	23%	32%	10%	15%
Ոչ ուսանող	25%	26%	27%	25%	28%	30%	9%	13%
Ուսանող	33%	13%	21%	33%	51%	28%	3%	9%
1-1.5	21%	31%	27%	17%	16%	31%	13%	14%
1.51-2.0	28%	25%	27%	28%	31%	31%	5%	12%
2.01-3.0	25%	24%	27%	26%	31%	33%	7%	13%
3.01-3.49	28%	20%	25%	29%	38%	25%	11%	12%
3.5-4	27%	14%	25%	32%	47%	25%	3%	8%
Չամուսնացած	26%	21%	25%	29%	36%	30%	6%	12%
Ամուսնացած	26%	29%	28%	23%	24%	29%	10%	14%
Հակված չէ արտագաղթին	25%	27%	28%	24%	28%	32%	7%	14%
Հակված է արտագաղթին	28%	19%	24%	30%	37%	27%	8%	10%

ՊԿՄ՝ Պետական կառավարման մարմիններ
ՊԳ՝ Պետական գործարաններ
ՊՀ՝ Պետական այլ հաստատություններ
ԱԸ՝ Հայաստանում գործող արտասահմանյան ընկերությունում կամ մասնաճյուղ
ՄԿ՝ Միջազգային կազմակերպություններ
ՀԽԲ՝ Հայկական խոշոր բիզնես
ՀՓԲ՝ Հայկական փոքր բիզնես (ուրիշին պատկանող)
ՀԿ՝ Հասարակական կազմակերպություններ

Ուրիշին պատկանող փոքր բիզնեսում աշխատելուն համեմատաբար ավելի հակված են միջնակարգ և ավելի ցածր կրթություն ունեցող ու ենթամշակութային ամենացածր շերտում գտնվող անձինք:

Տարբեր տիպի ձեռնարկությունների գրավչության պատճառների՝ աշխարհամակարգային վերլուծական տեսության շրջանակում տրված մեկնաբանությունը (գրավչության գերակայությունները պայմանավորված են տվյալ ձեռնարկությունում համեմատաբար բարձր աշխատավարձով և աշխատողների պաշտպանվածությամբ) հաստատվել է ստացված էմպիրիկ տվյալներով: Երբ երիտասարդներին տրվել է **«Ձեզ համար որքանո՞վ են կարևոր աշխատատեղի տարբեր հատկանիշները»** հարցը, ապա աշխատատեղի գրավչության առաջին՝ առավել կարևոր խումբն են կազմել հետևյալ հատկանիշները՝ **«Բարձր աշխատավարձը»** (78%) և **«Աշխատողի իրավունքների պաշտպանվածությունը»** (76%) (Աղյուսակ 12.)**:** Տնտեսության կառուցվածքում որքան ավելի բարձր է ձեռնարկության նիշան, այնքան ավելի բարձր են ձեռնարկության աշխատատեղերի նշված հատկանիշները: Հետևաբար՝

- **Հայաստանի ձեռնարկությունների աշխատատեղերի գրավչության բարձրացման համար անհրաժեշտ է ունենալ խոշոր ձեռնարկություններ[59]:**

Աղյուսակ 12.-ի տվյալները ցույց են տալիս, որ արտագաղթին հակվածների դիրքորոշումներում ավելի բարձր է և՛ աշխատավարձի, և՛ աշխատանքային իրավունքների պաշտպանվածության կարևորությունը:

Հետևաբար՝

- **Խոշոր ձեռնարկությունների զարգացմամբ կարելի է նվազեցնել արտագաղթը[60]:**

Կարևորությամբ երկրորդ խումբն են կազմում **«Վերադասների վերաբերմունքը աշխատակիցների նկատմամբ»** (70%), **«Հաճելի կոլեկտիվը»** (68%) և **«Աշխատանքի հետաքրքրությունը»** (63%) հատկանիշները: Եթե խմբի երեք բաղադրիչներն էլ բավարարված են, ապա այս խմբին կարելի է տալ ընդհանրական անվանում՝ **«Հոգեբանական բավարարվածությունն աշխատանքից»:**

Աշխատավարձերն ամենակարևորն են այն տղամարդկանց շրջանում, ովքեր ընտանիքի բարեկեցության հիմնական պատասխանատուներն են, և համեմատաբար ավելի ցածր կրթամակարդակով այն անձանց շրջանում, ովքեր համեմատաբար ավելի ցածր աշխատավարձ են ստանում (Աղյուսակ 12.):

Վերադասների վերաբերմունքն ու հաճելի կոլեկտիվը համեմատաբար ավելի գերադասելի են միջին մասնագիտական, իսկ հետաքրքիր աշխատանքը՝ բարձրագույն կրթամակարդակով անձանց համար (Աղյուսակ 12.):

Այժմ դիտարկենք, թե երիտասարդության շրջանում ինչպիսի՞ն են աշխատանքի գրավչության ամենակարևոր երեք գործոնների գնահատականները: Մասնավորապես կդիտարկենք.

---

59 Հարկ է նշել, որ խոշոր ձեռնարկությունների աշխատողների շրջանում նվազում է նաև արտագաղթելու դիրքորոշումը:

60 Առանձին քննարկման հարցեր են, թե տնտեսության ո՞ր ոլորտներում ստեղծել այնպիսի խոշոր ձեռնարկություններ, որոնք ունակ են դառնալու ծյուղաստեղծ (համակարգաստեղծ), և ինչպիսի՞ տնտեսաարտադրական հարաբերությունների հիմքի վրա դրանք պետք է զարգացնել: Այս հարցերը, սակայն, դուրս են տվյալ աշխատանքի շրջանակից:

1. Աշխատավարձից բավարարվածությունը և, դրան զուգահեռ, բարեկեցության «դրամական» գնահատականը:
2. Աշխատանքային իրավունքների պաշտպանվածության ընկալումը:
3. Աշխատող երիտասարդների՝ աշխատանքից հոգեբանական բավարարվածության աստիճանը:

Ըստ երիտասարդության պատկերացումների՝ աշխատանքի գրավչության գործոնների իրավիճակը Հայաստանում

Երիտասարդների կեսից մի փոքր ավելին՝ 53%-ն է բավարարված իր **աշխատավարձից** (Աղյուսակ 9.): Այդ տեսակետից ակնհայտ տարբերություններ են առկա միայն բարեկեցության խմբերում. մինչև 100.000 դրամ ընտանեկան եկամուտ ունեցողների շրջանում իր աշխատավարձից բավարարված է 43%-ը, իսկ 360.000 դրամից ավելի ընտանեկան եկամուտ ունեցողների շրջանում՝ 79%-ը: Ընդ որում՝ աշխատավարձից բավարարվածության մակարդակն ավելի ցածր է նաև նրանց շրջանում, ովքեր հակված են արտագաղթին՝ 49% (ի տարբերություն արտագաղթի հակում չունեցողների՝ 55%):

Միայն իրենց կարիքների համար (չհաշված ընտանիքը) երիտասարդները 8-ժամյա աշխատանքային օրվա դիմաց բավարար են համարում ամսական միջինը 159.000 դրամ աշխատավարձը: Համեմատության համար նշենք, որ Հայաստանում 2010թ. ամսական միջին անվանական աշխատավարձը (որը ներառում է նաև աշխատողից գանձվող հարկերը) կազմել է 102.652 դրամ: Այսինքն՝ երբ հարկերը հանում ենք, երիտասարդների ամսական միջին ակնկալիքը մոտ 76%-ով ավելին է ամսական միջին իրական աշխատավարձից:

Աշխատավարձային ակնկալիքները համեմատաբար ավելի բարձր են տղամարդկանց (183.000 դրամ), համեմատաբար բարձր տարիքի (172.000), համեմատաբար բարձր կրթությամբ (մագիստրոսներ՝ 233.000), ամենաբարձր եկամուտներով ընտանիքների (210.000), երևանաբնակների (177.000) և բարձր ենթամշակութային պատկանելությամբ երիտասարդների շրջանում: Այստեղ ավելի բարձր կառուցվածքային դիրքի և աշխատավարձային ակնկալիքների միջև առկա է ուղղակի կապ:

Համանման պատկեր է նաև երիտասարդների **կենսամակարդակային ակնկալիքների** առումով: **«Ձեր համայնքում լավ ապրելու /նորմալ ապրելու/, աղքատ չհամարվելու համար ամսական որքա՞ն եկամուտ է անհրաժեշտ երկու անչափահաս երեխաներ ունեցող երիտասարդ ամուսնական զույգին»** հարցին տրված պատասխանների բաշխումները, ըստ երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական և կարգավիճակային խմբերի, ներկայացված են Աղյուսակ 8.-ում:

Երիտասարդների միջինացված պատկերացումներում աղքատության շեմը մեկ անձի համար հավասար է 37.600 դրամի: Նորմալ ապրելու համար մեկ անձին անհրաժեշտ է ամսական 65.000 դրամ, իսկ լավ ապրելու համար՝ 104.000 դրամ: Այս ցուցանիշի բաշխումները, ըստ սոցիալ-ժողովրդագրական և կարգավիճակային խմբերի, համանման է աշխատավարձային բաշխումներին, այսինքն՝ ավելի բարձր են տղամարդկանց, համեմատաբար ավելի բարձր տարիքի, բարձր կրթամակարդակով, երևանաբնակ, բարձր ենթամշակութային պատկանելությամբ երիտասարդների, ինչպես նաև արտագաղթելուն հակվածների շրջանում:

5. «8-ժամյա աշխատանքի դեպքում Դուք միայն Ձեզ համար ներկայումս ամսական որքա՞ն մաքուր աշխատավարձը բավարար կհամարեք»



8. Կենսամակարդակային ակնկալիքները սոցիալ-ժողովրդագրական խմբերում (հազար դրամ)

Սոցիալ-ժողովրդագրական խումբ	Լավ ապրել	Նորմալ ապրել	Աղքատ չհամարվել	Լ/Ա	Ն/Ա
Իգական	408.886	248.491	141.262	2.9	1.8
Արական	418.034	268.000	157.298	2.7	1.7
18-19	393.008	244.986	141.149	2.8	1.7
20-24	386.145	245.132	144.687	2.7	1.7
25-30	448.785	277.842	157.446	2.9	1.8
Միջնակարգ	375.498	232.379	135.304	2.8	1.7
Միջին մասնագիտական	368.142	232.852	135.049	2.7	1.7
Թերի բարձրագույն	449.259	285.677	163.827	2.7	1.7
Բարձրագույն	476.606	295.567	168.119	2.8	1.8
Մագիստրոս	576.203	368.201	215.257	2.7	1.7
Մինչև 100.000	352.059	223.255	129.657	2.7	1.7
101.000-200.000	404.865	255.237	148.659	2.7	1.7
201.000-360.000	483.718	303.835	172.268	2.8	1.8
361.000 և ավելի	562.086	344.896	196.841	2.9	1.8
Երևան	515.398	316.871	190.159	2.7	1.7
Քաղաք	399.388	249.855	143.554	2.8	1.7
Գյուղ	348.653	221.878	123.815	2.8	1.8
Ոչ ուսանող	407.105	253.057	146.304	2.8	1.7
Ուսանող	450.923	290.823	168.601	2.7	1.7
Չամուսնացած	405.872	256.951	149.843	2.7	1.7
Ամուսնացած	424.596	260.085	149.107	2.8	1.7
1-1.5	365.012	238.545	135.842	2.7	1.8
1.51-2.0	382.990	238.178	141.672	2.7	1.7
2.01-3.0	433.131	269.413	150.025	2.9	1.8
3.01-3.49	425.593	262.077	154.597	2.8	1.7
3.5-4	521.242	353.831	215.188	2.4	1.6
Զբաղված	433.632	273.509	154.488	2.8	1.8
Գործազուրկ	399.956	254.755	151.217	2.6	1.7
Տնտեսապես ոչ ակտիվ	390.962	238.858	141.691	2.8	1.7
Հակված չէ արտագաղթին	401.156	251.514	144.250	2.8	1.7
Հակված է արտագաղթին	435.637	271.330	159.993	2.7	1.7
Ընդամենը	**417.411**	**260.270**	**150.372**	**2.8**	**1.7**
Միջինը				**2.7**	**1.7**
Առավելագույնը				2.9	1.8
Նվազագույնը				2.4	1.6

«Նորմալ ապրելու» համար անհրաժեշտ միջին գումարը 1.7, իսկ «լավ ապրելու» համար անհրաժեշտ գումարը 2.8 անգամ գերազանցում է երիտասարդության կողմից ընկալվող աղքատության շեմը:

Դիտարկենք երիտասարդների կարծիքով **աշխատանքային իրավունքների** պաշտպանվածությունը Հայաստանում: «Արդյո՞ք աշխատողների իրավունքներին վերաբերող օրենքները միայն «թղթի վրա» են և չեն գործում» հարցին տրված հաստատական պատասխանների բաշխումները (այսինքն՝ համարում են, որ աշխատավորների աշխատանքային իրավունքները պաշտպանված չեն) ներկայացված են Գծապատկեր 6.-ում:

6. «Արդյո՞ք աշխատողների իրավունքներին վերաբերող օրենքները միայն «թղթի վրա» են և չեն գործում» (UNDP): Տրված է «Համաձայն եմ» և «Ավելի շուտ համաձայն եմ» տարբերակների գումարային տոկոսը:



9. Ֆինանսական և բարոյական բավարարվածությունը սեփական աշխատանքից

Սոցիալ-ժողովրդագրական բնութագրեր	Ֆինանսական	Բարոյական	Բ - Ֆ
Ընդամենը	**53%**	**68%**	**15%**
Իգական	47%	72%	25%
Արական	56%	66%	10%
18-19	44%	66%	22%
20-24	53%	68%	15%
25-30	55%	68%	14%
Միջնակարգ	54%	66%	12%
Միջին մասնագիտական	47%	66%	19%
Թերի բարձրագույն	57%	66%	9%
Բարձրագույն	55%	70%	16%
Մագիստրոս	51%	82%	30%
Մինչև 100.000	43%	62%	19%
101.000-200.000	54%	67%	13%
201.000-360.000	57%	73%	16%
361.000 և ավելի	79%	84%	5%
Երևան	53%	73%	19%
Քաղաք	57%	71%	13%
Գյուղ	50%	63%	13%
Ոչ ուսանող	53%	67%	15%
Ուսանող	57%	74%	17%
Չամուսնացած	55%	68%	13%
Ամուսնացած	50%	68%	18%
1-1.5	48%	60%	12%
1.51-2.0	61%	71%	10%
2.01-3.0	50%	64%	14%
3.01-3.49	54%	72%	17%
3.5-4	45%	85%	40%
Հակված չէ արտագաղթին	55%	69%	14%
Հակված է արտագաղթին	49%	66%	17%

Ընդհանուր առմամբ չորս երիտասարդներից երեքը (75%) կարծում են, որ աշխատողների իրավունքներին վերաբերող օրենքները միայն «թղթի վրա» են: Աշխատավորի անպաշտպանության ընկալումները հատկապես բարձր են համեմատաբար ավագ տարիքային խմբում (որտեղ մեծ մասն արդեն աշխատանքային փորձ ունի), ցածր եկամուտներով (ցածր կառուցվածքային դիրքում գտնվող) ընտանիքների, երևանաբնակների (որտեղ առավել ինտենսիվ են տնտեսական հարաբերությունները) և զբաղվածների (ովքեր ուղղակիորեն են ընկալում այդ երևույթը) շրջանում:

Վիճակը համեմատաբար ավելի բարվոք է **աշխատանքից «ընդհանուր» բավարարվածության** տեսակետից: **«Որքանո՞վ եք հոգեպես/բարոյապես բավարարված Ձեր ներկայիս զբաղմունքից»** հարցին դրական պատասխաններ են տվել հարցվածների երկու երրորդը (68%): Աշխատանքից բավարարվածությունը նշանակալիորեն ավելի բարձր է ամենաբարձր կրթամակարդակով (մագիստրոսներ՝ 82%), ամենաբարեկեցիկ ընտանիքների (ամսական եկամուտը 360.000 դրամ և ավելի՝ 84%) խմբերում և ենթամշակութային ամենաբարձր շերտում (85%):

Այսպիսով՝

- **Հայաստանում շատ մեծ է ակնկալվող և իրական աշխատավարձերի միջև առկա տարբերությունը:**
- **Շատ ցածր է աշխատավորի պաշտպանվածության մակարդակը:**
- **Աշխատանքից բարոյական բավարարվածության զգացողությունն ավելի բարձր է և կոմպենսատորային դեր է կատարում:**

Բիզնես միջավայր. երիտասարդության՝ բիզնեսով զբաղվելու հակվածությունը և բիզնես միջավայրի գնահատականները

Ազատ շուկայական տնտեսության «իդեալն» այն է, երբ աշխատունակ բնակչության մեծ մասը զբաղված է փոքր և մասնավորապես ընտանեկան բիզնեսում: Համարվում է, որ զարգացած շուկայական տնտեսություններում փոքր բիզնեսը կազմավորում է միջին շերտի նշանակալի հատվածը: Ըստ այդմ՝ համապատասխանաբար «նոր» շուկայական տնտեսությունների, այդ թվում՝ նաև Հայաստանի, կառուցվածքային փոփոխությունների կարևոր բաղադրիչներից է փոքր բիզնեսի զարգացումը:

Նախորդ վերլուծության արդյունքների կոնտեքստում (այդ արդյունքներից պարզվեց, որ անբավարար են աշխատատեղերը, վարձու աշխատողների վիճակը դեռևս բարվոք չէ, որովհետև ակնկալվող մակարդակից նշանակալի չափով ցածր են իրական աշխատավարձերը, ցածր է աշխատողի պաշտպանվածության մակարդակը) կարելի է ենթադրել, որ երիտասարդների մեծ մասը կգերադասեր զբաղվել իր սեփական բիզնեսով, քանի որ այն «ժամանակի շունչն է»: Սեփական (փոքր) բիզնեսով զբաղվողը, վարձու աշխատողի համեմատ, գտնվում է տնտեսական հարաբերությունների «մյուս կողմում». հաջող բիզնեսը մարդուն տալիս է անկախության, ազատության, սեփական կյանքի ընթացքը վերահսկելու զգացողություններ և ինքնահարգանք: Այդ պատճառով Հայաստանում փոքր բիզնեսի զարգացումն առավել ևս հարկ է դիտել որպես հասարակության տնտեսական և սոցիալական խնդիրների լուծման կարևոր ռազմավարական ուղղություն և ռեզերվ:

Այժմ դիտարկենք, թե ինչպիսի՞ն են Հայաստանի երիտասարդության՝

- սեփական բիզնեսով զբաղվելու դիրքորոշումները,
- Հայաստանում սեփական բիզնես հիմնելու պայմանների ընկալումները:

Գծապատկեր 7.-ի տվյալները ցույց են տալիս, որ, իրոք, Հայաստանի երիտասարդության երկու երրորդը (68%) եթե ընտրելու հնարավորություն ունենար, ապա ավելի շուտ կգերադասեր սեփական բիզնես հիմնել, քան լավ վարձատրվող աշխատանք գտնել: Այս դիրքորոշումը

համեմատաբար ավելի բարձր է ամենաերիտասարդ խմբում, ուսանողների, չամուսնացածների, կանանց, երևանաբնակների, համեմատաբար ցածր ենթամշակութային խմբերում, զբաղվածների շրջանում և ոչ ամենացածր բարեկեցության խմբում: Առաջին երեք խմբերի ընդհանուր հատկանիշը նրանց համեմատաբար փոքր կենսափորձի հետևանք է, քանի որ ավելի «փորձառուները», շփվելով իրականության հետ, ընկալում են, որ բիզնեսն «ամեն մեկի գործը չէ»: Երևանաբնակների շրջանում այդ դիրքորոշումն ավելի բարձր է, քանի որ այստեղ ավելի մեծ են բիզնեսով զբաղվելու հնարավորությունները: Կանանց պարագայում էլ բիզնեսով զբաղվելն աշխատաշուկայում սեռային անհավասարությունից ձերբազատվելու միջոց է, իսկ ոչ ամենաաղքատները սեփական բիզնեսը հիմնելու ավելի մեծ հնարավորություններ ունեն: Համեմատաբար ավելի բարձր ենթամշակութային շերտերում էլ, որոնց ներկայացուցիչներն աշխատում են հարաբերականորեն ավելի բարձր աշխատավարձերով, ավելի շուտ գերադասում են «սպիտակ օձիքավորի», քան հայաստանյան փոքր գործարարի կարգավիճակը:

7. «Եթե ունենայիք ընտրելու հնարավորություն, Դուք ավելի շուտ կգերադասեիք սեփական բիզնես հիմնե՞լ, թե՞ լավ վարձատրվող աշխատանք գտնել», սեփական բիզնես հիմնելուն հակվածների տոկոսը, IPSC





Արդյո՞ք Հայաստանի բիզնես միջավայրի վերաբերյալ երիտասարդության գնահատականները նպաստավոր են բիզնեսով զբաղվելու դիրքորոշումների ամրապնդման համար:

Գծապատկեր 8.-ում ներկայացված են Հայաստանի երիտասարդության՝ բիզնես միջավայրին տված գնահատականները և տնտեսության զարգացման հետ կապված դիրքորոշումները: Գծապատկերում կարմիր գույնով տրված են այն դիրքորոշումները, որոնց բարձր արժեքներն անբարենպաստ են, իսկ կանաչ գույնով՝ նրանք, որոնց բարձր արժեքները բարենպաստ են բիզնեսի զարգացման համար: Դիրքորոշումների պատկերը ցույց է տալիս, որ երիտասարդության կարծիքով՝ Հայաստանում բիզնեսով զբաղվելու պայմաններն առավելապես անբարենպաստ են:

8.



9.



Գ1.

1. Եթե աչքդ աշխատողի վրա չպահես, ապա նա ինչ-որ բան կթռցնի:
2. Պետք է պետականացնել Հայաստանի խոշոր ձեռնարկությունները:
3. Հայաստանի տնտեսությունը զարգացնելու համար պետք է ավելի հզորացնել խոշոր բիզնեսը:
4. Բիզնեսում հայ գործընկերներն անազնիվ են:

Գ2.

5. Հայաստանում ամեն մարդ իր բիզնեսը ստեղծելու հնարավորություն ունի:
6. Հայաստանում երիտասարդների համար առկա են բիզնեսով զբաղվելու բարենպաստ պայմաններ:
7. Ես կարողանում եմ այնպես պլանավորել իմ ծախսերը, որ գումարն ինձ բավականացնում է մինչև ամսվա վերջ:

Այդ դիրքորոշումները պայմանավորված են երկու հիմնական գործոններով, որոնցից մեկը կարելի է անվանել «պետական սեկտորի զարգացման գործոն», իսկ երկրորդը՝ «փոքր բիզնեսի զարգացման գործոն» (Գծապատկեր 9.): Առաջին գործոնը հուշում է, որ պետական սեկտորի զարգացմանը հակված անձանց շրջանում նվազած է հայաստանյան հասարակությունում սոցիալական կապիտալի (մարդկանց միջև վստահության) մակարդակը: Հետևաբար՝

- **Հայաստանում փոքր բիզնեսի զարգացման ռեզերվ է սոցիալական կապիտալի աճը:**

Քանի որ աշխատանքի հետ կապված հարցերը, որոնց թվում՝ նաև բիզնեսով զբաղվելը, երիտասարդների կարևորագույն խնդիրների շարքում են, իսկ այդ ոլորտներում առկա է բավականին դժվարին իրավիճակ, ապա կարելի է ենթադրել, որ Հայաստանի երիտասարդության որոշակի հատվածն իր աշխատանքային և բիզնես պլանները կապում է ոչ թե Հայաստանի, այլ արտասահմանի հետ: Ինչպիսի՞ն է երիտասարդների հարաբերակցությունն այդ առումով:

Հետազոտական տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդների 16.8%-ն արտասահմանի հետ կապված աշխատանքային պլաններ ունի (Գծապատկեր 10. և Գծապատկեր 11.):

10. Արտասահմանում աշխատանք գտնելու պլաններ ունեցող երիտասարդները



11. Աշխատանքային պլանների տարածքային տեղաբաշխումը



Ընդ որում՝ երիտասարդների 10%-ի աշխատանքային պլանները կապված են միայն արտասահմանի հետ, իսկ 8%-ն ունի և՛ Հայաստանի, և՛ արտասահմանի հետ կապված աշխատանքային պլաններ:

10. Աշխատանք գտնելու դժվարությունները

Աշխատանք գտնելու դժվարությունները	Ընդ.	Սեռ		Տարիք		
		Ար.	Իգ.	16-18	19-23	24-30
Բավարար քանակությամբ աշխատատեղեր չկան	62%			65%	62%	60%
Գործատուներն աշխատանքի են ընդունում հիմնականում իրենց ծանոթներին	53%					
Աշխատանքի ընդունելու համար գործատուները ոչ իրատեսական պահանջներ են ներկայացնում	25%			22%	25%	28%
Կրթություն, դիպլոմ չունենալը	25%			37%	24%	19%
Արտաքին տեսքը	10%	6%	12%			
Աշխատանք փնտրողների որակավորումը ցածր է աշխատաշուկայի պահանջներից	8%	11%	7%			
Աշխատանքի տեղավորման գործակալությունները չեն կատարում իրենց գործառույթները	7%			3%	6%	9%
Կրթական հաստատությունները չեն ապահովում պրակտիկ գիտելիքներ/հմտություններ	7%					
Հաշմանդամությունը	7%			12%	6%	6%
Ցածր աշխատավարձը	5%					
Այլ	5%					
Աշխատանք փնտրողների որակավորումը բարձր է աշխատաշուկայի պահանջներից	2%					
Զբաղվածության տարածքային ծառայությունները չեն կատարում իրենց գործառույթները	2%					
Սեռը	2%					
Գործատուները կաշառք են պահանջում	2%					

Կրթություն					Բարեկեցություն			Բնակավայր			Զբաղվածություն			Միգրաց.	
ԹՄ	Միջ.	ՄՄ	ԹԲ	Բ	Ց	Մ	Բ	Ե	Ք	Գ	Զ	Գ	ՏՈԱ	Մ	ՈՄ
64%	67%	59%	61%	54%				54%	63%	67%	63%	53%	66%		
46%	48%	56%	57%	60%				56%	54%	49%	56%	58%	49%	52%	58%
18%	24%	33%	26%	26%				30%	27%	21%	27%	31%	21%		
23%	36%	16%	22%	14%	20%	25%	26%	16%	25%	32%	18%	22%	30%		
								13%	9%	7%					
6%	9%	5%	9%	11%	5%	9%	10%				12%	9%	6%		
4%	4%	9%	6%	11%	10%	7%	6%	11%	4%	5%					
4%	4%	6%	12%	8%	4%	7%	8%	11%	6%	4%					
											8%	4%	8%		
8%	3%	5%	5%	5%							5%	6%	3%		
0%	1%	3%	3%	4%											

11. Երիտասարդների՝ աշխատանք փնտրելու ձևերը

Աշխատանք փնտրելու ձևերը	Ընդ.	Սեռ		Տարիք		
		Ար.	Իգ.	16-18	19-23	24-30
Դիմում եմ ծանոթներիս	68%	72%	64%	82%	65%	68%
Հետևում եմ աշխատանքային հայտարարություններին	45%	35%	55%	29%	46%	47%
Ինքնակենսագրական եմ ուղարկում տարբեր կազմակերպություններ	17%	12%	21%	8%	17%	18%
Դիմում եմ աշխատանքի տեղավորման գործակալություններ	16%			16%	18%	13%
Մասնագիտություն եմ ձեռք բերում (այդ թվում՝ արհեստ)	8%			13%	11%	4%
Դիմել եմ Զբաղվածության պետական գործակալություն	5%	2%	8%			
Ներգրավվում եմ կամավորական աշխատանքներում	4%					
Հաճախում եմ օտար լեզվի և համակարգչի դասընթացների	3%					
Այլ	3%					
Մասնակցում եմ աշխատանքային ցուցահանդեսների	1%					
Ոչ մի քայլ չեմ ձեռնարկում	5%	7%	4%	3%	4%	7%

Կրթություն					Բարեկեցություն			Բնակավայր			Զբաղված.		Միգրաց.	
ԹՄ	Մ	ՄՄ	ԹԲ	Բ	Ց	Մ	Բ	Ե	Ք	Գ	Զ	Գ	ՈՄ	Մ
66%	74%	72%	64%	63%				63%	78%	65%			67%	73%
29%	35%	46%	51%	56%				55%	42%	37%			44%	51%
0%	5%	13%	21%	34%	15%	14%	24%	22%	18%	10%	21%	15%		
					19%	17%	10%	21%	10%	14%	9%	18%		
6%	10%	2%	16%	5%				10%	5%	9%				
					10%	4%	4%	3%	11%	2%			6%	1%
											7%	3%		

11%	9%	5%	3%	2%

12. Աշխատանքի գրավչության գործոնները

Աշխատանքի գրավչության գործոնները	Ընդ.	Ար.	Իգ.	16-18	19-23	24-30
Աշխատավարձը	78%	82%	75%	71%	75%	83%
Աշխատողի իրավունքների պաշտպանվածությունը	76%	75%	77%	79%	77%	75%
Վերադասների վերաբերմունքն աշխատակիցների նկատմամբ	70%	75%	67%	70%	69%	72%
Հաճելի կոլեկտիվը	68%	69%	67%	64%	65%	72%
Աշխատանքի հետաքրքրությունը	63%	63%	62%	59%	64%	63%
Անձնական-մասնագիտական աճի հնարավորությունները	58%	61%	56%	57%	60%	56%
Աշխատանքի համապատասխանությունը մասնագիտությանը	53%	48%	57%	62%	52%	50%
Դիրքի բարձրացման հնարավորությունները	51%	57%	46%	55%	51%	48%
Նյութատեխնիկական հագեցվածությունը, պայմանները	44%	44%	43%	46%	39%	47%
Սոցիալական փաթեթի առկայությունը	42%	42%	41%	42%	37%	46%

13. Աշխատանք գտնելու գործոնները

Աշխատանք գտնելու գործոնները	Ընդ.	Ար.	Իգ.	16-18	19-23	24-30
Որակյալ կրթություն	49%	40%	55%	68%	47%	41%
Աշխատանքային փորձ	32%	30%	34%	28%	31%	35%
Մասնագիտական բարձրակարգ գիտելիքներ և հմտություններ	30%	25%	34%	39%	29%	27%
Համապատասխան աշխատատեղի առկայություն	23%	23%	22%	23%	22%	23%
Նպատակասլաց լինելը	19%	16%	20%	22%	21%	15%
Դիպլոմ	14%	12%	15%	20%	12%	13%
Լավ երաշխավորագրեր	5%	5%	4%	5%	5%	4%
Ցանկացած կրթություն	5%	5%	4%	3%	5%	5%
Հովանավոր/ազդեցիկ ծանոթներ	37%	43%	33%	25%	39%	41%
Ճարպիկ լինելը	19%	21%	18%	19%	20%	18%
Բախտը բերելը	17%	20%	15%	12%	17%	19%
Կաշառք	13%	16%	12%	8%	14%	16%
Երիտասարդ տարիք	10%	11%	10%	8%	10%	12%
Բարետես արտաքին	6%	2%	9%	4%	7%	7%
Այլ	2%	2%	1%	1%	2%	1%

ԹՄ	Մ	ՄՄ	ԹԲ	Բ	Ց	Մ	Բ	Ե	Ք	Գ	Ջ	Գ	ՏՈԱ	ՈՄ	Մ
80%	79%	80%	74%	76%	82%	76%	78%	79%	80%	75%	81%	76%	77%	77%	81%
66%	78%	73%	79%	78%	75%	75%	78%	78%	78%	74%	73%	79%	77%	75%	81%
68%	70%	79%	69%	68%	70%	69%	72%	73%	69%	69%	74%	76%	65%	70%	72%
69%	72%	72%	56%	67%	73%	68%	65%	64%	68%	71%	70%	67%	67%	67%	72%
53%	60%	63%	63%	70%	61%	61%	65%	64%	65%	59%	64%	66%	59%	61%	68%
45%	52%	56%	67%	67%	51%	58%	61%	64%	55%	55%	61%	61%	55%	57%	61%
40%	56%	56%	52%	52%	54%	54%	50%	50%	53%	56%	44%	53%	58%	53%	54%
46%	48%	46%	59%	52%	45%	50%	55%	53%	46%	52%	52%	48%	51%	49%	56%
43%	45%	53%	35%	44%	50%	44%	38%	42%	46%	44%	49%	42%	42%	43%	47%
51%	43%	50%	32%	39%	51%	40%	39%	41%	42%	42%	39%	39%	45%	41%	45%

Թ	Մ	ՄՄ	ԹԲ	Բ	Ց	Մ	Բ	Ե	Ք	Գ	Ջ	Գ	ՏՈԱ	ՈՄ	Մ
34%	53%	43%	52%	47%	42%	48%	55%	47%	49%	50%	39%	42%	58%	50%	44%
35%	30%	36%	30%	33%	33%	32%	31%	34%	31%	31%	32%	31%	33%	32%	30%
14%	26%	32%	38%	36%	23%	30%	35%	31%	31%	28%	30%	26%	32%	31%	24%
18%	24%	26%	19%	24%	24%	22%	24%	18%	23%	26%	21%	24%	23%	22%	26%
18%	17%	14%	24%	21%	12%	19%	23%	25%	19%	14%	21%	18%	18%	19%	16%
13%	15%	14%	15%	10%	10%	15%	13%	10%	14%	17%	10%	13%	16%	14%	13%
3%	6%	4%	4%	4%	3%	5%	6%	5%	5%	4%	5%	4%	5%	5%	4%
11%	7%	2%	2%	2%	7%	4%	4%	4%	2%	7%	3%	7%	4%	5%	4%
38%	33%	43%	35%	44%	41%	39%	32%	38%	42%	34%	43%	43%	31%	36%	44%
21%	21%	15%	20%	16%	19%	19%	20%	21%	14%	21%	20%	20%	18%	18%	22%
24%	15%	18%	17%	16%	20%	17%	15%	18%	17%	15%	20%	19%	14%	16%	22%
14%	11%	12%	15%	17%	16%	14%	11%	14%	13%	13%	17%	12%	12%	12%	20%
6%	11%	14%	11%	8%	11%	11%	8%	11%	10%	10%	9%	13%	9%	11%	8%
5%	6%	8%	5%	7%	8%	6%	6%	9%	6%	4%	5%	9%	6%	6%	5%
2%	2%	1%	1%	2%	2%	2%	1%	2%	1%	2%	3%	1%	1%	2%	1%

14. Տնտեսական վարք (աշխատանքային գործունեության հետ կապված պլանները մոտակա 3 տարիների կտրվածքով)

Աշխատանքային գործունեության հետ կապված պլանները մոտակա 3 տարիների կտրվածքով	Ընդ.	Ար.	Իգ.	16-18	19-23	24-30
Մասնագիտական աշխատանք գտնել Հայաստանում	29%	19%	36%	27%	41%	20%
Սեփական բիզնեսը հիմնել Հայաստանում	11%	15%	7%	10%	11%	11%
Առավել բարձր վարձատրվող աշխատանքի անցնել Հայաստանում	8%	10%	6%	2%	6%	12%
Լավ վարձատրվող աշխատանք գտնել Հայաստանում	7%	6%	8%	5%	8%	7%
Մնալ նույն աշխատավայրում, փոփոխություններ չեմ պլանավորում	5%	7%	4%	0%	4%	8%
Ցանկացած աշխատանք գտնել Հայաստանում	5%	6%	5%	3%	5%	6%
Պաշտոնի բարձրացում ունենալ ներկայիս աշխատավայրում	5%	5%	4%	0%	5%	6%
Գտնել ցանկացած աշխատանք	2%	3%	1%	0%	3%	1%
Աշխատանքի հետ կապված պլաններ չունեմ	30%	19%	38%	52%	18%	31%
Ցանկացած աշխատանք գտնել արտերկրում	9%	19%	3%	4%	12%	9%
Մասնագիտական աշխատանք գտնել արտերկրում	8%	12%	5%	5%	10%	7%
Սեփական բիզնեսը հիմնել արտերկրում	3%	4%	2%	1%	3%	3%
Այլ	1%	2%	1%	2%	1%	1%

ԹՄ	Մ	ՄՄ	ԹԲ	Բ	Ց	Մ	Բ	Ե	Ք	Գ	Ջ	Գ	ՏՈԱ	ՈՄ	Մ
10%	15%	38%	48%	39%	26%	31%	29%	36%	30%	23%	17%	53%	22%	30%	26%
10%	8%	8%	17%	12%	6%	12%	12%	18%	7%	7%	15%	12%	7%	10%	12%
7%	5%	10%	4%	15%	8%	8%	8%	10%	9%	4%	27%	1%	1%	7%	9%
5%	6%	9%	8%	8%	9%	6%	8%	6%	8%	7%	1%	16%	5%	7%	8%
5%	5%	5%	2%	9%	5%	6%	5%	4%	7%	5%	19%	0%	0%	5%	5%
10%	7%	5%	2%	3%	7%	7%	2%	5%	4%	7%	1%	12%	4%	5%	6%
2%	1%	4%	4%	13%	3%	5%	5%	5%	6%	3%	18%	0%	0%	5%	3%
1%	3%	0%	1%	2%	4%	1%	1%	2%	1%	2%	1%	4%	1%	2%	1%
40%	43%	30%	19%	15%	33%	27%	33%	19%	32%	38%	11%	1%	59%	31%	29%
21%	11%	9%	7%	4%	11%	10%	7%	8%	9%	11%	11%	15%	5%	8%	16%
4%	4%	6%	14%	10%	7%	8%	8%	11%	7%	6%	9%	12%	4%	7%	10%
1%	2%	1%	5%	4%	2%	2%	4%	5%	2%	1%	4%	2%	3%	2%	6%
0%	2%	1%	0%	2%	1%	1%	2%	2%	1%	1%	2%	1%	1%	1%	1%

ՄԻԳՐԱՑԻԱ



Քանի որ Հայաստանի տնտեսության՝ ավելի աշխատատար և ավելի բարձր արտադրողական ճյուղերի ստեղծման նպատակով նոր վերակառուցումը երկարատև ու շատ մեծ բարդություններ հետ կապված խնդիր է, հետևաբար պետք է ենթադրել, որ Հայաստանից ընդմիշտ արտագաղթը և սեզոնային աշխատանքային միգրացիան դեռևս տևելու են անորոշ երկար ժամանակ: Այդ ժամանակահատվածի հստակ նշումը բարդ խնդիր է, քանի որ գլոբալ զարգացումներում առկա են մեծ անորոշություններ, որոնք կարող են շատ հզոր ազդեցություն գործել Հայաստանի վրա: Այնուամենայնիվ, սեզոնային միգրացիայի և արտագաղթի երևույթների մոնիթորինգն ու գնահատումը պետք է մշտապես լինեն ուշադրության կենտրոնում: Չի բացառվում, որ առավել արդյունավետ լուծումները գտնվում են ոչ թե Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային, այլ համահայկական համակարգի շրջանակներում:

Հայաստանի երիտասարդության միգրացիոն դիրքորոշումների հետազոտական տվյալների ճիշտ ընկալման և մեկնաբանման համար, ինչպես նաև այդ խնդիրներից Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգին և ազգային անվտանգությանը սպառնացող ռիսկերի նվազեցման կամ չեզոքացման հարցերին մինչ անդրադառնալը հարկ է համառոտ դիտարկել, թե միգրացիան ներկայումս ինչ ազդեցություն ունի Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի վրա:

Միգրացիան և դրա սոցիալ-տնտեսական ազդեցությունը Հայաստանի վրա

Հայաստանից զանգվածային արտագաղթն ավարտվեց 1990-ականների վերջին: 2000-ականներին տեղի ունեցած արտագաղթի պատկերը ներկայացված է Գծապատկեր 12.-ում, որտեղ տրված են սահմանային կետերում Հայաստան ժամանածների և Հայաստանից մեկնածների քանակների տարբերությունն ըստ ՀՀ Միգրացիայի վարչության տվյալների: Գծապատկերից երևում է, որ 2000-2001թթ. ընթացքում այդ տարբերությունը շատ մեծ է եղել. Հայաստանից մեկնածները Հայաստան ժամանածներին գերազանցել են 57.500 և 60.444 անձով: 2002-2007թթ. ընթացքում տարբերությունը եղել է շատ փոքր, իսկ 2004-2006թթ. ընթացքում այն դրական էր:

Սակայն, 2008 թ-ին, երբ սկսվեց գլոբալ ճգնաժամը, ժամանածների և մեկնածների բացասական տարբերությունը նորից կտրուկ աճեց, ինչը հաղորդակցվում է Գծապատկեր 1.-ում ներկայացված Հայաստանի ՀՆԱ-ի դինամիկայի տվյալների հետ: Ընդ որում՝ չնայած 2009 և 2010 թվականներին Հայաստանի ՀՆԱ-ն սկսեց վերականգնվել, այդուհանդերձ արտագաղթի միտումներն աճել են:

Հայաստանի տնտեսական աճի բարձր տեմպերն արձանագրվել են այն ժամանակ, երբ գլոբալ տնտեսությունը նույնպես աճում էր, և Հայաստանի հասարակությունն օգտվում էր դրանից: Մասնավորապես Գծապատկեր 13.-ի տվյալները ցույց են տալիս, որ չնայած 2008թ. ճգնաժամից հետո՝ 2009 թ-ին, Հայաստան փոխանցվող անհատական տրանսֆերտները խիստ մեծ անկում ունեցան, այնուամենայնիվ գլոբալ տնտեսության վերականգնմանը զուգընթաց՝ դրանք տարեցտարի նորից աճել են. մասնավորապես 2010-2011թթ. դրանք քիչ էին տարբերվում համապատասխանաբար 2007-2008թթ. տրանսֆերտների չափերից:

12. Արտաքին ուղևորափոխադրումների սալդոն, 1.000 մարդ, 2000-2012թթ.



13.



14. Անհատական դրամական տրանսֆերտների կառուցվածքը



15. Հայաստանի առևտրաշրջանառությունը ՌԴ-ի հետ, միլիոն $

Այնուամենայնիվ, 2010-2011թթ. տրանսֆերտների աճը, որն արտապատկերում է (մոտարկում է) գլոբալ տնտեսության վերականգնումը (մասնավորապես, ինչպես կներկայացվի ստորև, Ռուսաստանի տնտեսության վերականգնումը) չհաղորդակցվեց արտագաղթի նվազման հետ, ինչպես դա տեղի ունեցավ 2000-ականների սկզբին: Կարելի է ենթադրել, որ Հայաստանի տնտեսության հետծգնաժամային վերականգնումն ընթանում է ավելի դանդաղ, քան գլոբալ տնտեսության վերականգնումը: Սա խիստ մտահոգիչ է, քանի որ վկայում է այն մասին, որ գլոբալ աշխարհ-համակարգի վերակառուցման գործընթացից, որն այժմ ընթանում է շատ ինտենսիվ և ներառում է **նոր մեծ տարածաշրջաններ**, մասնավորապես՝ Բրազիլիան, Ռուսաստանը, Հնդկաստանը և Չինաստանը, դուրս է մնում Հայաստանը (չնայած Հայաստանում վերջին 5 տարիների ընթացքում տեղի է ունենում կառավարման որակի նշանակալի աճ, ինչը տնտեսագիտությունը համարում է դեպի կոնկրետ երկիր, տվյալ դեպքում՝ Հայաստան, արտաքին ուղղակի մասնավոր ներդրումների խթանման հիմնական նախապայման): Սա նշանակում է, որ՝

- **Գլոբալ տնտեսությունում առկա են այլ՝ ոչ տնտեսական ավելի հզոր գործոններ, որոնք չեն հաշվառվում տնտեսագիտության կողմից, որոնք, սակայն, խոչընդոտում են Հայաստանի տնտեսության՝ իր կառավարման որակին համապատասխան զարգացման տեմպին:**

Փորձենք գնահատել, թե Հայաստանի հասարակության համար ի՞նչ իրական սոցիալ-տնտեսական նշանակություն ունեն արտասահմանից փոխանցվող տրանսֆերտները:

Դեպի Հայաստան ուղղված արտաքին տրանսֆերտները 2009 թվականին կազմել են 904 միլիոն դոլար: Հայաստանի հասարակության լայն շերտերի համար գումարի այդ չափի նշանակությունն ընկալելու նպատակով նշենք, որ ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների համաձայն՝ նույն 2009 թվականին Հայաստանում աշխատանքի վարձատրությանն ուղղված ֆինանսական միջոցները կազմել են $3.32 միլիարդ (ներառյալ հարկերը): Այսինքն՝ **մասնավոր տրանսֆերտները, որոնք տնային տնտեսություններն ուղղակիորեն օգտագործում են կենցաղային սպառման համար, կազմել են տնային տնտեսությունների ստացած աշխատավարձի 27%-ը:** Եթե համարենք, որ աշխատավարձից պահվող բոլոր հարկերը կազմում են անվանական աշխատավարձի մոտավորապես 20%-ը, ապա վերոնշյալ մասնաբաժինը կհասնի մոտ 40%-ի: Իսկ եթե, ի լրումն այդ ամենի, հաշվի առնենք նաև, որ տրանսֆերտների մի նշանակալի մասը Հայաստան է հասնում՝ շրջանցելով բանկային համակարգը, ապա այդ թիվն էլ ավելի կմեծանա:

Ընդ որում՝ մասնավոր տրանսֆերտների պաշտոնական մեծությունը, 2011թ. հասնելով 1.57 միլիարդ դոլարի, 2009թ. համեմատ աճել է 37%-ով, իսկ անվանական միջին աշխատավարձը 2012թ. հունվարին կազմել է 112.074 դրամ կամ 2009թ. համեմատ՝ աճել է 16%-ով: Հետևաբար՝

- **Մասնավոր տրանսֆերտները հույժ կարևոր դերակատարում ունեն Հայաստանի հասարակության լայն շրջանակների բարեկեցության տեսակետից. դրանք մոտավորապես հավասարազոր են աշխատավարձի նշանակությանը:**
- **Հայաստանի հասարակության բարեկեցության տեսակետից մասնավոր տրանսֆերտների նշանակությունը վերջին երեք տարիների ընթացքում ունեցել է աճի միտում:**

Նշենք, որ Հայաստանից սեզոնային արտագնա աշխատանքի մեկնող անդամներ ունեն Հայաստանի տնային տնտեսությունների 11.3%-ը կամ մոտ 90.000 ընտանիք, իսկ տարեկան սեզոնային արտագնա աշխատանքի է մեկնում մոտ 109.000 մարդ[61]:

Իսկ ո՞ր երկրներից են Հայաստան գալիս մասնավոր տրանսֆերտները:

Գծապատկեր 14.-ի տվյալները ցույց են տալիս, որ՝

- **Դեպի Հայաստան մասնավոր տրանսֆերտների գերակշիռ մասը ներհոսում է Ռուսաստանից (2011 թ-ին՝ 84%), և**
- **Ռուսաստանի մասնաբաժինը դեպի Հայաստան ներհոսող մասնավոր տրանսֆերտներում աճում է (2005-2011թթ. ընթացքում 72%-ից աճել է մինչև 84%):**

Ընդ որում՝ նույն

- **2005-2011թթ. ընթացքում ԱՄՆ-ից Հայաստան մասնավոր տրանսֆերտների մասնաբաժինը 11%-ից նվազել է մինչև 5%:**

Իսկ ինչպիսի՞ն են Հայաստանի և Ռուսաստանի միջև միջպետական տնտեսական կապերը, և դրանք ի՞նչ նշանակություն ունեն Հայաստանի համար: Դիտարկենք Հայաստանի և Ռուսաստանի միջև ապրանքաշրջանառության դինամիկան (Գծապատկեր 15.): Եթե 2007թ. Ռուսաստանից Հայաստան կատարված ներմուծումը 3.6 անգամ գերակշռել է Հայաստանից Ռուսաստան կատարված արտահանմանը, ապա 2008 թ-ի ճգնաժամից հետո՝ 2010 թ-ին, այդ հարաբերությունն աճել էր մինչև 5.2:

2007-2010թթ. ընթացքում Ռուսաստան է արտահանվել հայաստանյան ապրանքների ամենամեծ հատվածը, չնայած այն 2007թ. 17.5%-ից նվազել է մինչև 2010թ. 15.4% (Աղյուսակ 15.): Դեպի Հայաստան ներկրման տեսակետից 2007-2010թթ. ընթացքում Ռուսաստանը նույնպես եղել է առաջինը, իսկ նրա մասնաբաժինը 2010 թ-ին կազմել է 22.3%:

Այսինքն՝

- **Աճում են և՛ Հայաստանի տնտեսական կախվածությունը ռուսաստանյան էքսպորտից, և՛ ապրանքաշրջանառության բացասական սալդոն:**

61 Հաշվարկները կատարվել են ըստ «Այ ՓԻ էս ՍԻ» սոցիոլոգիական և քաղաքական հետազոտությունների ինստիտուտի «Հայաստանում կյանքի որակի ինդեքսի հետազոտություն - 2011» տվյալների շտեմարանի:

15. ՀՀ-ից առաջին 10 արտահանման և ՀՀ ներմուծման երկրները

Արտահանում	**2007**	**2008**	**2009**	**2010**	**2007**	**2008**	**2009**	**2010**
ՌԴ	17.5%	19.7%	15.1%	15.4%	1	1	2	1
Բուլղարիա	4.1%	5.6%	8.5%	15.0%	8	6	4	2
Գերմանիա	14.8%	17.4%	16.2%	12.7%	2	2	1	3
Նիդեռլանդներ	13.5%	12.4%	7.3%	9.5%	3	3	6	4
Իրան	3.3%	2.4%	4.7%	8.1%	10	10	9	5
ԱՄՆ	4.5%	5.0%	9.4%	7.9%	6	7	3	6
Բելգիա	8.7%	8.5%	6.6%	7.0%	4	4	7	7
Վրաստան	7.6%	7.7%	7.4%	4.7%	5	5	5	8
Չինաստան	0.7%	0.2%	2.5%	3.0%	17	31	11	9
Կանադա	0.5%	1.5%	4.8%	2.8%	21	12	8	10
Ընդամենը	**75.2%**	**80.4%**	**82.5%**	**86.1%**	**-**	**-**	**-**	
Ներմուծում	**2007**	**2008**	**2009**	**2010**	**2007**	**2008**	**2009**	**2010**
ՌԴ	22.0%	19.2%	23.9%	22.3%	1	1	1	1
Չինաստան	6.0%	8.6%	8.6%	10.8%	5	2	2	2
Ուկրաինա	7.7%	7.1%	6.1%	6.1%	2	3	3	3
Գերմանիա	6.8%	5.8%	5.3%	5.6%	4	5	5	4
Թուրքիա	4.0%	6.1%	5.3%	5.6%	9	4	4	5
Իրան	4.3%	4.6%	4.9%	5.3%	8	7	6	6
Իտալիա	3.5%	3.6%	3.4%	3.3%	12	10	9	7
Բուլղարիա	2.7%	2.7%	2.6%	3.0%	14	12	11	8
ԱՄՆ	4.4%	4.9%	3.6%	3.0%	7	6	8	9
Ռումինիա	2.1%	2.3%	2.2%	2.3%	15	13	14	10
Ընդամենը	**63.5%**	**64.9%**	**65.9%**	**67.3%**	**-**	**-**	**-**	**-**

Այսպիսով՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ՝

- **Աշխարհ-համակարգի վերակառուցման 25 տարիների ընթացքում Ռուսաստան-Հայաստան տնտեսական սիմբիոզը կազմալուծվելուց հետո վերականգնվել է, սակայն փոխվել է այդ սիմբիոզի բովանդակությունը:**
- **Եթե խորհրդային տարիներին հայ-ռուսական տնտեսական սիմբիոզի գաղափարական բովանդակությունը Հայաստանի և Ռուսաստանի միջև տեխնոլոգիական տարբերությունների աստիճանական վերացումն էր** (ինչը հանդիսանում էր խորհրդային սոցիալիստական գաղափարախոսության բաղադրիչը), **ապա ներկայումս այդ սիմբիոզի բովանդակությունը համապատասխանում է աշխարհ-համակարգի տրամաբանությանը:**

Այժմ փորձենք վերլուծել ու մեկնաբանել Հայաստանի երիտասարդության դիրքորոշումներն արտագաղթի և ժամանակավոր միգրացիայի ոլորտներում:

Ժամանակավոր միգրացիա. արտասահմանում լինելու փորձը, երկրները, նպատակները

Հայաստանի երիտասարդների մոտ կեսը (49%) երբևէ եղել է **արտասահմանում:** Այդ քանակը հարաբերականորեն ավելի մեծ է տղամարդկանց, ավելի բարձր տարիքի, ավելի բարձր կենսամակարդակով, կրթամակարդակով, ենթամշակութային պատկանելությամբ երևանաբնակ երիտասարդների խմբերում (Գծապատկեր 16.): Հարկ է նշել, որ արտասահմանում լինելու փորձը մոտավորապես նույնն է և՛ ընդմիշտ արտագաղթելու հակում ունեցող, և՛ արտագաղթելու հակում չունեցող խմբերում, ինչից կարելի է առաջ քաշել այն վարկածը, որ հիմքեր չկան ենթադրելու, թե երիտասարդության՝ արտասահմանում լինելու փորձը նպաստում է նրանց արտագաղթելու դիրքորոշումների աճին (և հակադարձաբար կարելի է առաջ քաշել այն վարկածը, որ ընդմիշտ արտագաղթելու դիրքորոշումների ձևավորման պատճառներն առավելապես ներհայաստանյան են[62]):

Երիտասարդների ճնշող մեծամասնությունը տարբեր նպատակներով կցանկանար **ժամանակավորապես** լինել արտասահմանում. ապրելու (78%), աշխատելու (80%), սովորելու (64%), բարեկամներին այցելելու (87%), տուրիզմի կամ հանգստի նպատակով (90%) (վերջինս պետք է համարել երիտասարդությանը ներհատուկ ձգտում): Այլ հարց է, որ այդ նպատակների համար ֆինանսական հնարավորություններ ունի 16-28%-ը (կախված նպատակի բնույթից) (Գծապատկեր 17.):

Որևէ նպատակով ժամանակավորապես արտասահման մեկնելու դիրքորոշումները պայմանավորված են երկու հիմնական գործոններով: Առաջինը ժամանակավոր միգրացիայի սոցիալ-տնտեսական գործոնն է (երբ երիտասարդները ցանկանում են արտասահման մեկնել ժամանակավորապես աշխատելու և ապրելու համար), իսկ երկրորդը ժամանակավոր միգրացիայի սոցիալ-մշակութային գործոնն է (երբ մեկնելու նպատակներն են հանգիստը, տուրիզմը և այցելությունները բարեկամներին) (Գծապատկեր 18.): Սովորելու նպատակով ժամանակավոր արտասահման մեկնելու ցանկությունն ասոցացված է նշված երկու գործոնների հետ:

62 Ինչը չի հակասում արդեն արված այն եզրակացություններին, որ Հայաստանի՝ աշխարհ-համակարգում ունեցած դիրքը և զարգացումներն առավելապես պայմանավորված են գլոբալ գործոններով:

16. Երբևէ եղել են արտասահմանում



17. Տարբեր նպատակներով ժամանակավորապես արտասահման մեկնելու դիրքորոշումները և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը



18. Ժամանակավորապես արտասահման մեկնելու դիրքորոշումների գործոնային տարածությունը



Վերջին երեք տարիներին երիտասարդների՝ արտերկիր կատարած այցերի 76%-ը վերաբերում է ընդամենը երկու երկրի՝ Ռուսաստան (46%) և Վրաստան (30%), իսկ ըստ նպատակների՝ այցերի 80%-ը կազմում են հանգստանալը (46%) և աշխատելը/բիզնեսով զբաղվելը (34%): Ընդ որում՝ այդ երկու հիմնական նպատակով միայն Ռուսաստան և Վրաստան կատարած այցերը կազմում են երիտասարդների բոլոր այցերի 60%-ը (Աղյուսակ 16.):

16.

Երկիր	Հանգստանալու	Աշխատելու /բիզնեսով զբաղվելու	Այց հարազատներին	Մշակութային փոխանակում	Կրթագիտական նպատակ	Ապրելու	Բուժվելու/ ծննդաբերելու	Ընդամենը
ՌԴ	**13%**	**22%**	**6%**	0%	1%	3%	1%	**46%**
Վրաստան	**21%**	**4%**	1%	2%	1%	0%	0%	**30%**
ԵՄ	**4%**	**4%**	0%	1%	1%	0%	0%	**9%**
ԱՊՀ	2%	3%	1%	0%	1%	1%	0%	**8%**
Միջին Արևելք	3%	0%	0%	0%	0%	0%	0%	**4%**
Թուրքիա	2%	1%	0%	0%	0%	0%	0%	**2%**
Հրվ. Ասիա	0%	0%	0%	0%	0%	0%	0%	**1%**
ԼՂՀ	0%	0%	1%	0%	0%	0%	0%	**1%**
ԱՄՆ	0%	0%	0%	0%	0%	0%	0%	**0%**
Ընդամենը	**46%**	**34%**	**9%**	**3%**	**3%**	**4%**	**1%**	**100%**

Այժմ փորձենք գնահատել, **թե արդյո՞ք արտասահմանում լինելու փորձը և դրա բնույթն ազդում են Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշման վրա**:

Աղյուսակ 17.-ում (սյուն՝ «Ա») ներկայացված է, թե տվյալ նպատակով արտասահմանում եղած երիտասարդների շրջանում որքա՞ն է կազմում ընդմիշտ արտասահման մեկնելու հակվածների տոկոսը: Աշխատելու, բիզնեսի կամ առևտրի նպատակով արտասահմանում եղած երիտասարդների 35.0%-ը հակված է արտասահման ընդմիշտ մեկնելուն: Սակայն, այդ ցուցանիշը, ըստ էության (վիճակագրորեն), չի տարբերվում երիտասարդների ամբողջ համախմբությունում ընդմիշտ մեկնելուն հակվածների քանակից՝ 34.4%: Այսինքն՝

- **Աշխատանքային միգրացիայի փորձը չի խթանում կամ նվազեցնում երիտասարդի՝ ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը:**

17. Ընդմիշտ արտագաղթելու դիրքորոշումը՝ ոչայմանավորված միգրացիոն փորձով

Արտասահմանում լինելու նպատակները	Ա	Բ
Հանգստանալու	36.2%	60.6%
Աշխատելու/բիզնեսի/առևտրի	35.0%	46.3%
Այցելություն հարազատներին	20.5%	12.5%
Մշակութային/մարզական փոխանակումներ	50.6%	3.5%
Կրթագիտական	33.0%	4.2%
Ապրելու	33.6%	4.6%
Բուժվելու/ծննդաբերելու	39.9%	1.9%
Ընդամենը	34.4%	

Ա - Տվյալ նպատակով արտասահմանում եղած երիտասարդների շրջանում արտագաղթին հակվածների տոկոսը

Բ - Տվյալ նպատակով արտասահմանում եղած երիտասարդները (Գումարային տոկոսը հավասար չէ 100-ի, քանի որ նույն անձը կարող է արտասահմանում լինել մեկից ավելի նպատակներով:)

Ստացված արդյունքը հուսադրող է, որը, սակայն, բովանդակային բացատրության կարիք ունի: Ինչո՞ւ ընդմիշտ մեկնելու դիրքորոշումն ավելի բարձր չէ աշխատանքային միգրանտների, քան մյուս երիտասարդների շրջանում:

Չի բացառվում, որ դա կապված է այն հանգամանքի հետ, որ աշխատանքային միգրանտները, մյուս հավասար պայմանների դեպքում, ավելի մեծ պարտավորություններ ունեն Հայաստանում գտնվող իրենց հարազատների նկատմամբ: Օրինակ՝ այն երիտասարդը, ով **միայն ուսանող է**, չնչին հավանականությամբ է մասնակցում ընտանիքի եկամուտների կազմավորմանը. նա «ազատ մարդ է»: Իսկ եթե երիտասարդը մեկնել է արտագնա աշխատանքի, ապա նա Հայաստանում մնացած ընտանիքի անդամների «կերակրողների» շարքում է, եթե՝ ոչ միակը: Ավելին՝ հայտնի է, որ սեզոնային աշխատանքային միգրացիայի վայրում աշխատանքային միգրանտները (ովքեր հիմնականում տղամարդիկ են) ունենում են արտամուսնական կապեր: Այդ կապերի առկայությունն էլ ինքնին խոչընդոտում է միգրանտների՝ իրենց հարազատներին Հայաստանից արտասահման տեղափոխելու դիրքորոշման առաջացմանը:

Քանի որ աշխատանքային միգրանտների հիմնական հոսքը դեպի Ռուսաստան է, հետևաբար՝

- **Աշխատանքային սեզոնային միգրացիան ուղղակիորեն չի ազդում Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ծավալային կրճատման վրա:**

Այլ հարց է, որ հնարավոր են հետևյալ փաստարկները. աշխատանքային միգրացիան կարող է անուղղակիորեն բացասաբար ազդել Հայաստանում ժողովրդագրական վիճակի վրա: Օրինակ՝ չի բացառվում, որ սեզոնային աշխատանքային միգրանտ երիտասարդը հակված է Հայաստանում իր ամուսնությունը հետաձգելուն, կամ արտասահմանում անկանոն սեռական կյանքը կարող է բացասական ազդեցություն ունենալ երիտասարդի վերարտադրողական կարողությունների վրա: Սակայն, այդ փաստարկները, չունենալով փաստացի հիմնավորումներ, ունեն հակափաստարկներ: Սեզոնային արտագնա աշխատանքի մեկնող երիտասարդը տնտեսապես շատ ավելի բարվոք վիճակում է և վստահ է, որ կարող է տնտեսապես ապահովել իր (ապագա) ընտանիքը (տե՛ս՝ «Ընտանիք» բաժինը): Արտագնա աշխատանքի համար Ռուսաստան մեկնող երիտասարդների նշանակալի մասը գյուղաբնակ և առավելապես ավանդական արժեհամակարգ ունեցող ընտանիքներից է: Եվ որպեսզի իրականացնեն իրենց ձգտումը, այն է՝ արտագնա աշխատանքի մեկնելով ազատվել գավառական հզոր սոցիալական վերահսկողությունից, մասնավորապես՝ սեռական կյանքում, նրանք ծնողների արգելքները հաղթահարելու համար կարող են ավելի հակված լինել ամուսնանալուն:

Հայաստանից ընդմիշտ հեռանալու դիրքորոշումը

Հայաստանի երիտասարդների 37%-ը, հնարավորություն ունենալու դեպքում, ընդմիշտ կմեկնի Հայաստանից (Գծապատկեր 19.):

Հայաստանն ընդմիշտ թողնելու դրդապատճառները կարելի է դասակարգել երեք հիմնական խմբերում.

- **սոցիալ-տնտեսական պատճառներ** (մասնավորապես՝ «Հայաստանում աշխատանք չկա», «Աշխատավարձերը ցածր են», «Բարելավելու համար տնտեսական վիճակը» և նմանաբնույթ այլ պատճառներ),

- **սոցիալ-հոգեբանական պատճառներ** (մասնավորապես՝ «Հայաստանում ապագա չեմ տեսնում իմ/երեխաների համար», «Ազատ ապրելու համար», «Հայաստանում չկան ինքնաարտահայտվելու հնարավորություններ» և նմանաբնույթ այլ պատճառներ),
- **այլ պատճառներ** (օրինակ՝ «Ընտրյալս ապրում է արտասահմանում», «Ընտանիքս ապրում է արտասահմանում», «Բանակից խուսափելու համար» և այլ պատճառներ, որոնք ուղղակիորեն չեն համալրում առաջին երկու հիմնական պատճառների շարքը):

Ընդմիշտ մեկնելու սոցիալ-տնտեսական պատճառներն առկա են ընդմիշտ մեկնելուն հակված հինգ երիտասարդներից չորսի մոտ (79%, Գծապատկեր 20.), իսկ սոցիալ-հոգեբանական պատճառները՝ յուրաքանչյուր երրորդի մոտ (33%): Այլ պատճառներն աննշան են (առկա են երիտասարդների ընդամենը 4%-ի շրջանում):

19. Հնարավորության դեպքում ընդմիշտ կմեկնեի՞ք արտասահման



20. Արտագաղթի պատճառների տարածվածությունը (Անձը կարող է ունենալ արտագաղթի մեկից ավելի պատճառ)



Այս էմպիրիկ արդյունքը ևս մեկ անգամ հաստատում է, որ՝

- **Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ծավալի կրճատման հիմնական գործոնը Հայաստանի տեղափոխումն է աշխարհ-համակարգի ծայրամաս՝ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի համապատասխան անկմամբ և**
- **բնակչության լայն շրջանակների համար սոցիալ-տնտեսական վիճակի որակական բարձրացման ուղիների ու դրանց հնարավորությունների նկատմամբ հավատի բացակայությամբ:**

Հարկ է նշել, որ նույն անձը կարող է ընդմիշտ մեկնելու իր դիրքորոշումը պայմանավորել և՛ սոցիալ-տնտեսական, և՛ սոցիալ-մշակութային, և՛ «այլ» գործոններով: Ընդ որում՝ պարզվել է, որ ընդմիշտ արտագաղթի սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական գործոնները բացասաբար են շաղկապված (Պիրսոնի կորելյացիոն գործակիցը՝ -0.398): Ե՛վ սոցիալ-տնտեսական, և՛ սոցիալ-հոգեբանական պատճառները միաժամանակ առկա են արտագաղթին հակված երիտասարդների միայն 17%-ի, զուտ սոցիալ-տնտեսական պատճառները՝ այդ երիտասարդների 63%-ի, իսկ միայն սոցիալ-հոգեբանական պատճառները՝ 16%-ի շրջանում:

21. Արտագաղթի սոցիալ-տնտեսական պատճառների տարածվածությունը սոցիալ-ժողովրդագրական խմբերում



22. Արտագաղթի սոցիալ-հոգեբանական պատճառների տարածվածությունը սոցիալ-ժողովրդագրական խմբերում



- **Ընդմիշտ մեկնելու սոցիալ-տնտեսական պատճառները համեմատաբար ավելի տարածված են ավելի աղքատ ընտանիքների և կանանց շրջանում,**
- **իսկ սոցիալ-հոգեբանական պատճառները՝ ուսանողների, բարեկեցիկ ընտանիքների երիտասարդների շրջանում:**

Ընդմիշտ արտագաղթի դիրքորոշումը ձևավորող գործոնները

Դիտարկենք արտագաղթի դիրքորոշումների վրա ազդող գործոնների հինգ խումբ.

1. Սոցիալ-ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական գործոններ,
2. Ենթամշակութային պատկանելություն,
3. Աշխարհայացքային դիրքորոշումներ,
4. Ազգային ինքնության միջուկի բաղադրիչներ,
5. Պետական քաղաքականություններ:

1. Սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցության ուղղությունն արտագաղթի դիրքորոշումների վրա դժվար չէ կռահել: Օրինակ՝ այն դեպքում, երբ երիտասարդների ամբողջ համակցությունում ընդմիշտ արտագաղթի դիրքորոշումն առկա է նրանց 37%-ի շրջանում, ապա իրենց աշխատավարձից դժգոհ անձանց շրջանում այն 40% է:

Արտագաղթին ավելի հակված են տղամարդիկ, չամուսնացածները, գործազուրկները: Բացի դրանից՝ աշխատավարձային ակնկալիքների աճը նույնպես բարձրացնում է ընդմիշտ արտագաղթի դիրքորոշումները (Գծապատկեր 23.-Գծապատկեր 26.):

23. 24. 25. 26. Արտագաղթելու դիրքորոշում ունեցողները



2. Ենթամշակութային պատկանելության ազդեցությունը

Վիճակագրական փորձարկումը ցույց է տվել, որ Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը վիճակագրորեն նշանակալի կերպով կախված է երիտասարդի ենթամշակութային պատկանելությունից (Պիրսոնի $\chi^2 = 0.057$), սակայն Գծապատկեր 27.-ից ակնհայտ է, որ այդ կախվածությունը գծային չէ[63]: Բաշխման տեսքից բխում է, որ՝

- **Դասական ենթամշակութային շերտում գտնվող երիտասարդների՝ ընդմիշտ արտագաղթելու դիրքորոշումներն ամենացածրն են:**
- **Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշումն ամենաբարձրն է «ավանգարդային» խմբում:**
- **Արտագաղթի դիրքորոշումը ցածր է նաև «զանգվածային» շերտի ինդեքսի բարձր արժեքների [2.01-3.0] տիրույթում:**

Ստացված արդյունքը կարևոր է Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի որակի պահպանման տեսակետից: Երիտասարդների ամենաբարձր ենթամշակութային շերտը ամենափոքրն է. այն կազմում է 18-30 տարեկանների ընդամենը 5%-ը, և նրանց արտագաղթն ունակ է լրջորեն վատթարացնելու Հայաստանի ապագա մտավորականության որակը[64]: Մյուս կողմից՝

- **Այն փաստը, որ դասական ենթամշակույթին պատկանող շերտում ամենացածրն է արտագաղթի դիրքորոշումը, ցույց է տալիս, որ Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի խնդիրների լուծման ներքին ռեսուրսն ազգային բարձր մշակույթն է:**

27. Արտագաղթելու դիրքորոշում ունեցողները



63 Ինչի հիման վրա կարելի է առաջ քաշել այն վարկածը, որ ենթամշակութային պատկանելության ինդեքսն իրականում մոտարկում է լատենտ բազմաչափ կոնստրուկտ:

64 Տե՛ս ենթամշակութային պատկանելության մասին համապատասխան բաժինը՝ էջ 126:

28. Արտագաղթելու դիրքորոշում ունեցողները



Ենթամշակութային տիպերի ներկայացուցիչների՝ Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշման պատճառներն արտացոլում են այդ տիպերի առանձնահատկությունները (Գծապատկեր 28.): Ենթամշակութային պատկանելության ինդեքսի արժեքների աճին զուգահեռ՝ նվազում է սոցիալ-տնտեսական և աճում սոցիալ-հոգեբանական պատճառների տարածվածությունը: Այսինքն՝

- **Հայաստանում սոցիալ-մշակութային պայմանները խթանում են առավել բարձր մշակութային մակարդակ ունեցող անձանց՝ Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը,** այսինքն՝ **վատթարացնում են հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի որակը**:

3. Աշխարհայացքային դիրքորոշումների ազդեցությունն արտագաղթի դիրքորոշումների վրա

Դիտարկենք, թե երիտասարդի աշխարհայացքային դիրքորոշումները կամ **սուբյեկտիվ** ընկալումներն ինչպես են շաղկապված նրա՝ ընդմիշտ արտագաղթելու դիրքորոշման հետ (Աղյուսակ 18.): Այդ դիրքորոշումները խմբավորված են 6 խմբերում:

18. Արտագաղթի դիրքորոշման կախվածությունը երիտասարդի աշխարհայացքային դիրքորոշումներից (Տրված են այն դիրքորոշումները, որոնց հետ համաձայնության և անհամաձայնության դեպքում ընդգծիշտ արտագաղթելու դիրքորոշումների միջև տարբերությունները մեծ կամ հավասար են 10%-ի:)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ	Ոչ	Այո	Տարբերություն
Աշխարհ-համակարգի բովանդակության ընկալումներ			
Ինչ էլ որ ասեն ու խոսեն, այսօր ամեն ինչ վճռում է փողը:	17%	42%	-25%
Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրները և օլիգարխներն ավելի ու ավելի մեծ ազդեցություն և իշխանություն են ձեռք բերում:	27%	41%	-14%
Խորհրդային Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք:	28%	40%	-12%
Հայաստանը 5-10 տարի հետո կլինի անհամեմատ ավելի զարգացած:	49%	33%	16%
Սոցիալ-տնտեսական միջավայրի ընկալումներ			
Իմ կյանքի պայմանները բարենպաստ են ամուսնանալու/երեխաներ ունենալու համար:	49%	32%	17%
Հայաստանում ամեն մարդ իր բիզնեսը ստեղծելու հնարավորություն ունի:	44%	33%	10%
Երիտասարդների համար Հայաստանում առկա են բիզնեսով զբաղվելու բարենպաստ պայմաններ:	42%	32%	10%
Սոցիալական կապիտալի ընկալումներ			
Հայաստանում մարդիկ չկամ (չուզող) են միմյանց նկատմամբ:	30%	41%	-11%
Հայաստանում պակասում է վստահությունը մարդկանց միջև:	29%	40%	-11%
Հայաստանում մարդիկ ճշմարտախոս (չ)են:	41%	31%	10%
Մշակութային ընկալումներ			
Հեռուստասերիալները աղավաղում են հայոց լեզուն:	29%	39%	-10%
Քաղաքական մշակույթի տարրեր			
Պետք է նպաստել, որ մարդիկ իրենք համախմբվեն ու լուծեն իրենց խնդիրները:	19%	38%	-18%
Այսօր Հայաստանին անհրաժեշտ է առավելապես «ուժեղ ձեռքով» կարգ ու կանոն հաստատող իշխանություն:	24%	39%	-15%
Եթե հնարավոր չէ ընտրությունների արդյունքներն օրենքով պաշտպանել, ապա ժողովուրդն այն պետք է ուժով պաշտպանի:	29%	42%	-13%
Ձեր կարծիքով՝ հասարակական կազմակերպությունները Հայաստանում կարո՞ղ են որևէ իրական հասարակական խնդիր լուծել:	47%	26%	21%
Համամի՞տ եք արդյոք, որ Ձեր ձայնը կարևոր է ընտրությունների ժամանակ:	45%	31%	14%
Քաղաքացիական կեցվածք			
Պետք է պատժել ոչ թե բանակից խուսափողներին, այլ բանակում անարդարություններ կատարողներին:	53%	36%	18%
Բանակում ծառայելը պարտադիր է առողջ հայ երիտասարդի համար:	47%	35%	12%

Աշխարհ-համակարգի բուն բովանդակության այն ընկալումը, որ հասարակական հարաբերություններում վերջին հաշվով իշխում է փողը, և որպես դրա ապացույց ու հետևանք՝ Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրներն ու օլիգարխներն ավելի ու ավելի մեծ ազդեցություն և իշխանություն են ձեռք բերում, երիտասարդների շրջանում նշանակալի չափով բարձրացնում է արտագաղթելու դիրքորոշումները: Նրանք չեն ցանկանում ապրել այդպիսի երկրում: Նշված երկու դիրքորոշումներն ուժեղ կորելացված են այն դիրքորոշմանը, ըստ որի՝ «Խորհրդային Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք»: Գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք միևնույն աշխարհայացքային գործոնի տարբեր դրսևորումներն են: Երիտասարդները չեն ցանկանում ապրել այն հասարակությունում, որտեղ փողը հիմնական և ծայրագույն արժեք է. նրանք ցանկանում են այլ ֆունդամենտալ արժեքների վրա կառուցված հասարակություն, որն իր մի շարք բնութագրերով «նման է» Խորհրդային Միության հասարակությանը:

Սոցիալ-տնտեսական սեփական պայմանների բարենպաստության ընկալումը և բիզնեսով զբաղվելու հնարավորության գնահատականների աճը նվազեցնում են արտագաղթի դիրքորոշումը, ինչն ուղղակիորեն հաղորդակցվում է սոցիալ-տնտեսական օբյեկտիվ բնութագրերի ազդեցության ուղղության հետ:

Սոցիալական կապիտալի և հասարակությունից օտարվածության զգացողությունը («Հայաստանում մարդիկ չկամ (չուզող) են միմյանց նկատմամբ», «Հայաստանում պակասում է վստահությունը մարդկանց միջև», «Հայաստանում մարդիկ ճշմարտախոս (չ)են») բարձրացնում է արտագաղթի դիրքորոշումը:

Հայաստանի մշակութային դեգրադացումը, որի դրսևորման կիզակետերից է հեռուստատեսությունը, ավելի կոնկրետ՝ հայկական հեռուստասերիալները, էլ ավելի կոնկրետ՝ հեռուստասերիալներից հնչող հայոց լեզուն (խաթարված լեզվով խաթարված մտքեր են հնչում), մեծացնում է անձի և նրա հայրենիքի ընկալման միջև ճեղքվածքը՝ խթանելով արտագաղթի դիրքորոշման աճը:

Հայաստանից հեռանալուն հակված են քաղաքական արմատականության տարրեր կրող անձինք: Դրա մասին է վկայում այն, որ նրանք, ովքեր համարում են, որ «Եթե հնարավոր չէ ընտրությունների արդյունքներն օրենքով պաշտպանել, ապա ժողովուրդն այն պետք է ուժով պաշտպանի», կամ «Այսօր Հայաստանին անհրաժեշտ է առավելապես «ուժեղ ձեռքով» կարգ ու կանոն հաստատող իշխանություն», ավելի են հակված արտագաղթին, քան նրանք, ովքեր համաձայն չեն այդ դրույթների հետ:

Մյուս կողմից **քաղաքական և քաղաքացիական սուբյեկտության զգացողության աճը նվազեցնում է արտագաղթի դիրքորոշումները.** Հայաստանում մնալուն ավելի հակված են այն երիտասարդները, ովքեր համաձայն են, որ «Հասարակական կազմակերպությունները Հայաստանում կարող են որևէ իրական հասարակական խնդիր լուծել», և «Համամիտ են, որ իրենց ձայնը կարևոր է ընտրությունների ժամանակ»: Արտագաղթին նվազ հակված են նաև նրանք, ովքեր ներդաշնակ են ընկալում քաղաքացու և պետության պարտականություններն ու իրավունքները: Մի կողմից՝ «Բանակում ծառայելը պարտադիր է առողջ հայ երիտասարդի համար», իսկ մյուս կողմից՝ «Պետք է պատժել ոչ թե բանակից խուսափողներին, այլ բանակում անարդարություններ կատարողներին»:

Այսպիսով՝ Հայաստանի երիտասարդության արտագաղթի դիրքորոշումները կնվազեն, եթե՝

- **կառուցվի բարոյական արժեքների, այլ ոչ թե փողի վրա հիմնված արդար երկիր,**
- **վերականգնվի մարդկանց միջև վստահությունը,**
- **մաքրվի մշակութային տարածությունը,**
- **մարդկանց համար ազատ աշխատելու հնարավորություն ստեղծվի,**
- **մարդիկ և պետությունը կատարեն իրենց պարտականությունները, և երաշխավորված լինեն քաղաքացիների իրավունքները:**

Այսինքն՝ **չի հայտնագործվել ոչ մի նոր բան, որը հայտնի չէր բոլորին:**

4. Արտագաղթի դիրքորոշման կախվածությունն ազգային ինքնության բաղադրիչներից

Հետազոտությամբ ուսումնասիրվել է երիտասարդների շրջանում անձին որպես հայ նույնականացնելու համար անհրաժեշտ պայմանները կամ ազգային ինքնության միջուկը[65]: Պարզվում է, որ՝

- **հայ երիտասարդի արտագաղթի դիրքորոշումներն աճում են, երբ նա անձին հայ համարելու համար այլևս պարտադիր չի համարում՝**
  - **որպես հայ ինքնանույնականացումը,**
  - **ազգային եկեղեցուն պատկանելը,**
  - **Հայաստանը որպես իր միակ հայրենիք ընկալելը:**

Մասնավորապես այն երիտասարդների խմբում, ովքեր անձին որպես հայ նույնականացնելու համար պարտադիր չեն համարում նրա՝ «Հայ Առաքելական եկեղեցուն պատկանելը», ընդմիշտ արտագաղթելու դիրքորոշումը 15%-ով ավելի բարձր է, քան այն երիտասարդների խմբում, ովքեր այդ բնութագիրը պարտադիր են համարում: Առաջին խմբում արտագաղթելու դիրքորոշումը 36% է, իսկ երկրորդում՝ 52% (Աղյուսակ 19.):

19. Ազգային ինքնության միջուկի բաղադրիչների ազդեցությունն ընդմիշտ արտագաղթելու դիրքորոշման վրա

Անձին հայ համարելու համար պարտադի՞ր է արդյոք	Անձանց տոկոսը այն խմբում, որտեղ հակված են ընդմիշտ արտագաղթին		Ընդմիշտ արտագաղթելու հակման աճը
	Պարտադիր է	Պարտադիր չէ	
Ինքն իրեն հայ համարելը	36%	52%	16%
Հայ Առաքելական եկեղեցուն պատկանելը	35%	50%	15%
Հայաստանը որպես իր միակ հայրենիք ընկալելը	34%	45%	11%
Հայերեն խոսել իմանալը	36%	40%	4%
Հոր հայ լինելը	36%	40%	4%
Մոր հայ լինելը	36%	39%	3%

65 Ազգային ինքնության միջուկի մասին մանրամասն տե՛ս «Ազգային ինքնություն և միասնականություն» պարագրաֆը՝ էջ 142:

5. Պետական քաղաքականությունների ազդեցությունը

Կարելի է ենթադրել, որ տարբեր ոլորտներում պետական արդյունավետ քաղաքականությունները կարող են ազդեցություն ունենալ երիտասարդության արտագաղթի դիրքորոշումների վրա:

Պարզվում է, որ պետական քաղաքականությունների շարքում արտագաղթի դիրքորոշումներն առավել մեծ չափով կրճատելու ներուժ ունեն՝

- **արդյունաբերության,**
- **աշխատատեղերի ստեղծման,**
- **աղքատության կրճատման,**
- **որակյալ առողջապահության,**
- **բարձր տեխնոլոգիաների,**
- **փոքր բիզնեսի**

ոլորտներում արձանագրվող հաջողությունները[66]:

Այնուամենայնիվ՝

- **Արտագաղթի բացարձակ արժեքով ամենափոքր դիրքորոշումը դիտվել է աղքատության կրճատման ոլորտում իրականացվող պետական քաղաքականություններում բարելավում ընկալած երիտասարդների խմբում:**

20.

Քաղաքականությունը	Վատանում է	Բարելավվում է	Տարբերություն
Արդյունաբերության մեջ	51%	30%	21%
Իրավիճակն աշխատատեղերի ստեղծման ոլորտում	46%	26%	20%
Իրավիճակն աղքատության կրճատման ոլորտում	44%	24%	20%
Իրավիճակը որակյալ առողջապահության ապահովման ոլորտում	52%	33%	19%
Բարձր տեխնոլոգիաների ոլորտում	52%	33%	19%
Փոքր բիզնեսում	47%	30%	17%
Կրթության մակարդակը դպրոցներում	43%	30%	13%
Գյուղատնտեսությունում	48%	35%	13%
Կրթության մակարդակը բուհերում	45%	33%	12%
Տուրիզմի ոլորտում	43%	35%	8%
Հարուստների և աղքատների միջև անհավասարության կրճատման ոլորտում	39%	35%	4%

66 Պետական քաղաքականությունների գնահատականների մասին տե՛ս համապատասխան բաժնում:

Ի՞նչն է արտագաղթի դիրքորոշում ունեցողներին պահում Հայաստանում:

- **Հայաստանից երիտասարդների՝ ընդմիշտ արտագաղթելու ամենահզոր խոչընդոտը ֆինանսների բացակայությունն է. արտագաղթելու դիրքորոշում ունեցող երիտասարդների կեսից մի փոքր ավելին (51%) չունի ֆինանսական անհրաժեշտ միջոցներ:**

29. Հայաստանից դեռևս ընդմիշտ չմեկնելու խոչընդոտները



ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՔ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ



Ընտանիքը, որը երեխաների սոցիալականացման առաջին և հիմնական ագենտն է, կարևորագույն նշանակություն ունի ազգային մշակույթի վերարտադրման, դրա բնույթի պահպանման և փոխակերպման տեսակետից: Ընտանիքում նախնական սոցիալականացում անցած երեխան 6-7 տարեկան հասակից սկսում է ավելի ու ավելի ինտենսիվ կերպով կրել սոցիալականացման այլ ագենտների, մասնավորապես հեռուստատեսության, դպրոցի և ընկերական շրջապատի ազդեցությունները, որոնք մոդիֆիկացնում են ընտանիքում իր ստացած նախնական արժեքներն ու նորմերը: Այժմ, երբ ընտանիքի և ընտանեկան կապերի թուլացումը գլոբալ միտում է, որն ինտենսիվորեն քարոզվում է գլոբալ գեոմշակույթի ինֆորմացիոն քաղաքականությամբ, և գլոբալ ռեսուրսների միջոցով երկրներին պարտադրվում է ընտանեկան կապերը խարխլող քաղաքականությունների ներդրումը, կարևոր խնդիր է հայկական ընտանիքի ամրության վիճակի, ռեսուրսի և դինամիկայի գնահատումը: Ընտանեկան, հատկապես սերունդների միջև կապերի թուլացումը, ոչ ամբողջական ընտանիքների աճը նվազեցնում են ընտանիքում մշակութային վերարտադրության ներուժը: Ընտանիքում երեխաների քանակի նվազումը լուրջ մարտահրավեր է փոքրաքանակ ազգերի գոյությանը:

Ակնհայտ է, որ սոցիալ-տնտեսական պայմանները՝ որպես հասարակության վարքը և դիրքորոշումները պայմանավորող հիմնարար գործոններ, ազդում են երիտասարդության վերարտադրողական վարքի, մասնավորապես ամուսնության օպտիմալ տարիքի, ամուսնությունը հետաձգելու, ընտանիքում երեխաների ցանկալի քանակի, երեխաներ ունենալը հետաձգելու դիրքորոշումների վրա: Սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացումը կարող է ազդել նաև ընտանեկան կապերի ամրության վրա: Սակայն, միայն սոցիալ-տնտեսական պայմանները չեն, որ պայմանավորում են վերարտադրողական վարքը: Վերջինս պայմանավորված է նաև տվյալ հասարակության մշակութային առանձնահատկություններով: Մասնավորապես ավանդականից ինդուստրիալ հասարակության անցումը զուգորդվել է ընդլայնված ընտանիքից նուկլեար ընտանիքի անցմամբ, ոչ ամբողջական ընտանիքների քանակի աճով, ընտանիքում երեխաների քանակի կրճատմամբ, ընտանիքում սոցիալական վերահսկողության թուլացմամբ:

Արդի աշխարհի կարևորագույն խնդիրների շարքում է ժողովրդագրական վիճակը: Գիտական և փորձագիտական շրջանակներում առավել ընդունված դիրքորոշումն այն է, որ երկրագունդը «գերբնակեցված է», հետևաբար անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել բնակչության աճի զսպման և/կամ բնակչության քանակի կրճատման ուղղությամբ: Կա նաև հակադիր տեսակետ, ըստ որի՝ երկրագունդը գերբնակեցված չէ, և ժամանակակից տեխնոլոգիաները կարող են բարեկեցիկ կյանք ապահովել ավելի մեծ թվով մարդկանց համար (քան ներկայիս 7 միլիարդն է): Խնդիրը, սակայն, ոչ թե բնակչության քանակն է, այլ միջազգային և հասարակական աններդաշնակ հարաբերությունները և զարգացած (կենտրոնի) երկրներում հաստատված սպառողական կենսաոճը, որը գլոբալ գեոմշակույթը շարունակաբար տարածում է ամբողջ աշխարհում:

Աշխարհամակարգային վերլուծությունն արդի աշխարհի գլոբալ խնդիրների մեծ մասը, այդ թվում՝ նաև աշխարհի գերբնակեցվածությունից բխող խնդիրները, բացատրում է արդի աշխարհ-համակարգի հիմնարար նպատակով: Աշխարհ-համակարգի շարժիչ ուժը տնտեսավարումից ստացվող շահույթի մաքսիմիզացումն է: Դրանից անհրաժեշտաբար բխում է տնտեսական հարատև աճի պարտադիր լինելու կոնցեպտը: Սակայն, տնտեսական աճի դինամիկան ունի երկու ասպեկտ. այն պայմանավորված է ոչ միայն արտադրությամբ, այլև **սպառմամբ:**

Հետևաբար տնտեսական աճի հարատևության սկզբունքն անհրաժեշտաբար պահանջում է նաև **սպառման հարատև աճ:** Շահույթի մաքսիմիզացման գերնպատակի պայմաններում տնտեսավարման երկու կողմերի փոխկապվածությունն աշխարհում գլոբալ խնդիրներ է հարուցում[67]: **Ընդ որում՝ աշխարհամակարգային վերլուծությունն առաջ է քաշում այն թեզը, որ արդի գլոբալ խնդիրներն արդի աշխարհ-համակարգի շրջանակում լուծումներ չունեն**:

Այսպիսով՝ մի կողմից տնտեսական աճը պահանջում է շուկաների ծավալի աճ (այդ թվում՝ և՛ բնակչության աճ, և՛ նրա վճարողունակության աճ կամ աղքատության կրճատում), իսկ գլոբալ խնդիրների լուծումները պահանջում են բնակչության և սպառման կրճատում:

Գլոբալ համակարգում գտնվող Հայաստանը կրում է այդ համակարգում գերակայող միտումների հզոր ազդեցությունը, տվյալ դեպքում՝ այն բոլոր ազդեցությունները, որոնք ուղղված են թույլ զարգացած երկրներում բնակչության կրճատմանը, և, հետևաբար, Հայաստանի էթնոսոցիո-մշակութային համակարգի ծավալային աճի խնդիրը հակասում է գլոբալ նպատակադրումներին: Այդ ազդեցությունների շարքից են՝

- ավանդական ընտանիքի կողքին, որպես հավասարապես ընդունելի, ամենաբազմազան «այլընտրանքային» ընտանիքների դիրքավորումը,
- անձի ազատության բացարձականացումը, որի ենթատեքստում է նաև ընտանեկան կապերի թուլացումը,
- սպառողական մշակույթի ձևավորումը, որն անձին դրդում է իր ֆինանսական ռեսուրսները ծախսել իր ցանկությունների բավարարման համար, իսկ ընտանիքը և հատկապես երեխաները խիստ նվազեցնում են այդ հնարավորությունները,
- ընտանիքի պլանավորման կոնցեպտը, որի **լատենտ** նպատակն է ընտանիքում հետաձգել երեխաների ծնունդը, բացառել **անցանկալի երեխաների աշխարհ գալը**:

Ներկայումս, երբ Հայաստանում արդեն չափահաս տարիքի են հասել գլոբալ գեոմշակույթի ծայրամասային բաղադրիչների (զանգվածային մշակույթի) հզոր ազդեցության ներքո մեծացած մի քանի սերունդ[68], կարևոր հարց է դարձել այն, թե ազգային մշակույթի, այդ թվում՝ արժեքների վերարտադրության տեսակետից **ո՞ր ազդեցությունն է ավելի հզոր՝ ավանդական արժեքներն ու նորմերը պահպանող հիմնական ագենտի՝ ընտանիքի, թե՞ գլոբալ գեոմշակույթի**: Սա այնպիսի բարդ հարց է, որի պատասխանը դժվար է (կամ անհնար) ստանալ մեկ ժամանակային կտրվածք պարունակող հետազոտությունների միջոցով: Այնուամենայնիվ, աշխատանքում այդ ազդեցությունների հարաբերակցությունը գնահատելու փորձ է կատարվել երիտասարդների ամուսնության և երեխաներ ունենալու դիրքորոշումների վրա դրանց ներգործության տեսակետից[69]:

---

67 Այստեղ բաց ենք թողնում աշխարհամակարգային վերլուծության ամենահիմնական թեզի դիտարկումը, ըստ որի՝ գլոբալ ռեսուրսների սահմանափակության պայմաններում հարատև տնտեսական աճը տանում է շահութաբերության անկման, որի սահմանային արժեքը 0-ն է, որից բխում է նաև աշխարհ-համակարգի զարգացման սահմանափակությունը:

68 Մշակութային տեսակետից մոտավորապես 6-7 տարվա ընթացքում ձևավորվում են նոր սերունդներ, որոնք նշանակալի չափով տարբերվում են իրենց նախորդներից:

69 Երբ հարց է տրվում՝ «Ինչո՞ւ չեք պատրաստվում ամուսնանալ մոտակա տարիների ընթացքում», ապա ուղղակիորեն հնարավոր է ստանալ հետևյալ բնույթի պատասխաններ. «Դեռ պատրաստ չեմ

Այսպիսով՝ վերոնշյալ երկու հիմնական հարցերի պատասխանները գտնելու համար հարկ է գտնել մի շարք մասնակի հարցերի պատասխաններ.

1. **Ամուսնության** վերաբերյալ ի՞նչ **դիրքորոշում** ունեն երիտասարդները: Ո՞րն է **ամուսնության լավագույն տարիքը**: Որո՞նք են ամուսնությունը հետաձգելու պատճառները:
2. Հայաստանի երիտասարդության շրջանում **երեխաներ ունենալու պահանջմունքի** առումով ներկայումս ի՞նչ պատկեր է առկա, այլ կերպ ասած՝ իրենց ընտանիքներում քանի՞ երեխա են ցանկանում ունենալ: Արդյո՞ք այդ պահանջմունքը բավարար է Հայաստանի ազգաբնակչության ընդլայնված վերարտադրության համար: Արդյո՞ք երիտասարդ սերնդի շրջանում այդ պահանջմունքը, նրանց ծնողների համեմատ, նվազել է:
3. **Ամուսնության և ընտանիքի հետ կապված մշակութային** ի՞նչ դիրքորոշումներ ունեն երիտասարդները: Արդյո՞ք Հայաստանում պահպանվում է տղամարդու գերիշխող դիրքը, թե՞ փոփոխվում է: Ի՞նչ ուղղությամբ է այն փոփոխվում: Ո՞րն է այդ փոփոխության բովանդակությունը:
4. Ի՞նչ գործոններ և ի՞նչ ինտենսիվությամբ են ազդում վերը նշված բնութագրերի վրա: Որո՞նք են փոփոխությունների պատճառ հանդիսացող առավել ազդեցիկ գործոնները:

Վերարտադրողական վարքի միտումները 1990-2010թթ. ընթացքում

Նախքան հետազոտական տվյալների վերլուծությունը կարևոր է Հայաստանի բնակչության ժողովրդագրական վիճակի և վերարտադրողական վարքի միտումների վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմելը: Այդ նպատակով դիտարկենք ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության համապատասխան տվյալները:

Գծապատկեր 30.-ում ներկայացված է Հայաստանի բնակչության ընդհանուր քանակի և դրա կազմում գյուղական բնակչության տոկոսի փոփոխությունը 1897-2010թթ. ընթացքում: 115 տարվա մեջ դիտարկվել է չորս տասնամյակ, որոնց ընթացքում Հայաստանի բնակչությունը կա՛մ նվազել է, կա՛մ չի ունեցել նշանակալի աճ.

1) Առաջին համաշխարհային պատերազմն ընդգրկող տասնամյակում (1913-1920թթ. Հայաստանի բնակչությունը կրճատվել է 39%-ով):
2) Երկրորդ համաշխարհային պատերազմն ընդգրկող ժամանակահատվածում՝ 1940-1950թթ.: (Չնայած այդ պատերազմի ընթացքում զոհվել է 300.000 տղամարդ, այնուամենայնիվ Հայաստանի բնակչությունն աճել է 2%-ով:)
3) Աշխարհամակարգային անցման ժամանակահատվածում՝ 1990-2000թթ. (Հայաստանի բնակչությունը կրճատվել է 9%-ով):
4) Վերջին տասնամյակում՝ 2001-2010 թվականներին, երբ Հայաստանն ինստիտուցիոնալ առումով ինտեգրվեց գլոբալ աշխարհ-համակարգին, այդտեղ «ստացավ» իր նիշան և ծավալային տեսակետից [սպոնտան կերպով] ադապտացվեց դրան (այս ժամանակահատվածում Հայաստանի բնակչությունը նվազել է 6.4%-ով):

տնտեսապես», կամ «Ցանկանում եմ ազատ ապրել»: Գործնականում, սակայն, անհնար է ստանալ «Այդպես եմ դաստիարակվել հեռուստատեսային (կամ ինտերնետային) ինֆորմացիոն դաշտում» պատասխանը:

Վերջին 20 տարիներին Հայաստանի բնակչության կրճատման միտումները և վերջին տարիներին կայուն 20% գործազրկության մակարդակը հուշում են, որ՝

- **տնտեսության՝ 1991-1997թթ. ավելի ցածր նիշա տեղափոխմամբ պայմանավորված կառուցվածքային փոխակերպման հետևանքով Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգը դեռևս չի հասել իր ծավալային կայուն վիճակին, դեռևս առկա է նշանակալի «ավելորդ» բնակչություն:**

Հետևաբար՝

- **կարելի է առաջ քաշել այն վարկածը, որ այլ հավասար պայմանների դեպքում եթե Հայաստանում տեղի չունենան սոցիալ-տնտեսական արմատական փոփոխություններ, ապա Հայաստանի բնակչության կրճատումը շարունակվելու է:**

Նույն՝ 1897-2010թթ. ժամանակահատվածում որակապես փոխվել է քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը: Խորհրդային տարիներին գյուղական բնակչության կրճատումն արտապատկերում է Հայաստանի ինդուստրացման տեմպերը: Այսպես՝ 1920-1940թթ. ընթացքում գյուղական բնակչությունը կրճատվել է 9%-ով, 1940-1950թթ. ընթացքում՝ 14%-ով, 1950-1960թթ. ընթացքում՝ 8%-ով, 1960-1970թթ. ընթացքում՝ 9%-ով, 1970-1990թթ. ընթացքում՝ ևս 9%-ով: Արդյունքում 1960-1980-ական թվականներին Խորհրդային Հայաստանը դարձել էր բարձր զարգացած, իր զարգացման մակարդակով Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությանը և Չեխոսլովակիային հավասարազոր ինդուստրիալ երկիր: 1990-2001 թվականներին տեղի ունեցած ապաինդուստրացման ընթացքում գյուղական բնակչությունն աճել է 4%-ով:

Հայաստանի ժողովրդագրական իրական վիճակի դինամիկայի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ է տալիս 2001 և 2011 թվականներին անցկացված մարդահամարների արդյունքների համեմատությունը:

Եթե 2001թ. Հայաստանի մշտական բնակչությունը (կամ քաղաքացիները) կազմել է 3.213.011 մարդ, ապա 2011թ.՝ 3.018.854, այսինքն՝ մշտական բնակչությունը կրճատվել է 6.4%-ով: Եթե 2001թ. Հայաստանում առկա (կամ մարդահամարի ժամանակահատվածում Հայաստանում գտնվող) բնակչությունը կազմել է 3.002.594 մարդ, ապա 2011թ.՝ 2.871.771: Ըստ այդմ՝ կրճատումը կազմել է 4.5%: Հարկ է նշել, որ 2011թ. Հայաստանի մշտական բնակչությունը դարձել է ավելի փոքրաթիվ, քան 1980 թվականին, իսկ առկա բնակչությունը հավասարվել է 1976թ. մակարդակին (2.851.000):

Բնակչության բնական աճի դինամիկան լավագույնս արտահայտող ցուցանիշներից են **կնոջ պտղաբերության և վերարտադրության նետտո գործակիցները**: Առաջինը՝ պտղաբերության նետտո գործակիցը, ցույց է տալիս այն երեխաների միջին թվաքանակը, որ իր կյանքի ծնունակ ժամանակահատվածում կարող է ծնել մեկ կինը՝ ծնելիության տվյալ տարվա մակարդակի պահպանման դեպքում: Բնակչության թվաքանակի պարզ վերարտադրության համար անհրաժեշտ է, որ կնոջ պտղաբերության գործակիցը լինի մոտավորապես 2.15: Հայաստանում այդ գործակիցը 1993 թվականին նվազել է կրիտիկական արժեքից և դրանից հետո մնացել կրիտիկական արժեքից ցածր:

Երկրորդը՝ վերարտադրության նետտո գործակիցը, ցույց է տալիս, թե մեկ կինն իր կյանքի ծնունակ ժամանակահատվածում միջին հաշվով քանի աղջիկ երեխա կծնի, ովքեր իրենց

ծնվելուց հետո կհասնեն իրենց մայրերի տարիքին՝ յուրաքանչյուր տարիքում ծնելիության և մահացության տվյալ ժամանակաշրջանի մակարդակների պահպանման դեպքում: Բնակչության պարզ կամ ընդլայնված վերարտադրության համար անհրաժեշտ է, որ այս գործակիցը հավասար կամ մեծ լինի 1-ից: Նույն՝ 1993թ. Հայաստանում այս գործակիցը դարձավ 1-ից փոքր և դրանից հետո այդպես էլ մնաց: 2010թ. այն 0.7 էր, ինչը նշանակում է, որ այլ հավասար պայմանների դեպքում՝ 25 տարի անց՝ (Հայաստանում 2010թ. մոր միջին տարիքը երեխայի ծնվելու ժամանակ) 2035 թ-ին, Հայաստանում ծննդաբերող կանանց առավելագույն քանակը հավասար կլինի 2010 թ-ին աղջիկ ծննդաբերած կանանց քանակին, այսինքն՝ 0.7 մասին: Այս գործակիցը կարևոր է այն պատճառով, որ բնակչության վերարտադրությունը պայմանավորված է կանանց քանակով, քանի որ երկրում ծնվող երեխաների քանակը սահմանափակվում է կանանց ծննդաբերելու ունակությամբ:

Հետխորհրդային 20-ամյակում անշեղորեն աճել է առաջին անգամ ամուսնացողների միջին տարիքը ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց շրջանում (Գծապատկեր 32.): Տղամարդկանց շրջանում այդ աճը կազմել է 25.5 տարեկանից մինչև 28.4 տարեկան, կամ՝ 2.9 տարի, իսկ կանանց շրջանում՝ 22.3-ից մինչև 24.6 տարեկան, կամ՝ 2.3 տարի: Մոր միջին տարիքը, սակայն, շատ քիչ է փոխվել առաջին երեխայի ծնվելու առումով (Գծապատկեր 33.): Ժամանակային շարքում նկատելի է մոնոտոն աճի երկու ժամանակահատված՝ 1977-1990թթ. և 1994-2010թթ.: Մոնոտոն աճի առաջին ժամանակահատվածը կարելի է բացատրել խորհրդային վերջին 15-ամյակում տեղի ունեցած ինդուստրացման արդյունքում առաջացած մշակութային փոփոխություններով, իսկ մոնոտոն աճի երկրորդ ժամանակահատվածը՝ հետխորհրդային ժամանակահատվածում տեղի ունեցած զուտ մշակութային փոփոխություններով: Երկու ժամանակահատվածներն էլ ունեն բովանդակային համանման տարր. **երկու դեպքում էլ տեղի էր ունենում կնոջ էմանսիպացում:** Հիշենք, որ ինդուստրացման գործընթացում կնոջ էմանսիպացիայի տնտեսական հիմնական գործառույթը նրա ընդգրկումն է արտադրության մեջ, ինչի հետևանքով կինն ընտանիքում անցկացնում է ավելի ու ավելի քիչ ժամանակ, և բնականաբար նվազում է նրա պտղաբերության գործակիցը: Տնտեսության մեջ ընդգրկումը նպաստում է նաև կնոջ սոցիալական ակտիվության աճին, ինչը նույնպես նվազեցնում է երեխա ունենալու հավանականությունը: Այդ երկու հիմնական փոփոխությունները պարուրվում են մշակութային բազմաթիվ այլ փոփոխություններով, որոնք կազմավորում են այն միջավայրը, որտեղ «բնական է դառնում» քիչ երեխա ունենալը: Սակայն, ինչպես կերևա էմպիրիկ տվյալների հետագա վերլուծությունից, նմանությունները դրանով ավարտվում են:

1990-1994թթ. ժամանակահատվածում՝ առաջին երեխայի ծնվելու ժամանակ, մոր միջին տարիքի նվազումը կարող է բացատրվել այն հայտնի երևույթով, որ պոպուլյացիայի համար ֆորսմաժորային իրավիճակներում խթանվում է բնական վերարտադրությունը: Տվյալ դեպքում Հայաստանում այդպիսի իրավիճակ էր առաջացել Սպիտակի երկրաշարժի և Արցախյան պատերազմի հետևանքով:

1972-1988թթ. ընթացքում՝ երեխայի ծնվելու ժամանակ, մոր միջին տարիքի անկումը կապված էր ընտանիքում երեխաների քանակի նվազման հետ, ինչը հաստատում է նաև կնոջ պտղաբերության գործակցի անկումը:

2004-2010թթ. ժամանակահատվածում՝ երեխայի ծնվելու ժամանակ, մոր միջին տարիքի և կնոջ պտղաբերության գործակցի աճը պայմանավորված էր 1980-ականների վերջին ծնված այն աղջիկների թվաքանակով, ովքեր այդ տարիներին հասել էին ծննդաբերության տարիքի

(այդ թռիչքը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ծնելիության թռիչքաձև աճի երրորդ ալիքն էր):

1990-2010թթ. ընթացքում Հայաստանում նշանակալի չափով նվազել է ամուսնությունների հարաբերական քանակը՝ 1000 բնակչի հաշվով 8.0-ից մինչև 5.5 (Գծապատկեր 34.): Սա բացատրվում է երկու հիմնական գործոններով: Առաջինը՝ «հետաձգված ամուսնություններով», երբ ամուսնության տարիքն աճում է, և երկրորդը՝ չգրանցված ամուսնությունների քանակի աճով, երբ զույգերը գերադասում են ապրել քաղաքացիական ամուսնությամբ:

1997-2001թթ. «փոսը» բացատրվում է ևս երկու գործոնով: Առաջինը՝ 1990-ականներին զույգերը ոչ թե մշակութային, այլ ավելի շուտ տնտեսական պատճառներով (այդ տարիներին միայնակ մայրերը հումանիտար օգնություն էին ստանում) հաճախ չէին գրանցում իրենց ամուսնությունը: Երկրորդ գործոնն ինտենսիվ արտագաղթն էր. այդ տարիներին Հայաստանից հեռանում էին առավելապես երիտասարդ (չամուսնացած) և միջին տարիքի անձինք, ինչի հետևանքով հարաբերականորեն աճում էր ավելի բարձր տարիքի՝ արդեն ամուսնացած անձանց քանակը: Ներկայում, երբ նվազել է ինտենսիվ արտագաղթը, այդ գործոնի ազդեցությունը նույնպես նվազել է:

1990-2010թթ. ընթացքում ամուսնալուծությունների հարաբերական քանակի անկման ընդհանուր միտումները (Գծապատկեր 34.) նույնպես հնարավոր է առաջին մոտավորությամբ մեկնաբանել որպես 1990-ականների ինտենսիվ արտագաղթի հետևանք, այն է՝ ընտանիքից երկարատև ժամանակով հեռացած տղամարդիկ իրենց բացակայության փաստով նվազեցրել են միայնակ մնացած կանանց ամուսնալուծվելու հնարավորությունը, ինչի հետևանքով նվազել է գրանցված ամուսնալուծությունների քանակը: Չի բացառվում, որ վիճակագրական ցուցանիշների արժեքների ընդհանուր «նվազումը» որոշ չափով բացատրվում է նաև պետական կառավարման ապարատի աշխատանքի արդյունավետության ընդհանուր անկմամբ:

Ըստ մարզերի՝ 2010 թվականին գրանցված ամուսնությունների և ամուսնալուծությունների հարաբերական քանակների դիտարկումը բացահայտում է դրանց ևս մի քանի առանձնահատկություններ (Գծապատկեր 35.): Ամուսնությունների հարաբերական քանակն ամենացածրն է Շիրակում, Լոռիում, Տավուշում և Սյունիքում: Եթե այս չորս մարզերում էլ ցուցանիշի ցածր արժեքը, մյուս մարզերի համեմատ, կարելի է բացատրել արտաքին միգրացիայի մեծ չափերով, ապա պատերազմի տարիներին Սյունիքում առկա էր նաև ինտենսիվ ներքին միգրացիա. ընտանիքները հեռանում էին մարզից՝ իրենց հետ տանելով երեխաներին, ովքեր 5-10 տարի անց հասնելու էին ամուսնական տարիքի:

Ամուսնալուծությունների տեսակետից իրավիճակն ունի նաև այլ առանձնահատկություն: Եթե Լոռիում և Շիրակում, մյուս մարզերի համեմատ, ամուսնալուծությունների մեծ քանակը կարելի է բացատրել արտաքին միգրացիայի հարաբերականորեն մեծ քանակով, ապա Երևանում այն բացատրվում է նաև մշակութային գործոնով. այստեղ երիտասարդներն առավել հակված են իրենց ամուսնությունը հետաձգելուն:

30. Հայաստանի բնակչությունը և գյուղական բնակչությունը



31. Պտղաբերության և ծնելիության նետտո գործակիցները Հայաստանում



32. Առաջին անգամ ամուսնացածների միջին տարիքը ՀՀ-ում



33. Մոր միջին տարիքը երեխայի ծնվելու ժամանակ



34.


0
2
4
6
8
1990 7.8 1.1
1991 6.5 0.9
1992 6.3 0.9
1993 5.2 1.0
1994 4.9 0.8
1995 4.4 0.8
1996 3.9 0.7
1997 3.5 0.5
1998 3.9 0.4
1999 3.4 0.4
2000 3.8 0.6
2001 4.3 0.5
2002 4.8 0.6
2003 5.3 0.6
2004 5.2 0.8
2005 5.2 0.9
2006 5.6 0.9
2007 5.7 0.9
2008 5.8 0.9
2009 5.5 0.9
Ամուսնությունների քանակը ՀՀ-ում 1000 բնակչի հաշվարկով
Ամուսնալուծությունների քանակը ՀՀ-ում 1000 բնակչի հաշվարկով

35.


0
2
4
6
8
Արմավիր 6.1 0.6
Կոտայք 6.0 0.7
Երևան 6.0 1.2
Վայոց ձոր 5.4 0.5
Արարատ 5.4 0.5
Գեղարքունիք 5.3 0.5
Արագածոտն 5.2 0.5
Շիրակ 5.0 0.8
Լոռի 5.0 1.7
Տավուշ 4.5 0.5
Ամուսնությունների քանակը ըստ մարզերի, 2010թ.
Ամուսնալուծությունների քանակը ըստ մարզերի, 2010թ.

36.


2.0
1.5
1.0
0.5
0
1990
1992
1994
1996
1998
2000
2002
2004
2006
2008
2010
Երևան
ՀՀ
Լոռի

Գծապատկեր 36.-ը մի փոքր պարզում է իրավիճակը: 1990 թվականին հանրապետությունում ամուսնալուծությունների հարաբերական քանակը եղել է ավելի բարձր, քան 2010 թ-ին: Տասը տարի շարունակ ամուսնալուծության ցուցանիշները նվազել են և սկսել են աճել 2000-ականներին: Առաջին մոտավորությամբ կարելի է ենթադրել, որ դա կապված է 1990-1999թթ. ընթացքում արձանագրված բարեկեցության անկմամբ. ամուսնալուծությունները ծանրացնում էին ամուսնալուծվող կողմերի վիճակը: Սակայն, 2000-ականներին, երբ բարեկեցության մակարդակը սկսեց աճել, ամուսնալուծվողների համար ավելի հեշտ դարձավ միայնակ ապրելը:

Այնուամենայնիվ, **Լուռու մարզում 10 տարվա ընթացքում արձանագրված ամուսնալուծությունների եռակի աճը դժվար բացատրելի է**: Հայաստանի մյուս մարզերում այդպիսի ինտենսիվ աճ չի գրանցվել: Մարզում իրավիճակը պարզաբանելու համար անհրաժեշտ է հատուկ ուսումնասիրություն կատարել:

Այժմ Հայաստանի երիտասարդության՝ վերարտադրողական վարքի վերաբերյալ ունեցած դիրքորոշումները դիտարկենք սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների հիման վրա:

Երիտասարդների ամուսնական վիճակը և բնակարանային պայմանները

Հարցման պահին, ըստ IPSC-ի հետազոտական շտեմարանի տվյալների, ամուսնացած էր երիտասարդների 40%-ը. տղամարդկանց՝ 29%-ը, իսկ կանանց՝ 51%-ը: Կանանց շրջանում ամուսնացածների հարաբերակցությունն ավելի բարձր է, քանի որ նրանք, որպես կանոն, ամուսնանում են իրենցից ավելի տարիքով տղամարդկանց հետ, որոնց մի մասը, լինելով 30-ից բարձր տարեկան, չի ընդգրկվել հետազոտության ընտրանքում: IPSC-ի և UNDP-ի հետազոտությունների շրջանակում հարցվածների ամուսնական կարգավիճակների բաշխումները տրված են Աղյուսակ 21.-ում: Երկու հետազոտություններում երիտասարդների ամուսնական վիճակի բաշխումները համանման են. UNDP-ի հետազոտությունում չամուսնացածների փոքր-ինչ բարձր տոկոսը պայմանավորված է այդ հետազոտության ընտրանքում 16-17 տարեկանների առկայությամբ:

21. Երիտասարդների ամուսնական կարգավիճակը

Ամուսնական կարգավիճակը	UNDP	IPSC
Չամուսնացած	60,1%	58.5%
Ամուսնացած (միայն ՔԱԳՍ-ով)	12,5%	13.9%
ՔԱԳՍ-ով ամուսնացած, բայց միասին չեն ապրում	0,2%	-
Ամուսնացած (և՛ եկեղեցով, և՛ ՔԱԳՍ-ով)	12,5%	14.6%
Համատեղ են ապրում՝ առանց գրանցվելու	7,6%	6.7%
Ամուսնացած (միայն եկեղեցով)	5,1%	4.9%
Ամուսնալուծված	1,4%	1.4%
Այրի/ամուրի	0,5%	-
Ընդամենը	**100%**	**100%**

Չամուսնացած երիտասարդների մեծ մասը՝ 88.6%-ը, ապրում է ծնողների հետ՝ իրենց բնակարանում (Աղյուսակ 22.):

Ամուսնացած ընտանիքների ընդամենը 12.2%-ն է իր բնակարանում ապրում [ծնողներից] առանձին: Իր բնակարանում ամուսնու/կնոջ ծնողների հետ է ապրում ամուսնացած երիտասարդների 76.1%-ը:

Չամուսնացած երիտասարդների 2.0%-ը, ունենալով իր բնակարանը, ապրում է առանձին:

Ամուսնացած երիտասարդների բնակարանների բաշխումը, ըստ բնակավայրի տիպերի, տրված է Աղյուսակ 23.-ում: Գյուղերում ծնողների հետ բնակվող ամուսնացած երիտասարդ զույգերի քանակը հասնում է 86.3%-ի, քաղաքներում այն 71.6% է, իսկ Երևանում՝ 67.1%:

Այսպիսով՝

- **Տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդության շրջանում օբյեկտիվորեն առկա է «նուկլեար ընտանիքին՝ առանձին բնակարան» խնդիրը:**

22.

Բնակությունը	Չամուսնացած	Ամուսնացած	Ընդամենը
Ծնողների հետ ապրում են իրենց բնակարանում	88.6%	34.4%	66.9%
Ծնողների հետ ապրում են վարձով	3.1%	1.2%	2.3%
Իրենց բնակարանում ապրում են առանձին	2.0%	12.2%	6.1%
Ապրում են առանձին՝ վարձով	2.6%	7.0%	4.4%
Ապրում են ամուսնու/կնոջ ծնողների հետ	0.0%	41.7%	16.7%
Ապրում են հարազատի/բարեկամի/ծանոթի տանը՝ առանց վարձի	2.6%	0.8%	1.9%
Այլ	1.2%	2.5%	1.7%
Ընդամենը	**100.0%**	**100.0%**	**100.0%**

23. Ամուսնացած երիտասարդների բնակարանների բաշխումն ըստ բնակավայրի տիպերի

Ամուսնական կարգավիճակ՝ ամուսնացած	Երևան	Քաղաք	Գյուղ	Ընդ.
Ծնողների հետ ապրում են իրենց բնակարանում	30.5%	35.4%	36.5%	34.4%
Ծնողների հետ ապրում են վարձով	3.4%	0.8%	0.0%	1.2%
Իրենց բնակարանում ապրում են առանձին	15.1%	14.8%	8.2%	12.2%
Ապրում են առանձին՝ վարձով	11.8%	8.3%	2.6%	7.0%
Ապրում են ամուսնու/կնոջ ծնողների հետ	36.6%	36.2%	49.8%	41.7%
Ապրում են հարազատի/բարեկամի/ծանոթի տանը՝ առանց վարձի	0.7%	0.7%	0.9%	0.8%
Այլ	2.0%	3.8%	1.9%	2.5%
Ընդամենը	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**

Դիտարկենք բնակարանային իրավիճակի գնահատականները տղամարդու և կնոջ տեսակետներից: Երիտասարդները, հատկապես աղջիկները գերադասում են ապրել ծնողներից առանձին: Այդպիսի դիրքորոշում ունեն երիտասարդ տղամարդկանց 44.3%-ը, իսկ երիտասարդ կանանց՝ 65.5%-ը (Գծապատկեր 37.): Սակայն, մյուս կողմից, այն իրավիճակում, «Երբ ընտանիքը բնակարան չունի, ապա կարելի է ապրել կնոջ ծնողների տանը» դատողության գնահատականները «շրջվում են» (Գծապատկեր 38.): Հետևաբար, խնդիրը ոչ թե ծնողների հետ ապրել-չապրելն է, այլ թե ո՞ւմ ծնողների հետ ապրելը:

37. «Ամուսինները պետք է ձգտեն ծնողներից առանձին ապրել», «Համաձայն եմ», %



38. «Եթե ընտանիքը բնակարան չունի, ապա կարելի է ապրել կնոջ ծնողների տանը», «Համաձայն եմ», %



Այժմ իրավիճակը դիտարկենք էթնո-սոցիո-մշակութային համակարգի խնդիրների տեսանկյունից:

- Հատկապես մինչև 5 տարեկան մանկահասակ երեխաների համար ընտանիքում տատիկների և պապիկների առկայությունը շատ կարևոր է մշակութային վերարտադրության տեսակետից: **Տատիկներն ու պապիկները գլոբալ գեոմշակութային էքսպանսիային դիմակայելու նշանակալի գործոն են**:
- Մյուս կողմից ընտանիքում ավագ սերնդի ներկայությունը **երիտասարդ կանանց հնարավորություն է տալիս զբաղվել կարիերայով**, որի նշանակությունը նրանց համար աճում է (Գծապատկեր 41.):
- Վերջապես, ոչ պակաս կարևոր խնդիր է ծերունական շրջանում մեծահասակների կյանքի որակի խնդիրը: Հայկական ավանդական ընտանիքում ծերերին խնամելն ընդունված է նրանց իսկ երեխաների կողմից: Հարկ է պահպանել ընտանեկան այդ արժեքը:

Հետևաբար՝

- **էթնո-սոցիո-մշակութային համակարգի որակական բնութագրերի պահպանության տեսակետից ընդարձակ ընտանիքն ունի իր անժխտելի դերը**:

Այսինքն՝

- **Ազգային ինքնության և մշակույթի պահպանման տեսակետից գերադասելի է այն պետական քաղաքականությունը, որը սատարում է ընդարձակ ընտանիքի պահպանմանը և հատկապես երիտասարդ աղջիկների շրջանում նպաստում ընդարձակ ընտանիքում ապրելու դիրքորոշման ձևավորմանը**:

Հարկ է նշել, որ այդպիսի լատենտ քաղաքականություն իրականացվել է Խորհրդային Միության վերջին ժամանակաշրջանում: Նոր բազմահարկ շենքերում նշանակալի քանակով կային 4-սենյականոց բնակարաններ՝ երկու սանհանգույցով, որոնք ակնհայտորեն նախատեսված էին բազմանդամ ընտանիքների համար: Հետևաբար՝

- **Երիտասարդ ընտանիքների բնակարանաշինական ծրագրերում պետք է նախատեսել այնպիսի բնակարանների նախագծումը, որոնք հարմար կլինեն բազմանդամ ընտանիքին, և առաջնահերթությունը պետք է տալ մի քանի սերունդներից կազմված ընտանիքներին:**

Ամուսնության օպտիմալ տարիքը երիտասարդների դիրքորոշումներում

Հայաստանի երիտասարդների կարծիքով՝ երիտասարդ աղջկա համար ամուսնության ամենանախընտրելի տարիքը միջին հաշվով 22.4 տարեկանն է (Աղյուսակ 24.): Ընդ որում՝ այդ տարիքն ավելի բարձր են գնահատում կանայք, քան տղամարդիկ. համապատասխանաբար՝ 22.9 և 21.5, տարբերությունը՝ մեկ տարի: Երիտասարդ տղամարդու համար ամուսնության ամենահարմար տարիքի միջինն էլ 25.8 տարեկանն է: Այս դեպքում նույնպես երիտասարդ կանայք այդ տարիքը գնահատում են ավելի բարձր՝ 26.4, իսկ երիտասարդ տղամարդիկ՝ 24.9, տարբերությունը՝ 1.5 տարի:

24. Տղայի և աղջկա համար ամուսնության ցանկալի միջին տարիքն ըստ սեռի և բնակավայրի տիպի, UNDP և առաջին անգամ ամուսնացողների միջին տարիքն ըստ ՀՀ ԱՎԾ 2010թ. տվյալների

Սեռ	Ամուսնության համար լավագույն տարիքը	Բնակավայր			Ընդ.	Փաստացի՝ 2010թ., ՀՀ ԱՎԾ
		Երևան	Քաղաք	Գյուղ		
Արական	աղջկա համար	22.2	21.6	20.9	**21.5**	**24.6**
Իգական	աղջկա համար	23.7	23.0	22.3	**22.9**	**24.6**
Ընդամենը	աղջկա համար	**23.1**	**22.5**	**21.7**	**22.4**	**24.6**
Արական	տղայի համար	25.7	24.5	24.4	**24.9**	**28.4**
Իգական	տղայի համար	27.2	26.3	25.7	**26.4**	**28.4**
Ընդամենը	տղայի համար	**26.6**	**25.7**	**25.2**	**25.8**	**28.4**

Սակայն, ըստ ԱՎԾ 2010թ. տվյալների՝ թե՛ երիտասարդ տղամարդկանց, թե՛ կանանց **առաջին ամուսնության** միջին տարիքն ավելի բարձր էր. համապատասխանաբար՝ 24.6 և 28.4 տարեկան: Հետևաբար՝

- **Հայաստանում և՛ աղջիկները, և՛ տղաներն ամուսնանում են ավելի ուշ, քան ցանկալի են համարում (համապատասխանաբար՝ 2.2 և 2.6 տարով):**

Ուսումնասիրվել է ամուսնության նախընտրելի տարիքի կախվածությունը երիտասարդի սեռից, տարիքից և բնակավայրի տիպից[70]: Եթե ենթադրենք, որ «ավանդական»-«ժամանակակից» սանդղակում ամուսնության միջին տարիքի աճը բնութագրում է հասարակության դիրքավորվածությունը, ապա հարցվողի սեռից, տարիքից և բնակավայրի տիպից տղայի և աղջկա ամուսնության միջին տարիքի կախվածության մոդելների ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

Աղջկա ամուսնության միջին տարիքի համար կառուցված մոդելը ցույց տվեց, որ այն կախված է այն գնահատողի սեռից և բնակավայրի տիպից, սակայն կախված չէ տարիքից:

1. Երևանում այն նշանակալիորեն ավելի բարձր է, քան մարզային քաղաքներում, իսկ մարզային քաղաքներում ավելի բարձր է, քան գյուղերում: Այսինքն՝

- **Գյուղերում և մարզային քաղաքներում ավանդականության պահպանումը դեռևս նշանակալի ուժ ունի**:

2. Աղջկա համար ամուսնության միջին տարիքն աղջիկները գնահատում են ավելի բարձր, քան տղաները: Այսինքն՝

- **Առավելապես աղջիկներն են հասարակական բարքերն ավանդականությունից տեղափոխում դեպի ժամանակակից ոլորտ**:

3. 16-18 տարեկանների շրջանում աղջկա համար ամուսնության միջին տարիքը նշանակալիորեն ավելի ցածր է, քան 19-23 և 24-30 տարեկանների խմբերում. դեռևս անչափահաս՝ 16-18 տարեկան աղջիկները «շտապում են» ամուսնանալ, սակայն ժամանակին զուգընթաց՝ նրանց համար աստիճանաբար պարզ է դառնում, որ ամուսնության համար անհրաժեշտ են նաև այլ պայմաններ, և բացի դրանից՝ նրանց շրջանում ի հայտ են գալիս այլ պահանջմունքներ: Ըստ այդմ՝ ամուսնության միջին տարիքի գնահատականն աճում է: Այսինքն՝

- **Հայաստանյան սոցիալ-տնտեսական և մշակութային պայմանները 18 և ավելի բարձր տարիքի աղջիկների շրջանում բարձրացնում են ամուսնության օպտիմալ տարիքի շեմը:**

Հետևաբար՝

- **Աղջիկների համար ամուսնության՝ մինչև 18 տարեկան ներքին շեմի թռիչքաձև բարձրացումն էլ ավելի է բարձրացնում նրանց ամուսնության տարիքը և հետևաբար վատթարացնում է էթնո-սոցիո-մշակութային համակարգի բնական վերարտադրության պայմանները:**

70 Կիրառվել է մեկ փոփոխականի բազմաչափ դիսպերսիոն վերլուծություն կամ ընդհանուր միաչափ գծային մոդել (GLM):

Տղաների համար ամուսնության միջին տարիքի համանման մոդելի ուսումնասիրությունը ևս հանգեցնում է նույնպիսի եզրակացությունների, այն է՝ Երևանում այդ տարիքն ավելի բարձր է, քան մարզային քաղաքներում, իսկ մարզային քաղաքներում ավելի բարձր է, քան գյուղերում: Աղջիկները տղաների ամուսնության միջին տարիքը գնահատում են ավելի բարձր, քան իրենք՝ տղաները, այսինքն՝ աղջիկները գերադասում են, որ տղամարդն ամուսնանա ավելի հասուն և կայացած վիճակում: Տարիքային խմբերում ևս նույն պատկերն է տիրում. ավելի ցածր տարիքում ամուսնանալուն հակված են 16-18, քան 19-23 և 24-30 տարեկանները:

Հետազոտության արդյունքները (IPSC) ցույց են տվել, որ երեսուն տարեկան երիտասարդների 25%-ն ամուսնացած չէ (Գծապատկեր 39.), իսկ՝

- **28 տարեկանից հետո երիտասարդների շրջանում առաջիկա երկու տարիների ընթացքում ամուսնանալու դիրքորոշումը սկսում է նվազել (Գծապատկեր 39.):**

39.



Այսպիսով՝

- **Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ծավալային աճի ռազմավարությունները պետք է**
  - **խթանեն ընդլայնված ընտանիքների գոյությունը**
  - **և աղջիկների վաղ ամուսնությունները:**

Ինչո՞ւ են հայ երիտասարդները հետաձգում ամուսնությունը

Ըստ երիտասարդների տարիքային խմբերի՝ դիտարկենք ամուսնության հետաձգման պատճառները (Աղյուսակ 25.)**:** Առաջիկա երկու տարիների ընթացքում պլանավորում է ամուսնանալ 18-30 տարեկան երիտասարդների 44%-ը:

25. Ամուսնության հետաձգման պատճառներն ըստ տարիքային խմբերի

Չամուսնանալու պատճառները	18-19	20-24	25-30
1. Ուզում եմ ազատ ապրել	5.8%	13.5%	22.5%
2. Չունեմ հարմար թեկնածու	6.7%	14.9%	18.6%
3. Տարիքի պատճառով, դեռ շուտ է	24.9%	15.7%	16.4%
4. Ֆինանսական/սոցիալական խնդիրներ	5.7%	10.8%	13.8%
5. Աշխատանք չունեմ/նորմալ աշխատանք չունեմ	12.0%	14.8%	5.5%
6. Սովորում եմ/մտածում եմ ուսման մասին	22.3%	10.0%	2.7%
7. Ծառայում եմ/ բանակ եմ գնալու	14.9%	1.0%	-

Ամուսնությունը հետաձգելու պատճառների շարքում հատկանշական են երկուսը, որոնց տարածվածությունն աճում է տարիքին զուգահեռ.

- «**Ուզում եմ ազատ ապրել**», որն արտահայտում է հասարակության մեջ առկա մշակութային փոփոխությունները, իսկ մյուս կողմից ձևավորում է երկրորդ հատկանշական պատճառը՝
- «**Չունեմ հարմար թեկնածու**»:

Մեր հիմնական հարցի համատեքստում կարևոր է նաև այն, որ տարիքին զուգահեռ՝ աճում է նաև ամուսնության հետաձգման ֆինանսական և սոցիալական պատճառների տարածվածությունը:

Դիտարկենք ամուսնությունը հետաձգելու պատճառներն ըստ սեռի (Աղյուսակ 26.):

26 Ամուսնության հետաձգման պատճառներն ըստ սեռի

Չամուսնանալու պատճառները	Արական	Իգական
1. Տարիքի պատճառով/դեռ վաղ է	17.8%	23.0%
2. Աշխատանք չունեմ/նորմալ աշխատանք չունեմ	16.3%	-
3. Ֆինանսական/սոցիալական խնդիրներ	14.3%	1.0%
4. Ծառայում եմ/բանակ եմ գնալու	11.4%	-
5. Ուզում եմ ազատ ապրել	11.2%	10.9%
6. Սովորում եմ/մտածում եմ ուսման մասին	7.8%	25.4%
7. Չունեմ հարմար թեկնածու	6.8%	19.5%

Պարզվում է, որ ֆինանսական և սոցիալական պատճառները նույնպես ունեն իրենց յուրահատկությունները:

- Տղամարդկանց դեպքում առավել հատկանշական են **տնտեսական պատճառները**՝ ֆինանսական անապահովվածությունն ու աշխատանք չունենալը, իսկ
- աղջիկների պարագայում՝ **մշակութային պատճառները՝** «Դեռ սովորում եմ» և դրա հետևանք հանդիսացող՝ «Չունեմ հարմար թեկնածու» պատճառը:

Վերջինս հատկապես երիտասարդ աղջիկների շրջանում տարածված և նույնպես տարիքին զուգահեռ աճող այն դիրքորոշման հետևանքն է, ըստ որի՝ «Եթե երիտասարդ աղջիկն ունի կարիերայի լավ հնարավորություն, ապա իր ամուսնությունն արժե հետաձգել մինչև **30-35** տարեկան» (Գծապատկեր 40.):

40. Ամուսնությո՞ւն, թե՞ կարիերա: Տրված է կարիերան գերադասողների տոկոսը:



Այսպիսով՝

- **Ամուսնությունը հետաձգելու պատճառներն ունեն և՛ տնտեսական, և՛ մշակութային բնույթ: Ընդ որում՝ տնտեսական բնույթի պատճառներն առավել հատկանշական են երիտասարդ տղամարդկանց, իսկ մշակութային բնույթի պատճառները՝ աղջիկների համար**:
- **Հետևաբար ընդլայնված ընտանիքների կազմավորման խթանումը կնպաստի աղջիկների սոցիալական ինքնաիրականացմանը՝ չբացառելով բնակչության բնական վերարտադրության հնարավորությունը:**

Հարկ է նշել, որ աղջիկների շրջանում ամուսնությունը հետաձգելու մշակութային պատճառները միջնորդավորված են նաև նրանով, որ տղամարդիկ ֆինանսական պատճառներով հետաձգում են իրենց ամուսնությունը: Տղամարդիկ չեն ամուսնանում, որովհետև չեն կարող տնտեսապես ապահովել իրենց ընտանիքը, այդ թվում՝ կանանց, ինչի հետևանքով էլ կանայք կարիերայի միջոցով պետք է հոգան իրենց տնտեսական ապահովության մասին: Մյուս կողմից տնտեսական անկախությունը հանգեցնում է նաև անհատական և սոցիալական անկախության: Արդյունքում զարկ է տրվում անհատապաշտական-ազատական ոգով մշակութային փոփոխություններին: Նկարագրված գործընթացը զարգանում է իտեռատիվ կերպով:

Եվ, վերջապես, տղամարդիկ չեն կարողանում ապահովել իրենց ընտանիքները, քանի որ ապաարդյունաբերականացված երկրում խիստ սահմանափակ են ոչ միայն բարձր վարձատրվող, այլև ընդհանրապես աշխատատեղերը: Ընդ որում՝

- **Փոքր բիզնեսի զարգացումն էապես չի կարող փոխել իրավիճակը, քանի որ խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների առկայությունն է այն հիմնական համակարգային գործոնը, որը ստեղծում է փոքր բիզնեսի զարգացման պայմաններ[71]:**

Երեխաներ ունենալու պահանջմունքը

Արդյո՞ք Հայաստանի երիտասարդների՝ երեխաներ ունենալու պահանջմունքը բավարար է Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ընդլայնված վերարտադրության համար:

Վերարտադրողական վարքի առաջնային դետերմինանտը երեխաներ ունենալու պահանջմունքն է: Այլ կերպ ասած՝ ցանկանո՞ւմ են արդյոք երեխաներ ունենալ, և եթե՝ այո, ապա՝ քանի՞սը: Այդ պահանջմունքը և դրա փոփոխությունը կարող են ունենալ ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ու մշակութային պայմանավորվածություն:

Հետազոտությունը ցույց է տվել, որ՝

- **Ներկայումս երիտասարդության շրջանում երեխաներ ունենալու պահանջմունքը մոտավորապես հավասար է նրանց ծնողների ընտանիքներում երեխաների փաստացի քանակին (Գծապատկեր 41.)[72] և նույնիսկ մի փոքր ավելի,** այսինքն՝
- **Հայաստանի երիտասարդների՝ երեխաներ ունենալու պահանջմունքը բավարար է Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ընդլայնված վերարտադրության համար:**

Հարցվածների շրջանում ընտանիքում երեխաների ցանկալի միջին քանակը կազմել է 3.2, իսկ նրանց ծնողների ընտանիքներում փաստացի միջինը եղել է 2.8 երեխա[73]: (Նշենք, որ «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հետազոտություն 2010» հրատարակության համաձայն՝ 15-49 տարեկան կանանց շրջանում այն հավասար է 2.5-ի, իսկ տղամարդկանց պարագայում՝ 2.7-ի:)

---

71 Սյունիքի մարզի կին գործարարների շրջանում իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ մարզի այն քաղաքներում, որտեղ առկա են արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ (Կապան և Ագարակ), փոքր բիզնեսի հիմնադրման և գործունեության պայմաններն ավելի բարենպաստ են, քան այն քաղաքներում, որտեղ արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ չկան (Սիսիան, Գորիս, Մեղրի): Մասնավորապես արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ ունեցող քաղաքներում մարդիկ ավելի հաճախ են կարողանում փոքր բիզնես հիմնադրել սեփական ֆինանսական միջոցներով (վարկային միջոցների ներգրավման հավասար պայմաններում), ավելի բարձր է սպառողների վճարունակությունը, ավելի բարձր է փոքր բիզնեսի ֆինանսների շրջանառության տեմպը, ավելի բարձր է նոր փոքր բիզնեսների հիմնադրման ինտենսիվությունը, ավելի ցածր են պետական կառավարման մարմինների և «հեղինակավոր» անձանց անօրինական ճնշումներն ու խոչընդոտները, ավելի ցածր են նույն ոլորտի ավելի հզոր տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ճնշումները, ավելի ցածր է բիզնեսի հիմնադրման համար անհրաժեշտ կողմնակի աջակցության պահանջարկը: Տե՛ս՝ Մանուկյան Ս. Ա., «Սյունիքի մարզի գործարար կանայք. սոցիոլոգիական համայնապատկեր», էջ 44-52, 2011:

72 Երեխաներ ունենալու պահանջմունքը գնահատվել է «Քանի՞ երեխա կցանկանայիք ունենալ, եթե ունենայիք համապատասխան ֆինանսական և բնակարանային պայմաններ» հարցի միջոցով:

73 Ակնհայտ է, որ այդ ցուցանիշները համարժեք են պտղաբերության գործակցին:

Ամուսնացած երիտասարդների ընտանիքներում, սակայն, երեխաների իրական քանակը շատ ավելի փոքր է, քան նրանց ցանկություններն են (Գծապատկեր 42.): Հետազոտության տվյալներով՝ այն հավասար է 1.3-ի: Մյուս կողմից, համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, Հայաստանում 30 տարեկանից բարձր տարիքի մայրերից 2010թ. ծնվել է երեխաների 16.7%-ը: Ըստ այդմ՝ 30 տարեկանից բարձր տարիքի մայրերի ծննդաբերության հաշվառման դեպքում գործակիցը կարող է աճել՝ հավասարվելով մինչև 2010թ. Հայաստանում պաշտոնապես գրանցված պտղաբերության գործակցի արժեքին՝ 1.56-ին: Հետևաբար՝

- **Հետազոտված ընտանիքներում երեխաների քանակը ժամանակի ընթացքում չի կարող էապես աճել**:

41. Հարցվածների և նրանց ծնողների վերարտադրողական վարքը և դիրքորոշումները



42. Երեխաների ցանկալի և իրական քանակը ամուսնացած երիտասարդների ընտանիքներում



Այսպիսով՝

- **Չնայած ներկայումս Հայաստանի երիտասարդության շրջանում երեխաներ ունենալու պահանջմունքը բավարար է Հայաստանի բնակչության ընդլայնված վերարտադրության համար, սակայն դա չի իրականանում Հայաստանում առկա սոցիալ-տնտեսական և մշակութային գործոնների ազդեցության հետևանքով:**

Հատկանշական է, որ՝

- **Երեխաներ ունենալու պահանջմունքն ավելի թույլ է երիտասարդ աղջիկների ու կանանց, քան տղամարդկանց շրջանում:**
- **Երեխաներ ունենալու դիրքորոշումն ավելի ցածր է առավել երիտասարդների, քան ավելի բարձր տարիքի երիտասարդների շրջանում**:
- **Երկու արդյունքներն էլ հավելյալ հիմնավորումներն են այն իրողության, որ հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի ֆիզիկական կրճատման միտումները դեռ կպահպանվեն:**

Մյուս կողմից՝

- **Երեխաներ ունենալու պահանջմունքը նվազել է առավել բարձր մշակույթ կրող երիտասարդության շրջանում**[74] (Գծապատկեր 43.), ինչից բխում է, որ՝
- **Ժամանակի ընթացքում ապաճելու են հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգի մշակութային որակները:**

43. Երեխաների ցանկալի միջին քանակը երիտասարդների շրջանում



44. Ամուսնացած այն երիտասարդները, ովքեր պլանավորում են երեխա ունենալ առաջիկա երկու տարիների ընթացքում



74 Ենթամշակութային տիպերի մասին՝ հաջորդիվ: Այստեղ էական է, որ ինդեքսի բարձր արժեքներին համապատասխանում է պատկանելությունն ավելի «բարձր» ենթամշակույթին:

Վերարտադրողական վարքի վրա ազդող գործոնները

Ամուսնացած երիտասարդների միայն 46%-ն է հարցման ընթացքում պատասխանել, որ պլանավորում է առաջիկա երկու տարիների ընթացքում երեխա ունենալ. ընդ որում՝ ամուսնացած երիտասարդ տղամարդկանց՝ 63%-ը, իսկ ամուսնացած կանանց՝ միայն 36%-ը: Երեխաներ ունենալու դիրքորոշումը տարիքին զուգահեռ նվազում է (Գծապատկեր 44.), ինչը երիտասարդները մեծամասամբ պատճառաբանում են այն հանգամանքով, որ արդեն ունեն մեկ կամ երկու երեխա (=մշակութային պատճառ, տե՛ս՝ Աղյուսակ 27.): Այսինքն՝

- **Հայաստանյան էթնո-սոցիո-մշակութային համակարգում վերարտադրողական վարքի վրա մշակութային փոփոխությունների ճնշումն ավելի հզոր ազդեցություն է ունեցել երիտասարդ կանանց շրջանում**:

Մյուս կողմից, չնայած գյուղական բնակավայրերում երեխաների պահանջմունքն ավելի թույլ է, քան Երևանում և մարզային քաղաքներում, սակայն գյուղական բնակավայրերում առաջիկա երկու տարիներին երեխաներ պլանավորելու դիրքորոշումն ավելի բարձր է: Հետևաբար՝

- **Հայաստանի գյուղերում երեխաներ ունենալու դիրքորոշման իրականացման խոչընդոտներն ավելի ցածր են:**

Հարց է ծագում՝ գյուղերում երեխաներ ունենալու խոչընդոտներն ինչո՞ւ են ավելի ցածր: «Ակնհայտ» պատասխանը, թե գյուղերում մարդիկ ավելի ավանդական են, ընդունելի չէ թեկուզ այն պատճառով, որ, ինչպես տեսանք, գյուղերում նվազել է և՛ երեխաներ ունենալու պահանջմունքը, և՛ ավելի բարձր է կարիերայի նպատակով ամուսնությունը հետաձգելու դիրքորոշումը (Գծապատկեր 40.), որոնք ամենևին էլ ավանդականության մասին չեն վկայում:

Ավելի ադեկվատ է այն բացատրությունը, ըստ որի՝ քաղաքներում ավելի ցածր է բնակչության և՛ ընդհանուր կենսամակարդակը, և՛ առավել ևս ապագայի նկատմամբ ունեցած վստահությունը (ինչպե՞ս մեծացնել երեխաներին, եթե վստահ չես, որ տնտեսապես կկարողանաս նրանց **արժանապատվորեն** ապահովել):

- **Այստեղ նորից առկա է համակարգային այն բացատրությունը, որի համաձայն՝ մի կողմից ապահինդուստրացվել է Հայաստանի տնտեսությունը, և դրան համապատասխան՝ ապաձել է սոցիալական ապահովության համակարգը, ինչի հետևանքով քաղաքներում որակապես վատթարացել է վարձու աշխատողների վիճակը:**
- **Մյուս կողմից Հայաստանի հասարակությունում դեռևս վերարտադրվում են նախորդ՝ ինդուստրիալ-սոցիալիստական հասարակությանը բնորոշ սոցիալական պահանջմունքները:**
- **Այս ամենից զատ՝ ամենուր թափանցող գովազդի միջոցով սպառողական մշակույթի խթանումն առավել բարձրացնում է ընդունելի կենսամակարդակի շեմը:**

Հետևաբար՝

- **Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ծավալային աճի համար անհրաժեշտ է սպառողական մշակույթի գովազդից անցում կատարել դեպի էկոլոգիական ապրելակերպի գովազդին:**

Երեխաներ չպլանավորելու պատճառները նույնպես կախված են երիտասարդի սեռից և տարիքից (Աղյուսակ 27. և Աղյուսակ 28.): Ընդ որում՝ նորից արտահայտվել է արդեն վեր հանված այն երևույթը, որ **տնտեսական բնույթի պատճառներն առավել բնորոշ են երիտասարդ տղամարդկանց, իսկ մշակութային բնույթի պատճառները՝ երիտասարդ կանանց:**

27.

Երեխա չպլանավորելու պատճառները	20-24	25-30
1. Ֆինանսական/սոցիալական խնդիրներ	30.8%	24.3%
2. Արդեն երկու երեխա ունի	18.0%	30.9%
3. Երեխաները դեռ փոքր են	15.1%	16.3%
4. Արդեն մեկ երեխա ունի	13.7%	14.8%
5. Առողջական խնդիրներ	8.6%	1.7%

28.

Երեխա չպլանավորելու պատճառները	Արական	Իգական
1. Արդեն 2 երեխա ունի	22.5%	28.0%
2. Ֆինանսական/սոցիալական խնդիրներ	37.8%	21.9%
3. Երեխաները դեռ փոքր են	15.8%	18.6%
4. Արդեն 1 երեխա ունի	12.7%	14.4%

Երիտասարդների ենթամշակութային պատկանելությունն ինչպե՞ս է ազդում նրանց վերարտադրողական վարքի վրա

Վերարտադրողական վարքի վրա յուրահատուկ ազդեցություն ունի ենթամշակութային պատկանելությունը, որը նույնականացվել է համապատասխան ինդեքսի միջոցով[75]:

Ինդեքսի բարձր արժեքների տիրույթում հարցվածների ընտանիքներում երեխաների միջին քանակը համեմատաբար ավելի փոքր է, համապատասխանաբար նրանք «ժառանգել են» երեխաներ ունենալու համեմատաբար ավելի փոքր պահանջարկ (Գծապատկեր 43.): Սակայն, առաջիկա երկու տարիներին երեխաներ ունենալու դիրքորոշումները նրանց շրջանում ավելի բարձր են, այսինքն՝ նրանք ավելի հակված են երեխաներ ունենալու իրենց «ժառանգած» ծրագիրն իրականացնելուն: Առաջիկա երկու տարիներին երեխաներ ունենալու դիրքորոշումը համեմատաբար բարձր է նաև ինդեքսի ամենացածր արժեքի դեպքում («ավանդական» ենթամշակույթ):

75 Տե՛ս համապատասխան բաժինը:

43. Ենթամշակութային պատկանելության ազդեցությունը վերարտադրողական վարքի վրա



Եթե «ավանդական» և «դասական» ենթամշակութային պատկանելություններն անվանենք կայուն, ապա վերարտադրողական վարքի ստացված պատկերը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. **«կայուն» ենթամշակութային պատկանելության դեպքում երեխաներ ունենալու ծրագրի իրականացումը տեղի է ունենում ավելի ինտենսիվ կերպով, քան «անցումային» ենթամշակութային տիպերի պարագայում**[76]:

Անցումային կամ անկայուն ենթամշակութային տիրույթներում անձի արժեքային համակարգում անորոշությունն (էնտրոպիան) ավելի բարձր է, ինչը ճնշում է նրա կենսական «ծրագրի» իրականացումը: Իսկ «ավանդական» և «դասական» ենթամշակույթներին պատկանող անձանց շրջանում արժեքային համակարգը կայացած է և կայուն, ինչի հետևանքով կենսական «ծրագիրն» ավելի հստակ է իրականացվում:

Դժվար չէ բացատրել, թե ինչու մշակութային պատճառները բացահայտորեն և ակնառու չեն արտահայտվել երեխաների պլանավորումը հետաձգելու այն պատճառների շարքում, որոնք՝ որպես բաց հարցի պատասխան, նշել են հարցվածները: Նախ՝ այդ պատճառները «ճնշվել են» տնտեսական պատճառներով, և երկրորդ՝ «Արդեն մեկ/երկու երեխա ունեմ», «Երեխաները դեռ փոքր են» պատճառներում կարելի է «տեսնել» և՛ արտաքուստ մշակութային պատճառների պայմանավորվածությունը տնտեսական պատճառներով, և՛ դրանց միաձուլվածությունը:

Տնտեսական գործոնների ազդեցությունը վերարտադրողական վարքի վրա

Վերարտադրողական վարքի բնութագրերը նշանակալի չափով նվազած են գործազուրկների շրջանում (Գծապատկեր 44.): Մասնավորապես առաջիկա երկու տարիների ընթացքում ամուսնանալու դիրքորոշումը նվազել է 9%-ով, երեխա ունենալու դիրքորոշումը՝ 25%-ով, իսկ երեխաների ցանկալի քանակը 3.4-ից իջել է մինչև 3.0:

76 Կարելի է անալոգիա անցկացնել «ժողովրդական» և «բարձր» կրոնների ու այստեղ կիրառված «ավանդական» և «դասական» ենթամշակույթների միջև: Ժողովրդական և բարձր կրոնների միջև ենթադրվում է ուսուցման «անցումային» գործընթաց: Այս տեսակետից ժողովրդական և բարձր կրոնները կարելի է անվանել կայուն իրավիճակներ:

Երիտասարդների վերարտադրողական վարքի տվյալներում արտահայտվել է նաև **Հայաստանում ձևավորվող աղքատության մշակույթը**: Այն երիտասարդները, ովքեր համեստ են իրենց աշխատավարձային ակնկալիքներում, ավելի համեստ են նաև իրենց վերարտադրողական վարքում: Ավելի ցածր աշխատավարձային ակնկալիքներ ունեցող չամուսնացածների շրջանում ավելի ցածր են առաջիկա երկու տարիների ընթացքում ամուսնանալու, իսկ ամուսնացածների շրջանում՝ երեխաներ ունենալու դիրքորոշումները (Գծապատկեր 45.): Նվազած է նաև երեխաների ցանկալի քանակի միջին արժեքը: Եթե ամենահամեստ գումարով բավարարվող խմբում (ամսական աշխատավարձը՝ 100.000 դրամից պակաս) այդ ցուցանիշը հավասար է 2.8-ի, ապա ամենաբարձր աշխատավարձային ակնկալիքներով խմբում (200.000 դրամից ավելի) այն հասնում է 4.0-ի:

Այսպիսով՝

- **Երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակը հզոր ազդեցություն ունի վերարտադրողական վարքի վրա: Այն և՛ հետաձգում է ամուսնությունը, և՛ նվազեցնում է երեխաներ ունենալու պահանջմունքը, և՛ հետաձգում է երեխաների պլանավորումը:**

44. Զբաղվածության ազդեցությունը վերարտադրողական վարքի վրա



45. Բարեկեցության ազդեցությունը վերարտադրողական վարքի վրա



Արդյո՞ք ինֆորմացիոն դաշտն ազդում է ընտանիք կազմելու դիրքորոշման վրա

Հայաստանում արդեն ինֆորմացիոն դաշտի առավել հզոր բաղադրիչների շարքում է ինտերնետը, որի նշանակությունն աստիճանաբար աճում է: Երիտասարդների շրջանում տպագիր մամուլի և գրքերի ազդեցության ընդհանուր, իսկ հեռուստադիտումների հարաբերական նվազման պարագայում արժե դիտարկել և գնահատել ինֆորմացիոն տարբեր հոսքերի ազդեցություններն ընտանիքի հետ կապված դիրքորոշումների վրա:

Այդ նպատակով դիտարկվել են ինֆորմացիոն հետևյալ հոսքերի՝ ամուսնության օպտիմալ տարիքի վրա ունեցած ազդեցությունը: Այդ հոսքերն են՝ 1. հայկական հեռուստալիքները, 2. արտասահմանյան մալուխային հեռուստալիքները, 3. ռադիոն, 4. հայաստանյան ինտերնետային լրատվական կայքերը, 5. արտասահմանյան ինտերնետային լրատվական կայքերը, 6. ինտերնետային ժամանցային կայքերը, 7. ինտերնետային սոցիալական ցանցերը, 8. հայաստանյան թերթերը, 9. արտասահմանյան թերթերը, 10. ամսագրերը: Դիտարկումը ցույց է տվել, որ՝

- **Ամուսնության օպտիմալ տարիքի գնահատականի վրա վիճակագրորեն նշանակալի չափով ազդում են.**
  - **հայկական ինտերնետային լրատվական կայքերից օգտվելու ինտենսիվությունը,**
  - **ինտերնետային ժամանցային կայքերից օգտվելու ինտենսիվությունը,**
  - **ինտերնետային արտասահմանյան կայքերից օգտվելու ինտենսիվությունը:**
- **Այդ կայքերից ամեն օր օգտվողների շրջանում ամուսնության միջին տարիքի գնահատականը մոտ մեկ տարով ավելի բարձր է, քան այն անձանց շրջանում, ովքեր դրանցից չեն օգտվում (Աղյուսակ 29.):**

Հետևաբար՝

- **Ինֆորմացիոն դաշտն ազդում է երիտասարդության վերարտադրողական վարքի վրա,**
- **սակայն այդ ազդեցությունը դեռևս մեծ չէ:**

29. Ինտերնետի օգտագործման բնույթի և ինտենսիվության շաղկապվածությունն ամուսնության օպտիմալ տարիքի դիրքորոշման հետ

Դիտման հաճախականությունը	Ինտերնետային լրատվական հայկական կայքեր		Ինտերնետային լրատվական արտասահմանյան կայքեր		Ինտերնետային ժամանցային կայքեր	
	Աղջկա	Տղայի	Աղջկա	Տղայի	Աղջկա	Տղայի
Ամեն օր	22.99	26.29	23.09	26.58	22.85	26.10
Ընդամենը	22.38	25.76	22.38	25.76	22.38	25.76
Երբեք	22.05	25.54	22.18	25.57	22.03	25.48

Ընտանիք կազմելու խոչընդոտների հաղթահարման ուղիները

UNDP-ի հետազոտության շրջանակում դիտարկվել է ընտանիք կազմելու խոչընդոտների հաղթահարման ուղիների վերաբերյալ դիրքորոշումների տարածվածությունը: Արդյունքները համահունչ են եղել ամուսնության խոչընդոտներին. երիտասարդները համարում են, որ ընտանիք կազմելու խոչընդոտները հաղթահարելու համար ցանկալի է ունենալ բարձր վարձատրվող կայուն աշխատանք, ընդ որում՝ ցանկալի է նաև, որ պետությունն առանձնակի ջանք գործադրի երիտասարդությանն աշխատանքով ապահովելու գործում: Հատկանշական է, որ պատասխաններում մատչելի գնով բնակարան գնելու պետական աջակցությունը նշանակալիորեն զիջում է առաջին երկու ուղիներին:

46. Ամուսնության խոչընդոտների հաղթահարման ուղիները (UNDP)



Ընտանեկան արժեքները ենթամշակութային խմբերում և դրանց դինամիկան

Քանի որ արդեն պարզ է, որ Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ծավալային և որակական աճը պայմանավորված է ավանդական ընտանեկան արժեքներով, ապա երիտասարդության շրջանում հարկ է դիտարկել այդ արժեքների դիրքավորվածությունը և դրանց դինամիկան:

Ո՞վ պետք է լինի ընտանիքի գլխավորը

Հայրիշխանությունը հայկական ընտանիքում պահպանվում է (Գծապատկեր 47.):

47. «Ո՞վ պետք է լինի ընտանիքի գլխավորը»՝ ըստ ենթամշակութային պատկանելության



Չնայած ընտանիքում կնոջ էմանսիպացիան աճում է ենթամշակութային պատկանելության ինդեքսի աճին զուգահեռ («Կինը և ամուսինը պետք է հավասար լինեն»), այնուամենայնիվ ինդեքսի նույնիսկ ամենաբարձր արժեքի դեպքում «ընտանեկան դեմոկրատիզմին է» հակված երիտասարդների երկու երրորդը (68%-ը):

Երիտասարդության շրջանում ընտանիքում կնոջ էմանսիպացման միտում չի նկատվել. տարիքային բոլոր խմբերում բաշխումները վիճակագրորեն միևնույնն են:

Նուկլեա՞ր, թե՞ ընդլայնված ընտանիք

Երիտասարդները, հատկապես կանայք և ենթամշակութային ավելի բարձր խմբերի ներկայացուցիչները կգերադասեին ծնողներից առանձին ապրել (Գծապատկեր 48.): Սակայն, հատկանշական է, որ տարիքի աճին զուգահեռ՝ այդ ձգտման տարածվածությունը նվազում է: Դա նշանակում է, որ երիտասարդներն ամուսնանալով սկսում են հասկանալ ընդլայնված ընտանիքի առավելությունները (հատկապես այն ժամանակ, երբ մանկահասակ երեխաները սկսում են խոչընդոտել նրանց կարիերային և նվազեցնել ազատ ժամանակը): Հետևաբար՝

- **Ընդլայնված ընտանիքի առավելությունները պետք է ընդգրկվեն պատանեկան դաստիարակության բովանդակությունում:**

Ընդլայնված ընտանիքի առավելությունների վաղ ընկալումն ընտանեկան լարումների հասարակայնացման նվազեցման ներուժ ունի:

48. «Ամուսինները պետք է ձգտեն ծնողներից առանձին ապրել», «Համաձայն եմ», %



Երեխաներն ընտանիքում

Հայաստանի երիտասարդների բացարձակ մեծամասնությունը (83.5%-ը) ընտանիքի լիարժեքությունն ընկալում է երեխաներ ունենալու **բացարձակ** պայմանով (Գծապատկեր 49.):

49. «Ընտանիքը լիարժեք է միայն այն դեպքում, երբ առկա են երեխաներ», «Համաձայն եմ», %



Սա կարելի է համարել հայկական ընտանիքի կարևորագույն բնութագրերից մեկը: Այդ ընկալումը փոքր-ինչ նվազելու միտում ունի միայն բարձր ենթամշակութային պատկանելությամբ կանանց շրջանում, ովքեր ընտանիքի լիարժեքությունը կապում են նաև ամուսնու հետ ունեցած հոգևոր և ինտելեկտուալ ներդաշնակ հարաբերություններով:

Սակայն, պետք է հաշվի առնել, որ հետազոտական հարցը ձևակերպված է պայմանի բացարձակեցմամբ. «Ընտանիքը լիարժեք է **միայն այն դեպքում**, երբ առկա են երեխաներ», ինչից չի բխում, որ նրանք, ովքեր համաձայն չեն պայմանի այսպիսի խիստ ձևակերպման հետ, ընտանիքի լիարժեքության համար չեն կարևորում երեխաների առկայությունը:

Արու ժառանգի գերակայությունը

Հայրիշխանության կարևորագույն հատկանիշներից է ժառանգությունն արու զավակի գծով փոխանցելու դիրքորոշումը: Որոշ մշակույթներում ժառանգության հարցում առավելություն էին տալիս ավագ արու ժառանգին՝ «չփոշիացնելու» համար ընտանիքի ունեցվածքը: Դժվար չէ պատկերացնել, թե այդ դիրքորոշման իրականացումն ընտանեկան ինչպիսի լարումներ կարող է առաջացնել, հատկապես, երբ հակասության մեջ է մտնում օրենսդրության հետ:

Հայաստանի երիտասարդության շրջանում այդ դիրքորոշումն առավելապես տարածված է տղամարդկանց շրջանում, սակայն ժամանակի ընթացքում այն ունի նվազման միտում (Գծապատկեր 50.): Չնայած ենթամշակութային ինդեքսի ամենացածր արժեքի դեպքում կանանց և տղամարդկանց դիրքորոշումներն այդ տեսակետից համընկնում են, սակայն ինդեքսի արժեքների աճին զուգահեռ՝ կանանց շրջանում այդ դիրքորոշումը խիստ նվազում է:

50. «Ժառանգության հարցում ծնողը պետք է առավելություն տա որդուն՝ դստեր փոխարեն», «Համաձայն եմ», %



Կնոջ կարիերա՞ն, թե՞ ամուսնությունը

Երիտասարդ կնոջ համար լավ կարիերայի և ընտանիք կազմելու դիրքորոշումների դիլեման արդեն դիտարկվել է (Գծապատկեր 40.):

Այդ առումով այստեղ ավելացնենք կանանց դիրքորոշումների մի կարևոր յուրահատկություն: Կարիերայի գերադասումը համեմատաբար ավելի բարձր է ենթամշակութային ինդեքսի ամենացածր և ամենաբարձր արժեքների դեպքում: Ամենաբարձր ենթամշակութային արժեքի դեպքում կնոջ համար կարիերայի գերադասումը հեշտ է մեկնաբանել. ավելի բարձր ենթամշակութային պատկանելությամբ շերտում ավելի կարևորված են կրթությունը և դրան համապատասխան հասարակական բարձր կարգավիճակը:

Իսկ ամենացածր ենթամշակութային խմբում երիտասարդ կնոջ կողմից կարիերան ամուսնությունից գերադասելու դրդապատճառ կարող է հանդիսանալ այդ նույն ցածր ենթամշակութային շերտից և դրան համապատասխանող կարգավիճակից դուրս գալու ձգտումը: «Կարիերայի լավ հնարավորությունն» այդ նպատակի իրականացման հնարավորությունն է:

51. «Եթե երիտասարդ աղջիկն ունի կարիերայի լավ հնարավորություն, ապա իր ամուսնությունն արժե հետաձգել մինչև 30-35 տարեկան», «Համաձայն եմ», %



Աբորտ

Հարկ է անհանգստացնող համարել այն հանգամանքը, որ երիտասարդների մեկ քառորդը համաձայն է, որ «Եթե ամուսինները չեն ուզում տվյալ պահին երեխա ունենալ, ապա աբորտը թույլատրելի է» (Գծապատկեր 52.):

52. «Եթե ամուսինները չեն ուզում տվյալ պահին երեխա ունենալ, ապա աբորտը թույլատրելի է», «Համաձայն եմ», %



Կարելի է ենթադրել, որ ավելի մեծ տարիքային խմբում այդ դիրքորոշման աճը պայմանավորված է նրանով, որ այդտեղ ավելի մեծ քանակ են կազմում ամուսնացածները, որոնց համար աբորտը ոչ թե «տեսական», այլ շատ կոնկրետ հարց է: Վիճակագրական դիտարկումը, սակայն, ցույց տվեց, որ այդ վարկածն ընդունելու հիմքեր չկան: Ըստ երևույթին, այնուամենայնիվ, աբորտի թույլատրելիությունը կամ անթույլատրելիությունը կապված է ավելի խորը դիրքորոշումների՝ կյանքի արժևորման և կրոնական գիտակցության տարրերի հետ:

Ցանկացած դեպքում՝

- **Աբորտի թույլատրելիության նկատմամբ առկա դիրքորոշման նվազեցումը բխում է Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ծավալային աճի նպատակից:**

Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի՝ 2010 թ-ին արված հետազոտությունը ցույց է տվել, որ Հայաստանում աբորտների քանակը նվազում է, և 2010թ. այն կազմել է բոլոր ծնունդների 29%-ը: Իգական սեռի բոլոր հարցվածների 31%-ը երբևէ կատարել է հղիության արհեստական ընդհատում: Աբորտների հաճախականությունն աճում է տարիքին և երեխաների թվաքանակին զուգահեռ: Երբևէ աբորտ են կատարել մեկ երեխա ունեցող կանանց 17%-ը, ու երկու և ավելի երեխա ունեցողների կեսից ավելին: Երբևէ աբորտ կատարած կանանցից 64%-ը կատարել է երկու և ավելի, իսկ 17%-ը՝ չորս և ավելի աբորտ: Վերջին երեք տարվա ընթացքում կատարված աբորտների 39%-ը պայմանավորված է եղել կնոջ՝ այլևս երեխա չունենալու ցանկությամբ, 15%-ը՝ սոցիալ-տնտեսական պատճառներով, և 15%-ը՝ հաջորդ երեխայի ծնունդը հետաձգելու ցանկությամբ[77]:

53. Հղիության ելքերի միտումները, ՀԺԱՀ 2010



Հարգանքը ծնողի նկատմամբ

Հայկական ավանդական ընտանիքի դրական կարևորագույն բնութագրերից են ծնողների նկատմամբ հարգանքը և նրանց խորհուրդների ընդունումը: Երիտասարդների շրջանում այդ բնութագրերը շատ բարձր են (Գծապատկեր 54.), միայն փոքրիկ «ընդվզում» է առկա ամենաբարձր ենթամշակութային շերտի տղամարդկանց շրջանում:

Ծնողական խնամակալությունն աղջկա նկատմամբ

Աղջիկ զավակների նկատմամբ ծնողական խնամակալությունն ավանդական ընտանիքի ևս մեկ հատկանիշ է (Գծապատկեր 55.): Այդ դիրքորոշումը նույնպես բավականին տարածված է հայ երիտասարդների՝ ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների շրջանում: Այդ դիրքորոշումը կայուն է ժամանակի նկատմամբ: Այն նվազում է ենթամշակութային պատկանելության ինդեքսի աճին զուգահեռ:

77 «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հետազոտություն 2010», էջ 4:

54. «Մարդու կյանքում ամենակարևորը նրա ծնողների խորհուրդներն են», «Համաձայն եմ», %

55. «Աղջիկ զավակը պետք է միշտ ամուսնանալը պարտադիր ասրի իր ծնողների հետ, եթե նույնիսկ հասուն տարիքում է», «Համաձայն եմ», %



ՄՇԱԿՈՒՅԹ



Ենթամշակութային պատկանելություն

Կիրառական սոցիոլոգիական հետազոտություններում հասարակության շերտավորման (ստրատիֆիկացման) համար լայնորեն կիրառում են անձի սոցիալ-ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական բնութագրիչները, մասնավորապես՝ սեռը, տարիքը, կրթությունը, բարեկեցությունը, զբաղմունքը, զբաղմունքի տիպը, բնակավայրի տիպը, ամուսնական կարգավիճակը, երեխաների քանակը, կրոնական դավանանքը, ազգային պատկանելությունը և այլ բնութագրիչներ, քանի որ դրանց հետ, որպես կանոն, շաղկապված են անձի ամենատարբեր դիրքորոշումները: Ներկայացվող աշխատանքում, որտեղ Հայաստանի երիտասարդության աշխարհայացքային դիրքորոշումները խորապես ուսումնասիրելու փորձ է կատարվել, կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե դրանք երիտասարդության ո՞ր ենթամշակութային շերտերում են դիրքավորված: Կայուն հասարակություններում անձի ենթամշակութային պատկանելությունը հնարավոր է մոտարկել անձի կրթամակարդակի, զբաղմունքի և բարեկեցության բնութագրերի համադրմամբ: Սակայն, նոր ձևավորված հասարակություններում, որտեղ հասարակության նախկին հիերարխիան կազմալուծվել է, և առաջացել է նորը, անձի կրթական, զբաղմունքի կամ տնտեսական կարգավիճակներով արդեն դժվար է նույնականացնել նրա արժեհամակարգը: Մասնավորապես հետխորհրդային տարածքում, որտեղ արժեզրկվել է բարձրագույն կրթության նշանակությունը. բազմաթիվ երիտասարդներ անընդունելի դյուրությամբ ստացել են համալսարանական դիպլոմներ, իրենց կրթամակարդակային խումբ են ներմուծել նաև այնպիսի արժեհամակարգեր և դիրքորոշումներ, որոնք ադեկվատ չեն այդ խմբին[78]: Արդյունքում՝ կրթամակարդակն այլևս անբավարար է մոտարկում անձի մշակութային մակարդակը, արժեքային համակարգը և դիրքորոշումների տրամաբանությունը: Այդ պատճառով Հայաստանում ամենատարբեր դիրքորոշումների ուսումնասիրության ընթացքում «սովորական» սոցիալ-ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական բնութագրիչներով սահմանվող շերտերը արժեհամակարգային տեսակետից դարձել են բավականին հետերոգեն[79]: Ըստ այդմ՝ այդ բնութագրիչներով հասարակության շերտավորումը հաճախ տալիս է բազմիմաստ, իսկ երբեմն՝ խաբուսիկ արդյունքներ:

Երիտասարդի ենթամշակութային պատկանելության նույնականացման համար հետազոտությունում այնպիսի նոր ինդեքս կառուցելու փորձ է կատարվել, որն ունակ կլինի նույնականացնելու անձի ենթամշակութային պատկանելությունը՝ միաժամանակ կառուցման համար չպահանջելով ծավալուն ինֆորմացիայի հավաքագրում: Կառուցվել է միաչափ ինդեքս՝ հիմնվելով անձի երաժշտական նախասիրությունների երեք ընտրությունների վրա[80]: Մշակվել է կանոն, որով երաժշտական նախասիրություններն արտապատկերվել են 4 կոդային արժեքների վրա, որոնք համապատասխանում են որոշակի ենթամշակութային տիպերի: Կոդի 1 արժեքը ներկայացնում է «ավանդական» ենթամշակութային տիպը, 2-ը՝ «զանգվածային» («փոփ») ենթամշակութային տիպը, 3-ը՝ «ավանգարդայինը», իսկ 4-ը՝ «դասականը»:

---

78 Այդուհանդերձ, հարկ է նշել, որ վերջին տարիներին Հայաստանում պետության նախաձեռնությամբ սկսվել է բարձրագույն կրթության ժամանակակից չափանիշներին չհամապատասխանող համալսարանների լուծարումը:

79 Մաթեմատիկական տեսակետից դա նշանակում է ներխմբային դիսպերսիայի աճ, որի հետևանքով նվազում է միջխմբային տարբերությունների վիճակագրական հավաստիությունը, և հետևաբար խարխլվում է բուն՝ «խումբ» հասկացության բովանդակությունը:

80 Երաժշտական նախասիրությունների և երիտասարդների աշխարհայացքային առանձնահատկությունների սերտ կապվածության մասին տե՛ս՝ Մանուկյան Ս. Ա., Կոռուպցիան և անցումային շրջանի սոցիալական դինամիկան. Երևանի ուսանողության կոռուպցիոն դիրքորոշումներն ու միտումները: Եր.: «Լուսակն», 2005, էջ 96-100:

«**Ավանդական**» ենթամշակութային տիպի հիմնական ծավալի մոտ 95%-ը կազմել է «հայկական ռաբիս» երաժշտական ոճը: Ցնչին քանակով առկա են նաև «արևելյան ժողովրդական» և «կովկասյան» ոճերը: Տիպի անվանումն ընտրվել է էթիկական նկատառումներով:

«**Զանգվածային**» ենթամշակութային տիպի հիմնական ծավալը կազմել են «հայկական ժողովրդական երաժշտությունը» (33%), «ռուսական էստրադան» (25%), «արտասահմանյան էստրադան» (24%) և «հայկական էստրադան» (18%): Հայեցակարգում «հայկական ժողովրդական» երաժշտությունը սկզբունքորեն տարանջատվել է «ռաբիսից»: Սակայն ըստ փորձագիտական կարծիքների՝[81] հայ ***երիտասարդական*** գիտակցությունում «հայկական ժողովրդական» երաժշտությունն ավելի շուտ մոտ է «հայկական էստրադային», քան բուն ժողովրդական երաժշտությանը, որն իր հերթին իր «մաքուր» տեսքով հազվադեպ է հնչում հայկական ինֆորմացիոն-երաժշտական միջավայրում:

«**Ավանգարդային**» տիպի հիմնական ծավալը կազմել են «ռոքը» (49%) և «ռեփը» (47%): Եզակի քանակով առկա էին «հաուս», «էլեկտրո», «հիփ-հոփ», «տրանս», «ռեգգի», «սոուլ», «էնիգմա» ոճերը:

«**Դասական**» տիպի հիմնական ծավալն են կազմել «եվրոպական դասականը» (35%), «հայկական դասականը» (29%), «ռուսական դասականը» (11%), ինչպես նաև «ջազը» (18%):

Մշակվել է կանոն, որը հարցվածի նշած ոչ ավելի, քան երեք երաժշտական ոճերի հիման վրա տվյալ հարցվածի համար կազմավորել է ենթամշակութային ինդեքսի արժեքը: Այն փոփոխվում է 1-4 միջակայքում: Ինդեքսի 1 արժեքին պայմանականորեն համապատասխանում է «լիովին ավանդական» տիպը, իսկ 4 արժեքին՝ «լիովին դասական» տիպը: Իրականացվել է ինդեքսի արժեքների խմբավորում 5 խմբերում:

- **Ինդեքսի [1; 1.5] միջակայքը համապատասխանում է «ավանդական» տիպին,**
- **(1.5; 2] միջակայքը համապատասխանում է «զանգվածային» ենթամշակույթի I տիպին,**
- **(2.0; 3.0] միջակայքը համապատասխանում է «զանգվածային» ենթամշակույթի II տիպին,**
- **(3.0; 3.5] միջակայքը համապատասխանում է «ավանգարդային» ենթամշակութային տիպին,**
- **իսկ (3.5; 4.0] միջակայքը՝ «դասական» տիպին:**

Ենթամշակութային պատկանելության ինդեքսի բաշխումը, ըստ IPSC-ի հետազոտական շտեմարանի, տրված է Գծապատկեր 56.-ում, իսկ ըստ UNDP-ի շտեմարանի՝ Գծապատկեր 57.-ում:

Ինդեքսի կիրառման պրակտիկան ցույց տվեց, որ այն ունի տվյալ հետազոտության նպատակների շրջանակում ընդունելի չափի դիֆերենցող ուժ, որն արտահայտվել է տարբեր դիրքորոշումները և բնութագրերը տվյալ ինդեքսի արժեքներով խմբավորելիս, ինչի արդյունքում ստացվել են այնպիսի տվյալներ, որոնք բանականորեն ընդունելի են:

81 Փորձագետներն էին «Այ Փի էս Սի» կազմակերպությունում աշխատող ***երիտասարդ*** սոցիոլոգները՝ Վ. Գալստյանը, Ա. Լալայանը, Հ. Մաթևոսյանը, Հ. Առաքելյանը, Ա. Աղջոյանը: Դասակարգումը նախապես փորձարկվել է կազմակերպության ժամանակավոր դաշտային աշխատող մի քանի տասնյակ երիտասարդների շրջանում:

Ցանկացած մշակույթ ունի իր ժողովրդական (ավանդական) և դասական շերտերը: Ինդեքսի արժեքների աճը մոտարկում է անձի «ընթացքն» ավանդականից դեպի դասական մշակույթը: Ինդուստրիալ քաղաքակրթությունում առկա է «զանգվածային» ենթամշակույթը, որը կազմավորել է «ավանդականից» դուրս եկած, սակայն «դասականին» չհասած շերտը:

Զանգվածային ենթամշակույթը հիմնականում կազմված է ինդուստրիալ քաղաքակրթության քաղաքային բնակչությունից, որը «ստանդարտացված» (դաստիարակված) և կազմակերպված է ինդուստրիալ տնտեսության պահանջներին համապատասխան: Այդ զանգվածը մի կողմից սպասարկում է ինդուստրիալ տնտեսությունը (որպես աշխատուժ), իսկ մյուս կողմից այն զանգվածային արտադրանքի հիմնական սպառողն է: Այդ զանգվածի բուն «ստանդարտացվածությունն» է այն կարևորագույն պայմանը, որն ինդուստրիալ քաղաքակրթությանը թույլ է տալիս այդ շերտը ներհատուկ ռացիոնալությամբ ինտեգրել ինդուստրիալ տնտեսությանը: Այլ կերպ ասած՝ ստանդարտացված ճաշակն ու պահանջմունքներն են այն կարևորագույն գործոնները, որոնք հնարավոր են դարձնում տնտեսապես արդյունավետ զանգվածային սպառումը: Այդ պատճառով էլ զանգվածային ենթամշակույթը նույնպես ստանդարտացված է և հանդիսանում է զանգվածային սպառման ապրանք:

Ինդուստրիալ հասարակությունում զանգվածային ենթամշակութային շերտն իր ստանդարտացվածության պատճառով նաև առավել կառավարելի շերտն է:

56. Ենթամշակութային ոլորտականելիության ինդեքս, IPSC



57. Ենթամշակութային ոլորտականելիության ինդեքս, UNDP



1.0-1.5 | 1.5-2.0 | 2.0-3.0 | 3.0-3.5 | 3.5-4.0

Կառուցված ինդեքսում շերտը երկու նպատակով՝ կոնցեպտուալ և տեխնիկական, բաժանված է երկու ենթաշերտի՝ «զանգվածային ենթամշակույթ I» և «զանգվածային ենթամշակույթ II»: Ստորաբաժանման կոնցեպտուալ հիմքը հետևյալն է. զանգվածային մշակույթն առաջացել է Արևմտյան և Հյուսիսարևմտյան Եվրոպայում ու ԱՄՆ-ում և զարգացող երկրներ է ներմուծվել դրանց ինդուստրացմանը զուգընթաց: Հետևաբար պարզ է, որ ավանդական ենթամշակույթի զանգվածայնացումը մի գործընթաց է, որը կարելի է փուլայնացնել տարբեր հիմքերով: Պարզագույն դեպքում կարելի է ենթադրել, որ զանգվածային մշակույթը կազմված է երկու մասից՝ առաջին մասը, որն ավելի «մոտ» է գտնվում ավանդական ենթամշակույթին և շարունակում է կրել դրա փոխակերպված բնութագրերը, և երկրորդ մասը՝ բուն զանգվածային ենթամշակույթը, որը լիովին համապատասխանում է ինդուստրիալ ստանդարտացման պահանջներին:

Տեխնիկական տեսակետից ստորաբաժանումը լուծում է ձևական-վերլուծական խնդիրներ: Գծապատկերներից երևում է, որ չստորաբաժանելու դեպքում զանգվածային ենթամշակույթի ծավալը կազմում է երիտասարդության 62%-ը, և վերլուծական մոտեցումը «պահանջում է» փորձարկել՝ արդյո՞ք այդ խումբը կազմված չէ ավելի փոքր ենթախմբերից: Եթե պարզվի, որ՝ ոչ, ապա ստորաբաժանումը ոչ մի «բացասական հետևանք» չի ունենա: Իսկ եթե պարզվի, որ, այնուամենայնիվ, այդ մեծածավալ ենթամշակութային խմբի ստորաբաժանումը ենթախմբերի իմաստավորված էր որևէ տեսակետից, ապա դրանով իսկ ընդլայնվում են այդ խմբի հետ աշխատելու հնարավոր տարբերակները և հետևաբար նաև արդյունավետ կառավարման հնարավորությունները:

«**Ավանգարդային**» ենթամշակույթը բոլոր հասարակություններում պարտադիր առկա ու առավել նորարարական և եռանդուն շերտն է, որը, որպես կանոն, կազմված է երիտասարդներից: Նրանք հասարակության «ըմբոստներն են», որոնց ըմբոստությունը կարող է արտահայտվել ցանկացած ոլորտում և իրավիճակում: Առավել «անմեղ» և կառավարելի են դրա դրսևորումները ենթա- և կոնտր- մշակույթներում: Այդ շերտի հոգեբանական խառնվածքի, մտածելակերպի և եռանդի կառուցողական կիրառությունը միշտ եղել է հասարակական կառավարման դժվար խնդիրների շարքում:

«**Դասական**» ենթամշակութային շերտին են պատկանում այն անձինք, ովքեր կրում են տվյալ ազգի դասական կամ «բարձր» մշակույթը և կազմում են ազգի մշակութային վերնախավը: Այս շերտը, որպես կանոն, ավելի ազատ է իր մտածելակերպում, վարքում և խոսքում, սակայն այդ ազատությունը հիմնված է տվյալ ազգի կողմից ստեղծված, ինչպես նաև յուրացված համամարդկային մշակույթի բարձրագույն արժեքների, նորմերի և նպատակների, այլ ոչ թե բնազդների և կամայական ցանկությունների վրա: Իդեալում տվյալ ազգային հասարակության դասական և ավանդական ենթամշակույթների փոխազդեցության արդյունքում, որտեղ ստանդարտները կազմավորում են դասական ենթամշակույթի շերտը, պետք է կազմավորվի միջին շերտը՝ տվյալ ժամանակահատվածում տվյալ ազգին և նրա ապագայի շահերին համապատասխան: Սակայն, իրականում ծայրամասային երկրներում զանգվածային շերտը կազմավորվում է կենտրոնի շահերին համապատասխան՝ վերջին հաշվով կենտրոնի տնտեսական շահերը սպասարկելու համար: Այստեղից էլ բխում են ազգային մշակութային վերնախավի մշակութային, քաղաքական և տնտեսական ընդվզումները գլոբալ կենտրոնի մշակութային ճնշումների դեմ:

Բազային արժեքներ

Ազգի և հասարակության՝ իր իսկ մասին ունեցած հոգեբանական խորքային, կայուն և կրկնվող դրական հասարակական դիրքորոշումները տվյալ հասարակության դիմադրողականության հիմքն են տարաբնույթ արհավիրքներին դիմակայելու գործընթացում: Դրանք ունակ են երկար ժամանակ, սակայն՝ ոչ հավերժ, պահպանել հասարակության միասնականությունը և հասարակական կառույցների ֆունկցիոնալությունը: Դրանք դժվար են փոփոխվում: Այդ պատճառով հասարակական գիտակցության կայուն և կրկնվող դիրքորոշումների համախմբությունն ապահովում են ազգի կամ հասարակության մշակույթի բաղադրիչները: Սակայն, եթե երկարատև դժվարին իրավիճակներում հասարակությունում կազմավորվել, հաստատվել և սկսել են ժառանգաբար փոխանցվել իր իսկ մասին ունեցած բացասական դիրքորոշումները, ապա դրանք ունակ են երկար ժամանակով արգելափակելու հասարակության ակնհայտ զարգացման իրողությունների և միտումների ընկալումները:

Հիմնարար դիրքորոշումներն ածանցում են այլ դիրքորոշումներ, որոնք կրում են նախնական դիրքորոշման բնույթն ու բովանդակության տարրերը: Հիմնարար և ածանցյալ դիրքորոշումները, որպես կանոն, տրամաբանական կապի մեջ են: Աղյուսակ 18.-ում ներկայացված տվյալները դրա օրինակներն են: Երբ անձը համարում է, որ հասարակությունում (որտեղ ինքն է ապրում) վերջին հաշվով ամեն ինչ վճռում է փողը, սակայն ինքը փող քիչ ունի, իսկ փողը բազմապատկելու տեղը Հայաստանից դուրս է, ապա տրամաբանորեն բխում է, որ փողը բազմապատկելու համար կա՛մ պետք է Հայաստանից արտագաղթել, կա՛մ հայտնվել այնպիսի հասարակությունում, որտեղ (անշուշտ, ենթադրաբար) փողը չէ, որ որոշում է ամեն ինչ: Այս երևույթն արտահայտվել է աղյուսակային տվյալներում. նրանք, ովքեր համաձայն են փողի հզոր դերի հետ, ավելի հակված են արտագաղթելուն, քան նրանք, ովքեր չեն բացարձականացնում փողի նշանակությունը:

Իհարկե, լինում են դեպքեր, երբ անձի և հասարակության գիտակցությունում առկա են միմյանց հակասող դիրքորոշումներ, որոնք առաջացել են իրականության տարբեր ազդեցությունների հետևանքով և դիրքավորված են գիտակցության տարբեր շերտերում: Եվ երբ կյանքը դեմ հանդիման է հանում տրամաբանական հակասության մեջ գտնվող այդ դիրքորոշումները, ապա առաջանում է **կոգնիտիվ դիսոնանս,** որն անձի կամ հասարակության գիտակցությունում առաջացնում է տարբեր ուժգնության աններդաշնակության (դիսկոմֆորտ) զգացողություն[82]: Օրինակ՝ վերը նշված դեպքում, երբ երիտասարդն ունի Հայաստանից արտագաղթելու դիրքորոշում, և նրան հարցրել են, թե ինչու է նա դեռևս գտնվում Հայաստանում, ապա արտագաղթելուն տրամաբանորեն համահունչ պատասխանների շարքում, օրինակ՝ «Փող չունեմ», «Հարմար առիթ չի ներկայացել», պատահել են նաև արտագաղթելու դիրքորոշմանը տրամաբանորեն հակասող պատասխաններ. օրինակ՝ «Ծնողներիս պատճառով»: Այսինքն՝ տվյալ անձի գիտակցությունում այդ երկու դիրքորոշումները մրցակցում են. կյանքը դրանք հանել է դեմ հանդիման: Այդպիսի դեպքերում անձը և հասարակությունն աշխատում են հանգուցալուծել այդ աններդաշնակությունը: Հանգուցալուծումները հասարակության համար կարող են լինել նպաստավոր (տվյալ դեպքում արտագաղթել՝ ծնողների համար անորոշ հեռանկարով), կամ մնալ Հայաստանում և միայնակ կամ հասարակական համագործակցության որևէ ձևով հաղթահարել դժվարությունները:

82 Ֆեստինգեր L., Կոգնիտիվ դիսոնանսի տեսությունը, /Գիտափորձերը կոգնիտիվ դիսոնանսում: - Եր.: «Զանգակ-97», 2002, 64 էջ:

Այժմ դիտարկենք մի քանի հիմնարար դիրքորոշումների տարածվածությունը Հայաստանի երիտասարդության գիտակցությունում: Նշենք, որ այդ դիրքորոշումների մի մասը հետազոտվել է նաև այլ հետազոտություններում[83], ընդ որում՝ ստացվել են մոտավորապես նույնպիսի արդյունքներ: Դրանից բխում է, որ դրանք Հայաստանի հասարակական գիտակցության **կայուն և կրկնվող դիրքորոշումներ են,** հետևաբար հանդիսանում են հասարակության մշակույթի բաղադրիչներ և հետևաբար դրանք դժվար է փոփոխել: Այդ պատճառով է, որ դրանք ներկայումս արժանի են ուշադրության, և իմաստավորված են հասարակական ու պետական նյութական և ինտելեկտուալ այն ջանքերը, որոնք ուղղված են այդ և նման դիրքորոշումներն ավելի բարենպաստ դիրքորոշումներով փոխարինելուն:

Հայաստանի երիտասարդության՝ հասարակության վերաբերյալ ունեցած բազային դիրքորոշումները ներկայացված են Գծապատկեր 58.-ում:

58. Հայաստանի երիտասարդության աշխարհայացքային բազային դիրքորոշումները



* Հարցը տրվել է «Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն» զեկույցի շրջանակում:

83 Մանուկյան Ս. Ա., Կոռուպցիան և անցումային շրջանի սոցիալական դինամիկան. Երևանի ուսանողության կոռուպցիոն դիրքորոշումներն ու միտումները, - Եր.: «Լուսակն», 2005, 196 էջ:
Մանուկյան Ս. Ա., Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն, - Եր.: «Այ Փի էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, 2012, 100 էջ:
http://www.gov.am/u_files/file/presentations/IPSC_QLI-2011_Report_Final_%252020_03_2012.pdf

Առաջին երեք դիրքորոշումները, ըստ էության, արտապատկերում են **աշխարհ-համակարգի հիմնական բովանդակությունը** («Ինչ էլ որ ասեն ու խոսեն, այսօր ամեն ինչ վճռում է փողը»), **կառուցվածքը** («Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրները և օլիգարխներն ավելի ու ավելի մեծ ազդեցություն և իշխանություն են ձեռք բերում») և **վարքագծային մաքսիմը** («Քանի որ մեզ մոտ հաղթել է կապիտալիզմը, ուրեմն պետք է ապրել դրա օրենքով՝ հաղթում է ուժեղը»), որոնք դիտարկվել են «Հետազոտության արդյունքների մեկնաբանության մակրոսոցիոլոգիական հայեցակարգի ընտրությունը» պարագրաֆում:

Հարցերին տրված դրական («Համաձայն եմ») պատասխանների քանակը ցույց է տալիս, թե որքանո՞վ է Հայաստանի երիտասարդությունն ընկալում այդ իրողությունները: Արդյունքները վկայում են, որ Հայաստանի երիտասարդության մոտ 90%-ը ճիշտ է ընկալում [աշխարհ-համակարգային վերլուծության մակրոտեսական շրջանակում] ժամանակակից աշխարհի էությունը,[84] որի համաձայն՝ ա) աշխարհ-համակարգի շարժիչ ուժն ու կվինտ-էսենցիան փողն է, բ) աշխարհ-համակարգի կենտրոնը բանկիրներն ու օլիգարխներն են, և գ) աշխարհ-համակարգում բարձր նիշա գրավելու համար հարկ է **ունիվերսալ բարոյական արժեքներից բարձր դասել «բնության օրենքը»**: Տրամաբանական է նաև, որ այսպիսի բազային դիրքորոշումների պարագայում երիտասարդների շրջանում շատ բարձր է այն դիրքորոշումը, որ՝ «Այսօր ոչ ոք օրենքներով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն և հիմարություն է» (68%):

Եթե «Այսօր ոչ ոք օրենքներով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն և հիմարություն է», ապա ի՞նչն է աշխարհ-համակարգի ծայրամասում գտնվող հասարակության (որը ներառել է աշխարհ-համակարգի բազային արժեքները) կայունության պահպանման հիմքը: Ակնհայտ է, որ ժողովրդական-ավանդական արժեքները, որոնք մի կողմից հանդիսանում են բարոյական ունիվերսալիաների արտապատկերումներն ավանդական հասարակություններում (կայունացնող «դրական» գործոններ), իսկ մյուս կողմից հանդիսանում են վախի ռացիոնալացման գործիքներ (կայունացնող բացասական «գործոններ»):

- **Ակնհայտ է, որ գործ ունենք հասարակական գիտակցության խորքային կոգնիտիվ դիսոնանսի հետ**:

Ահա թե ինչու համապատասխան ռեսուրսների առկայության պայմաններում քաղաքական տեխնոլոգների համար այդքան դյուրին է ապակայունացնել ավանդական՝ թվացյալ կայուն հասարակությունները: Երբ բարոյական ունիվերսալիաներին համապատասխանող իրավական նորմերով շղարշում են այն, որ հասարակությունը լատենտ կերպով հիմնված է դրանց հակադիր սկզբունքների վրա, ապա հասարակությունում հարատևում է արդարության (որը բարոյական ունիվերսալիա է) դեֆիցիտի զգացողությունը: Բավական է, օգտագործելով «**ավանգարդային**» հոգեկերտվածքով երիտասարդական շերտի համապատասխան ներկայացուցիչներին, առաջացնել հասարակական անկայունություն և միաժամանակ հասարակության լայն շերտերում նվազեցնել պատժված լինելու գիտակցությունից բխող վախի զգացողության շեմը, և հասարակությունը կանցնի անկայուն՝ քաոսային վիճակի:

84 Կարելի է տալ նաև հակառակ ուղղությամբ մեկնաբանություն, այն է՝ աշխարհամակարգային վերլուծությունը ճիշտ է դիրքավորում ժամանակակից աշխարհ-համակարգի հիմնական նպատակը և դրանից ածանցվող դատողությունները: Սակայն, տվյալ դեպքում էական է այն, որ մակրոտեսությունն ու հասարակական գիտակցությունը հակասության մեջ չեն այս ֆունդամենտալ դատողությունների տեսակետից:

Այնուամենայնիվ, Գծապատկեր 58.-ի տվյալները կարելի է մեկնաբանել նաև «հակառակ» կողմից, այն է՝ Հայաստանի երիտասարդների 32.%-ը կամ յուրաքանչյուր երրորդը համաձայն չէ իրավական նիհիլիզմը հաստատող դիրքորոշմանը, չնայած աշխարհ-համակարգը, պարտադրելով առաջին երեք դիրքորոշումները, **նպատակային-ռացիոնալ գործողության** շրջանակում (որը Վեբերը համարում է կապիտալիզմին ներհատուկ գործունեության տիպ) տրամաբանական է դարձնում չորրորդը: Այսինքն՝ երիտասարդության շրջանում գոյություն ունեն նաև այլ արժեքներ, որոնց հետևանքով «վերջին հաշվով փողը չէ, որ ամեն ինչ որոշում է»:

Գծապատկերում հինգերորդ դիրքորոշման («Հայերն ապրում են քրիստոնեական օրենքներով», 68%) լայն տարածվածությունը վեր է հանում երիտասարդության շրջանում առկա երկրորդ կոգնիտիվ դիսոնանսը. անձի և հասարակական որևէ շերտի գիտակցությունում ինչպե՞ս են համատեղվում «կապիտալիզմի» և «քրիստոնեական» օրենքները: Պարզվում է, որ երիտասարդների 47%-ի շրջանում դրանք համատեղված են (Աղյուսակ 30.): Այս անհամապատասխանությունը բացատրվում է ոչ միայն նրանով, որ հասարակությունում գոյություն ունեն բարոյական բազմակի ստանդարտներ (օրինակ՝ ընտանիքում և ընտանիքից դուրս), այլև նրանով, որ երիտասարդների համար քրիստոնեությունն ընդամենը սիմվոլիկ նշանակություն ունի. նրանցից շատերը պարզապես չգիտեն, թե որն է քրիստոնեության բովանդակությունը: Եվ դա՝ չնայած նրան, որ Հայ Առաքելական եկեղեցուն պատկանելը հայ երիտասարդները համարում են անձին հայ համարելու կարևորագույն բնութագրերից մեկը:

30.

«Քանի որ մեզ մոտ հաղթել է կապիտալիզմը, ուրեմն պետք է ապրել դրա օրենքով՝ հաղթում է ուժեղը»	«Հայերն ապրում են քրիստոնեական օրենքներով»		
	Համաձայն չեն	Համաձայն են	**Ընդամենը**
Համաձայն չեն	11.6%	20.2%	**31.8%**
Համաձայն են	21.1%	47.1%	**68.2%**
Ընդամենը	**32.7%**	**67.3%**	**100.0%**

Բազային արժեքների շարքում դիտարկվել է երիտասարդության դիրքորոշումը նախկին Խորհրդային Միության նկատմամբ: Չնայած վերջին 20 տարիների ինֆորմացիոն դաշտում ինտենսիվ կերպով թերարժևորում են Հայաստանի խորհրդային անցյալը՝ առանց սահմանազատելու Հայոց պատմության այդ փուլի դրական և բացասական կողմերը, այնուամենայնիվ երիտասարդության շրջանում շատ տարածված է այն դիրքորոշումը, որ «Խորհրդային Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք» (75%): 18-30 տարեկան հարցվածների խմբում նույն հարցին տրված պատասխանները համանման մեծ տարածվածություն ունեին նաև «Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն» զեկույցում՝ 87%: Այսինքն՝ ընտանիքներում վերարտադրվում և Հայաստանի երիտասարդությանն են փոխանցվում Սոցիալիստական Հայաստանի դրական հատկանիշները, մասնավորապես այն, որ սոցիալիզմը բնակչության մեծամասնության համար ապահովում էր ավելի բարեկեցիկ կյանք, քան կապիտալիզմը (շղարշված «շուկայական տնտեսություն» կոնցեպտով):

Նշված դրույթը հիմնավորվում է նաև Գծապատկեր 58.-ի դրույթներին համապատասխանող և բազային դիրքորոշումներն արտապատկերող փոփոխականների գործոնային վերլուծությամբ (Գծապատկեր 59.)[85]: Կառուցված եռագործոն մոդելում վեր են հանվել հետևյալ գործոնները.

Գործոն 1. Աշխարհ-համակարգի ընկալման գործոն

1. Ինչ էլ որ ասեն ու խոսեն, այսօր ամեն ինչ վճռում է փողը:
2. Խորհրդային Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք:
3. Այսօր ոչ ոք օրենքներով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն և հիմարություն է:
4. Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրները և օլիգարխներն ավելի ու ավելի մեծ ազդեցություն և իշխանություն են ձեռք բերում:

Գործոն 2. Ազգային արժեքների գործոն

5. Եթե հզոր պետությունները ճնշեն, որ Հայաստանն Ադրբեջանին վերադարձնի ազատագրված տարածքները, ապա ժողովուրդը պետք է զենքով դիմադրի դրան:
6. Եվրոպական արժեքները խորթ են մեր ազգի համար:
7. Որքան էլ քաղաքակրթվեն, միևնույնն է, թուրքը մնում է թուրք:

Գործոն 3. Արժեքային դիսոնանսի գործոն

8. Հայերն ապրում են քրիստոնեական օրենքներով:
9. Կյանքի պայքարում ամեն ինչ թույլատրելի է:

Առաջին գործոնի անվանումը պայմանավորված է նրանով, որ այստեղ միավորվել են աշխարհ-համակարգի հիմնական բովանդակությունը, կառուցվածքը և մաքսիմն արտահայտող դիրքորոշումները, որոնց միացել է նաև դրանց հակոտնյա բարոյական-գաղափարախոսական համակարգը (Խորհրդային Միությունը) արտապատկերող փոփոխականը: Այդ չորս դիրքորոշումների հետ համաձայնությունները դրական են կորելացված, այսինքն՝ դրանք, որպես կանոն, «միաժամանակ են» հայտնվում կամ անհետանում անձի աշխարհայացքում:

Երկրորդ գործոնի անվանումը պայմանավորված է նրանով, որ դրանում միավորվել են դիրքորոշումները հայերի գոյաբանական թշնամու նկատմամբ («…թուրքը մնում է թուրք»), ազատագրված հայրենյաց հողերի նկատմամբ, ինչպես նաև բացասական դիրքորոշումները եվրոպական արժեքների նկատմամբ:

Երրորդ գործոնի անվանումը պայմանավորված է նրանով, որ այստեղ միավորվել են հակադիր արժեքային նորմերը: Հարկ է նշել, որ այս միավորումը ցույց է տալիս, որ Աղյուսակ 30.-ի բաշխումները պատահական չեն. դրանցում առկա է վիճակագրորեն հավաստի կորելյացիա, և հետևաբար հայ երիտասարդության աշխարհայացքում առկա են այդ հակոտնյա դիրքորոշումները, և ըստ այդմ՝ երիտասարդության որոշակի հատվածը, ավելի կոնկրետ՝ 49%-ը, բարոյական վերադաստիարակման կարիք ունի:

85 Մոդելում *-ով նշված դիրքորոշման փոխարեն առկա է «Կյանքի պայքարում ամեն ինչ թույլատրելի է» դիրքորոշումը, որը մոտարկում է «Քանի որ մեզ մոտ հաղթել է կապիտալիզմը, ուրեմն պետք է ապրել դրա օրենքով՝ հաղթում է ուժեղը» դիրքորոշման բովանդակությունը:

59. Բազային արժեքների գործոնային տարածությունը





Գործոն 1. Աշխարհ-համակարգի ընկալման գործոն

1. Ինչ էլ որ ասեն ու խոսեն, այսօր ամեն ինչ վճռում է փողը:
2. Խորհրդային Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք:
3. Այսօր ոչ ոք օրենքներով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն և հիմարություն է:
4. Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրները և օլիգարխներն ավելի ու ավելի մեծ ազդեցություն և իշխանություն են ձեռք բերում:

Գործոն 2. Ազգային արժեքների գործոն

5. Եթե հզոր պետությունները ճնշեն, որ Հայաստանն Ադրբեջանին վերադարձնի ազատագրված տարածքները, ապա ժողովուրդը պետք է զենքով դիմադրի դրան:
6. Եվրոպական արժեքները խորթ են մեր ազգի համար:
7. Որքան էլ քաղաքակրթվեն, միևնույնն է, թուրքը մնում է թուրք:

Գործոն 3. Արժեքային դիսոնանսի գործոն

8. Հայերն ապրում են քրիստոնեական օրենքներով:
9. Կյանքի պայքարում ամեն ինչ թույլատրելի է:

Այժմ դիտարկենք, թե աշխարհայացքային (բազային) դիրքորոշումներն ինչպես են դիրքավորված երիտասարդների ենթամշակութային շերտերում (Աղյուսակ 30.):

30. Մշակութային պատկանելությունը և բազային դիրքորոշումները, IPSC

Աշխարհայացքային դիրքորոշում	1.0-1.5	1.51-2.0	2.01-3.0	3.01-3.49	3.5-4.0
Ինչ էլ որ ասեն ու խոսեն, այսօր ամեն ինչ վճռում է փողը:	87%	88%	90%	90%	89%
Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրները և օլիգարխներն ավելի ու ավելի մեծ ազդեցություն և իշխանություն են ձեռք բերում:	86%	88%	89%	89%	90%
Այսօր ոչ ոք օրենքներով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն և հիմարություն է:	70%	69%	65%	68%	61%
Խորհրդային Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք:	84%	81%	71%	70%	61%
Եվրոպական արժեքները խորթ են մեր ազգի համար:	60%	57%	59%	58%	56%
Որքան էլ քաղաքակրթվեն, միևնույնն է, թուրքը մնում է թուրք:	87%	86%	78%	80%	76%
Եթե հզոր պետությունները ճնշեն, որ Հայաստանն Ադրբեջանին վերադարձնի ազատագրված տարածքները, ապա ժողովուրդը պետք է զենքով դիմադրի դրան:	79%	78%	77%	79%	84%
Հայերն ապրում են քրիստոնեական օրենքներով:	74%	73%	67%	65%	51%

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ դասական ենթամշակութային տիպը, չնայած նույնպիսի ինտենսիվությամբ է ընկալում աշխարհ-համակարգի էությունն ու կառուցվածքը (փողի և բանկիրների դերը), այնուամենայնիվ այս խմբում ներկայումս ավելի քիչ են տարածված բարոյական նիհիլիզմը և Խորհրդային Միության առավելությունների գերագնահատումը:

Եվրոպական արժեքների նկատմամբ առկա բացասական դիրքորոշումները բոլոր ենթամշակութային խմբերում հավասարաչափ բարձր են: Հարկ է նշել, որ Հայաստանի հասարակությունում և մասնավորապես երիտասարդության շրջանում «եվրոպական արժեքներ» հասկացությունը ստերեոտիպացված է: Երբ ասում են «եվրոպական արժեքներ», ապա հասարակության կողմից դրանք արդեն ընկալվում են որպես սեռական փոքրամասնությունների խնդրի պրովոկացիոն չարչրկում (ի հակադրություն հայկական ավանդական դիրքորոշումների, որոնք այդ հարցում, ի դեպ, բուն քրիստոնեական մոտեցումներ են): Սակայն, իրականում եվրոպական արժեքների բուն էությունը կազմող տարրերը՝ մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և ազատ տնտեսությունը (շուկայական տնտեսությունը՝ ի տարբերություն կապիտալիստականի, կամ՝ փոքր բիզնեսը, որով կարող են ազատորեն և օրենքի առջև հավասար իրավունքով զբաղվել բոլորը՝ ի տարբերություն օլիգոպոլ կամ մոնոպոլ տնտեսության), ինչպես ցույց են տվել երիտասարդության շրջանում անցկացված նախկին հետազոտությունները, ընդունելի են հայ երիտասարդության բացարձակ մեծամասնության համար[86]:

Հատկանշական է նաև այն, որ դասական ենթամշակութային շերտում ավելի վերապահումներ ունեն այն առումով, թե հայերն ապրում են քրիստոնեական օրենքներով, որը, ինչպես արդեն պարզ է մնացած տվյալներից, ավելի համապատասխան է իրականությանը, քան դրա անվերապահ ընդունումը:

86 Шахназарян Н., Отношение молодежи Армении к европейским ценностям и интеграции Армении с Европой. Ереван, 2005.

Այսպիսով՝

- **Հայաստանի երիտասարդությունն ադեկվատ է ընկալում աշխարհ-համակարգի բովանդակությունը, կառուցվածքը և վարքագծային մաքսիմը:**
- **Աշխարհ-համակարգի նկատմամբ առկա դիրքորոշումները բացասական են:**
- **Աշխարհ-համակարգի գեոմշակույթը խաթարել է Հայաստանի երիտասարդության բարոյական կերպարը՝ առաջացնելով իրավական նիհիլիզմի նշանակալի պոտենցիալ:**
- **Այնուամենայնիվ, ազգային արդի հիմնահարցերի վերաբերյալ երիտասարդության շրջանում առկա է կոնսենսուս:**

Ի՞նչ անել:

- **Ակնհայտ է, որ երիտասարդության շրջանում հարկ է ձևավորել այն դիրքորոշումը, ըստ որի՝ «վերջին հաշվով փողը չէ, որ որոշում է ամեն ինչ»:**

Ինչպե՞ս դրան հասնել: Հայտնի է, որ հասարակական արժեքներն ու նորմերը ձևավորվում և փոխակերպվում են «վերևից ներքև»: **Այսինքն՝ հասարակության վերնախավերը պետք է ապացուցեն, որ «վերջին հաշվով փողը չէ, որ որոշում է ամեն ինչ»:** Իսկ ինչպե՞ս... Ակնհայտ է, որ առավել գործուն միջոցը սեփական օրինակն է և այն հանրայնացնող ինֆորմացիոն քաղաքականությունը: «Կարելի է մի քանիսին կամ բոլորին խաբել անվերջ, սակայն հնարավոր չէ բոլորին հավերժ խաբել»: Այսինքն՝ առանց իրական գործողությունների ինֆորմացիոն քաղաքականությունը կարող է հանգեցնել հակառակ արդյունքին: Հիշենք ոչ հեռու անցյալը: 1970-80-ականներին ժողովուրդն օտարվել էր կոմունիստական իշխանությունից, քանի որ կուսակցական նոմենկլատուրայի (վերնախավի) վարքագիծը բոլորովին չէր համապատասխանում իր իսկ տոտալ քարոզչությանը, որն ասում էր, թե առաջնային են հասարակության, կոլեկտիվի շահերը, թե պետք է լինել աշխատասեր, ազնիվ, անձնվեր, անկաշառ: Եվ այդ քարոզչության հակազդեցությունը դարձան նույն այդ քարոզչությանն անդրադարձող քաղաքական անեկդոտները, որոնք բազմակի ավելի հզոր ինֆորմացիոն-գաղափարական ազդեցություն ունեին, քան ավելի ու ավելի «տափակացող» քարոզչությունը:

Եվ 1988 թ-ին սկսված ազգային-ազատագրական շարժումը, որը պահանջում էր ազգային իղձերի գերակայություն անհատական շահերի նկատմամբ, առավել քան ուժեղացրեց հասարակության կողմից կոմունիստական վերնախավի անընդունելիությունը, ինչը լուռ հանդուրժողականությունից վերածվեց ակտիվ ըմբոստության: Հայաստանի կոմունիստական վերնախավը, կատարելով ռացիոնալ ընտրություն, լուռ հեռացավ և լծվեց համազգային սեփականության սեփականաշնորհմանը: Եվ երբ անցան պատերազմական դաժան տարիները, հասարակությունը «հայտնագործեց», որ «Ինչ էլ որ ասեն ու խոսեն, վերջին հաշվով ամեն ինչ որոշում է փողը»:

Վերջապես՝

- **Եթե «վերջին հաշվով ամեն ինչ որոշում է փողը», ապա ակնհայտ է, որ «շատ փողը» Հայաստանից դուրս է և երբեք չի լինի Հայաստանում:**
- **Այն, ինչ միշտ Հայաստանում է, հայկական դասական բարձր մշակույթն է, որն իրեն յուրահատուկ կերպով կրում և արտահայտում է համամարդկային բարոյական ունիվերսալիաները:**

- **Միայն հայկական դասական մշակույթի յուրացմամբ է, որ հնարավոր է պրագմատիկ հային պահել Հայաստանում:**

Այսինքն՝ անհրաժեշտ է՝

- **Երիտասարդին կամ, ավելի ճիշտ, հայ մարդուն, սկսած մանուկ հասակից, հարկ է ձերբազատել ռաբիսից և հայկական ավանդական մշակույթից տանել դեպի հայկական բարձր մշակույթ՝ այդ ճանապարհին հայկական բարձր մշակույթով ձևավորելով այդ ուղու միջանկյալ աստիճանները և արտամղելով ու ձերբազատվելով գլոբալ գեոմշակույթի «զանգվածային» մարդուց:**

Այսպիսով՝

- **Անհրաժեշտ է սահմանել արդար հասարակության գաղափարը, որն ընդունելի կլինի հայ երիտասարդի համար [և հայ հասարակության համար՝ որպես ամբողջություն]:**
- **Ակնհայտ է, որ այդ գաղափարախոսության հիմնարար սկզբունքների շարքում փողը չէ, որ ո՛չ բացահայտ և ո՛չ էլ ծպտյալ պետք է լինի «ի վերջո ամեն ինչ որոշողը»:**
- **Գաղափարախոսության կրողը պետք է լինի Հայաստանի իշխող վերնախավը:**

Երիտասարդության շրջանում արդյոք գոյություն ունի՞ մշակութային և աշխարհաքաղաքական ճեղքվածք

Ներկայումս Հարավային Կովկասը գտնվում է գերտերությունների աշխարհաքաղաքական և մշակութային հզոր ճնշումների ներքո, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հարավային Կովկասը՝ որպես ամբողջություն, դեռևս չի ընդգրկվել որևէ Մեծ տարածքում: Համարվում է, որ Վրաստանը (ավելի ճիշտ՝ նրա վերնախավը) արդեն կատարել է իր ընտրությունը՝ անվերապահորեն կողմնորոշվելով դեպի Եվրոպա[87], իսկ Հայաստանը և Ադրբեջանը դեռևս՝ ոչ: Հայաստանի համար այդ ընտրությունը միարժեք չէ: Հայաստանը հակված է և՛ ՌԴ-ի,

87 Այս պնդումը բավականին երկիմաստ և խնդրահարույց է: Վրաստանում հակառուսական 20-ամյա քարոզչությունը չէր փոխում այդ երկրի հասարակության բացարձակ պրոռուսական կողմնորոշումը: Արևմուտքի կողմից 2008թ. պարտադրված վրաց-օսական պատերազմից հետո, երբ ռուսական զորամիավորումները մտան բուն վրացական տարածքները, ինչի հետևանքով Վրաստանի հասարակությունը հզոր շոկ ապրեց, այնուհետև՝ Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախության ճանաչումը ՌԴ-ի կողմից, թվում էր, թե խնդիրը լուծվել է, այն է՝ վրաց հասարակությունն անվերապահորեն դեմքը կշրջի Ռուսաստանից: Այդ կանխատեսումն իրականացել է մասամբ: Իրականում այն վրաց հասարակությունում առաջացրել է հզոր կոգնիտիվ դիսոնանս: Մարդիկ դադարել են հասկանալուց, թե ո՞վ է երկրի բարեկամը, և ո՞վ է թշնամին: Մյուս կողմից մարդիկ սկսել են վախենալ սեփական կարծիքը հայտնելուց: Նրանք կա՛մ խուսափում են պատասխանելուց, կա՛մ ցուցաբերում են վախից բխող լոյալություն: Կոգնիտիվ դիսոնանսը և վախն արտահայտվել են մասնավորապես 2011թ. իրականացված հետազոտությունում: «Ո՞վ է Վրաստանի ամենամեծ բարեկամը» հարցին ի պատասխան՝ 6.3%-ը նշել է Ֆրանսիան, Եվրոպական Միության մյուս ներկայացուցիչը, որը ստացել է ձայների 0.2%-ից ավելին, Լեհաստանն է՝ 1.2% (չնայած ԵՄ անդամակցությանը կողմ է Վրաստանի հասարակության 69%-ը), իսկ ԱՄՆ-ն՝ (պատերազմի սպոնսորը) 43%-ը, ընդամենը 3.7%-ն էլ նշել է Ռուսաստանը, սակայն **պատասխանից խուսափել է 26.3%-ը (!)**: «Ո՞վ է Վրաստանի ամենամեծ թշնամին» հարցին ի պատասխան՝ 50.8%-ը նշել է Ռուսաստանը, 3.2%-ը՝ ԱՄՆ-ն, սակայն **պատասխանից խուսափել է 35.8%-ը (!):**
Հետևաբար վրաց հասարակությունում առկա է աշխարհաքաղաքական ճեղքվածք, իսկ արտաքին ուժերի կողմից դրա քաղաքական կիրառումը քաղաքական անհրաժեշտության, ռեսուրսների և տեխնոլոգիաների խնդիր է: Չի բացառվում, որ նկարագրված իրավիճակը վրացական քաղաքական իշխանափոխության և Ռուսաստանի նկատմամբ քաղաքականության փոփոխության գործոնների շարքում է: Այն ուղղված է վրաց հասարակության համախմբմանը:

և՛ ԵՄ-ի հետ իր հարաբերությունները ներդաշնակ զարգացնելուն, ինչը բխում է Հայաստանի ազգային անվտանգության պահանջներից, որոնց թվում՝ և՛ ռազմական, և՛ տնտեսական, և՛ քաղաքական հիմնահարցերի բնույթից: Այնուամենայնիվ, չի բացառվում զարգացման այն սցենարը, որում Հայաստանը ստիպված կարող է կատարել փոխբացառող ընտրություն՝ կա՛մ ընդգրկվել ՌԴ-ի կողմից վերամիավորվող Մեծ տարածքում, կա՛մ սպասարկել ԵՄ Մեծ տարածքը:

Այս հիմնախնդիրների ենթատեքստում կարևորվում են մի շարք հարցեր՝ կապված հասարակության կողմնորոշումների հետ, այդ թվում՝ նաև Հայաստանի երիտասարդության շրջանում: Մասնավորապես ինչպիսի՞ն է Հայաստանի երիտասարդության և նրա տարբեր շերտերի լեզվամշակութային, արժեհամակարգային և աշխարհաքաղաքական կողմնորոշումներն ալտերնատիվ քաղաքակրթական տարածքների նկատմամբ:

- **Այս կոնտեքստի հիմնահարցը հետևյալն է. արդյոք գոյություն ունի՞ ճեղքվածք Հայաստանի երիտասարդության լեզվամշակութային և աշխարհաքաղաքական կողմնորոշումներում, և արդյո՞ք դրանք շաղկապված են միմյանց հետ:**

Լեզվական կողմնորոշումները և դրանց դինամիկան

«Հայերենից բացի՝ ո՞ր երկու լեզուներին պետք է տիրապետի հայ երիտասարդը: Նշե՛ք առաջին և երկրորդ լեզուները՝ ըստ առաջնահերթության» հարցին ի պատասխան՝ երիտասարդների 57.4%-ը որպես առաջին գերակա օտար լեզու նշել է ռուսերենը, իսկ 41.5%-ը՝ անգլերենը: Սակայն, ենթամշակութային խմբերում այդ դիրքորոշումների բաշխումը ցույց է տալիս, որ՝

- **Ենթամշակութային ինդեքսի արժեքների աճին զուգընթաց՝ նվազում է ռուսերենի և աճում է անգլերենի նշանակությունը (Գծապատկեր 60.):**

Երիտասարդների լեզվական գերակայությունների ժամանակային դինամիկան մոտարկում է նաև գերակայությունների բաշխումն ըստ տարիքային խմբերի: Գծապատկեր 60.-ի տվյալները ցույց են տալիս, որ՝

- **Ժամանակի ընթացքում այդ գերակայությունները փոխվում են՝ հօգուտ անգլերենի:**

60. Հայերենից բացի՝ ո՞ր երկու օտար լեզուներին պետք է տիրապետի հայ երիտասարդը (առաջին կարևոր լեզուն)

61. Տվյալ ունակությանը տիրապետում են «լավ» կամ «գերազանց»



62. Քաղաքակրթական դիրքորոշումներ, «Համաձայն են»



63. «Եվրոդրական արժեքները խորթ են մեր ազգի համար», «Համաձայն են», %



64. «Խորհրդային Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք», «Համաձայն են», %

Հայերենից բացի՝ ո՞ր լեզուներին պետք է տիրապետի հայ երիտասարդը (առաջին կարևոր լեզուն)

65. Աշխարհաքաղաքական դիրքորոշումներ, «Համաձայն են», %



Արդյո՞ք հայ երիտասարդների լեզվական ունակությունները համընկնում են նրանց լեզվական գերակայությունների հետ: Գծապատկեր 61.-ի և Գծապատկեր 60.-ի տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ լեզվական կողմնորոշումների և ունակությունների համապատասխանություն առկա է միայն դասական ենթամշակութային խմբում: Ռուսերենի նկատմամբ այն առկա է նաև ավանգարդային մշակութային տիպում: Կարելի է ենթադրել, որ ավանգարդային ենթամշակութային խմբում բավականին մեծ տոկոս են կազմում նախկինում ռուսական լեզվական տարածքին կողմնորոշված այն ընտանիքների երեխաները, որտեղ երկրորդ լեզուն ռուսերենն է:

Մյուս կողմից Գծապատկեր 61.-ի տվյալներից բխում է, որ՝

- **Ներկայումս անգլերենի իմացությունն աճելու, իսկ ռուսերենի իմացությունը նվազելու միտում ունի:**

Ակնհայտ է նաև, որ երիտասարդության շրջանում առկա է **անգլերենի** ունակությունների զարգացման մեծ պահանջ:

Հայաստանի երիտասարդության՝ **եվրոպական արժեքների** նկատմամբ ունեցած **դիրքորոշումները** վիճակագրորեն հավասար են բաշխված ենթամշակութային և տարիքային խմբերում: Մյուս կողմից **Խորհրդային Միության նկատմամբ առկա դրական դիրքորոշումները** նվազում են ավելի բարձր ենթամշակութային խմբերում: Դրանք հակված են նվազելու նաև ժամանակի ընթացքում (Գծապատկեր 62.): Սակայն, երիտասարդների աշխարհաքաղաքական կողմնորոշումները կախված չեն նրանց լեզվական կողմնորոշումներից (Գծապատկեր 63. և Գծապատկեր 64.):

Բացի դրանից՝ հատկանշական է, որ եթե Հայաստանի երիտասարդության 95%-ը համաձայն է, որ Հայաստանն իր հարաբերությունները զարգացնի Եվրոպայի հետ, այնուամենայնիվ, այլընտրանքային (ստիպողական) ընտրության դեպքում նրանց 76.5%-ը համարում է, որ «Գերադասելի է, որ Հայաստանը միավորվի ավելի շուտ Ռուսաստանի, քան Եվրոպայի հետ»:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ՝

- **Հայաստանի երիտասարդության շրջանում առաջանում է մշակութային կողմնորոշումների ճեղքվածք.**
    - **ավանդական ենթամշակութային շերտին պատկանող երիտասարդությունը հակված է դեպի ռուսալեզու տարածք** (ակնհայտ է, որ նրանք կազմում են դեպի Ռուսաստան մեկնող պոտենցիալ աշխատանքային միգրանտների շերտը, որը, ինչպես արդեն գիտենք, միջին մակարդակից չի բարձրացնում Հայաստանից ընդմիշտ արտագաղթելու դիրքորոշումը),
    - **դասական ենթամշակութային շերտին պատկանող երիտասարդներն աստիճանաբար հակվում են դեպի անգլալեզու մշակութային տարածք:**
- **Սակայն, հիմքեր չկան ենթադրելու, որ ներկայումս երիտասարդության լեզվամշակութային կողմնորոշումներն առաջացնում են աշխարհաքաղաքական կողմնորոշումների ճեղքվածք:**

Ազգային ինքնություն և միասնականություն

Ազգային ինքնության միջուկ հասկացությամբ նկատի ունենք անձի այն հիմնական բնութագրիչների համախմբությունը, որոնց հիման վրա տվյալ ազգի ներկայացուցիչն այլ անձին նույնականացնում է որպես «իր» ազգի ներկայացուցիչ: Հետազոտությունում որպես այդպիսիք դիտարկվել են հետևյալ բնութագրիչները. ա) «արյունը» կամ կենսաբանական գենետիկական շղթան, որը ներկայումս իրենց կապում է տվյալ ազգին պատկանող անձանց և նրանց նախնիներին, բ) «հողը» կամ հայրենիքը՝ որպես տվյալ ազգի կողմից մշակութայնացված տարածք, գ) լեզուն՝ որպես մշակույթի կերտման, զարգացման և անձի՝ իր և հասարակության հետ փոխհարաբերությունների հիմնական գործիք, դ) կրոնը՝ որպես բնականի և գերբնականի միջև տվյալ հանրույթի փոխհարաբերությունների համակարգ, որն ազգային մշակույթի կարևորագույն բաղադրիչներից է և միաժամանակ այն ձևավորող գործոնը և ե) անձի ինքնանույնականացումը որպես հայ:

Նշված բաղադրիչների կարևորության գնահատման համար կիրառվել է «Հետևյալ հատկանիշներից որո՞նք են պարտադիր հայ համարվելու համար» հարցը: Այդ բաղադրիչներից յուրաքանչյուրը գնահատվել է առանձին՝ «պարտադիր է - պարտադիր չէ» սանդղակով: «Արյան» կարևորությունը գնահատվել է «Հոր հայ լինելը» և «Մոր հայ լինելը» դրույթներով, «հողի» կարևորությունը՝ «Հայաստանն իր միակ հայրենիք համարելը» դրույթով, «լեզուն»՝ «Հայերեն խոսել իմանալը» դրույթով, կրոնը՝ «Հայ Առաքելական եկեղեցուն պատկանելը» դրույթով, անձի ինքնանույնականացումը՝ «Իրեն հայ համարելը» դրույթով: Ստացված արդյունքները ցույց են տվել, որ ընտրված բաղադրիչների համախմբությունը կարելի է համարել ազգային ինքնության միջուկի բավականաչափ ադեկվատ մոտարկում, քանի որ բոլոր բաղադրիչները ստացել են «պարտադիր լինելու» շատ բարձր գնահատականներ (Գծապատկեր 66.):

Հետազոտության հիմնահարցի ենթատեքստում կարևոր է հետևյալ հարցի պատասխանը. **ազգային ինքնության միջուկի դինամիկան ինչպիսի՞ ազդեցություն ունի Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի վրա:**

Այդ հարցի պատասխանը ստանալու համար կառուցվել է «**Ազգային ինքնության միջուկի համախմբվածության ինդեքսը**», որը ցույց է տալիս, թե տվյալ անձն այլ անձին հայ համարելու համար ազգային ինքնության միջուկի քանի՞ բաղադրիչ է պարտադիր համարում: Ինդեքսի բաշխումը տրված է Գծապատկեր 67.-ում: Գծապատկերից երևում է, որ երիտասարդների 97%-ը որևէ անձի հայ համարելու համար պահանջում է ազգային ինքնության միջուկի առնվազն 3 բաղադրիչների պարտադիր առկայություն, իսկ 90%-ը՝ 4 բաղադրիչի: Սա նշանակում է, որ՝

- **Հայ էթնո-սոցիո-մշակութային հանրույթը** [առնվազն դրա երիտասարդական հատվածը] **բավականին «փակ» հանրույթ է:**

66. «Հետևյալ հատկանիշներից որո՞նք են պարտադիր հայ համարվելու համար»



67. Ազգային ինքնության միջուկի համախմբվածության ինդեքսի բաշխումը



Ազգային ինքնության միջուկի համախմբվածության ինդեքսի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ՝

- **Որքան ավելի բարձր է ենթամշակութային պատկանելության ինդեքսի արժեքը, այնքան երիտասարդն ավելի հանդուրժող է անձին հայ համարելու տեսակետից** (Գծապատկեր 68.):

Հայ էթնո-սոցիո-մշակութային համակարգը համախմբելու արդյունավետ ռազմավարությունների տեսակետից ստացված արդյունքը դրական է: Ազգի համախմբումը վերնախավերի խնդիրն է, հետևաբար՝

- **Որքան ազգային վերնախավերը հանդուրժող են դիտարկվող տեսակետից, այնքան ավելի լայն են նրանք ընկալում էթնիկ «բազան»:**

Ինդեքսի ուսումնասիրությունը մյուս կողմից ցույց է տալիս, որ՝

- **Ինդեքսի նվազումը բարձրացնում է Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը, ինչը բացասական երևույթ է Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ֆիզիկական ծավալի աճի տեսակետից:**

Մասնավորապես ինդեքսի ցածր արժեքների տիրույթում (ինդեքսը = 1-3) Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը շատ բարձր է՝ 53%, իսկ ինդեքսի ամենաբարձր արժեքի (ինդեքսը = 6) դեպքում՝ 34% (Գծապատկեր 69.):

Ստացվում է հակասական վիճակ. ազգային ինքնության համախմբվածության ինդեքսի նվազեցումը երկիմաստ է: Մի կողմից այն բարձրացնում է ազգային վերնախավի հանդուրժողականությունը «թերարժեք» ազգակիցների նկատմամբ, իսկ մյուս կողմից կրճատում է էթնո-սոցիո-մշակութային համակարգը:

68. Ազգային ինքնության միջուկի համախմբվածության ինդեքսի միջին արժեքը ենթամշակութային խմբերում



69. Ազգային ինքնության համախմբվածության ինդեքսի ազդեցությունը արտագաղթի դիրքորոշման վրա



70. Ազգային ինքնության միջուկի բաղադրիչները ենթամշակութային խմբերում



71. Հայաստանի երիտասարդության գիտակցությունում ազգային ինքնության միջուկի կառուցվածքը



Այնուամենայնիվ, ազգային ինքնության միջուկի ավելի խորը վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունի այդ հակասության հաղթահարման ուղի:

Ազգային ինքնության միջուկի բաղադրիչների գործոնային վերլուծությունը ցույց տվեց, որ հայ երիտասարդների գիտակցությունում այն **կազմված է երկու շերտից** կամ **աշխարհայացքային համալիրներից**:

Աշխարհայացքային առաջին համալիրում կարևորվում է **«արյունը»** կամ **«ժառանգականությունը»,** այսինքն՝ անձի հոր և մոր (միաժամանակ) հայ լինելը, որի հիման վրա առաջին գործոնն անվանված է **Գ.1. «Ազգային ինքնության «ժառանգական» գործոն»** (Գծապատկեր 71.): Այս աշխարհայացքային համալիրում անձը հայ է իր ծնունդով (նույնականացումը կախված չէ իրենից):

Երկրորդ աշխարհայացքային համալիրում կարևորվում է ազգին պատկանելության **«մշակութային»** բաղադրիչը, երբ անձը նույնականացվում է որպես հայ, եթե նա իրեն հայ է համարում, խոսում է հայերեն, Հայաստանը համարում է իր միակ հայրենիքը և պատկանում է Հայ Առաքելական եկեղեցուն: Երկրորդ գործոնն անվանվել է **Գ2. «Ազգային ինքնության մշակութային գործոն»:**

Հաշվի առնելով, որ ազգային ինքնության միջուկը երկշերտ է, հարց է առաջանում, թե **Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշման վրա ինչպե՞ս են ազդում ազգային ինքնության միջուկի բաղադրիչները:** Պարզվել է, որ՝

- **Ազգային ինքնության միջուկի «ժառանգականության» բաղադրիչի խարխլումը [վիճակագրորեն նշանակալի չափով] չի փոխում Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը**:

Սակայն՝

- **Ազգային ինքնության միջուկի «մշակութային» բաղադրիչը մեծ ազդեցություն ունի Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշման վրա**:

Մասնավորապես, եթե այն երիտասարդների խմբում, ովքեր համարում են, որ «Իրեն հայ համարելը» պարտադիր պայման է հայ համարվելու համար, Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշում ունի երիտասարդների 36%-ը, ապա այն խմբում, որտեղ երիտասարդները դա պարտադիր պայման չեն համարում, Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշում ունեցողները կազմում են 52%, այսինքն՝ հարաբերակցությունն աճում է 16%-ով: Համանման մեծ ազդեցություն ունեն նաև «Հայ Առաքելական եկեղեցուն պատկանելը» և «Հայաստանն իր միակ հայրենիք համարելը» դրույթները, որոնց պարտադիր պայման չլինելու դիրքորոշումը Հայաստանից ընդմիշտ մեկնելու դիրքորոշումը բարձրացնում է համապատասխանաբար 15%-ով և 11%-ով (Աղյուսակ 19., էջ 88):

Այսպիսով՝ հանգում ենք հետևյալ եզրակացությանը, որ՝

- **Ազգային բարձր մշակույթի յուրացումը ոչ միայն բարձրացնում է Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի որակը, այլև կարող է նպաստել նրա ծավալային աճին:**

Այս արդյունքից ուղղակիորեն դուրս է բերվում Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ծավալային և որակական աճի ռազմավարությունը:

- **Անհրաժեշտ է ազգային [պոտենցիալ] վերնախավերում հզորացնել ազգային բարձր [դասական] մշակույթի յուրացումը:**

Այս դեպքում համակարգային մոտեցման կիրառմամբ հնարավոր է մի կողմից բարձրացնել ազգային հանդուրժողականությունը և միաժամանակ «ժառանգական գործոնի» նվազեցման միջոցով, ինչպես նաև խառնամուսնություններով[88] նպաստել էթնո-սոցիո-մշակութային համակարգի աճին: Նկատենք, որ այս ռազմավարությունը կիրառել են այն ազգերը, որոնք կարողացել են ազգայնացնել համաշխարհային «կրոնները»: Մասնավորապես Իրանը, ազգայնացնելով իսլամը (ստեղծելով շիա ճյուղը), նախ մշակութային հաղթանակ տարավ արաբական[89] և թյուրքական նվաճումների նկատմամբ, իսկ հետո հաղթեց նաև քաղաքականապես: Ռուսական կայսրությունը Ուղղափառ քրիստոնեության (որն արդեն կորցրել էր իր բյուզանդական պետական-գաղափարախոսական հիմքը) վրա հիմնված մշակույթով իր էթնո-սոցիո-մշակութային համակարգը բազմապատկեց կայսրությունում ընդգրկված բազմաթիվ էթնոսների տարրերով: Իսրայելն իր բնակչությունը բազմապատկեց՝ դրա կազմում ընդգրկելով էթնիկ տարբեր ծագում ունեցող հուդայականներին[90]: Հայաստանում քրիստոնեությունն ազգայնացվել է դեռևս 5-րդ դարում, և հաշվի առնելով Հայ Առաքելական եկեղեցու հսկայական հեղինակությունը երիտասարդության շրջանում (Հայ Առաքելական եկեղեցուն վստահում է երիտասարդների 90%-ը)՝ այն ունակ է հզոր գործոն դառնալու այս հարցում: Խնդիրը եկեղեցու ադեկվատ ռազմավարությունների մշակումն է:

88 Միաժամանակ բազմազան դարձնելով էթնոսի գենոֆոնդը:

89 Наубахти ан-Наубахти, ал-Хасан ибн Муса. Шиитские секты. Перевод с арабского, исследование и комментарий С.М. Прозорова. ППВ, XLIII. М., 1973. - Институт Восточных Рукописей РАН.

90 Кестлер А., Тринадцатое колено. Крушение империи хазар и ее наследие. Евразия; 2001.

Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի միասնականության խնդիրը

«Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի» հետազոտական մասում՝ էջ 14-19, նկարագրված են այն սոցիալական տարածությունները (դրանք չափվել են Բոգարդուսի սանդղակով), որոնք, Հայաստանի երիտասարդության ընկալմամբ, ընկած են իր և հայերի տարբեր էթնո-մշակութային խմբերի ու տարբեր ազգերի միջև: Ցույց է տրվել, որ սոցիալական այդ տարածություններն այնքան մեծ են, որ սպառնալիք են Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի միասնականության համար: Ցույց է տրվել նաև, որ երիտասարդության կողմից ընկալվող սոցիալական տարածությունները կազմավորվում են երեք գործոնների ազդեցությամբ.

Գործոն 1. **«Էթնիկ դիֆերենցման գործոն»,** որի ազդեցությամբ սոցիալական տարածություններն աճում են հայերի էթնոմշակութային խմբերի նկատմամբ:

Գործոն 2. **«Իսլամական գործոն»,** որի ազդեցությամբ սոցիալական տարածությունները աճում են իսլամադավան ազգերի նկատմամբ:

Գործոն 3. **«Այլ ազգերի գործոն»,** որի ազդեցությամբ սոցիալական տարածությունները աճում են այլ ազգերի և ռասաների նկատմամբ:

Հիմնավորվել է, որ գոյություն ունեն ռազմավարություններ, որոնք ունակ են նվազեցնելու սոցիալական տարածությունները հայերի էթնոմշակութային խմբերի նկատմամբ՝ առանց էական ազդեցություն գործելու այլ ազգերի նկատմամբ առկա սոցիալական տարածությունների վրա: Բացի դրանից՝ ցույց է տրվել, որ գոյություն ունի համընդհանուր հանդուրժողականության բարձրացման գործոն, որն ունակ է նվազեցնելու սոցիալական տարածությունները և՛ հայերի էթնոմշակութային խմբերի, և՛ այլ ազգերի ու կրոնական խմբերի նկատմամբ: Այժմ փորձենք ուրվագծել ընդհանուր հանդուրժողականության բարձրացման գործոնը և ռազմավարությունը:

Երիտասարդների կողմից ընկալվող սոցիալական տարածությունները դիտարկենք տարբեր ենթամշակութային խմբերում և ազգային ինքնության միջուկի համախմբվածության ինդեքսի տարբեր արժեքների դեպքում (Գծապատկեր 72. և Գծապատկեր 73.):

72. Սոցիալական տարածությունները ենթամշակութային խմբերում

73. Սոցիալական տարածությունների կախվածությունը ազգային ինքնության միջուկի համախմբվածության ինդեքսից



Գծապատկերից երևում է, որ հայերի էթնոմշակութային խմբերի, այլ ազգերի և կրոնական խմբերի նկատմամբ հանդուրժողականությունն ավելի բարձր է ենթամշակութային ինդեքսի բարձր արժեքների դեպքում, ինչից էլ ուղղակիորեն բխում է, որ՝

- **Ընդհանուր հանդուրժողականության գործոնը պարփակված է բարձր մշակույթում:**

Ստացվել է սպասելի արդյունք. այլ հավասար պայմանների դեպքում՝ կիրթ մարդն ավելի հանդուրժող է: Ուրեմն՝

- **Ազգային միասնականության բարձրացման ռազմավարությունը երիտասարդության մշակութայնացումն է հայկական բարձր (դասական) մշակույթի միջոցով:**

Ընդ որում՝ սոցիալական տարածությունները նվազում են նաև ազգային ինքնության միջուկի համախմբվածության ինդեքսի ցածր արժեքների դեպքում (Գծապատկեր 73.): Այսինքն՝

- **Ազգային բարձր մշակույթի միջոցով հասարակության մշակութայնացումն ունիվերսալ ռազմավարություն է Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ընդլայնման և ազգային միասնականության ամրապնդման տեսանկյուններից:**

Առողջ ապրելակերպ. ֆիզիկական և հոգեկան առողջություն

Երիտասարդների առողջ ապրելակերպը, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան առողջությունը կարևոր են ոչ միայն կոնկրետ անձի կյանքի որակի, այլև Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի և ֆիզիկական ծավալի ու որակական բնութագրերի տեսակետերից:

Դիտարկենք երիտասարդների շրջանում ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվելու ինտենսիվությունը՝ որպես առողջ ապրելակերպի կարևորագույն բաղադրիչ, ինչպես նաև ծխախոտի և ալկոհոլի օգտագործումը՝ որպես առողջության հիմնական ռիսկի գործոններ:

Երիտասարդ տղամարդկանց շրջանում ամեն օր կամ շաբաթական մի քանի անգամ ֆիզկուլտուրայով կամ սպորտով զբաղվում է 32%-ը (Գծապատկեր 74.): Կարելի է ենթադրել, որ այդ երիտասարդները մարզիկներ են: Սակայն, տղամարդկանց շրջանում ֆիզկուլտուրայով երբեք չի զբաղվում 40%-ը: Կանանց շրջանում (հավանաբար) մարզուհիներ են ընդամենը 3%-ը, իսկ սպորտով երբեք չի զբաղվում 90%-ը (Գծապատկեր 75.):

- **Ֆիզկուլտուրային և սպորտին կանանց հաղորդակից դարձնելը երիտասարդական խնդիր է:**

Տղամարդկանց շրջանում ֆիզկուլտուրայով չզբաղվելը հարաբերականորեն ավելի բարձր խնդիր է մարզային քաղաքներում, իսկ կանանց շրջանում՝ և՛ քաղաքներում, և՛ գյուղերում (Գծապատկեր 76. և Գծապատկեր 77.):

Ծխախոտի օգտագործումը լուրջ խնդիր է երիտասարդ տղամարդկանց շրջանում. ամեն օր ծխում է նրանց 50%-ը (Գծապատկեր 78.): Կանանց շրջանում ծխելը դեռևս լուրջ խնդիր չէ. ամեն օր ծխում է կանանց 1%-ը: Հարաբերականորեն ավելի շատ են ծխում Երևանում (Գծապատկեր 79.): Հարկ է նշել, որ սպորտով զբաղվելը և ծխելը ոչ շատ ուժեղ, սակայն հակադարձ համեմատական են (Գծապատկեր 83.), այսինքն՝

- **Ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվելը նվազեցնում է ծխելու հավանականությունը:**

74. Տղամարդկանց՝ սպորտով զբաղվելու ինտենսիվությունը



75. Կանանց՝ սպորտով զբաղվելու ինտենսիվությունը



76. Ֆիզկուլտուրայով զբաղվում են ավելի հազվադեպ, քան ամիսը 1 անգամ կամ երբեք չեն զբաղվում, տղամարդիկ



77. Ֆիզկուլտուրայով զբաղվում են ավելի հազվադեպ, քան ամիսը 1 անգամ կամ երբեք չեն զբաղվում, կանայք



78. Ծխող տղամարդիկ



79. Ամեն օր ծխողներն ըստ բնակավայրի տիպի, տղամարդիկ



80. Ալկոհոլի օգտագործում, տղամարդիկ



81. Ալկոհոլի օգտագործում, կանայք



82. Ծխախոտի օգտագործումն ըստ տարիքի, տղամարդիկ



83. Սորտը և ծխախոտի օգտագործումը, տղամարդիկ



84. Ամեն օր ծխողները և սրճարանային ժամանցը, տղամարդիկ



85. Ամեն օր ծխողները ենթամշակութային խմբերում, տղամարդիկ



86. «Ինչպե՞ս եք տեսնում Ձեր առողջությունը»



«Կյանքս էականորեն կբարելավվի»

87. «Հնարավորության դեպքում կցանկանայի՞ք մեկնել արտասահման՝ մշտական բնակություն հաստատելու»



«Այո»

Գծապատկեր 82.-ում տրված է ծխողների քանակը տարիքային խմբերում: Գծապատկերից երևում է, որ տղամարդկանց շրջանում ծխողների քանակն իր առավելագույն նիշին է հասնում 21 տարեկանում, ինչը տղաների մեծ մասի համար համապատասխանում է բանակից զորացրվելու տարիքին: Հետևաբար կարելի է ենթադրել, որ տղամարդկանց շրջանում ծխելու սովորությունը ձևավորվում է բանակում, որը հետագայում շատ քիչ է նվազում: Այսինքն՝

- **Հայաստանի երիտասարդ տղամարդկանց շրջանում ծխողների քանակը նվազեցնելու առավել արդյունավետ ուղին այդ քանակի աճի զսպումն է բանակում:**

Հաշվի առնելով բանակային իրողությունները՝ ակնհայտ է, որ դա շատ դժվար է, սակայն բանակում սպորտով զբաղվելը և (բուհական) հեռաուսուցման ներդրումը թերևս կարող են նպաստել այդ աճի զսպմանը:

Ամեն օր ծխողների քանակը համեմատաբար ավելի բարձր է ամեն օր սրճարան այցելողների և սրճարան երբեք չայցելողների շրջանում (Գծապատկեր 84.): Հետևաբար ժամանցի այդ վայրերում անհրաժեշտ է ավելի ինտենսիվ հակածխախոտային միջոցառումներ իրականացնել:

Ծխախոտի օգտագործումը նվազում է ենթամշակութային պատկանելության ինդեքսի բարձրացմանը զուգընթաց: Հետևաբար՝

- **Երիտասարդության մշակութային մակարդակի բարձրացումն ինքնին պարունակում է ծխախոտի օգտագործումը նվազեցնող կոգնիտիվ տարրեր:**

Արժե ուշադրություն դարձնել նաև այն տվյալների վրա, որ՝

- **ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվելը նպաստում է երիտասարդության ընդհանուր տրամադրությունների բարելավմանը** (Գծապատկեր 86.),
- **ինչն էլ իր հերթին նվազեցնում է ընդմիշտ արտասահման մեկնելու դիրքորոշումը** (Գծապատկեր 87.),
- **հետևաբար զանգվածային ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը ողղակիորեն և անուղղակիորեն նպաստում է Հայաստանի էթնո-սոցիոմշակութային համակարգի խնդիրների լուծմանը:**

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



Չի բացառվում, որ Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգին վերաբերող այս աշխատանքում դիտարկվող խնդիրները կարող են լուծվել «սպոնտան» կերպով, այսինքն՝ արտաքին դեստրուկտիվ ազդակները կարող են հակազդեցություն ստանալ կամ տարրալուծվել համակարգի տարաբնույթ և հիերարխիկ տարբեր մակարդակներում գտնվող ստրուկտուրաների և դրանց սիներգիկ փոխազդեցության արդյունքում: Այնուամենայնիվ, **զարգացած** էթնո-սոցիո-մշակութային համակարգերի բացարձակ մեծամասնությունն ունի այդ խնդիրների լուծման հատուկ ենթահամակարգ՝ **պետությունը,** որի որակն ու արդյունավետությունը միաժամանակ այդ համակարգի զարգացածության գնահատման չափորոշիչներ են:

Լիբերալ գաղափարախոսության շրջանակում ենթադրվում է պետության՝ որպես ամբողջության և առանձին պետական ինստիտուտների գործառույթների կրճատում: Այդ մոտեցումը համապատասխանում էր XX դարի երկրորդ կեսի իրողություններին, երբ աշխարհամակարգային հեգեմոնի դիրքն իրապես չէր վիճարկվում աշխարհ-համակարգի որևէ այլ սուբյեկտի կամ սուբյեկտների խմբի կողմից: Այդ պայմաններում հեգեմոնի նախանշած շրջանակում ձևավորվել էին միջազգային մասնագիտացված բազմաթիվ կազմակերպություններ, որոնք ապահովված էին անհրաժեշտ ռեսուրսներով և ունակ էին կյանքի կոչելու հեգեմոնի կողմից ձևակերպվող դիրեկտիվները: «Գլոբալացում» հասկացության օպերացիոնալ բովանդակությունը հիմնված էր այդ կառուցվածքի թվացյալ հարատևության կանխադրույթի վրա: Առաջացավ նույնիսկ «պատմության վերջը» հասկացությունը:

Սակայն, XXI դարում, երբ աշխարհ-համակարգի հեգեմոնի բացարձակ գերիշխանության խարխլումն արդեն ակնհայտ էր դարձել, և դրա հետևանքով, գլոբալացման պրոցեսներին զուգընթաց, սկսեցին հզորանալ ռեգիոնալացման պրոցեսները, պարզվեց, որ միջազգային կազմակերպությունները, որոնք արդյունավետ էին հեգեմոնի առկայության պայմաններում, նրա դիրքերի թուլացմանը զուգընթաց՝ սկսում են անարդյունավետ (դիսֆունկցիոնալ) դառնալ:

Ներկայումս գերտերություններից յուրաքանչյուրն «իր» տարածաշրջանում **արդեն** սկսել է առաջնորդության լուրջ հայտեր ներկայացնել, իսկ գլոբալացում հասկացության բովանդակությունը, նրանց մեկնաբանմամբ, նշանակում է առանձին մեծ (բավարար չափով ինքնաբավ) տարածքների համագործակցություն[91]: Այս պարագայում նրանք որպես ապագա հեգեմոն են պատկերացնում նրան, ով կկոնսոլիդացնի և կառաջնորդի որոշակի տարածաշրջան (օրինակ՝ Հյուսիսային Ամերիկան):

Այս իրավիճակը XXI դարի հակասությունների կիզակետն է: Հեգեմոնի հիմնական ռազմավարությունը գլոբալ աշխարհ-համակարգի այնպիսի նոր վերաձևավորումն է, որի արդյունքում չեն լինի [բավարար չափով] ինքնաբավ տարածքներ և տարածաշրջանային գերտերություններ, ինչի արդյունքում էլ նա իր առաջնորդությունը կկարողանա պահպանել յուրաքանչյուր առանձին տարածաշրջանում: Ալտերնատիվ (զուգահեռ և բացահայտորեն չհայտարարվող) ռազմավարություն է նոր ինքնաբավ տարածաշրջանների զարգացման պոտենցիալի տոտալ նվազեցումը, ինչը բավարար կառավարելի կդարձնի և՛ յուրաքանչյուր տարածաշրջանն ամբողջությամբ, և՛ դրանցից յուրաքանչյուրի պոտենցիալ առաջնորդներին: Կարճ ասած՝ այդ ռազմավարության բաղադրիչը մեծ պետությունների մասնատումն է:

Բնականաբար, այդ ռազմավարությունն առաջացնում է տարածաշրջանային գերտերություն-

91 Ըստ էության, նոր պայմաններում արդիական են դարձել Ֆիխտեի 200-ամյա վաղեմության գաղափարները:

ների հակազդեցությունը, որի կազմակերպման և իրականացման գործիքը նրանց **պետական կառավարման մեքենան է:** Սա նշանակում է, որ՝

- **Չնայած գեոինֆորմացիոն դաշտի կողմից տարածվող այն քարոզչությանը, թե կրճատվում են պետությունների դերը և գործառույթները, այնուամենայնիվ պետության՝ գոնե տարածաշրջանային գերտերությունների մակարդակով ունեցած նշանակությունն աստիճանաբար աճելու է:**

Հետևաբար ծայրամասային պետությունները նույնպես ստիպված են լինելու մշակել «իրենց» էթնո-սոցիո-մշակութային համակարգերի պահպանման, պաշտպանության և հզորացման ռազմավարությունները: Դրա հրատապությունն աճում է, քանի որ այդ [հարաբերականորեն թույլ] պետությունների հասարակությունների բիզնես սեկտորների ու քաղաքացիական մշակույթների անբավարար զարգացածությունը թույլ չի տալիս, որ այդ ոլորտներում ստեղծված համապատասխան կառույցները վերածվեն լիարժեք ինստիտուտների և կոնկրետ ոլորտում ունակ լինեն փոխարինելու պետության **նույնիսկ անարդյունավետ** կառույցներին:

Եթե խոսենք քաղաքացիական հասարակության մասին, ապա դրա ձևավորման համար անհրաժեշտ է բավարար և բավականին բարձր բարեկեցությամբ միջին շերտ, որն այդպիսի հասարակության գործառույթների իրականացման գործում գիտակցում է իր հասարակական դերը, ունի բավարար ազատ ժամանակ, ինտելեկտուալ-կազմակերպչական ունակություններ և ռեսուրսներ[92]: Այդ պատճառով սույն աշխատանքում ենթադրվում է, որ ոչ բավարար զարգացած տնտեսություն և քաղաքացիական հասարակություն ունեցող պետությունում կառավարությունը դեռևս երկար ժամանակ «ստիպված» է լինելու տանել հասարակության կառավարման և հասարակական հիմնահարցերի ներդաշնակեցման բեռը: Ահա թե ինչու Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի և իր պետության հարաբերությունները հույժ կարևոր են առաջինի հիմնախնդիրների լուծման համար:

Հաջորդիվ նախ դիտարկված են Հայաստանում պետական կառավարման զարգացման միտումները, որից հետո՝ Հայաստանի երիտասարդության դիրքորոշումները պետության և պետական ռազմավարությունների նկատմամբ, ինչպես նաև այն, թե այդ դիրքորոշումներն ինչպես են ազդում Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի դինամիկայի վրա:

Պետական կառավարման որակի միտումներն ըստ միջազգային ինդեքսների

Սկսած 2001 թվականից, երբ Հայաստանում արդեն իրականացվել էին պետության դերի և գործառույթների **սկզբունքային և հիմնարար փոփոխությունները**, ձևակերպվեց պետական կառավարման արդյունավետության խնդիրը: Վերջին 5 տարիների ընթացքում այդ ոլորտում տեղի են ունեցել նշանակալի փոփոխություններ, որոնք արտահայտվել են նաև միջազգային

92 Նշենք, որ համանման գործողության կամ միջոցառման կազմակերպման համար հասարակական կազմակերպությունները, որպես կանոն, ծախսում են ավելի շատ ռեսուրսներ [և, որպես կանոն, օտարերկրյա], քան պետական մարմինները, որոնք միաժամանակ իրականացնում են նաև բազմաթիվ այլ գործառույթներ: Այս տեսակետից հարկ է նշել ***կարևորագույն տեխնիկական խնդիր***. ներկայումս գործողությունների ազդեցության գնահատման ինդիկատորների գործող համակարգերը, որպես կանոն, չեն պարունակում գործողությունների ծախս-արդյունավետության ***ադեկվատ*** ինդիկատորներ, ինչի հետևանքով պետական և հասարակական կառույցների արդյունավետության բավարար հիմնավորված համեմատությունը դեռևս խնդրահարույց է:

գնահատականների միտումներում: Այդ փոփոխությունների դինամիկան մասնավորապես դիտարկենք Համաշխարհային բանկի ինստիտուտի պետական կառավարման որակի (ՀԲԻ) և Ֆրիդոմ Հաուս (ՖՀ) կազմակերպության ինդեքսների[93] շրջանակում[94]:

Այդ ինդեքսներն են.

1. «Կարգավորման որակի ինդեքս» (ՀԲԻ),
2. «Կառավարման արդյունավետության ինդեքս» (ՀԲԻ),
3. «Ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքս» (ՀԲԻ),
4. «Օրենքի գերակայության ինդեքս» (ՀԲԻ),
5. «Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության ինդեքս» (ՀԲԻ),
6. «Կոռուպցիայի վերահսկողության ինդեքս» (ՀԲԻ),
7. «Քաղաքական իրավունքների ինդեքս» (ՖՀ),
8. «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» (ՖՀ):

Ինդեքսների դինամիկան, սկսած 2000 թվականից մինչև դրանց վերջին հաշվարկված տարեթվերը, ներկայացված են Գծապատկեր 88. և 89.-ում[95]: Գծապատկերների վրա ներկայացված են ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված թիրախային արժեքներն ինչպես 2012թ. համար, այնպես էլ 2000-2010թթ. ընթացքում: Ստորև տրված են յուրաքանչյուր ինդեքսի բովանդակության նկարագրությունը:

«Կարգավորման որակի ինդեքս» (ՀԲԻ): Արտապատկերում է հասարակական այն ընկալումները, թե կառավարությունը որքանով է ունակ ձևակերպելու և իրականացնելու մասնավոր սեկտորի զարգացմանը նպաստող որակյալ քաղաքականություններ և կանոնակարգեր: Ցուցիչի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ցուցիչի արժեքը, այնքան բարձր է երկրում կարգավորման որակը:

Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրում 2012թ. համար ցուցիչի թիրախ արժեքը սահմանված է 0.37 միավոր:

«Կառավարման արդյունավետության ինդեքս» (ՀԲԻ): Արտապատկերում է հասարակական այն ընկալումները, որոնք վերաբերում են պետության կողմից մատուցվող հանրային և քաղաքացիական ծառայությունների որակին, քաղաքական ճնշումներից այդ ծառայությունների անկախությանը և իշխանությունների կողմից քաղաքականությունների ձևակերպմանն ու իրականացման որակին: Ցուցիչն արտապատկերում է նաև այն ընկալումները, թե իշխանությունները որքանով են միտված իրենց իսկ ձևակերպած քաղաքականությունների իրա-

93 http://info.worldbank.org/governance/wgi/index.asp.

94 Այդ ինդեքսները ՀՀ 2009-2012թթ. Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված են որպես այդ ծրագրի արդյունավետության գնահատման ինդիկատորներ:

95 Հարկ է նշել, որ Համաշխարհային բանկի ինստիտուտի յուրաքանչյուր տարվա ինդեքսների արժեքների հաշվարկից հետո իրականացվում է նախորդ տարիների արժեքների վերահաշվարկ, ինչի հետևանքով յուրաքանչյուր ինդեքսի արժեքների վերջին հրապարակված դինամիկ շարքը որոշ չափով տարբերվում է նախորդ տարվա հրապարակված դինամիկ շարքից: Ինդեքսների մեթոդաբանության հետ կապված՝ տե՛ս http://info.worldbank.org/governance/wgi/resources.htm:

կանացմանը: Ցուցիչի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ցուցիչի արժեքը, այնքան երկրում բարձր է կառավարման արդյունավետությունը:

Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրում 2012թ. համար ցուցիչի թիրախ արժեքը սահմանվել է 0.15:

«Ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքս» (ՀԲԻ): Արտապատկերում է այն ընկալումները, թե երկրի քաղաքացիները որքանով են ունակ մասնակցելու իրենց քաղաքական իշխանությունների ընտրությանը (կազմավորմանը), ինչպիսին է խոսքի, միավորումներ կազմելու և լրատվամիջոցների ազատությունը: Ցուցիչի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ցուցիչի արժեքը, այնքան երկրում ավելի բարձր են հաշվետվողականությունն ու ձայնի լսելիությունը:

Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրում 2012թ. համար ցուցիչի թիրախ արժեք է սահմանվել 0.47-ը:

«Օրենքի գերակայության ինդեքս» (ՀԲԻ): Արտապատկերում է այն ընկալումները, թե **պետական**, **գործարար** և **քաղաքացիական** կազմակերպություններն ու անձինք որքանով են վստահում և միաժամանակ հետևում օրենքին. մասնավորապես որքանով են նրանք կատարում գործող պայմանագրերի դրույթները, որքանով է պաշտպանված սեփականության իրավունքը, ոստիկանությունն ու դատարանները որքանով են հետևում օրենքի պահանջներին, որքանով են հավանական հանցագործություններն ու բռնությունները: Ինդեքսի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ինդեքսի արժեքը, այնքան երկրում ավելի բարձր է օրենքի գերակայությունը:

«Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության ինդեքս» (ՀԲԻ): Արտապատկերում է քաղաքացիների այն ընկալումները, թե որքանով են հավանական իշխանության ապակայունացումը, իշխանափոխությունը բռնի կամ ոչ սահմանադրական եղանակով, այդ թվում՝ նաև քաղաքական դրդապատճառներ ունեցող բռնություններն ու ահաբեկչությունը: Ցուցիչի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ցուցիչի արժեքը, այնքան երկրում ավելի բարձր է քաղաքական կայունությունը, և ցածր են քաղաքական ճնշումները:

Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրում 2012թ. համար որպես ցուցիչի թիրախ արժեք սահմանված է 0.23-ը:

«Քաղաքական իրավունքների ինդեքս» (ՖՀ): Արտապատկերում է երկրում ընտրական գործընթացների, քաղաքական բազմակարծության և մասնակցության, ինչպես նաև կառավարության գործունեության իրավիճակը: Ցուցիչի արժեքը փոխվում է 1-7 միջակայքում: Որքան ավելի բարձր է ցուցիչի արժեքը, այնքան երկրում ավելի **անբարենպաստ** է ընտրական գործընթացների, քաղաքական բազմակարծության, մասնակցության և կառավարության գործունեության իրավիճակը:

Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրում 2012թ. համար որպես ցուցիչի թիրախ արժեք սահմանվել է 2-ը:

«Քաղաքացիական ազատությունների ինդեքս» (ՖՀ): Արտահայտում է խոսքի և խղճի, ասոցիացիաներ կազմավորելու և դրանց գործունեության ազատության, օրենքի գերիշխա-

նության և անձի ազատության ոլորտներում առկա իրավիճակը: Ցուցիչը չափվում է 1-7 սանդղակով, որտեղ 7 արժեքը բնորոշում է քաղաքացիական ազատությունների ամենացածր մակարդակը: Որքան ավելի մեծ է ցուցիչի արժեքը, այնքան երկրում ավելի անբարենպաստ է խոսքի, խղճի, ասոցիացիաներ կազմավորելու և դրանց գործունեության ազատության, ինչպես նաև օրենքի գերիշխանության և անձի ազատության ոլորտներում առկա իրավիճակը:

Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրում 2012թ. համար որպես ցուցիչի թիրախ արժեք սահմանվել է 2-ը:

Գծապատկերներից երևում է, որ Հայաստանում 1996-2010թթ. ընթացքում **աճել է կառավարության՝ քաղաքականություններ ձևակերպելու ունակությունը** մասնավոր սեկտորի զարգացման ոլորտում («Կարգավորման որակի ինդեքս»), աճել է կառավարության կողմից հանրային ծառայությունների մատուցման որակը («Կառավարման արդյունավետության ինդեքս»):

2009-2011թթ. ընթացքում **աճել է «Ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքսի»** արժեքը, չնայած 2011 թվականին, 1998 թվականի համեմատ, այն ավելի ցածր է եղել:

2009-2011թթ. ընթացքում **նվազել է «Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության ինդեքսը»,** սակայն 2011 թվականին այն ավելի բարձր էր, քան 1998-2002թթ.:

«Կոռուպցիայի վերահսկողության ինդեքսը», ըստ էության, չի փոփոխվել:

«Քաղաքացիական ազատությունների ինդեքսը» չի փոխվել 15 տարուց ավելի, իսկ **«Քաղաքական իրավունքների ինդեքսը»** նվազել է 1993 թվականից սկսած, իսկ վերջին երեք տարիներին եղել է նախավերջին աստիճանի վրա:

Ինդեքսների **1996-2010թթ**. արժեքների մակարդակների և դինամիկայի միտումների հիման վրա Հայաստանում պետական կառավարման համակարգի զարգացման վերաբերյալ կարելի է կատարել հետևյալ շատ ընդհանուր եզրակացությունները.

- **Աճել է պետության ունակությունները կառավարման և կարգավորման ոլորտներում:**
- **Պետությունում նվազել է քաղաքական իրավունքների աստիճանը:**
- **Պետության և հասարակության կողմից օրենքների կատարումը** (= քաղաքական մշակույթը)**, ինչպես նաև քաղաքացիական ազատությունների աստիճանը էականորեն չեն փոխվել:**

Այլ կերպ ասած՝

- **Պետական կառավարման որակն աճել է, հասարակական բարքերը չեն բարելավվել, իսկ հասարակությունն օտարվել է քաղաքականությունից:**

Այժմ դիտարկենք, թե սոցիոլոգիական տվյալներն արդյո՞ք համապատասխանում են նշված ինդեքսներից բխող եզրակացություններին:

88.


2.5
2.0
1.5
1.0
0.5
0
-0.5
-1.0
-1.5
-2.0
-2.5
1996
1998
2000
2002
2006
2012
Կարգավորման որակի ինդեքս
Կառավարման արդյունավետության ինդեքս
Կոռուպցիայի վերահսկողության ինդեքս
Օրենքի գերակայության ինդեքս
Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության ինդեքս
Ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքս

89.


6
5
4
3
2
Քաղաքական իրավունքներ
Քաղաքացիական ազատություններ

Քաղաքական մշակույթ

Պետության և հասարակության փոխհարաբերություններն ու դրանց բնույթը վերաբերում են ազգային-պետական համակարգի քաղաքական մշակույթի ոլորտին: Ի՞նչ է քաղաքական մշակույթը: Դրա առավել վաղ և տարածված սահմանումներից է Գ. Ալմոնդի ու Ս. Վերբայի սահմանումը: Նրանք քաղաքական մշակույթը սահմանում են որպես հասարակության կամ անձի քաղաքական համակարգի և դրա դերակատարների կայուն և կրկնվող իմացական, գնահատող և հուզական դիրքորոշումների համախմբություն[96]: Չնայած, որպես կանոն, հասարակության լայն շերտերի և վերնախավերի քաղաքական մշակույթներն ուսումնասիրվում են առանձին-առանձին, սակայն ազգային համակարգի քաղաքական մշակույթը դրանց միասնությունն է:

Հասարակության քաղաքական մշակույթն այն միջավայրն է, որտեղ տեղի են ունենում քաղաքական գործընթացները, և հետևաբար այդ գործընթացների և գործողությունների արդյունավետությունն ուղղակիորեն կախված է քաղաքական մշակույթի բնույթից ու բնութագրերից: Հասարակության քաղաքական մշակույթն է, որ յուրօրինակ և իրեն ներհատուկ կերպով մոդիֆիկացնում է սոցիալական ինստիտուտների տեսական [ենթադրյալ] դերը և կենսագործունեությունը:

Քաղաքական մշակույթի դինամիկան հետխորհրդային տարածքում

1986-1991թթ. ԽՍՀՄ վերակառուցումն իրականացվում էր **«նախ՝ քաղաքական ժողովրդավարացում, հետո՝ տնտեսական լիբերալացում»** ռազմավարությամբ: ԽՍՀՄ-ի ներսում ժողովրդավարության գաղափարախոսները և համապատասխան քաղաքական շրջանակները վերակառուցումն ընկալում էին որպես **հասարակարգի վերակառուցում,** սակայն աշխարհ-համակարգի կենտրոնի համար ԽՍՀՄ քաղաքական ժողովրդավարացումն ու տնտեսական ազատականացումը միաժամանակ **աշխարհ-համակարգի վերակառուցման** և՛ բաղադրիչ էին, և՛ գործիք**:** Ռազմավարության կիրառման արդյունքում ԽՍՀՄ-ը փլուզվեց[97]:

Հատկանշական է, որ 1991թ. հետո հետխորհրդային ոչ մի հանրապետությունում խորհրդարանական քաղաքական ռեժիմ չհաստատվեց. բոլոր հանրապետություններում կազմավորվեցին կենտրոնացված նախագահական քաղաքական ռեժիմներ: Դրանք աշխարհ-համակարգի կենտրոնի քաղաքական և ֆինանսական աջակցությունը ստանում էին այնքան, որքան անհրա-

96 Almond G., Verba S., The Civic Culture: Political Atitudes and Democracy in Five Nations. Princetone, N.J.: Princetone University Press, 1963.

97 Տնտեսական հարաբերությունների փոփոխման ալտերնատիվ ռազմավարությունների հնարավորության մասին էին վկայում ոչ միայն տեսական հայեցակարգերը, այլև ՉԺՀ կոնկրետ ռազմավարությունը: Այնտեղ հասարակարգային անցումն իրականացվել է [և շարունակում է իրականացվել] հակառակ ռազմավարությամբ՝ «տնտեսության լիբերալացում՝ քաղաքական խիստ վերահսկողությամբ»: Եվ եթե ԽՍՀՄ-ի դեպքում հասարակարգային անցումը միաժամանակ նշանակեց նաև աշխարհամակարգային անկում՝ միջնամասից դեպի ծայրամաս, ապա ՉԺՀ-ի դեպքում հասարակարգային անցումը (որը, ի դեպ, սկսվել էր ավելի շուտ, քան ԽՍՀՄ-ում՝ 1979 թ-ից՝ Դեն Սյաո Պինի ղեկավարության շրջանում) **ուղեկցվեց աշխարհամակարգային դիրքի բարձրացմամբ**: **Ինչպես 1979-2012թթ. ընթացքում, այնպես էլ ներկայում և տեսանելի ապագայում տնտեսության նկատմամբ քաղաքականության գերիշխանությունը մնում է ՉԺՀ բոլոր քաղաքականությունների առանցքը**: Հարկ է նաև նշել, որ գոյություն ունեն ժողովրդավարության ալտերնատիվ հայեցակարգեր, որոնց և՛ բովանդակությունը, և՛ կազմավորման տեխնոլոգիան ու ընթացքն ավելի են համապատասխանում արևելյան քաղաքական մշակույթով կամ այդպիսի հզոր բաղադրիչ ունեցող (ինչպես Հայաստանում) հասարակություններին: Տե՛ս՝ Имам Хомейни, Последнее послание: Политико-религиозное завещание. – Институт творчества Имама Хомейни, Тегеран. 1991.

ժեշտ էր նորանկախ պետություններում հասարակարգային անցումները շարունակելու համար:

Նախագահական քաղաքական ռեժիմների կազմավորումն ուներ իր ներքին տրամաբանությունը և դրա վրա հիմնված ռազմավարությունները: Նորանկախ պետությունների՝ ներքին հարցերում ուժեղ, իսկ արտաքին հարցերում թույլ կենտրոնացված քաղաքական համակարգերը համապատասխանում էին այն դերին, որ տնտեսական, հասարակական կամ մշակութային բոլոր շերտերին լավագույն կերպով փոխանցում էին արտաքին վերակազմավորող ազդեցությունները: Խորհրդարանական կառավարման դեպքում այդ փոխանցումը խոչընդոտների կհանդիպեր պառլամենտարիզմի իներցիոն բնույթի հետևանքով. հարկ կլիներ հարցերը քննարկել տարբեր գաղափարախոսություններ ունեցող խորհրդարանական քաղաքական ուժերի հետ[98]:

Այդուհանդերձ, հետխորհրդային ամբողջ տարածքում նորանկախ նախագահական քաղաքական ռեժիմների կազմավորման **հիմնական բովանդակությունը նոր սեփականատերերի՝ տնտեսական վերնախավի կազմավորումն էր, որը հեռանկարում պետք է իր գերիշխանությունը հաստատեր քաղաքական իշխանության նկատմամբ:** Այս խորապատկերում նախագահական համակարգերն ունեն իրենց կոնկրետ տրամաբանությունն ու գործառույթը: Դրանք արդյունավետ են ընդդիմադիր քաղաքական խմբավորումների չեզոքացման տեսակետից: Մյուս կողմից ազգային հարստության սեփականաշնորհումը և տնտեսական վերնախավերի կազմավորումը ոչ միայն գլոբալ, այլև լոկալ կարևորագույն խնդիրներ էին:

Հետխորհրդային բոլոր հանրապետություններում տնտեսական նոր հարաբերությունների անցման տեխնոլոգիան **շոկային թերապիան** էր, քանի որ այն **աշխարհամակարգային անցման հիմնական նպատակի իրականացման առավել արդյունավետ և փորձարկված տեխնոլոգիան էր:** Մյուս կողմից շոկային թերապիան դարձավ նաև **անցումային հասարակություններում քաղաքական մշակույթի կազմալուծումը և վերակազմավորումը պայմանավորող հանգուցային գործոնը:**

Այդ գաղափարախոսությամբ շուկայական անցումը կատարած պետությունները, ըստ էության, տնտեսական կոլապսից խուսափելու շանսեր չունեին: Դրա մասին են վկայում ամերիկյան և խորհրդային մի շարք հեղինակավոր այն տնտեսագետների վերլուծությունները, զգուշացումներն ու կանխատեսումները, ովքեր, սկսած առնվազն 1990 թվականից, զգուշացրել և կանխատեսել են ինչպես ազատ շուկային անցնելու վտանգները[99], այնպես էլ **շոկոթերապիկ գաղափարախոսությամբ անցման արդյունքում տնտեսական կոլապսի անխուսափելիությունն ու դրա սոցիալական բացասական հետևանքները**: Այդ գիտնականների թվում էին տնտեսագիտության ոլորտի Նոբելյան հինգ մրցանակակիրներ՝ ամերիկացիներ Ռ. Լ. Կլեյնը (Փենսիլվանիայի համալսարան), Կ. Ջ. Էրոուն (Ստենֆորդի համալսարան), Վ. Վ.

98 Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ յուրաքանչյուր նորանկախ հանրապետություն լուրջ փաստարկներ ուներ՝ ի օգուտ իշխանության կենտրոնացման: Հայաստանում այդ փաստարկը Արցախյան պատերազմն էր, որը, բնականաբար, պահանջում էր կենտրոնացված կառավարում:

99 Ամերիկացի տնտեսագետ Ջ. Կ. Գելբրայթը 1990 թվականի փետրվարին «Լիտերատուրնայա գազետա»-յին տված հարցազրույցում նշել է. «Նախ կուզեի խորհուրդ տալ, որպեսզի դուք որոշակի զսպվածություն ցուցաբերեք Արևմուտքից տրվող տնտեսական հանձնարարականների նկատմամբ: Որքանով որ կարող եմ դատել մամուլի հրապարակումներից, այդ հանձնարարականները տալիս են այն մարդիկ, որոնց կույր հավատը ազատ շուկայի գաղափարախոսության նկատմամբ և այն համոզվածությունը, թե պետությունը ոչ մի դերակատարում չպետք է ունենա տնտեսական կյանքում, կործանարար կլինեին նաև մեզ [ամերիկացիներիս] համար, եթե մենք նրանց լսեինք:» Гелбрайт Д. К., Мы уже преодолеваем эпоху капитализма и социализма // Литературная газета. 14 февраля 1990 г., Интервью с Ф. Бурлацким.

Լեոնտևը (Նյու Յորքի համալսարան), Դ. Ս. Նորտը (Վաշինգտոնի համալսարան) և Ջ. Տոբինը (Յելի համալսարան)[100]:

Այն հարցի սոցիոլոգիական վերլուծությունը, թե ինչո՞ւ Ռուսաստանում և հետխորհրդային ամբողջ տարածքում[101], այնուամենայնիվ, կիրառվեց ազատ շուկայի և դրան անցման շոկոթերապիկ մեթոդը, տրված է Ն. Ա. Շմատկոյի կողմից[102]: Նա ցույց է տվել, որ ինչպես ազատ շուկայական գաղափարախոսության, այնպես էլ դրա մեթոդի և անցումն իրականացնողների ընտրությունն ունեցել է քաղաքական հիմքեր, ինչը համապատասխանում է աշխարհամակարգային վերլուծության հարացույցի դրույթներին և կանխատեսումներին:

Վերոնշյալ գլոբալ և լոկալ նպատակների իրականացման հայաստանյան յուրահատկություններն են, որ հիմնականում պայմանավորել են հետխորհրդային 20-ամյակի քաղաքական գործընթացների ներքին տրամաբանությունը, ինչն էլ իր հերթին **Հայաստանում և Հայաստանի երիտասարդության շրջանում ձևավորել է ներկայումս առկա կայուն և կրկնվող քաղաքական դիրքորոշումները, որոնց համախմբությունը կոչվում է քաղաքական մշակույթ**:

Անցումային **տարիներին Հայաստանում կառավարման որակի և քաղաքական մշակույթի փոխհարաբերություններում տեղի է ունեցել որակների փոխատեղում**: Եթե անցումային 20-ամյակի սկզբում հասարակությունն ուներ զարգացած մասնակցային քաղաքական մշակույթ, իսկ կառավարման որակը բավականին ցածր էր, ապա ժամանակաշրջանի վերջում, երբ պետական կառավարման որակն անհամեմատ աճել էր, հասարակության գերակշիռ մասը (88%) արդեն հաստատվել էր հպատակային քաղաքական մշակույթում[103], որի հիմնական բնութագրերից է օտարվածությունը քաղաքական համակարգից: Դրա հետևանքով **Հայաստանում կառավարման որակի և արդյունավետության բնութագրերի՝ վերջին տարիներին արձանագրված օբյեկտիվ բարեփոխումներն «անտարբերությամբ» են ընկալվում հասարակության մեծ մասի կողմից (տե՛ս՝ Բազային արժեքներ ենթաբաժինը):**

Այնուամենայնիվ, արդեն չափահաս են և քաղաքական կյանքին մասնակցելու իրավունք ունեն **նոր հասարակության մարդիկ:** Նրանց բազային արժեքների վրա հիմնված աշխարհայացքը (տե՛ս՝ ՄՇԱԿՈՒՅԹ բաժինը), այդ թվում՝ տնտեսական և սոցիալական վիճակի ու Հայաստանի քաղաքական համակարգի նրանց ընկալումները, երիտասարդության շրջանում առաջացնում են սոցիալ-հոգեբանական լարումներ, որոնք Հայաստանի ազգային-պետական համակարգի վրա արտաքին բացասական ազդեցությունների համար կարող են հարատև հիմք դառնալ:

Այժմ դիտարկենք, թե ինչպիսին են Հայաստանի երիտասարդության քաղաքական մշակույթի

---

100 1994 թվականին նշված գիտնականները և բազմաթիվ այլ հեղինակավոր տնտեսագետներ (որոնց թվում՝ Ջ. Կ. Գելբրայթը՝ Հարվարդի համալսարանից, Մ. Դ. Ինտրիլիգեյտորը՝ Կալիֆորնիայի համալսարանից, Ի. Ադելմանը՝ Բերկլիի համալսարանից, Դ. Մ. Յաֆֆեն՝ Բերկլիի համալսարանից, ռուս տնտեսագետներ Լ. Ի. Աբալկինը, Ս. Շատալինը, Գ. Ի. Շմելյովը, Ս. Վ. Գլազևը, Ս. Ա. Սիտարյանը, Ա. Դ. Նեկիպելովը, Դ. Ս. Լվովը, Գ. Ա. Արբատովը և այլն) հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որում տնտեսագիտական տեսակետից ընդհանրացրել են շոկոթերապիկ տնտեսական անցման բոլոր բացասական կողմերը և նկարագրել շուկայական տնտեսության անցման այլընտրանքային բարեփոխումների մի շարք հայեցակարգեր: Проблемы прогнозирования, N 4, 1994.

101 Բացի Բելառուսից, որը 1994թ. հրաժարվեց շոկոթերապիկ անցման ռազմավարությունից:

102 Шматко Н. А., «Топосы» российской экономической реформы: от ортодоксального марксизма к радикальному либерализму. 2002. Интернет ресурс: http://sages.isras.ru/RUS/publ/TXT/NAChmatko.htm.

103 Մանուկյան Ս. Ա., Հայաստանի հասարակությունում քաղաքացիական մշակույթի զարգացման սոցիոլոգիական կանխատեսման մոդելը և գործոնները: // «21-րդ ԴԱՐ», N 5, 2010, էջ 13-38:

հիմնական բնութագրերը (Աղյուսակ 31.):

Դիրքորոշումները քաղաքական վերնախավի նկատմամբ

- **Հայաստանի երիտասարդության մեծ մասը համարում է, որ հասարակությունն օտարված է քաղաքական վերնախավից,**

քանի որ պետական պաշտոնյաներն իրենց դիրքն օգտագործում են իրենց անձնական շահերի համար (համաձայն է երիտասարդների 88%-ը), որոշումներ կայացնելիս հաշվի չեն առնում ժողովրդի շահերն ու ցանկությունները (73%), պաշտոնի են նշանակում «իրենց շրջապատի» մարդկանց (90%), իսկ օրենքները բոլորի համար հավասարապես չեն գործում (80%): Բնական է, որ այսպիսի դիրքորոշումների շրջանակում երիտասարդության մեծ մասի համար չկա այնպիսի կուսակցություն, որն արտահայտում է իր շահերը (76%):

Դիրքորոշումները հասարակության քաղաքական սուբյեկտության և կոմպետենտության նկատմամբ

- **Երիտասարդները հասարակության քաղաքական կոմպետենտությունը և սուբյեկտությունը գնահատում են շատ ցածր:**

Առաջինը հպատակային քաղաքական մշակույթի, իսկ երկրորդը քաղաքական օտարվածության ինդիկատոր է: Երիտասարդների 76%-ը համարում է, որ պետական կառավարումն այնքան բարդ է, որ սովորական մարդկանց մեծ մասը չի կարող կողմնորոշվել այդ հարցերում, իսկ մարդիկ Հայաստանում վախենում են իրենց ընդդիմադիր քաղաքական հայացքները բարձրաձայն արտահայտելուց (80%): Այնուամենայնիվ, **ընտրական գործընթացում սեփական քաղաքական սուբյեկտությունն** արդեն բավականին բարձր է. երիտասարդների 58%-ը համարում է, որ իր ձայնը կարևոր է ընտրությունների ժամանակ:

Կարևոր է նշել, որ բավականին բարձրացել է նաև **քաղաքացիական հասարակության** քաղաքական սուբյեկտության գնահատականը. երիտասարդների 37%-ը համարում է, որ հասարակական կազմակերպություններն ունակ են որևէ **իրական հասարակական** հարց լուծել (ինչը, ի դեպ, արտահայտվել է Համաշխարհային բանկի ինստիտուտի «Ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքսի» վերջին երեք տարիների աճի միտումներում):

Դիրքորոշումները քաղաքական գործընթացի նկատմամբ

- **Ընտրական գործընթացի բնույթի նկատմամբ երիտասարդության դիրքորոշումներն անբարենպաստ են:**

Դա մտահոգիչ փաստ է, քանի որ **ներկայացուցչական ժողովրդավարություններում** ընտրական գործընթացը քաղաքական գործընթացի կարևորագույն բաղադրիչն է, որովհետև հասարակությունը զանգվածաբար է մասնակցում դրան: Եթե ընտրությունների գործընթացի նկատմամբ կա հասարակական անվստահություն, ապա այդ դիրքորոշումը **զանգվածային ազդեցություն է ունենում ընդհանրապես քաղաքական համակարգի նկատմամբ հասարակության դիրքորոշումների վրա:**

31. Քաղաքական մշակույթի տարրերը. քաղաքական դիրքորոշումներ: Տրված է դիրքորոշումների հետ համաձայն անձանց քանակը:

Դրույթներ	Ենթամշակութային ինդեքս					
	1.0-1.5	1.51-2.0	2.01-3.0	3.01-3.49	3.5-4.0	Ընդ.
Դիրքորոշումները քաղաքական վերնախավի նկատմամբ						
Պետական պաշտոնյաներն իրենց դիրքն օգտագործում են իրենց անձնական շահերի համար:	82%	88%	89%	90%	90%	88%
Մեր իշխանությունները որոշումներ կայացնելիս հաշվի են առնում ժողովրդի շահերն ու ցանկությունները:	30%	27%	28%	24%	20%	27%
Հայաստանում պաշտոնի են նշանակում «իրենց շրջապատի» մարդկանց:	91%	89%	89%	91%	88%	90%
Հայաստանի բոլոր քաղաքացիների համար օրենքները գործում են հավասարապես:	26%	20%	20%	15%	11%	20%
Կա՞ արդյոք հայաստանյան որևէ կուսակցություն, որն արտահայտում է Ձեր շահերը:	30%	26%	24%	19%	16%	24%
Դիրքորոշումները հասարակության նկատմամբ						
Հայաստանում մարդիկ վախենում են իրենց ընդդիմադիր քաղաքական հայացքները բարձրաձայն արտահայտելուց:	78%	86%	79%	80%	71%	80%
Պետական կառավարումն այնքան բարդ է, որ սովորական մարդկանց մեծ մասը չի կարող կողմնորոշվել այդ հարցերում:	74%	78%	74%	81%	71%	76%
Համամի՞տ եք արդյոք, որ Ձեր ձայնը կարևոր է ընտրությունների ժամանակ:	62%	59%	60%	52%	51%	58%
Ձեր կարծիքով՝ կարո՞ղ են Հայաստանում ՀԿ-ները որևէ իրական հասարակական խնդիր լուծել:	29%	38%	39%	40%	35%	37%
Դիրքորոշումները հասարակության քաղաքական գործողության նկատմամբ						
Հայաստանում ընտրությունները հիմնականում անարդար են:	78%	72%	77%	78%	78%	76%
Եթե ընտրություններում ժողովուրդն իր ձայնը տա ընդդիմությանը, ապա իշխանությունը կընդունի իր պարտությունը:	44%	37%	40%	31%	31%	38%
Մեզ մոտ իշխանություններին խոսքդ և դիրքորոշումդ հասցնելու առավել արդյունավետ ձևերը ցույցերն ու հանրահավաքներն են:	52%	53%	49%	44%	40%	49%
Եթե հնարավոր չէ ընտրությունների արդյունքներն օրենքով պաշտպանել, ապա ժողովուրդն այն պետք է ուժով պաշտպանի:	75%	74%	73%	73%	72%	73%
Դիրքորոշումները քաղաքական կառավարման համակարգի նկատմամբ						
Պետք է նպաստել, որ մարդիկ իրենք համախմբվեն ու լուծեն իրենց խնդիրները:	94%	94%	93%	95%	97%	94%
Այսօր Հայաստանին անհրաժեշտ է առավելապես «ուժեղ ձեռքով» կարգ ու կանոն հաստատող իշխանություն:	88%	92%	92%	93%	90%	92%

Հայաստանում ընտրությունները հիմնականում անարդար է համարում երիտասարդների 76%-ը: Մյուս կողմից նրանց միայն 28%-ն է կարծում, որ «Եթե ընտրություններում ժողովուրդն իր ձայնը տա ընդդիմությանը, ապա իշխանությունը կընդունի իր պարտությունը»: Եվ քանի որ «Իշխանություններին խոսքդ և դիրքորոշումդ հասցնելու առավել արդյունավետ ձևերը ցույ-

ցերն ու հանրահավաքներն են» դրույթին կողմ է երիտասարդների 49%-ը, և միաժամանակ բոլոր երիտասարդների 73%-ը համարում է, որ «Եթե հնարավոր չէ ընտրությունների արդյունքներն օրենքով պաշտպանել, ապա ժողովուրդն այն պետք է ուժով պաշտպանի», ապա ավելի կոնկրետ կոնտեքստում հանգում ենք արդեն իսկ արված եզրակացությանը, այն է՝

- **Հայաստանի քաղաքական համակարգի ընկալումները երիտասարդության շրջանում առաջացնում են սոցիալ-հոգեբանական այնպիսի լարումներ, որոնք Հայաստանի ազգային-պետական համակարգի վրա արտաքին բացասական ազդեցությունների առումով կարող են հարատև հիմք դառնալ մասնավորապես ընտրությունների առիթի օգտագործմամբ:**

Հարկ է նշել, որ հետազոտական տվյալները հավաքագրվել են 2011թ. նոյեմբերին, իսկ 2012թ. մայիսին տեղի ունեցած Ազգային ժողովի ընտրություններն անցան բավարար հանգիստ մթնոլորտում, ինչը, անշուշտ, հասարակության կայունության տեսակետից նպաստել է նկարագրված իրավիճակն ավելի բարենպաստ դարձնելուն: Այնուամենայնիվ՝

- **Քանի որ քաղաքական մշակույթը (ինչպես և մշակույթն ընդհանրապես) դանդաղ է փոփոխվում, անհրաժեշտ է մշակել և երիտասարդության շրջանում իրականացնել քաղաքական մշակույթի բնութագրերի փոխակերպման ռազմավարություններ:**

Դիրքորոշումները քաղաքական կառավարման համակարգի նկատմամբ

- **Երիտասարդները համարում են, որ այսօր Հայաստանին անհրաժեշտ է առավելապես «ուժեղ ձեռքով» կարգ ու կանոն հաստատող իշխանություն (92%), և միաժամանակ**
- **«Պետք է նպաստել, որ մարդիկ իրենք համախմբվեն ու լուծեն իրենց խնդիրները» (94%):**

Այս երկու դիրքորոշումների գրեթե բացարձակ տարածվածությունը (որը հնարավոր է նաև համարել հակասական) հեշտությամբ մեկնաբանվում է աշխարհամակարգային վերլուծության հայեցակարգում՝ հաշվի առնելով երիտասարդության՝ քաղաքական վերնախավի նկատմամբ ունեցած դիրքորոշումները և արդեն դիտարկված բազային արժեքները (Աղյուսակ 30.): Այդ դիրքորոշումների զուգակցումը զանգվածային կառավարման խնդիրներում արտահայտում է աշխարհ-համակարգի կառուցվածքի արդյունավետությունը: Հասարակության լայն շերտերը զանգվածաբար շփվում են կառավարման ներքին օղակների հետ, որոնք կազմում են աշխարհ-համակարգի միջնամասը, կամ, այլ կերպ ասած, «բուֆերը»: Այդ «բուֆերը»՝ բյուրոկրատական ապարատը, քանի որ մեծ կազմակերպություններին ներհատուկ օրինաչափության արդյունքում ձևավորում է իր լատենտ նպատակները, որոնք աստիճանաբար սկսում են գերակայել իրենց բուն համակարգային նպատակների նկատմամբ, առաջացնում է զանգվածային դժգոհություններ: Քանի որ «բուֆերը» հասարակության միջնամասն է, իսկ հասարակության լայն շերտերը՝ ծայրամասը, հետևաբար ավելի մեծ են «բուֆերի», քան հասարակության [անդամների]՝ սեփական շահերն առաջ տանելու հնարավորությունները: Արդյունքում ստանում ենք ամենավերին օղակում «ուժեղ ձեռքի» պահանջ՝ կառավարման համակարգում [իսկ այսօր նաև տնտեսական և հասարակական հարաբերություններում] կարգ ու կանոն հաստատելու համար:

Սակայն, այն փաստը, որ մյուս կողմից երիտասարդությունն ընկալում է սեփական ուժերով սեփական խնդիրները լուծելու անհրաժեշտությունը, քաղաքացիական հասարակության կազմավորման հիմք է հանդիսանում: Հետևաբար՝

- **Հայաստանի երիտասարդության շրջանում հնարավոր է, որ իրականացվեն քաղաքացիական գործողության նախաձեռնություններ:**

Քաղաքական ընդգրկվածության ինդեքս

Պետության և պետական քաղաքականությունների նկատմամբ Հայաստանի երիտասարդության ունեցած դիրքորոշումների վրա նրանց քաղաքական մշակույթի հիմնական բնութագրերի ազդեցությունը հետազոտելու համար կառուցվել է «Քաղաքական ընդգրկվածության ինդեքս»: Այն բաղադրյալ (գումարային) ինդեքս է, որը ցույց է տալիս, թե տվյալ երիտասարդը քաղաքական մշակույթի ներքոնշյալ բաղադրիչներից որոնք է իրեն բնութագրական համարում.

1. քաղաքականությամբ հետաքրքրվածություն,
2. քաղաքական լուրերի ինտենսիվ ստացում,
3. կոմպետենտություն քաղաքական հարցերում,
4. քաղաքական սուբյեկտության զգացողություն,
5. ընտրական մասնակցություն,
6. իր շահերն արտահայտող կուսակցության առկայություն,
7. կուսակցական անդամություն:

Ինդեքսը մոտարկում է երիտասարդի քաղաքական ընդգրկվածության աստիճանը: Ինդեքսի բաշխումը տրված է Գծապատկեր 90.-ում:

90. Քաղաքական ընդգրկվածության ինդեքսի բաշխումը



Ինդեքսի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրա՝ ըստ սեռի, տարիքի, կրթության, ուսանողության և մնացած երիտասարդության միջև ըստ զբաղվածության բաշխումները վիճակագրորեն չեն տարբերվում երիտասարդական խմբերում: Ենթադրաբար այն տարբերվում է (այսինքն՝ բաշխումների տարբերությունը մոտ է վիճակագրական հավաստիության ընդունված սահմանին) ըստ կրթության, ըստ բնակավայրի տիպի, ըստ ենթամշակութային պատկանելության:

- **Քաղաքական ընդգրկվածության ինդեքսի միջին արժեքը վիճակագրորեն հավաստի նվազած է արտագաղթելուն հակված երիտասարդների շրջանում:**
- **Հարկ է նշել, որ քաղաքական ընդգրկվածության ինդեքսը կորելացված չէ ենթամշակութային ինդեքսի հետ** (դրանք անկախ են միմյանցից), **հետևաբար երիտասարդական դիրքորոշումների վրա այդ ինդեքսների ազդեցությունները բնութագրում են երիտասարդների աշխարհայացքային տարբեր կոմպլեքսներ:**

Հայաստանյան քաղաքական գործընթացների ընդհանուր ընկալումը

Երիտասարդության շրջանում հայաստանյան գործընթացների ընդհանուր ընկալումը գնահատվել է հետևյալ հարցադրմամբ. «Ձեր կարծիքով՝ Հայաստանն ընթանում է. սխալ ուղղությամբ, ավելի շուտ՝ սխալ ուղղությամբ, ավելի շուտ՝ ճիշտ ուղղությամբ, թե՞ ճիշտ ուղղությամբ»: Երիտասարդների կեսը (51%) պատասխանել է, որ Հայաստանն ընթանում է ավելի շուտ ճիշտ կամ ճիշտ ուղղությամբ (Գծապատկեր 95.): Հայաստանյան ընդհանուր գործընթացների նկատմամբ դրական դիրքորոշումներն ավելի բարձր են գյուղերում (59%), քան Երևանում (46%) և մարզային քաղաքներում (47%). որքան ավելի ավանդական է անձը, այնքան հայաստանյան գործընթացների նկատմամբ ավելի դրական են նրա դիրքորոշումները, մասնավորապես երիտասարդների առավել ավանդական շերտում հայաստանյան գործընթացները դրական է ընկալում երիտասարդների 56%-ը, իսկ ամենալիբերալ շերտում՝ 42%-ը:

- **Հայաստանյան գործընթացների նկատմամբ երիտասարդի դիրքորոշումների վրա շատ ուժեղ ազդեցություն ունի քաղաքական ընդգրկվածության ինդեքսը. որքան բարձր է ինդեքսի արժեքը, այնքան դրական են դիրքորոշումները** (Գծապատկեր 91.)**:**

Մասնավորապես քաղաքական լիակատար օտարվածության դեպքում (ինդեքսի արժեքը հավասար է 0-ի) երիտասարդների միայն 23%-ն է դրական գնահատում հայաստանյան գործընթացները, իսկ ինդեքսի ամենամեծ՝ 7 արժեքի դեպքում՝ 67%-ը, ածը կազմում է 44%: Հետևաբար՝

- **Հայաստանյան քաղաքական գործընթացների կտրվածքով արդյունավետ ինֆորմացիոն քաղաքականությունն ունակ է էականորեն բարելավելու երիտասարդության դիրքորոշումները դրանց վերաբերյալ:**

Ստացված արդյունքը կարևոր է Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի դինամիկայի տեսակետից, քանի որ՝

- **Քաղաքական ընդգրկվածության ինդեքսի ածն շատ ուժեղ ներգործություն է ունենում արտագաղթի դիրքորոշումների վրա՝ նվազեցնելով դրանք** (Գծապատկեր 93.)**:**

Այսպես՝ եթե ինդեքսի 0 արժեքի տիրույթում գտնվող երիտասարդներից արտագաղթելու դիրքորոշում ունի 71%-ը, ապա ինդեքսի 7 արժեքի դեպքում՝ միայն 27%-ը: Մյուս կողմից՝

- **Հայաստանում քաղաքական գործընթացների նկատմամբ դրական դիրքորոշումները նվազեցնում են արտագաղթի դիրքորոշումները** (Գծապատկեր 94.)**:**

91. Քաղաքական ընդգրկվածության ինդեքսի ազդեցությունը քաղաքական կուրսի գնահատականի վրա



92. Եվրամշակութային ոլորտներին պատկանելության ազդեցությունը քաղաքական կուրսի գնահատականի վրա



Հայաստանում գործերն ընթանում են ճիշտ ուղղությամբ, «Համաձայն են», %

93. Քաղաքական ընդգրկվածության ազդեցությունը արտագաղթի դիրքորոշումների վրա



94. Հայաստանյան գործընթացների ընկալման բնույթի ազդեցությունն արտագաղթի դիրքորոշումների վրա



Քաղաքական ընդգրկվածության ազդեցությունը արտագաղթի դիրքորոշումների վրա, %

Կարելի է ենթադրել, որ նկարագրված ազդեցությունները փոխադարձաբար կապված են. քաղաքական ընդգրկվածությունը բարձրացնում է հայաստանյան գործընթացների նկատմամբ դրական դիրքորոշումները (կամ հակառակը՝ գործընթացների նկատմամբ դրական դիրքորոշումները բարձրացնում են քաղաքական ընդգրկվածությունը), և հետևաբար գործ ունենք միևնույն գործոնի տարբեր արտահայտությունների հետ: Սակայն, կառուցված մաթեմատիկական մոդելը ցույց է տալիս, որ արտագաղթի դիրքորոշումը նվազեցնող նշված երկու գործոններն ունեն ոչ միայն ընդհանուր (կորելյացիայի արդյունք հանդիսացող), այլև յուրահատուկ

անկախ ազդեցություններ: Այսինքն՝ գոյություն ունի երիտասարդության յուրահատուկ շերտ, որը բացասական է գնահատում հայաստանյան գործընթացները, սակայն քաղաքական բարձր ընդգրկվածության (հիշենք, որ խոսքը չի վերաբերում քաղաքական գործողությանը) հետևանքով այդ շերտում ցածր են արտագաղթի դիրքորոշումները: Ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է քաղաքացիական սուբյեկտության զգացողությանը: Հետևաբար՝

- **Արտագաղթի դիրքորոշման վրա քաղաքական ընդգրկվածության դրական ազդեցությունն ունի քաղաքական լոյալությունից անկախ բաղադրիչ:**

95. Հայաստանը զարգանում է ճիշտ կամ ավելի շուտ ճիշտ ուղղությամբ, IPSC



Այժմ փորձենք գնահատել Հայաստանի ինֆորմացիոն դաշտի և դրա բաղադրիչների ազդեցությունը հայաստանյան գործընթացներին վերաբերող դիրքորոշումների վրա:

96. Ինտերնետի ինտելեկտուալ և ժամանցային ազդեցությունը հայաստանյան գործընթացներին վերաբերող դիրքորոշումների վրա **(Այն երիտասարդների տոկոսը, ովքեր համարում են, որ Հայաստանն ընթանում է «ճիշտ ուղղությամբ»)**



97. Հ1 հեռուստալիքով տրվող քաղաքական լուրերի ազդեցությունը հայաստանյան գործընթացների և արտագաղթի դիրքորոշումների վրա

98. Ինտերնետով ստացվող քաղաքական լուրերի ազդեցությունը հայաստանյան գործընթացների և արտագաղթի դիրքորոշումների վրա



Ինֆորմացիոն դաշտի ազդեցության գնահատման նպատակով կառուցվել է երկու ինդեքս՝ «ինտերնետի ինտելեկտուալ կիրառման ինդեքս» և «ինտերնետի ժամանցային կիրառման ինդեքս»: Որքան ավելի բարձր են ինդեքսների արժեքները, այնքան համապատասխանաբար ավելի ինտենսիվ են ինտերնետի ինտելեկտուալ և ժամանցային կիրառությունները:

Պարզվել է, որ ինտերնետի և՛ ինտելեկտուալ, և՛ ժամանցային կիրառությունների ինտենսիվացումը, ընդհանուր առմամբ, նվազեցնում է երիտասարդների՝ հայաստանյան գործընթացներին վերաբերող դրական դիրքորոշումների տարածվածությունը (Գծապատկեր 96.: Սակայն, ինտերնետով ստացվող քաղաքական լուրերի նկատմամբ **վստահության աճը** մյուս կողմից բարձրացնում է հայաստանյան գործընթացների դրական գնահատականների մակարդակը (Գծապատկեր 98.):

Հայաստանյան գործընթացներին վերաբերող դիրքորոշումների վրա դրական ազդեցություն է գործում նաև Հ1 հեռուստալիքի նկատմամբ վստահության աճը (Գծապատկեր 97.):

Այսպիսով՝

- **Հայաստանի երիտասարդության դիրքորոշումների վրա հայաստանյան ինֆորմացիոն դաշտի** (որը կազմավորվում է որպես և՛ հայաստանյան, և՛ օտար ծագմամբ ինֆորմացիայի «փաթեթ») **ազդեցությունն ամբիվալենտ է, առկա են և՛ դրական, և՛ բացասական դիրքորոշումներ ձևավորող բաղադրիչներ:**

Քանի որ ինֆորմացիոն դաշտը, հասարակության կողմից իրականության հետ անմիջական շփմանը զուգահեռ, հասարակական դիրքորոշումների կազմավորման հիմնական գործոնն է, ապա՝

- **Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի բնութագրերի բարելավման համար անհրաժեշտ է.**
    - **Հայաստանի հասարակությանը մատուցվող ինֆորմացիոն դաշտի կառավարում և միաժամանակ**
    - **Հայաստանի հասարակությունում ինֆորմացիայի սպառման մշակույթի ձևավորում:**

Հայաստանյան սոցիալ-տնտեսական ոլորտների զարգացումների ընկալումները

Հետազոտության ընթացքում պարզվել է, որ Հայաստանի սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների գնահատականները երիտասարդների շրջանում ունեն շատ մեծ ցրվածք (Գծապատկեր 99.): Ամենամեծ դրական փոփոխությունների ընկալումներն առկա են տուրիզմի (երիտասարդների 78%-ը համարում է, որ ոլորտում իրավիճակը բարելավվել է), բարձր տեխնոլոգիաների (67%), առողջապահության որակի (59%) և բուհական կրթության որակի (53%) ոլորտներում: Ըստ երիտասարդների՝ ամենահամեստ ձեռքբերումները գրանցվել են հարուստների և աղքատների միջև անհավասարության կրճատման (13%), աղքատության կրճատման (18%) և աշխատատեղերի ստեղծման (27%) ոլորտներում:

Ոլորտների փոփոխություններին առնչվող ընկալումները, ըստ երիտասարդների սոցիալ-

ժողովրդագրական խմբերի, ներկայացված են Աղյուսակ 32.-ում: Աղյուսակում որքան ավելի մուգ կանաչ է վանդակը, այնքան ոլորտի փոփոխություններին առնչվող ընկալումն ավելի բարենպաստ է սոցիալ-ժողովրդագրական տվյալ բնութագրի շրջանակում, և որքան ավելի մուգ կարմիր է վանդակը, այնքան տվյալ ոլորտի դրական փոփոխության ընկալումն ավելի անբարենպաստ է սոցիալ-ժողովրդագրական տվյալ բնութագրի շրջանակում: Աղյուսակից երևում է, որ դրական փոփոխությունների ընկալումներն ընդհանուր առմամբ (համեմատելով համապատասխան տողերի գունապատկերները) ավելի բարենպաստ են կանանց, քան տղամարդկանց շրջանում, տարիքային խմբերի առումով դիրքորոշումներն առավել բարենպաստ են ամենաերիտասարդ (18-19 տարեկաններ) խմբում, իսկ կրթամակարդակի առումով առավել անբարենպաստ են բարձրագույն կրթությամբ երիտասարդների շրջանում: Հարկ է նշել, որ մագիստրոսների շրջանում բացասական դիրքորոշումները նվազում են հատկապես բարձր տեխնոլոգիաների և տուրիզմի ոլորտների պարագայում: Ամենաբացասական դիրքորոշումներն առկա են ենթամշակութային ինդեքսի ամենաբարձր արժեքներով շերտում:

99. Սոցիալ-տնտեսական ոլորտներում իրավիճակի բարելավում ընկալած երիտասարդները



32. Սոցիալ-տնտեսական ոլորտներում իրավիճակի բարելավում ընկալածներն ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի, IPSC

		1	2	3	4	5	6	7	8	9	10	11
	Ընդամենը	**42%**	**53%**	**59%**	**78%**	**50%**	**50%**	**13%**	**40%**	**67%**	**27%**	**18%**
Սեռ	Իգական	38%	53%	61%	82%	51%	53%	15%	42%	69%	29%	16%
	Արական	46%	53%	56%	74%	49%	48%	11%	39%	66%	25%	20%
Տարիք	18-19	42%	63%	67%	83%	57%	64%	15%	45%	78%	32%	23%
	20-24	45%	56%	59%	78%	49%	50%	14%	42%	70%	28%	20%
	25-30	39%	45%	55%	76%	49%	45%	12%	37%	60%	24%	15%
Կրթություն	Միջնակարգ	47%	58%	63%	77%	52%	56%	17%	46%	70%	31%	23%
	Միջին մասնագիտական	43%	59%	60%	79%	54%	48%	11%	39%	65%	26%	17%
	Թերի բարձրագույն	40%	58%	60%	78%	52%	56%	10%	39%	67%	27%	21%
	Բարձրագույն	34%	39%	51%	79%	43%	39%	10%	33%	64%	20%	10%
	Մագիստրոս	33%	44%	52%	81%	47%	43%	12%	37%	69%	23%	9%
Բարեկեցություն	Մինչև 100.000	43%	56%	60%	79%	49%	54%	14%	42%	65%	27%	18%
	101.000-200.000	44%	54%	62%	80%	52%	50%	13%	41%	69%	27%	19%
	201.000-360.000	42%	51%	55%	74%	53%	44%	13%	38%	70%	26%	18%
	361.000-ից ավելի	38%	51%	60%	77%	49%	46%	13%	40%	66%	35%	16%
Բնակավայր	Երևան	32%	43%	49%	75%	47%	47%	9%	33%	69%	26%	15%
	Քաղաք	43%	55%	63%	77%	60%	52%	11%	38%	61%	25%	18%
	Գյուղ	50%	61%	63%	82%	44%	51%	19%	49%	71%	29%	21%
Ուսանող	Ոչ ուսանող	42%	52%	59%	78%	49%	50%	14%	41%	67%	27%	18%
	Ուսանող	41%	59%	60%	79%	54%	55%	10%	39%	70%	27%	18%
Ամուսն. վիճակ	Չամուսնացած	42%	53%	58%	78%	49%	52%	12%	39%	69%	26%	19%
	Ամուսնացած	42%	53%	60%	78%	52%	48%	14%	42%	64%	29%	17%
Եկեմշակույթ	1-1.5	49%	57%	61%	71%	53%	56%	12%	41%	62%	27%	22%
	1.51-2.0	44%	57%	61%	80%	50%	55%	12%	44%	71%	24%	22%
	2.01-3.0	41%	52%	59%	80%	51%	49%	15%	39%	68%	30%	17%
	3.01-3.49	41%	50%	55%	78%	47%	46%	14%	40%	65%	28%	16%
	3.5-4	26%	42%	54%	69%	48%	39%	7%	25%	61%	18%	7%
Զբաղվածություն	Զբաղված	43%	51%	56%	77%	46%	47%	13%	37%	66%	28%	17%
	Գործազուրկ	37%	50%	59%	80%	48%	50%	10%	39%	68%	18%	15%
	Տնտեսապես ոչ ակտիվ	44%	57%	64%	80%	58%	56%	15%	45%	68%	31%	21%

1. Դպրոցներում կրթության մակարդակը
2. Բուհերում կրթության մակարդակը
3. Որակյալ առողջապահություն
4. Տուրիզմի ոլորտում
5. Գյուղատնտեսությունում
6. Արդյունաբերության մեջ
7. Հարուստների և աղքատների միջև անհավասարության կրճատում
8. Փոքր բիզնես
9. Բարձր տեխնոլոգիաներ
10. Աշխատատեղերի ստեղծում
11. Աղքատության կրճատում

Հարց է առաջանում, թե՝

- **Ո՞ր ոլորտի հաջողություններն են առավելապես ազդում հայաստանյան գործընթացների ընդհանուր գնահատականի վրա**:

Կառուցված մոդելը[104] ցույց է տվել, որ «Հայաստանն ընթանում է ճիշտ ուղղությամբ» դիրքորոշումը վիճակագրորեն հավաստի կերպով ներքոնշյալ ոլորտներում բարձրացնում է դրական փոփոխությունների ընկալումները.

- աղքատության կրճատում (ռեգրեսիոն ստանդարտացված գործակիցը՝ 0,13),
- գյուղատնտեսություն (0.13),
- աշխատատեղերի ստեղծում (0.11),
- բուհերում կրթության մակարդակը (0.11),
- արդյունաբերություն (0.10),
- առողջապահություն (0.07),
- անհավասարության կրճատում (0.06) (Գծապատկեր 99., կարմիր սյունաշար):

Այժմ դիտարկենք քաղաքական ընդգրկվածության և ենթամշակութային պատկանելության ինդեքսների՝ Հայաստանում ոլորտային զարգացումների ընկալման վրա ունեցած ազդեցությունը (Գծապատկեր 100. և Գծապատկեր 101.):

Գծապատկերների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ՝

- **Քաղաքական ընդգրկվածության ինդեքսի աճը բարձրացնում է բոլոր դիտարկված ոլորտներում դրական փոփոխությունների ընկալումները**:

Ենթամշակութային խմբերում դիրքորոշումներն առավել անբարենպաստ են ինդեքսի ամենաբարձր արժեքով խմբում:

Դիտարկենք նաև, թե սոցիալ-տնտեսական ոլորտներում հաջողությունների ընկալման փոփոխությունն ինչպես է ազդում երիտասարդների արտագաղթի դիրքորոշումների վրա: Պարզվում է, որ՝

- **Սոցիալ-տնտեսական ցանկացած ոլորտում առաջընթացի ընկալումը երիտասարդության շրջանում նվազեցնում է արտագաղթի դիրքորոշումը** (Աղյուսակ 33.)**:**
- **Արտագաղթի նվազեցման վրա հատկապես հզոր ազդեցություն են գործում առաջընթացի ընկալումները**
    - աշխատատեղերի ստեղծման,
    - արդյունաբերության և
    - բարձր տեխնոլոգիաների ոլորտներում:

104 Կառուցված է գծային ռեգրեսիոն մոդել, որի $R^2 = 0.209$:

100. Ոլորտային զարգացումների գնահատականների կապը քաղաքական ընդգրկվածության ինդեքսի հետ

101. Ոլորտային զարգացումների գնահատականները ենթամշակութային խմբերում



19. Սոցիալ-տնտեսական ոլորտներում փոփոխությունների ընկալման ազդեցությունն արտագաղթի դիրքորոշման վրա: Վանդակներում տրված է տվյալ խմբում ընդմիշտ արտագաղթի դիրքորոշում ունեցող անձանց տոկոսը:

Սոցիալ-տնտեսական ոլորտներ	Սոցիալ-տնտեսական ոլորտներում փոփոխության ընկալումը					Արտագաղթի դիրքորոշման նվազումը [1-5]
	1 Վատա-նում է	2 Ավելի շուտ վատանում է	3 Չի բարե-լավվում	4 Ավելի շուտ բարե-լավվում է	5 Բարե-լավվում է	
Դպրոց	37%	43%	39%	35%	30%	7%
Բուհ	45%	40%	39%	34%	33%	12%
Առողջապահություն	52%	41%	35%	33%	37%	15%
Տուրիզմ	43%	42%	41%	36%	35%	8%
Գյուղատնտեսություն	48%	34%	36%	35%	38%	10%
Արդյունաբերություն	51%	39%	33%	36%	30%	21%
Անհավասարություն	39%	36%	34%	35%	37%	2%
Փոքր բիզնես	41%	47%	34%	36%	30%	11%
Բարձր տեխնոլոգիաներ	52%	51%	37%	34%	33%	19%
Աշխատատեղեր	47%	38%	35%	28%	26%	21%
Աղքատություն	44%	39%	34%	24%	29%	15%

Այսպիսով՝

- **Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի զարգացման դինամիկայի վրա Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների ազդեցության բնույթի ուսումնասիրությունն «ինքնաբերաբար» կազմավորում է այնպիսի պատկեր, որն աշխարհամակարգային վերլուծության հայեցակարգային դրույթների ուղղակի արտապատկերումն է երիտասարդների աշխարհայացքում, այն է՝**
- **Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի դինամիկայի վրա առավել բարենպաստ ազդեցություն է թողնում Հայաստանի տնտեսության ընթացքը դեպի ավելի բարձր (քան այսօր գտնվում է Հայաստանը) աշխարհամակարգային նիշա՝ բարձր տեխնոլոգիաների և արդյունաբերության ոլորտներում աշխատատեղերի ստեղծում:**

Վստահությունը քաղաքական և սոցիալական ինստիտուտների նկատմամբ

Քաղաքական և սոցիալական ինստիտուտների նկատմամբ վստահությունը և այդ ինստիտուտների կողմից իրենց գործառույթների արդյունավետ իրականացումը փոխադարձաբար ազդում են մեկը մյուսի վրա: Հասարակության վստահությունը վայելող ինստիտուտներն իրենց հեղինակությամբ կարող են լուրջ փոփոխություններ կատարել նույնիսկ իրենց ուղղակի գործառույթներից դուրս գտնվող ոլորտներում:

Հայաստանում առավել բարձր վստահություն ունեցող ինստիտուտներն են Հայ Առաքելական եկեղեցին և ազգային բանակը: Առնվազն վերջին 8 տարիներին իրականացված սոցիոլոգիական հետազոտությունները պարբերաբար վկայել են դրա մասին: Բացառություն չէր նաև երիտասարդական հետազոտությունը: Հայաստանի երիտասարդության 91%-ը վստահում է Հայ Առաքելական եկեղեցուն, իսկ ՀՀ ԶՈՒ-ին՝ 87%-ը:

«Արժեքային համակարգերն աշխարհում» միջազգային հետազոտական նախագծի տվյալների շտեմարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին 30 տարիներին ամբողջ աշխարհում վստահության աճ է արձանագրվում բանակի և կրոնի (եկեղեցու) նկատմամբ: Ընդ որում՝ այն ուղեկցվում է ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտների (պառլամենտ) նկատմամբ վստահության նվազմամբ: Այս իրավիճակը հաղորդակցվում է աշխարհամակարգային վերլուծության այն դրույթի հետ, որ ներկայում (սկսած 1968 թվականից) տեղի է ունենում աշխարհ-համակարգի հեգեմոնի դիրքերի թուլացում, ինչի հետևանքով միջազգային հարաբերություններում աճում է անորոշությունը (էնտրոպիան)՝ բարձրացնելով պատերազմի վտանգը: Այդ պայմաններում աճում է մարդկանց վստահությունը (որպես հոգեբանական պաշտպանության ռեակցիա) իրենց պետությունների (հասարակությունների) ֆիզիկական և հոգևոր պաշտպանության ինստիտուտների՝ բանակի և եկեղեցու նկատմամբ: Ինչպես ցույց է տվել ավելի քան 40 երկրներում 12 սոցիալական ինստիտուտների նկատմամբ վստահության գործոնային վերլուծությունը, բանակի և եկեղեցու նկատմամբ վստահության մակարդակները բոլոր երկրներում էլ սերտորեն շաղկապված են:

Ահա թե ինչու ժամանակակից միջազգային հարաբերություններում հակամարտող կողմերն աշխատում են խարխլել ազգային-պետական այդ երկու ինստիտուտների նկատմամբ հասարակական վստահությունը, քանի որ էթնո-սոցիո-մշակութային համակարգը երբ իր ֆիզիկական և հոգևոր պաշտպանությունն իրականացնող ինստիտուտների նկատմամբ կորցնում է վստահությունը, ապա այդ հասարակության շրջանում առաջանում է անպաշտպան լինելու զգացողություն, հետևաբար՝ նաև պարտվողական տրամադրություններ: Վերջին դրույթն արտացոլված է Գծապատկեր 103.-ում. հայկական բանակին չվստահող երիտասարդների շրջանում արտագաղթի դիրքորոշումը հասնում է 66%-ի, իսկ Հայ Առաքելական եկեղեցուն չվստահողների շրջանում՝ 51%-ի (հիշենք, որ արտագաղթի միջին մակարդակը 37% է):

102. Քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահության կարգը քաղաքական ընդգրկվածության ինդեքսի հետ



103. Քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահության կարգը ենթամշակութային պատկանելության ինդեքսի հետ



- Հայ Առաքելական եկեղեցի
- Հայկական բանակ
- Ինտերնետ՝ քաղաքական լուրեր
- Հ1-ի քաղաքական լուրեր

104. Քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահության ազդեցությունն արտագաղթի դիրքորոշումների վրա



Ըստ այսմ՝ բնականոն հարց է առաջանում.

- **Կա՞ն արդյոք այնպիսի գործոններ, որոնք բարձրացնում են վստահությունը տանդեմում գտնվող** (սերտ շաղկապված) **այդ երկու ինստիտուտների՝ բանակի և եկեղեցու նկատմամբ:**

Պարզվում է, որ այդպիսի գործոն է անձի քաղաքական ընդգրկվածությունը: Երբ աճում է անձի քաղաքական ընդգրկվածությունը, աճում է նաև վստահությունը և՛ բանակի, և՛ եկեղեցու նկատմամբ (Գծապատկեր 102.):

Հարկ է նշել, որ Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ վստահությունը շաղկապված է ենթամշակութային պատկանելության հետ: Ինդեքսի արժեքների աճը նվազեցնում է վստահությունը Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ: Դրանից հետևում է, որ՝

- **Հայաստանի մշակութային ավելի բարձր զարգացած երիտասարդության շրջանում գոյություն ունի Հայ Առաքելական եկեղեցու հետ «հաշտեցման» խնդիր: Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի համար հույժ կարևոր է ազգային մտավորականության և Հայ Առաքելական եկեղեցու միասնական ու ներդաշնակ համագործակցությունը համակարգի հիմնախնդիրների լուծման գործում:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Հիմնական եզրակացությունը, որը բխում է իրականացված վերլուծությունից, այն է, որ հայաստանյան ներկա տնտեսական, սոցիալական և մշակութային միտումների պահպանման դեպքում կպահպանվեն նաև Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի դինամիկայի առկա միտումները: Հետևաբար անհրաժեշտ են համակարգային լուրջ փոփոխություններ, որոնք ունակ կլինեն որակապես փոխելու առկա իրավիճակը:

Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգում բացասական միտումների կասեցման և շրջման ռազմավարությունները [պայմանականորեն] վերաբերում են տնտեսական, սոցիալական, մշակութային և պետության ու հասարակության փոխհարաբերությունների ոլորտներին: Այդ ոլորտների գործոնները փոխադարձաբար կապված են, բոլոր հնարավոր ուղղություններով ազդում են միմյանց վրա, իսկ փոխազդեցությունները պայմանավորված են բոլոր հնարավոր զուգորդություններով: Այսինքն՝ ոլորտային բաժանումն ունի առավելապես անալիտիկ նշանակություն, իսկ յուրաքանչյուր ոլորտում տեղի ունեցած փոփոխությունն ունի սիներգիկ, **այդ թվում՝ չկանխատեսված** ազդեցություններ բոլոր ուղղություններով: Այդ պատճառով ցանկալի չէ անտեսել որևէ գործոն: Չնայած Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի բարենպաստ զարգացումների հիմնարար գործոնները տնտեսական ոլորտում են, այնուամենայնիվ տնտեսական ոլորտի հաջողություններն իրենց հերթին պայմանավորված են այլ ոլորտային դաշտերի վերադրման արդյունք հանդիսացող միջավայրով:

Տնտեսական ոլորտ

Հայաստանում ժողովրդագրական և մշակութային բացասական միտումների հիմնական ներհամակարգային պատճառն այն է, որ **Հայաստանի տնտեսությունն ունակ չէ աշխատանքով և հասարակայնորեն ընդունելի աշխատավարձերով ապահովել Հայաստանի աշխատանքային ռեսուրսներին:**

Արտահամակարգային շրջանակ:

Հայաստանի տնտեսության որակական զարգացման հիմնական արգելակող գործոնը գտնվում է Հայաստանից դուրս, այսինքն՝ եթե ուսումնասիրվող համակարգ է սահմանվում Հայաստանը, ապա զարգացման հիմնական և հանգուցային խոչընդոտող գործոնն «արտահամակարգային» է: Այդ արտահամակարգային գործոնն այն է, որ Հարավային Կովկասը դեռևս չունի որոշակի աշխարհաքաղաքական և քաղաքակրթական դիրքավորվածություն, ինչի հետևանքով այն մնում է կոնֆլիկտային և բարձր ռիսկային գոտի: Հարավային Կովկասը նոր և նորագույն պատմության ընթացքում դրական զարգացումներ է ունեցել միայն այն ժամանակ, երբ ընդգրկված է եղել որևէ Մեծ տարածքում: Երբ այն «վիճարկվել է» գերտերությունների կողմից, վերածվել է կա՛մ պատերազմների թատերաբեմի, կա՛մ պատերազմավտանգ գոտու:

Ակնհայտ է, որ պատերազմական կամ պատերազմավտանգ տարածքները ռիսկային են տնտեսական գործունեության համար, ինչի հետևանքով այդ տարածքներում լուրջ տնտեսական գործունեություն չի ծավալվում: Լարված իրավիճակներում բուֆերային տարածքի առաջնահերթ ֆունկցիան հակասությունների մեղմացումն է, իսկ հանդարտ իրավիճակներում՝ կոմունիկացիաների փոխանցատումը: Բուֆերային տարածքի տնտեսական ցանկացած ֆունկցիա (լավագույն դեպքում) երկրորդական է: Ներկայումս հիմքեր չկան ենթադրելու, որ միջազգային հարաբերությունների տրամաբանությունը կարող է փոխվել[105]:

105 Գլոբալ և տարածաշրջանային սցենարների վերլուծությունն ու գնահատումը դուրս են սույն աշխատանքի շրջանակից:

Հետևաբար **Հայաստանի տնտեսության որակական զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է վերլուծել և գնահատել Հայաստանի առկա փոխհարաբերությունները և հնարավոր զարգացումների սցենարները Հարավային Կովկասին հարող Մեծ տարածքների հետ, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի օպտիմալ ընտրություն իրականացնել:**

Աշխատանքային միգրացիա: Ամեն տարի ավելի քան 100.000 մարդ Հայաստանից դուրս արտագնա աշխատանքների է մեկնում: Այդ իրավիճակն արդեն դարձել է Հայաստանի հասարակության և տնտեսության կենսագործունեության «ստացիոնար ռեժիմը»: Աշխատանքային միգրացիայի հիմնական տարածքը Ռուսաստանի Դաշնությունն է: **Աշխատանքային միգրացիան ներկայումս կոմպենսատորային դեր է կատարում բնակչության կենսամակարդակի պահպանման գործում**: Ամեն տարի 1.5 միլիարդ կամ ավելի ԱՄՆ դոլար կազմող մասնավոր տրանսֆերտները բարձրացնում են հասարակության գնողունակությունը և դրանով իսկ **նպաստում Հայաստանի հասարակության ապրանքների ու ծառայությունների ներքին պահանջարկի բավարարմանն ուղղված փոքր բիզնեսի զարգացմանը**:

Ներկայումս դեռևս հիմքեր չկան ենթադրելու, որ **աշխատանքային միգրացիան խթանում է Հայաստանից ընդմիշտ արտագաղթը**, քանի որ ընդմիշտ արտագաղթելու դիրքորոշումն աշխատանքային միգրանտների շրջանում վիճակագրորեն չի տարբերվում այդպիսի փորձ չունեցողների շրջանում առկա ընդմիշտ արտագաղթի դիրքորոշումներից:

Այնուամենայնիվ, բաց է մնում այն հարցը, թե ի՞նչ ազդեցություն, դեր և նշանակություն կունենա աշխատանքային միգրանտների՝ արտասահմանում կենսագործունեության փորձը, եթե Հայաստանում ֆորս-մաժորային իրավիճակներ առաջանան:

Գործազրկության կրճատում: Գործազրկության էական կրճատումը, անշուշտ, տնտեսության կառուցվածքային փոփոխության և զարգացման ոլորտի խնդիր է: Սակայն, կարելի է նվազեցնել դրա ֆրիկցիոն, սեզոնային և ինստիտուցիոնալ բաղադրիչները:

- **Գործազրկության ֆրիկցիոն, սեզոնային և ինստիտուցիոնալ բաղադրիչների կրճատման ռեզերվ է Զբաղվածության պետական գործակալության աշխատանքի արդյունավետության բարձրացումը:**
- **Գործողությունները պետք է հիմնված լինեն այն կանխադրույթի վրա, որ Հայաստանում աստիճանաբար ավելի ու ավելի մատչելի են դառնում ինֆորմացիոն տեխնիկան, տեխնոլոգիաները և ինտերնետը**:

Մյուս կողմից Զբաղվածության պետական ծառայության աշխատանքի արդյունավետության բարձրացման ռազմավարությունները և գործողությունները պետք է հիմնված լինեն հետևյալ սկզբունքի վրա.

- **Որպեսզի երիտասարդությունը [ընդհանրապես հասարակությունը] աշխատանք գտնի, անհրաժեշտ է ստեղծել ոչ թե միջնորդ օղակ, այլ համապատասխան [ինֆորմացիոն] միջավայր:**

Այս սկզբունքը կարող է հանդիսանալ ռազմավարությունն իրականացնող առանձին գործողությունների ընդունելիության չափորոշիչը:

Սկզբունքը բացառիկ կարևոր է համակարգային կառավարման տեսակետից, քանի որ ժամա-

նակի ընթացքում միջնորդի մոտ միշտ առաջանում է իր դերի ու նշանակության բարձրացման լատենտ նպատակը, ապա միջնորդն իր հիմնական գործառույթների կատարումը սկսում է շաղկապել այդ նպատակի հետ: Արդյունքում համակարգն աստիճանաբար դառնում է թանկարժեք, ծանրաշարժ և անարդյունավետ:

Նշված սկզբունքի իրականացումը հնարավոր է հետևյալ ուղով.

- **Ինտերնետային կայքերը և դրանց ինտերֆեյսները կառուցել և արդիականացնել ժամանակակից տեխնոլոգիաներին համահունչ: Անհրաժեշտ է ունենալ կայքերի այնպիսի մենեջեր, ով տիրապետում է կայքի** [և համապատասխան պետական կառավարման մարմնի] **գաղափարախոսությանը, ունակ է նախագծելու դրա բովանդակության հայեցակարգը և գնահատելու դրա կոնկրետ իրականացումը, տիրապետում է կայքերի զարգացման ժամանակակից տեխնոլոգիաների հայեցակարգերին:**
- **Կոնսոլիդացնել Զբաղվածության պետական գործակալության տվյալների շտեմարանները[106], մասնավորապես՝ աշխատուժի պահանջարկի և առաջարկի բաղադրիչները (ենթաշտեմարանները):**
- **Այդ տվյալների շտեմարանները դարձնել առցանց** (on-line) **և բոլոր օգտվողներին՝ ինչպես գործատուներին, այնպես էլ աշխատանք փնտրողներին և ցանկացած այլ անձի, այդ շտեմարաններում առցանց փնտրում իրականացնելու լիարժեք հնարավորություն ընձեռել[107]:**
- **Շտեմարանների և՛ առցանց վերլուծություն, և՛ վերլուծական նպատակներով ներբեռնում կատարելու հնարավորություն ստեղծել[108]:**
- **Տվյալների շտեմարաններում անհրաժեշտ է տեղադրել աշխատանք փնտրողի կենսագրության և աշխատատեղի անձնագրի շաբլոնները, որպեսզի աշխատանք փնտրողները և գործատուները կարողանան ինքնուրույն դրանք լրացնել:**
- **Գործակալության գործառույթների շարքում պետք է ընդգրկել այն գործառույթը, ըստ որի՝ այդ շաբլոնների լրացման գործում պետք է օգնել օգտատիրոջը (անհրաժեշտության դեպքում):**
- **Մշակել գործողությունների ցանկ և ծրագիր՝ Հայաստանի բնակչությանը, այդ թվում՝ նաև բարձր դասարանների աշակերտներին և ուսանողներին առցանց համակարգում աշխատանքի փնտրմանն ուղղորդելու համար: Ծրագիրը պետք է լինի երկարատև և վերածվի առօրյա գործունեության:**

106 Վերածել լիարժեք ռելյացիոն տվյալների շտեմարանի փնտրման և վերլուծական բոլոր անհրաժեշտ գործիքների հասանելիությամբ:

107 Անհրաժեշտ է հնարավորինս բացառել «Ավելի մանրամասն տեղեկությունների համար դիմել [տնից դուրս գալ ու գնալ այստեղ կամ այնտեղ]» բնույթի հղումները:

108 Այս դեպքում հնարավոր կլինի իրականացնել գործակալության աշխատանքների անկախ փորձագիտական գնահատումներ: Շտեմարանները վերլուծական նպատակներով օգտագործելիս տեխնիկապես հնարավոր է անհասանելի դարձնել անհատական ինֆորմացիա պարունակող դաշտերը, որոնց հրապարակումը ցանկալի չէ կամ արգելված է օրենքով:

- **Մշակել գործողությունների ցանկ և ծրագիր՝ Հայաստանի գործատուներին իրենց աշխատուժի պահանջարկը Զբաղվածության պետական գործակալության տվյալների շտեմարաններում տեղադրելու համար: Չի բացառվում, որ դրա խթանման համար հարկ լինի, որպեսզի գործակալությունը ստանձնի որոշ առօրյա գործառույթներ:**
- **Նախորդ երկու գործողությունների արդյունավետության չափանիշների շարքում պետք է լինի Զբաղվածության պետական գործակալությանը դիմողների քանակը, այսինքն՝ այդ քանակը պետք է գերազանցի մասնավոր աշխատանքի տեղավորման գործակալություններ դիմողների քանակին** (որն այսօր ունի 3:1 հարաբերակցություն՝ հօգուտ մասնավոր գրասենյակների):
- **Մշակել ռազմավարական ծրագրերի և դրանց առանձին գործողությունների հստակ, էժան և հեշտությամբ հավաքագրվող ծախս-արդյունավետության ինդիկատորներ:**

Հարկ է նշել, որ այդպիսի տվյալների շտեմարանի գոյությունը կարևորագույն գործիք է գործազրկության խնդիրները ժամանակակից մեթոդներով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մոնիթորինգի ու գնահատման, այդ թվում՝ գործազրկության «աներևույթ» խնդիրների նույնականացման համար:

Կառուցվածքային գործազրկության նվազեցման համար.

- **Անհրաժեշտ է միմյանց համապատասխանեցնել Հայաստանի աշխատաշուկայի մասնագիտական պահանջարկի և մասնագիտական կրթական համակարգի կողմից թողարկվող մասնագետների թվաքանակն ու կառուցվածքը:**
- **Այդ գործունեության իրականացման համար բացառիկ արդյունավետ գործիք է Զբաղվածության պետական ծառայության կոնսոլիդացված տվյալների շտեմարանը:**

Հարկ է նշել, որ այդ շտեմարանի վերլուծությամբ հնարավոր է կանխատեսել Հայաստանի տնտեսության զարգացման ուղղությունները, ինչը կնպաստի նաև Հայաստանի տնտեսության զարգացման հարցերով զբաղվող պետական այլ մարմինների մոնիթորինգի ու գնահատման աշխատանքներին, ինչպես նաև այդ մարմինների կողմից մշակված ռազմավարությունների կարգաբերմանը: Բնականաբար, դրա համար անհրաժեշտ է, որպեսզի գործատուների կողմից լրացվող շաբլոն-հայտերն ունենան համապատասխան **հեշտ լրացվող** դաշտեր:

Ընտանիք և վերարտադրողական վարք

Արդեն երկար ժամանակ է, ինչ **«գենդերային հավասարություն»** կոնցեպտը, դրա բովանդակությունը և այդ բովանդակության իրականացումը համակարգային կերպով կիրառվում են [պոստ-մոդեռնիստական] հասարակություններում և դարձել են դրա ինֆորմացիոն-մշակութային դաշտի հիմնական բաղադրիչներից մեկը: Այդ հասարակություններում կոնցեպտի իրականացումն առաջացրել է մի շարք բացասական երևույթներ, որոնք օտար են հայկական մտածելակերպին, սակայն որոշակիորեն ներթափանցում են մեր հասարակության մեջ, ինչը համընդհանուր գլոբալիզացման հետևանք է: Այդ երևույթներից են.

- ընտանիքի ինստիտուտի քայքայում, որը գաղափարականացված և քաղաքականացված հասարակագիտությունն անվանում է «փոխակերպում» և «բազմազանեցում»,
- դրան ուղեկցող հասարակության ատոմիզացում՝ միայնակությունից առաջացած օտարմամբ, բարքերի սանձարձակությամբ, հասարակական համակեցության՝ հազարամյակներով փորձված նորմերի մերժմամբ և եսասիրական գոյության անիմաստության զգացողությունից բխող ինքնասպանություններով,
- իրենց զավակների կողմից լքված ծերերի անլուծելի հիմնախնդիրը, որն ուղղակիորեն հակասում է հումանիզմի գաղափարին,
- տղամարդու և կնոջ պսիխո-ֆիզիոլոգիական առանձնահատկություններից բխող գործառույթների, դրանցից բխող և մշակութայնացված դերերի այլասերում, ինչը և՛ տղամարդկանց, և՛ կանանց շրջանում առաջացնում է խորքային հոգեբանական ճեղքվածքներ ու խնդիրներ և դրանցից բխող հակահասարակական վարք:

Վերջին 25 տարիների ընթացքում, երբ Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգը գտնվում է այդօրինակ ինֆորմացիոն-մշակութային ճնշումների ներքո, որոնք զուգորդվում և «ամրապնդվում են» տնտեսական ու քաղաքական ճնշումներով,

- **և՛ տղամարդկանց, և՛ կանանց շրջանում վատթարացել են ընտանիք կազմելու և երեխա պլանավորելու դիրքորոշումները:**
- **Տղամարդկանց պարագայում այդ դիրքորոշումների վատթարացումը պայմանավորված է հիմնականում տնտեսական պատճառներով:**
- **Կանանց դեպքում դրանք հիմնականում մշակութային փոփոխությունների հետևանք են:**
- **Ներկայիս հասարակական և տնտեսական հարաբերությունները կնոջից լատենտ կերպով «պահանջում են».**
    - տնտեսական անկախություն, ինչին շաղկապված է այն, որ.
    - կինն իր ինքնադրսևորումը դիտում է ընտանիքից դուրս, իսկ
    - առաջին երկու դրույթները իրականանում են նրա՝ որպես կնոջ պահանջմունքների հաշվին:

Այնուամենայնիվ՝

- **Հայաստանի երիտասարդության շրջանում**
    - **երեխաներ ունենալու պահանջմունքը պահպանված է այն մակարդակի վրա, ինչն առկա էր նրանց ծնողների ընտանիքում,**
    - **պահպանված են ծնողների նկատմամբ հարգանքը և բարձր ընկալունակությունը ծնողների կողմից հաղորդվող ավանդական արժեքների ու նորմերի նկատմամբ:**

Հետևաբար՝

- **Հայաստանի հասարակությունում հնարավոր է վերականգնել բնական ընդլայնված վերարտադրության բնութագրերը:**

- **Հայաստանի հասարակությունը դեռևս շատ հեռու է «գենդերային հավասարություն» կոնցեպտից ուղղակիորեն բխող այլասերված[109] վիճակից, և**
- **այդ մշակութային տարածությունն անհրաժեշտ է պահպանել:**

Հետևաբար հարկ է՝

- **Հայաստանի ինֆորմացիոն և կրթական դաշտում «գենդերային հավասարություն» կոնցեպտը փոխարինել հայկական ազգային բովանդակություն ունեցող «ընտանիքի մայր» կոնցեպտով, որը ձերբազատված է «արևելյան հայրիշխանության» բռի դրսևորումներից:**
- **Աջակցել երիտասարդ աղջկան և ամուսնացած կնոջը, որպեսզի նոր՝ ինֆորմացիոն հասարակության ընձեռած հնարավորությունների կիրառմամբ ներդաշնակորեն զուգորդեն և՛ մայրական, և՛ հասարակական պահանջմունքները:**

Դրա համար անհրաժեշտ է՝

- **Խթանել վաղ ամուսնությունները հատկապես աղջիկների շրջանում** (մինչև 18 տարեկանների ամուսնությունները):
- **Աջակցել վաղ տարիքում** (16-20 տարեկան) **ամուսնացած ընտանիքներին, այդ թվում՝ մինչև 20 տարեկան հասակն ամուսնացած և երեխաներ ունեցած կանանց:**
- **Խրախուսել 3-րդ երեխայի ծնունդը:**
- **Խրախուսել ընդլայնված ընտանիքը, քանի որ՝**
  - Այն [ազգային-ավանդական արժեքների] մշակութային պաշտպանության ամենահզոր ագենտն է. տատիկներն ու պապիկները գերազանց սուբյեկտներ են երեխաներին ավանդական-ազգային արժեքներ փոխանցելու գործում:
  - Տատիկները երիտասարդ կանանց համար ապահովում են **ազատ ժամանակ** և հետևաբար նպաստում են նրանց հասարակական ինքնադրսևորմանը:
  - Մեղմացնում է, իսկ լավագույն դեպքում՝ վերացնում ծերունական խնդիրները:
- **Զարգացնել ինտերնետային հեռաուսուցումը: Այս առումով աջակցել հատկապես վաղ ամուսնացած կանանց: Ինտերնետային հեռաուսուցումը զուգակցել դասընթացների ազատ հաճախումների հետ, որպեսզի երիտասարդ ամուսնացած կինը չզրկվի ընկերական շրջապատից, հասակակիցների, ինչպես նաև դասախոսների և գիտնականների հետ շփումներից:**
- **Նպաստել ինտերնետային, կրճատ աշխատանքային օրով, ճկուն աշխատանքային օրով և ազատ հաճախումներով աշխատատեղերի ստեղծմանը: Աջակցել, որպեսզի դրանք զբաղեցնեն վաղ ամուսնացած և մանկահասակ երեխաներ ունեցող կանայք:**

109 Այլասերում նշանակում է համակարգի կողմից իրեն ներհատուկ գործառույթների իրականացման խեղաթյուրումը, բացառումը, այլակերպումը և դրանց փոխարինումն այլ գործառույթներով:

- **Բյուջետային հիմնարկներում ուսումնասիրել այդպիսի աշխատատեղերի պոտենցիալ առկայությունը կամ այդպիսի աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները:**
- **Այդ աշխատանքների իրականացման հիմքում պետք է լինի ըստ աշխատանքի արդյունքի գնահատման ընդլայնումը, որը երիտասարդ կանանց շրջանում կստեղծի ազատ ժամանակի ռեզերվ[110]:**
- **Խրախուսել մասնավոր գործատուներին, որպեսզի իրենց մոտ աշխատանքի ընդունեն մանկահասակ երեխաներ ունեցող և կրճատ աշխատանքային օրով աշխատող կանանց, իսկ աշխատող կնոջը, երեխա ունենալու դեպքում, կրճատ աշխատանքային օրով աշխատելու հնարավորություն տան:**
- **Ուժեղացնել Աշխատանքի պետական տեսչության վերահսկողությունը երիտասարդ, ամուսնացած և մանկահասակ երեխաներ ունեցող կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում:**
- **Իրականացնել հայկական ընդլայնված ընտանիքի առավելությունները շեշտադրող ինֆորմացիոն-մշակութային ռազմավարություններ:**
- **Վերականգնել «Հերոսուհի մայր» շքանշանը՝ կոչումը շնորհելով 4 և ավելի երեխա ունեցող կանանց և դա զուգորդելով իրական տնտեսական աջակցությամբ:**

Ինֆորմացիոն-մշակութային ոլորտ

Հայաստանի երիտասարդության շրջանում առկա է աշխարհայացքային կոգնիտիվ դիսոնանս, ինչի արմատն այն անլուծելի հակասությունն է, որը մի կողմից առկա է ներկա աշխարհամակարգի կենսագործունեության դրդապատճառի և սկզբունքների, իսկ մյուս կողմից բարոյական ունիվերսալիաների միջև: Առաջինի հետ երիտասարդները շփվում են իրական կյանքում, երկրորդի հետ հաղորդակցվում են մարդկային այնպիսի հարաբերություններում, որտեղ չի գերակայում տնտեսական շահը: Հակադրություններն իրենց արտահայտություններն ունեն բարձր մշակույթում: Առաջինի դեպքում դա ժամանակակից մեյնսթրիմ լիբերալ գաղափարախոսությունը լեգիտիմացնող հասարակագիտությունն է[111] (որից արտաքսված է քաղաքական տնտեսագիտությունը և փոխարինված է էկոնոմիքսով) և ժամանակակից արվեստը (որից արտաքսված են բարոյական ունիվերսալիաները), իսկ երկրորդի դեպքում դասական մշակույթն է[112] և այն հասարակագիտությունը, որը գիտական կառուցվածքների նպատակ է դիտում բարոյական ունիվերսալիաների նյութականացումը[113]:

110 Ակնհայտ է, որ այս սկզբունքն անհրաժեշտ է նկատի ունենալ նաև ընդհանրապես տնտեսության զարգացման հարցերում, քանի որ ազատ ժամանակը և դրա **մշակութայնացված օգտագործումը** կյանքի որակի կարևորագույն բաղադրիչն է:

111 Տե՛ս՝ Валлерстайн И., Анализ мировых систем и ситуация в современном мире.

112 «Դասական մշակույթ» հասկացությամբ նկատի ունենք մարդկանց շրջանում բարոյական ունիվերսալիաները դաստիարակող և դեպի դրանք ուղղորդող, իր ժամանակի գեղարվեստական բարձր և բարձրագույն ճաշակի ու ձևերի շրջանակում ստեղծված և ժամանակի քննությունն անցած արվեստը:

113 Այդպիսի հասարակագիտության կազմավորումը հանդիսանում է արդի հասարակագիտության հիմնախնդիրը:

Փոքրածավալ էթնո-սոցիո-մշակութային համակարգերում, որոնք դիրքավորված են աշխարհաքաղաքական և քաղաքակրթական սահմանային գոտիներում, որոնց տարածքը հանդիսանում է գերտերությունների մրցակցության օբյեկտ (ինչպիսին Հայաստանն է), այդ դիսոնանսի հնարավոր հանգուցալուծումներն ունեն միասնական հիմք, որի սկզբունքն է «Կեսարինը՝ Կեսարին», այսինքն՝ էթնո-սոցիո-մշակութային համակարգի պետական կառուցվածքը «պարտավոր է» կատարել աշխարհ-համակարգի կողմից իրեն պարտադրվող գործառույթը: Այդ պայմանով համակարգը որոշ ազատություն կարող է ձեռք բերել իր ինքնության փոխակերպման կամ պահպանման, ինչպես նաև զարգացման ուղղությունների հարցերում:

Եթե Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգը (և դրա առանձին անդամները) ընդունում է ոչ միայն աշխարհ-համակարգի կողմից պարտադրված դերը, այլև նրա գեոմշակույթը (արժեքները), ապա հայաստանյան երկու հիմնական բացասական գործընթացները՝ արտագաղթը և բնական վերարտադրության անկումը, պետք է գնահատել ոչ թե որպես բացասական, այլ աշխարհամակարգային տեսակետից բնական ու բանական գործընթացներ: Հետևաբար հարկ է հանգիստ ընդունել դրանք և մարդու ազատություններին ու իրավունքներին համահունչ՝ նույնիսկ նպաստել դրանց շարունակականությանը: Իսկ եթե նպատակը համակարգի պահպանումն է ու զարգացումը, ապա հարկ է հանգուցալուծել այդ դիսոնանսը՝ սահմանելով դրա հոգևոր-գաղափարախոսական հիմքը: Ակնհայտ է, որ՝

- **էթնո-սոցիո-մշակութային համակարգի ինքնության պահպանման հոգևոր-գաղափարախոսական հիմքն ու պոտենցիալ հայեցակարգերը պարփակված են համակարգի մշակութային բաղադրիչում:**

Հետևաբար խնդիրը լուծվում է համակարգի մշակութային բաղադրիչի արդյունավետ գործարկմամբ:

Հայաստանի երիտասարդության [պայմանական] չորս («ավանդական», «զանգվածային», «ավանգարդային» և «դասական») ենթամշակութային շերտերն ունեն իրենց և՛ ընդհանուր, և՛ յուրահատուկ խնդիրները, որոնք վատթարացնում են Հայաստանի էթնո-սոցիո-մշակութային համակարգի ոչ միայն որակական բնութագրերը, այլև նվազեցնում են դրա ծավալը:

Երիտասարդության «դասական» ենթամշակութային շերտի հիմնական խնդիրներն են.

- Այս շերտը, մյուս շերտերի համեմատ, ավելի օտարված է պետությունից և հասարակության այլ հատվածներից:
- Այստեղ ավելի տարածված են մշակութային պատճառներից բխող արտագաղթային դիրքորոշումները:
- Այս շերտի աղջիկների և կանանց շրջանում ավելի վատթար են վերարտադրողական վարքի բնութագրերը՝ երեխաների պահանջմունքը, ինքնաարտահայտման գերակայությունն ամուսնության և երեխաներ ունենալու դիրքորոշումների նկատմամբ, իսկ ընտանեկան արժեքներն ավելի ազատականացված են:

Սակայն՝

- Այս շերտում գլոբալ գեոմշակույթի կողմից պարտադրված բազային արժեքների (փողի դերի բացարձականացում, իրավական նիհիլիզմ) նկատմամբ ավելի բարձր է դիմադրողականությունը:

Այս շերտի հետ տարվող աշխատանքների ուղղություններն ակնհայտ են.

- **երիտասարդության դասական ենթամշակութային շերտը պետք է պաշտպանել և/կամ հեռացնել գլոբալ գեոմշակութային արժեքներից և էլ ավելի մոտեցնել ազգային դասական ու համաշխարհային դասական մշակութային արժեքներին,**
- **մեծացնել այդ շերտի ծավալը:**

Կարճ ասած՝ հարկ է երիտասարդական այն շերտին, որը Հայաստանի արդի պայմաններում նույնականացվել է որպես դասական, իրապես և խորապես հաղորդակից դարձնել հայկական դասական մշակույթին, որպեսզի այն չընկալվի որպես «անցյալ», իսկ ներկա մշակույթը՝ որպես «պրովինցիալ»: Դիրքորոշումներ, որոնցից տրամաբանորեն բխում է, որ հայկական մշակույթը նրան՝ «ժամանակակից երիտասարդին», ով ձգտում է «պոստմոդեռնի», հետ է մղում դեպի անցյալը կամ կապում է հայկական «պրովինցիալ» տարածքին: Նպատակը պետք է լինի այդ շերտին ցույց տալ, որ գոյություն չունի «դասական անցյալ մշակույթ», որ այն կենդանի է, քանի դեռ մարդիկ այն կրում են, և զարգանում է հենց այն տարածքում, որը մարդիկ մշակութայնացրել են, որ գավառականությունը նախ մարդու ներսում է, հետո՝ դրսում, իսկ «ժամանակակիցը» չունի աշխարհագրական տեղադրություն. ժամանակակից է այն, ինչն այսօր ապրում է:

Այս տեսակետից անհրաժեշտ է.

- **բուհերի մագիստրատուրաների ծրագրերում (անկախ մասնագիտություններից) ընդգրկել «Հայկական մշակույթ», «Մշակութաբանություն և համաշխարհային մշակույթ» ֆակուլտատիվ առարկաները,**
- **այդ առարկաները պարտադիր դարձնել Պետական կառավարման ակադեմիայի ուսանողների համար:**

Ըստ էության՝

- **Խնդիրն ապագա վերնախավերի՝ ֆինանսիստների, միջազգայնագետների, իրավագետների և ծրագրավորողների մշակութայնացումն է հայկական դասական մշակույթում[114]:**

Ավանդական ենթամշակութային շերտի հետ կապված հիմնական խնդիրն է՝

- **շերտը ձերբազատել «ռաբիսից»,**

114 Այդուհանդերձ, խնդիրը չի լուծվում զուտ ձևական միջոցառումներով: Այստեղ հույժ կարևոր են անձինք: Միջին տարիքի տեխնիկական մտավորականությունը լավ է հիշում Լ. Ներսիսյանի և Ա. Սվասյանի՝ 1960-70-ականներին կարդացած դասախոսությունները: ԵՊՀ-ում և Պոլիտեխնիկական ինստիտուտում ոչ մի լսարան չէր բավականացնում՝ նրանց ունկնդիրներին ամբողջությամբ տեղավորելու համար: Անշուշտ, այսօր ևս կան նման անհատներ: Խնդիրը կոնկրետ նպատակով կոնկրետ աշխատանքում նրանց ընդգրկելն է: Մի քանի այդպիսի անհատներն ունակ են լուծելու այդ խնդիրը:
Հարկ է հիշել նաև՝ 1960-70-ականներին ընդունված էր, որ տեխնիկական և բնական գիտությունների ուսանողները (լավագույները նրանց շարքից) հաճախում էին հումանիտար առարկաների դասախոսություններին կամ միաժամանակ սովորում էին հումանիտար մասնագիտությունների գծով, օրինակ՝ Կոնսերվատորիայում:
Դժվար է գերագնահատել այդ անձանց և նրանց գործունեության արդյունքի նշանակությունը 1988 թ-ի ազգային զարթոնքում: Ներկա իրավիճակը, անշուշտ, շատ ավելի ծանր է, քանի որ «Ինչ էլ ասեն ու խոսեն, ի վերջո ամեն ինչ որոշում է փողը» դիրքորոշումն ունի այնպիսի տարածվածություն և խորություն, որ կարող է «թաղել» ցանկացած «արդյունավետ» քաղաքականություն և մարգինալացնել ցանկացած «իդեալիստի»:

որն ազգային մշակութային վերնախավի կողմից բարձիթողի լինելու և մշակութային անօգնականության հետևանքով ինքնաբերաբար այլասերման ուղով ընթացող ավանդական-ազգայինն է:

- **«Ռաբիսից» ձերբազատվելու նպատակով մշակութային վերնախավը պետք է ստանձնի այդ շերտի համար մշակութային նմուշների [վերա]ստեղծման[115], իսկ պետական կառավարումը՝ այդ նմուշների ժողովրդականացման գործը:**

Ձանգվածային ենթամշակութային շերտի հետ կապված հիմնախնդիրն է.

- **շերտը հեռացնել գլոբալ զանգվածային սպառողական մշակույթից՝ այն տեղակալելով ազգային ավանդական և ազգային բարձր մշակույթով ձևավորված, հումանիստական, էկոլոգիական ու չափավորության սկզբունքների վրա հիմնված նոր մշակույթով,**
- **ներկա պայմաններում դրա իրականացման էրզաց-ուղի կարելի է համարել բիզնեսի [ինքնա]բեռնումը սոցիալական պարտավորություններով:**

Վերոշարադրյալը հուշում է, թե ինչպես է հնարավոր լուծել այդ խնդիրները:

- **Անհրաժեշտ է ունենալ ազգային ինֆորմացիոն-մշակութային երկարատև քաղաքականություն, որի հիմնական նպատակը պետք է լինի.**
  - **ազգային և համաշխարհային դասական մշակույթի հիման վրա ազգային ինֆորմացիոն-մշակութային դաշտի ձևավորումը, այդ թվում՝**
  - **գռեհիկ արտահայտություններից ժողովրդական-ավանդական մշակույթի ձերբազատումը և ավանդական ձևանմուշների նորացումը,**
  - **զանգվածային մշակույթի տեղակալումը դասական մշակույթի հանրամատչելի նմուշներով:**
- **Ազգային մշակույթի տարածման և ինտերիորացման գործիքը պետք է լինի ինֆորմացիոն դաշտի հմուտ կառավարումը ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների միջոցով:**
- **Չի բացառվում, որ դրա համար անհրաժեշտ է կազմավորել հատուկ պետական մարմին՝ ի հաշիվ այլ պետական մարմինների, որոնք վերջին 10 տարիների ընթացքում արդեն հասցրել են բավականաչափ ուռճանալ:**
- **Երկարատև քաղաքականությունը պետք է ներառի անձի դաստիարակությունը՝ սկսած մանուկ հասակից՝ ընտանիքից, և շարունակվի ամբողջ կյանքում[116]:**

Ասվածից էլ բխում են առաջնահերթ աշխատանքային ուղղությունները: Անհրաժեշտ է՝

- **Կոնսոլիդացնել հայկական ինտերնետային-ինֆորմացիոն տարածքի դասական մշակութային հատվածը.** տեխնիկական խնդիր, որն իրականացվում է ինֆորմացիոն տեխնոլոգիաների մասնագետների կողմից:

115 Այն, ինչն իր ժամանակին իրագործել է Կոմիտասը:

116 Ըստ էության, ներկայումս այդպիսի քաղաքականություն իրականացվում է գլոբալ գեոմշակույթի էմիսարների կողմից, սակայն՝ հումանիստական տեսակետից անընդունելի արժեհամակարգով:

- **Մշտապես զարգացնել այդ տարածքը.** բովանդակային խնդիր, որն իրականացվում է ազգային մտավորականության կողմից:
- **Մշակել ռազմավարություններ՝ Հայաստանում ինտերնետ օգտագործողներին, հատկապես դպրոցահասակ երեխաներին և երիտասարդներին դեպի այդ տարածք ուղղորդելու համար.** կրթադաստիարակչական խնդիր, որն իրականացվում է պետական կառավարման մարմինների կողմից**:**

Նշված խնդիրների իրականացման կոնկրետ (սակայն՝ ոչ լրիվ) աշխատանքներն են.

- **Ընդլայնել ինֆորմացիոն տեխնոլոգիաների ներդրումը և կիրառումը դպրոցում՝ ԿԳՆ ինտերնետային կայքում տեղադրելով դպրոցական բոլոր դասագրքերը և ձեռնարկները, այդ թվում՝ նաև բուհ ընդունվողների համար:**

Տեխնիկապես այս գործողությունը հնարավոր է իրագործել շատ արագ, առանց նշանակալի ֆինանսական ծախսերի: Շատ կարևոր է այն, որ այս տարրական գործողությունը՝

- **Կրճատում է դասագրքերի տպագրության պետական ծախսերը, որոնք կարելի է ուղղել այլ կրթական նպատակների:**
- **Թեթևացնում է դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքների կրթական ծախսերը:**
- **Բոլոր աշակերտներին և ուսուցիչներին թույլ է տալիս միաժամանակ, առանց ֆինանսական ծախսերի, ունենալ նույն դասագրքի** (տվյալ առարկայի և տվյալ դասարանի) **տարբերակները, հետևաբար բազմազան դարձնել ուսուցման մեթոդական բազան:**

Չի բացառվում, որ ինֆորմացիոն տեխնիկայի զարգացման և էժանացման արդյունքում առաջիկա 2-3 տարիների ընթացքում հնարավոր դառնա էլեկտրոնային գիրք-պլանշետների զանգվածային կիրառումը դպրոցներում և բուհերում[117]: Պլանշետները կարող են պարունակել նաև լրացուցիչ և առաջարկվող գրականության լավագույն նմուշները, ինչպես նաև հայկական ու համաշխարհային դասական երաժշտության լավագույն գործերը, կատարումները և արվեստի այլ ճյուղերի լավագույն նմուշները:

Եթե պլանշետների ներդրումը հնարավոր դառնա, ապա հարկ է դրանց կիրառումը սկսել Հայաստանի հեռավոր և թույլ զարգացած շրջանների գյուղական բնակավայրերից, ինչը հզոր սոցիալական ազդեցություն կունենա ինչպես պետության և հասարակության միջև օտարվածության հաղթահարման, այնպես էլ տարածքների հավասար զարգացման առումով:

- **Անհրաժեշտ է միավորել Հայաստանի ինտերնետային գրադարանները, որոնց թվում են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, Ազգային գրադարանի, համալսարանների և մյուս գրադարանները:**
- **Բոլոր էլեկտրոնային գրադարանների մուտքը պետք է ազատ լինի, այդ թվում՝ նաև հատուկ ֆոնդերինը:**

117 Չնայած պլանշետները կարող են կիրառվել նույնիսկ տարրական դասարանների աշակերտների կողմից, սակայն միաժամանակ դրանք կարող են մշակութային շոկ առաջացնել ավագ սերնդի ուսուցիչների շրջանում: Հետևաբար չպետք է բացառել այն դեպքերը, երբ ուսուցիչը կդասավանդի ավանդական մեթոդներով, իսկ աշակերտը կսովորի նոր ինֆորմացիոն տեխնիկայի կիրառմամբ:

Միավորումը թույլ կտա կրճատել միևնույն գրքերը բազմակի թվայնացնելու ծախսերը, կկրճատի փնտրման համար անհրաժեշտ ժամանակը:

Անհրաժեշտ է՝

- **Նախաձեռնել Ինտերնետային կրթության հայկական պորտալի մշակումը:**

Այն պետք է կատարի նաև դասական մշակութային հարացույցի իրականացման գործիքի գործառույթը:

Քանի որ Հայաստանում սպասվում են ինտերակտիվ հեռուստատեսության մուտքը և զարգացումը, որոնք հսկայական տեխնիկական հնարավորություններ են բացում հեռուստատեսության զարգացման և այն ինտերնետային տարածքին շաղկապելու ասպարեզում, ուրեմն արդեն ժամանակն է.

- **Նախաձեռնել հայկական կրթական հեռուստաալիքի ստեղծման հայեցակարգի մշակումը:**
- **Չպետք է բացառել ուսումնական հաղորդումների՝ համապատասխան կրթօջախների ֆինանսական միջոցներով պատրաստումը. որակյալ ուսումնական հաղորդումը կրթօջախի հեղինակության բարձրացման** (գովազդի) **լավագույն ձևերից է:**

Հայեցակարգը մշակող խմբում պետք է ներկայացված լինեն և՛ դրա գաղափարախոսության ու բովանդակության, և՛ տեխնիկական իրականացման մասնագետները:

- **Ինֆորմացիոն-մշակութային խնդիրների բազմաոլորտայնությունը և բազմաֆունկցիոնալությունը պահանջում են քննարկման առարկա դարձնել հայկական ինֆորմացիոն-մշակութային տարածքի կառավարման, համակարգման և զարգացման տեխնոլոգիաների հարցը:**
- **Չպետք է բացառել համապատասխան պետական կառույցի ձևավորումը՝ ի հաշիվ բազմապատկված, ուռճացած և դիսֆունկցիոնալ դարձած այլ մարմինների, ինչը թույլ կտա ոչ միայն կոնսոլիդացնել, այլև որակապես վերակազմավորել ինֆորմացիոն-մշակութային ռազմավարական հարցերով զբաղվող կադրային պոտենցիալը:**
- **Հարկ է կազմավորել ինֆորմացիոն-մշակութային քաղաքականության մշակման և մոնիթորինգի ազգային փորձագիտական խմբեր՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համապատասխան գիտական ինստիտուտների, ԵՊՀ-ի և այլ համալսարանների առավել հեղինակավոր գիտնականների ընդգրկմամբ:**
- **Այս մոտեցումը կբարձրացնի մտավորականության, հատկապես հումանիտար մտավորականության հասարակական հեղինակությունը: Հարկ է տարանջատել գաղափարախոսական և դրանց իրականացման (կառավարչական, մենեջերական) գործառույթները:**

Մշակութային քաղաքականության կարևորագույն ուղղություն պետք է սահմանել երաժշտական կրթությունը: Մանուկ հասակից երաժշտական ճաշակի ձևավորումը ներկայումս նույնականացված ենթամշակութային շերտերի մշակութային կարգաբերման առավել արդյունավետ միջոցն է:

Յուրաքանչյուր տարիքային խմբի համար ադեկվատ երաժշտական դաստիարակության մոտեցումներն ու ծրագրերը անհրաժեշտ է մշակել ոլորտի պրոֆեսիոնալների միջոցով, մասնավորապես՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Ռ. Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես նաև երաժշտական դպրոցների լավագույն մանկավարժների ընդգրկմամբ: Նրանցից պետք է կազմավորել փորձագիտական խորհուրդ՝ իրենց իսկ մշակած ռազմավարության իրականացումը մոնիթորինգի ենթարկելու համար:

Կարևոր նշանակություն ունի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների երեխաների երաժշտական ճաշակի ձևավորումը հայկական դասական երաժշտության միջոցով: Մանուկ հասակում ձևավորված ճաշակը դժվար է հետագայում ձևախեղել:

Երաժշտական ճաշակի կոռեկցիայի նպատակով կարելի է ՀՀ ԳԱԱ ազգագրության և հնագիտության ինստիտուտի, ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի ու Կոմիտասի անվան կոնսերվատորիայի մասնագետներին պատվիրել, որպեսզի մշակեն ազգային հարսանեկան արարողությունների տիպական սցենարների հավաքածուներ՝ համապատասխան երաժշտական ծրագրերով և համապատասխան երաժշտախմբերով[118]: Ինֆորմացիոն-մշակութային քաղաքականության մեջ պետք է ընդգրկել այն իրողությունը, որ այդ աշխատանքների հանրայնացումը վերածվի մշակութային նորմայի, նույնիսկ՝ հեղինակության տարրի:

Հարսանեկան ծիսակատարությունն առանցքային համակարգաստեղծ նշանակություն կարող է ստանձնել: Այդ առանցքն իր շուրջը կկազմավորի փոքր բիզնեսի և անհատ վարպետների ծառայությունների կլաստեր, որի մշակութայնացման քաղաքականությունը նույնպես պետք է մշակվի արդեն նշված ինստիտուտների, ինչպես նաև Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի կողմից:

Առողջ ապրելակերպը և էթնո-սոցիո-մշակութային համակարգը

Առողջ ապրելակերպն ինքնին արժեք է, քանի որ ամրապնդում և պահպանում է մարդու առողջությունը, ինչը կյանքի որակի կարևորագույն բաղադրիչն է և մարդու արդյունավետ կենսագործունեության գրավականը:

Վերլուծությունը ևս մեկ անգամ ապացուցեց «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» թևավոր խոսքի ճշմարտությունը:

- **Ֆիզկուլտուրայով զբաղվող երիտասարդների շրջանում ավելի բարձր է ապագայի նկատմամբ լավատեսությունը, և ավելի ցածր է ընդմիշտ արտագաղթելու դիրքորոշումը:**

Հայաստանի երիտասարդության շրջանում լուրջ խնդիր է այն, որ՝

- **Երիտասարդ կանանց 90%-ը երբեք չի զբաղվում ֆիզկուլտուրայով:**

Հետևաբար անհրաժեշտ է՝

- **Զարգացնել զանգվածային սպորտը և ֆիզկուլտուրան՝ հատուկ ուշադրություն դարձնելով դրա զարգացմանը երիտասարդ աղջիկների և կանանց շրջանում:**

118 Ամեն տարի Հայաստանում տեղի է ունենում երաժշտական ճաշակի զանգվածային խեղման 18.000 ակտ (հարսանիք):

- **Լայն զանգվածների համար մատչելի դարձնել մարզադաշտերը և մարզադահլիճները:**
- **Ընդլայնել բակային, համայնքային, միջհամայնքային, միջդպրոցական, մարզային և հանրապետական մարզական միջոցառումները:**
- **Կանանց շրջանում չխթանել այն մարզաձևերը, որոնք խարխլում են սեռերի ֆունկցիոնալ և մշակութային առանձնահատկությունների սահմանները:**

Երիտասարդ տղամարդկանց շրջանում ծխախոտի օգտագործումը կտրուկ աճում է պարտադիր զինծառայության ընթացքում: Հայտնի է, որ լարված, սթրեսային իրավիճակներում ծխախոտի օգտագործումը տղամարդկային կոլեկտիվներում իրականացնում է հոգեբանական և սոցիալ-հոգեբանական կարևոր գործառույթներ: Հետևաբար՝

- **Բանակում հակածխախոտային միջոցառումները անհրաժեշտ է իրականացնել միայն այն դեպքում, երբ զինվորների համար կստեղծվեն այլընտրանքային այնպիսի միջոցներ, որոնք հոգեբանական և սոցիալ-հոգեբանական կոռեկցիայի խնդիրների դեպքում կարող են փոխարինել ծխախոտին:**

Այս խնդրի լուծումը ռազմական հոգեբանների իրավասությունների ոլորտում է:

Արտագնա աշխատանքների նպատակով հատկապես այնպիսի տարածաշրջաններ մեկնելը, որտեղ տարածված են սեռավարակները և մասնավորապես ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը, իրական վտանգ է հայ երիտասարդների, նրանց կանանց և [նորածին] երեխաների համար: Էքո-սոցիո-մշակութային համակարգի ֆիզիկական առողջության խնդիրները պետք է մնան պետության և հասարակության ուշադրության կենտրոնում: Այդ տեսակետից կարևոր է՝

- **երիտասարդ տղամարդկանց շրջանում չթուլացող կրթադաստիարակչական աշխատանքը, ինչը պետք է ընդգրկի ոչ միայն հիգիենայի հետ կապված հարցերը, այլև սեռերի միջև հարաբերությունների մշակութայնացումը,**
- **առողջության սկրինինգները երիտասարդ աշխատանքային միգրանտների շրջանում (ձմեռային սեզոնում):**

Պետություն և հասարակություն

Պետության և հասարակության փոխհարաբերություններում հիմնական խնդիրներն են.

- **Երիտասարդությունը համարում է, որ հասարակությունն օտարված է պետությունից:**
- **Ցածր են հասարակության քաղաքական կոմպետենտությունն ու սուբյեկտությունը:**
- **Անբարենպաստ են դիրքորոշումներն ընտրական գործընթացի նկատմամբ:**
- **Հնարավոր են քաղաքական ապակայունացման սադրանքներ՝ երիտասարդության ընդգրկմամբ:**

Երիտասարդության շրջանում պետության և պետական քաղաքականությունների նկատմամբ

դրական դիրքորոշումների ընդլայնման արդյունավետ ռազմավարություն է երիտասարդության շրջանում քաղաքական ընդգրկվածության զգացողության ձևավորումը:

Քաղաքական ընդգրկվածության զգացողությունը տվյալ դեպքում նշանակում է.

- ներքին և արտաքին քաղաքական ինֆորմացիայի (տեղեկություններ, խնդիրներ, վերլուծություններ, ռազմավարություններ, քննարկումներ) հաղորդման ինտենսիվության բարձրացում,
- քաղաքական գործընթացի նկատմամբ հետաքրքրության բարձրացում,
- քաղաքական կոմպետենտության զգացողության բարձրացում,
- քաղաքական սուբյեկտության զգացողության բարձրացում:

Հետևաբար անհրաժեշտ են՝

  - **քաղաքական ինֆորմացիայի հաղորդման ինտենսիվության,**
  - **քաղաքական գործընթացի նկատմամբ հետաքրքրության,**
  - **քաղաքական կոմպետենտության զգացողության և**
  - **քաղաքական սուբյեկտության զգացողության բարձրացմանն ուղղված ռազմավարությունների մշակում և իրականացում, քանի որ՝**

- **դրանք միասնաբար բարձրացնում են քաղաքական ընդգրկվածության զգացողությունը, ինչն էլ իր հերթին**
- **բարձրացնում է դրական դիրքորոշումները քաղաքական համակարգի, քաղաքական գործընթացի և պետական ռազմավարությունների նկատմամբ:**

Նշված ռազմավարությունների իրականացման գործիք կարող է ծառայել ԽՍՀՄ-ում մշակված, փորձարկված և դրական արդյունքներ տված «Գիտելիք» ընկերության փորձը:

- **Անհրաժեշտ է երիտասարդության շրջանում դասախոսություն-քննարկումներ կազմակերպել պետական, տնտեսական, հասարակական, քաղաքական և մշակութային հրատապ թեմաներով:**
- **Հրատապ թեմաները սահմանվում են Հայաստանի պետական կառավարման մարմինների, գիտափորձագիտական հանրության և բուն երիտասարդության կարծիքների ուսումնասիրությամբ:**
- **Գործունեության հիմնական մեթոդը դասախոսություն-քննարկումն է, որն անձնական շփումներ է ապահովում** (այլ կերպ ասած՝ մասնակցության զգացողություն)**:**
- **Դասախոսները պետական կառավարման մարմինների ղեկավար աշխատողներ են, պարտադիր՝ կոմպետենտ, բարեկիրթ և ռեֆլեքսիայի ունակություններով օժտված** (այլ կերպ ասած՝ լսարանը հաղորդակցվում է պետական կառավարման գործընթացին):
- **Գործունեության դրական արդյունքների առաջին երաշխիքը ճիշտ ընտրված դասախոսն է:**

- **Հիմնական լսարանը բուհերի, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողները և ավագ դպրոցների աշակերտներն են** (քաղաքականապես առավել ակտիվ շերտ):
- **Դասախոսություններից հետո կայանալիք քննարկումների ընթացքում հնչած մտքերը, առաջարկները, քննադատությունն ու մտահոգությունը մանրակրկիտ վերլուծվում են, անհրաժեշտության դեպքում ընթացք են ստանում, արդյունքները հետ են փոխանցվում լսարանին** (այլ կերպ ասած՝ ապահովվում է «ձայնի լսելիություն»):
- **Կարևորագույն սկզբունքները՝**
    - **դասախոսություններին մասնակցելու ոչ մի պարտադրանք** (եթե դասախոսությունը հետաքրքիր է, ապա լսարանն ինքը կկազմավորվի),
    - **քննարկումների ընթացքում հնչած ցանկացած քննադատություն՝ անկախ սրությունից և ոճից, չի կարող որևէ հետևանք ունենալ քննադատողի համար:**

Ժամանակի ընթացքում գործունեության մեթոդները, լսարանը և բովանդակությունը կարող են ընդլայնվել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու - 2006: -Եր.: Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, 2006, 94 էջ:
2. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու - 2011: -Եր.: Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, 2011, 120 էջ:
3. Հայաստան. ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն 2010. Հիմնական արդյունքներ: -Ազգային վիճակագրական ծառայություն [Հայաստան], Առող-ջապահության նախարարություն [Հայաստան] և «Այ Սի էֆ Ինթերնեյշնլ», 2012, 16 էջ:
4. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց /Կազմ. Ա. Պապայան, Դ. Հայրապետյան, Ա. Պետրոսյան, Ս. Մանուկյան/: -Եր.: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Մաս I, - հետազոտական մաս, 2011, 104 էջ:
5. ՀՀ երիտասարդների ձգտում-ների հետազոտության հաշվետվություն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակ, «Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասո-ցիացիա», «Արինսայթ» հետազոտական ընկերություն: -Եր., 2012, 198 էջ (ձեռագիր):
6. Մանուկյան Ս. Ա., Հայաստանի Հանրապետությունում զբաղվածության և գործա-զրկու-թյան բնութագրիչների (HES-4) հետազոտություն: -Եր.: «Այ Փի էս ՍԻ» սոցիոլոգիական և քաղաքական խորհրդատվությունների ինստիտուտ: -Եր., 2012, 47 էջ (ձեռագիր):
7. Մանուկյան Ս. Ա., Սյունիքի մարզի գործարար կանայք. սոցիոլոգիական համայնա-պատ-կեր: -Եր., Գորիսի կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ, 2011, 124 էջ:
8. Մանուկյան Ս. Ա., Կոռուպցիան և անցումային շրջանի սոցիալական դինամիկան: -Եր., «Լուսակն», 2005, 196 էջ:
9. Бродель Ф., Динамика капитализма. Пер. с фр.. -Смоленск: «Полиграмма», 1993, 128 с..
10. Валлерстайн И., Анализ мировых систем и ситуация в современном мире. -СПб.: Издательство «Университетская книга», 2001, 416 с..
11. Валлерстайн И., После либерализама. -М.: Едиториал УРСС, 203, 256 с..
12. Валлерстайн И., Конец знакомого мира: Социология XXI века/Пер, с англ. под ред. В.И. Иноземцева. -М.: «Логос», 2004, 368 с..
13. Пребиш Р., Периферийный капитализм: есть ли ему альтернатива? /Сокращенный перевод с испанского/. –М., ИЛА РАН, 1992, 324 с..
14. Тоффлер Э., Третья волна. -М.: ООО Фирма «Издатетьство АСТ», 2004, 781 с..
15. Хантингтон С., Третья волна. Демократизация в конце XX века. -М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003, 368 с..
16. Freedman R., The sociology of human fertility//Current sociology. Vol. 10-11, 1961-1962, P. 35-42.
17. Freedman R., Fertility determinants//World Fertility Survey: An Assessment. N.Y., 1987, P. 274-295.